



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ

(XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)

Պատմաագագրական ուսումնասիրություն

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2012

ՀՏԴ 391/395=919.81:941 (479.25)  
ԳՄԴ 63.5 (2 Հ)+6333(2 Հ)  
Ն 251

Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական  
խորհուրդը

**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ. Ա.**

Ն 251 Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. / Ռ. Ա. Նահապետյան; ԵՊՀ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012. – 262 էջ:

Մենագրության մեջ հեղինակի՝ տարիներ շարունակ հավաքած դաշտային ազգագրական նյութերի և գրականության տվյալների համեմատական ուսումնասիրությամբ քննության են առնվում հայոց ազգակցական համակարգի սկզբունքները, բացահայտվում են «ազգ» արենակցական խմբի կազմավորման ընթացքը, կառուցվածքը, գաղափարական, հասարակական, տարածքային և տնտեսական միասնությունն արտացոլող հատկանիշներն ու դրանց խաղացած դերը հայ հասարակական, տնտեսական, պատմաքաղաքական կյանքում:

Նախատեսված է ազգագրագետների, հայոց պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ընթերցող հանրության համար:

ՀՏԴ 391/395=919.81:941 (479.25)  
ԳՄԴ 63.5 (2 Հ)+63.3(2 Հ)

ISBN 978-5-8084-1584-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2012  
© Նահապետյան Ռ.Ա., 2012

**Նվիրում էմ որդուս  
ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ  
հիշատակին**

**Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի հասարակական ինքնակազմակերպման հնավանդ ձևերի փոխակերպումների հետազոտությունը: Դրանք ազգագրական գիտության կարևորագույն խնդիրներից են: XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով հայկական գյուղում արագորեն վերանում էին հնավանդ հասարակական բազում կառույցներ: Դրանցից մեկը «ազգ» արենակցական խումբն է, որը ազգագրության մեջ հայտնի է «պատրոնիմիա» անվամբ: «Պատրոնիմիա» տերմինը թարգմանաբար նշանակում է անվանում հայրական գծով, քանի որ հունարեն pater նշանակում է հայր և onyma՝ անուն:

Հիրավի, դեռ վաղ ավատական Հայաստանում հասարակության տնտեսական բջիջը փոքր ընտանիքն էր, իսկ սոցիալական կազմակերպության հիմնաձևը՝ գյուղական կամ տարածքային-հարևանական համայնքը, որը, սակայն, չէր բացառում ազգակցական կապերը՝ սերտորեն միահյուսված հարևանական հարաբերությունների հետ:

Ներկա ուսումնասիրության հետազոտության առարկան մինչև XX դարի կեսերը, անգամ մինչև մեր օրերը հարատևած այն երևույթներն են, որոնք կազմել են մեր հինավուրց ժողովրդի սոցիալական հարաբերությունների մի նշանակալի բնագավառը:

Համայնատոհմային այս հաստատությունների մնացուկային ձևերի ուսումնասիրումը, նրանց տեղի և դերի որոշումը մեծ չափով թույլ են տալիս վեր հանելու հայերի սոցիալական կյանքի բազում կողմեր, և դրանք ուսումնասիրելով հնարավոր կլինի հետադարձ վերլուծությամբ վերակառուցել արենակցական-ազգակցական հարաբերությունների ամենավաղ ձևերը, որոնք խաղացել են կարևորագույն դեր նախորդ հասարակությունների հայկական գյուղի հասարակական և արտադրական կյանքում, թեև դրանց մի մասը առ այսօր լիարժեք լուսաբանված չէ պատմագրական տվյալների և դաշտային ազգագրական նյութերի պակասության պատճառով:

Ներկա մենագրությունը գրված է ինչպես մատենագրական և մասնագիտական գրականության, այնպես էլ մեր կողմից տասնյակ տարիներ գրատված դաշտային ազգագրական նյութերի հիման վրա:

Ազգը մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է, որ կազմավորվել է նահապետական ընտանեկան համայնքի կամ գերդաստանի մեծացման ու հատվածավորման շնորհիվ և այս կամ այն չափով ու ձևով պահպանել է տնտեսական, տարածքային, հասարակական և գաղափարական միասնությունը, ունի ընդհանուր ազգակցական անվանում՝ ազգը կազմող մեծ և փոքր արյունակից ընտանիքների հիմնադրի անվամբ:

Ընտանեկան համայնք-գերդաստանի և պատրոնիմիա-ազգի՝ որպես հնավանդ հասարակական-տնտեսական կառույցների, ուսումնասիրությանը հանգամանորեն անդրադարձել է խորհրդային ականավոր ազգագրագետ Մ. Կոսովենը<sup>1</sup>:

Մ. Կոսովենը հայերի «ազգ» արենակցական խումբը նույնացրել է կովկասյան ժողովուրդների պատրոնիմիայի հետ՝ նրանց միջև հավասարության նշան դնելով: Նա պատրոնիմիան բնութագրել է որպես նահապետական տոհմային կարգերին հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մասամբ պահպանված հնագույն հասարակական ձև: Այդ ձևը, ըստ նրա՝ «Մի մեծ նահապետական ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական, գաղափարական ու տարածքային միասնությունը տարբեր չափերով պահպանած ազգակից արյունակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է»<sup>2</sup>: Պատրոնիմիան Կովկասի տարբեր ժողովուրդների մեջ ունի յուրահատուկ, ընդ որում՝ բազմազան անվանումներ, բայց հիմնականում ունի «մի կրակից (օջախից) ելածներ կամ բաժանվածներ», «մի տան մարդիկ», «միմյանց միջև բաժանված տուն» նշանակություն: Պատրոնիմիայի այդպիսի նկարագրական բնութագրման այլ կարգ են կազմում օսական ֆիդի ֆիրտի-ն («հոր զավակներ»), աղբղական խաբլ-ը («մի տան եղբայրներ»), արխազական արխաբա-ն («հոր որդիներ»), իմերեթական

բաբուշվիլոբա-ն («մի պապից սերվածներ»), վրացական դանակրեբին («բաժանված եղբայրներ»), սվանական սամխուբ-ը կամ լամխուբ-ը («եղբայրություն»), լեզգիական միրեսար-ը («մերձավոր ազգականներ՝ եղբայրների և հորեղբորորդիների զավակներ»), քրդերի բար-ը և այլն<sup>3</sup>: Կովկասյան ժողովուրդները պատրոնիմիան նշելու համար օգտագործել են այլալեզու՝ իրանական, արաբական, թուրքական, մոնղոլական անվանումներ, որոնք համապատասխան լեզուներում նշանակում են ազգակցական խումբ, մի մեծ ընտանիքի տրոհմամբ կամ բաժանմամբ առաջացած ընտանիքների խումբ:

Կովկասում պատրոնիմիայի ամենավաղ նկարագիրը, ինչպես նկատել է Ա. Ռոբաքիձեն, վերաբերում է այն դարաշրջանին, երբ պատրոնիմիան գտնվում էր զարգացման ֆեոդալական աստիճանում: Այն հյուսիս-կովկասյան ժողովուրդների մոտ հայտնաբերվեց ֆեոդալիզմի խոր քայքայման պրոցեսի ժամանակ, երբ արդեն նեղացված էին պատրոնիմիայի ընդհանրության շրջանակները, և ընդհանուր սեփականությունը սահմանափակվում էր միայն երկրորդական արտադրամիջոցների տիրապետումով<sup>4</sup>:

Ազգը մշտապես փոփոխվել է հասարակության զարգացմանը գուզընթաց և ժամանակի ընթացքում աստիճանաբար կորցրել է նախնական հատկանիշները: Այն, առաջանալով և կազմավորվելով վաղ դասակարգային հասարակության պայմաններում և պահպանվելով հետագա ֆորմացիաներում, ունի իր սեփական պատմությունը և ամբողջ հասարակության զարգացմանը հանրթաց կրում է բավականին խոր փոփոխություններ՝ սկսած հնագույն ձևերից, մինչև նրա տրոհումն ու անկումը: Հին Հայաստանում, երբ արտադրության միջոցները վերածվում էին մասնավոր սեփականության, ազգն այլևս չէր կարող դիտվել իբրև ինքնուրույն տնտեսական միավոր: Այդպիսին էր ընտանիքը: Ազգը, սակայն, դարեր շարունակ պահպանել է հասարակական,

<sup>1</sup> Տե՛ս Մ. Կոսեն, *Очерки по этнографии Кавказа*. “Советская этнография” (այսուհետ՝ ՇՅ), 1946, № 2; նույնի՝ *Семейная община и патронимия*, Մ., 1963.

<sup>2</sup> Տե՛ս Մ. Կոսովեն, *Ковкասի ժողովուրդների պատրոնիմիան*, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1963, № 1, էջ 93, նույնի՝ *Этнография и история Кавказа*, Москва, 1961, էջ 32-43:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Կոսովեն, *Ковкասի ժողովուրդների պատրոնիմիան*, էջ 93-94: Տե՛ս նաև Н. Абазадзе, *Семейная община у грузин*, “Этнографическое обозрение”, кн. III, 1889, Русудан Харадзе, *Грузинская семейная община*, т. I, Тбилиси, 1960, т. II, Тбилиси, 1961. А. Авдал, *Патронимия у курдов Армении в XIX в.*, ՇՅ, 1959. № 9:

<sup>4</sup> Տե՛ս А. И. Робакидзе, *Особенности патронимической организации у народов горного Кавказа*, ՇՅ, 1968, № 5, էջ 94: Տե՛ս նաև М. Агларов, *Сельская община в Нагорном Дагестане в XVII – начале XIX вв.* ուսումնասիրությունը:

գաղափարական, տարածքային և տնտեսական ընդհանրության շատ տարրեր, որոնք իրենց կենսունակության շնորհիվ մեծ դեր են խաղացել օտար տիրապետությունների պայմաններում մեր ժողովրդի հավաքականության, համախմբվածության, ազգապահպանության, կենսապահովության հարցերում, սոցիալ-մշակութային բնագավառում, նաև ազգակցական համակարգում:

XX դարի 80-90-ական թթ. մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է «պատրոնիմիա» տերմինի փոխարեն հասարակական կենցաղի համակարգում կիրառել մեկ նախահորից սերված, որոշակի տնտեսական, տարածքային և գաղափարական ընդհանրությամբ կապված «ընտանե-ազգակցական խումբ» (“семейно-родственная группа”) անվանումը<sup>5</sup>: Ընդ որում, «ընտանե-ազգակցական խումբը» կամ այլ կերպ՝ պատրոնիմիան իրենից ներկայացնում է ոչ թե հայրիշխանական տոհմի մի մասը կամ նրա մնացուկը, այլ դասակարգային հասարակության դարաշրջանում ձևավորված հասարակական կազմակերպության հատուկ ձև: Այն առաջանում է ընտանիքի անդամների աճման և հատվածավորման, ճյուղավորման արդյունքում: Այն ոչ թե նախնադարյան հասարակության, այլ ինքնատիպ երևույթ լինելով, գյուղացիության մեջ գոյատևեց ընդհուպ մինչև XX դարը, երևույթ, որը պայմանավորված էր տիրապետող բնատնտեսության, ինքնաբավ տնտեսաձևով, երբ ազգակից բոլոր ընտանիքներն ապրում էին մեկ գյուղական համայնքի շրջանակներում<sup>6</sup>:

Հայրիշխանական տոհմական դարաշրջանում ընտանեկան համայնքը և պատրոնիմիան, որպես առանձին տնտեսական և հասարակական ուրույն միավորներ, դեռևս գոյություն չունեին և չէին էլ կարող ունենալ, քանզի նրանց հանդես գալու հիմքում ընկած էին մասնավոր սեփականության և ունեցվածքային անհավասարության առաջացման գործոնները:

<sup>5</sup> Տե՛ս մանրամասն А. Першиц, *Социально-экономическая терминология в понятийном аппарате этнографии*, - СЭ, 1983, № 5.

<sup>6</sup> Տե՛ս А. Першиц, *Динамика традиций и возможности их источниковедческого истолкования*. - Народы Азии и Африки, 1981, № 5, с. 90, Ю. Семенов, *Первобытная коммуна и соседская крестьянская община - Становление классов и государства*, М., 1976, с. 45, Н. Кисляков, *О сущности понятия "патронимия"*. - Страны и народы Востока, М., 1976, вып. 18, с. 280, Г. Марков, *О терминах и понятиях в этнографии*. - СЭ, 1983, № 5, с. 75.

Վերջիններիս առաջացումն ու զարգացումը հանգեցրել են տոհմական հասարակության քայքայմանը և դասակարգային հասարակության ձևավորմանը: Տոհմային հասարակության քայքայման փուլում էլ հանդես է գալիս ընտանեկան համայնք-գերդաստանը՝ որպես տոհմական սկզբունքների կրող և տոհմի բաղկացուցիչ հասարակական-տնտեսական կառույց: Ընտանեկան համայնքի տրոհման և անհատական փոքր ընտանիքների առաջացման հետևանքով հանդես է գալիս պատրոնիմիա-ազգը՝ որպես նրանց հասարակական-գաղափարական, տնտեսական-արտադրական և տարածքային միասնության շահերը ներկայացնող հասարակական կառույց: Մակայն ազգը հասարակության հիմնական կորիզը չէր, այդպիսին արդեն փոքր կամ անհատական ընտանիքն էր: Թեև վերջինիս կողքին հետագա հասարակական-տնտեսական ֆորմացիաներում շարունակում են գոյատևել նաև որոշ թվով գերդաստանական տներ<sup>7</sup>:

Ի տարբերություն տոհմի և ընտանեկան համայնքի՝ պատրոնիմիա-ազգատոհմում կենտրոնացվում էին կոլեկտիվ՝ համընդհանուր, և մասնավոր՝ անհատական ընտանեկան սեփականության սկզբունքները, որոնք էլ նրանց երկարակեցության գործոններն էին:

Եթե XX դարի սկզբներին գերդաստանական տների վերջին մնացուկները վերանում են, ապա փոքր ընտանիքներին միավորող գաղափարական-հասարակական, տնտեսական ու տարածքային միասնության շատ տարրեր պահպանվում են մինչև XX դարի կեսերը և անգամ մինչև մեր օրերը:

Ավելի բարդ է ազգատոհմ-հարևանական կամ գյուղական համայնքի փոփոխությունների բնույթը:

Ազգ-արենակցական խումբը ավելի նախաձևի պատմական գոյաձև է, քան գյուղական կամ հարևանական համայնքը: Վերջինիս առաջացումը ևս վերաբերում է հասարակության զարգացման վաղ դասակարգային փուլին, երբ ազգակցական կապերը քայքայվում էին, մի հանգամանք, որը դառնում է գյուղական համայնքի առաջացման և հարևանական հարաբերությունների զարգացման պատճառ:

<sup>7</sup> Տե՛ս Э. Карапетян, *Армянская семейная община*, - Ереван, 1958, Բ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը* (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004 և այլն:

Սակայն «գյուղական ինքնաբավ, իր անդամների արտադրական և տերիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված համայնքն իր ներքին կառուցվածքով, իրավունքներով և պարտավորություններով, հողատերերի և ֆեոդալական պետության հետ ունեցած հարաբերություններով տարբերվում էր նախավանդ, միայն արյունակցական և ազգակցական կապերի վրա խարսխված նահապետական համայնքներից»։ Չնայած դրան՝ գյուղական համայնքն իր նախորդից ժառանգել էր այնպիսի գծեր, որոնք դրել էին իրենց կնիքը գյուղական համայնքի անդամների փոխհարաբերությունների վրա։ Գյուղական համայնքի ներսում, նրա անդամների փոխհարաբերություններում, չնայած գույքային շերտավորմանն ու սոցիալական անհավասարությանը, պահպանվում էին փոխօգնության և համերաշխության մի շարք սովորություններ։ Գյուղական համայնքի արտադրական հարաբերությունները հանգեցնում էին նրա անդամների շահերի միահյուսմանը, աշխատանքի ընթացքում սերտ կապ, համերաշխություն, համակեցության որոշ կանոնների պահպանում և այլն<sup>8</sup>։

<sup>8</sup> Գյուղական համայնքի մասին տե՛ս С. Егизаров, *Исследования по истории учереждений в Закавказье*, ч. 1. Сельская община, Казань, 1889, 2. Մանանդյան, *Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում*, Եր., 1925, նույնի՝ *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում*, Եր., 1934, նույնի՝ *Проблема общественного строя доаршакидской Армении*. – *Исторические записки*, т. 15, М., 1945, IV. Սամուելյան, *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. 3, Եր., 1941, Ե. Ադոնց, *Հին հայ շինականություն*. – *Պատմական ուսումնասիրություններ*, Փարիզ, 1948, С. Еремян, *Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху*. – *Տեղեկագիրք*, ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1948, № 11, Լ. Խաչիկյան, *XIV-XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին*, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, В. Мочалов, *Сельская община в Закавказье*. – *Исторические записки*, 1960, № 67, Գ. Մարգարյան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգը հելլենիստական դարաշրջանում*. – «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1 (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), Երևան, 1971, Н. Бутинов, *Община, семья, род*, «Советская этнография», 1968, № 2, с. 91-95, Е. Голубцова, *Сельская община Малой Азии*, М., 1972, А. Давыдов, *Сельская община и патронимия в странах Ближнего и Среднего Востока*, М., 1979, Ս. Հակոբյան, *Գյուղական համայնքը Հայաստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում*. – 1965, № 1, նույնի՝ *Գյուղական համայնքը Հայաստանում 15-18-րդ դդ.* ՊԲՀ, 1973, № 2, Պ. Հովհաննիսյան, *Գյուղական համայնքի պրոբլեմի ուսումնասիրությունը սկզբնափուլում* 2. Մանանդյանի

Հարևանական համայնքը ավելի ուշ առաջացած պատմական գոյաձև է, քան ազգակցական համակարգը։ Նրա առաջացումը վերաբերում է վաղ դասակարգային հասարակության փուլին։ Հարևանական կամ գյուղական համայնքի առաջացման ուղիներից մեկը պայմանավորված է եղել ազգատոհմի ընդհանրության, միասնության տարրերի քայքայմամբ, ազգատոհմում սոցիալ-տնտեսական հակասությունների առաջացմամբ։ Այս պայմաններում առաջանում էր նրանց միացնող և այդ հակասությունները հարթող պատմական-հասարակական գոյաձև, որն էլ գիտական գրականության մեջ հայտնի է գյուղական կամ հարևանական համայնք անվամբ։

Հասարակական վաղեմի այդ երկու կառույցները, որ երկար դարեր գոյատևել են միահյուսված, սկզբունքորեն տարբերվել են միմյանցից։ Ազգատոհմը հիմնվում էր արյունակցական, մինչդեռ հարևանական համայնքը՝ տարածքային կապերի վրա։ Ազգատոհմը և հարևանական համայնքը նման են միմյանց այն առումով, որ երկուսն էլ պահպանում են կոլեկտիվ և մասնավոր սեփականության շատ տարրեր, որոնք հիմնականում պայմանավորում են համատեղ և համաժամանակյա գոյություն։

Սովորաբար հարևանական համայնքը գործում էր և այժմ էլ գործում է ամբողջ գյուղի, երբեմն էլ՝ հարևան գյուղերի շրջագծում,

*աշխատություններում*. – «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետ՝ ԲԵՀ), 1985, № 1, Լ. Варданян, *Традиции мужских возрастных групп у армян в конце XIX – в начале XX вв.*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 12, Երևան, 1981, Ս. Հակոբյան, *Գյուղական համայնքը Կարսի մարզում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)*, ՊԲՀ, 1987, № 1, М. Акопян, *Сельская община в Восточной Армении во второй половине XIX - начале XX вв.*, Ереван, 1988, А. Мкртчян, *Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.)*, Ереван, 2010 և այլն։

Չովկասագիտական գրականությունից կարելի է նշել՝ М. Агларов, *Сельская община в Нагорном Дагестане в XIX - начале XX вв.*, М., 1988, Ю. Карпов, *Джигит и волк. Мужские союзы в социокультурной традиции горцев Кавказа*. СПб., 1996, նույնի՝ *Личность и традиционные социальные институты: принципы взаимодействия*. – *Северный Кавказ: Человек в системе социокультурных связей*. СПб., 2004, *Северный Кавказ: Традиционное сельское сообщество. Социальные роли, общественное мнение, властные отношения*. Сборник статей, СПб., 2007 և այլն։

մինչդեռ ազգատոհմը՝ այդ գյուղերի մի առանձին թաղի կամ նրա որոշակի մի մասի շրջանակներում: Այդ պատճառով էլ ազգատոհմը հարևանական համայնքի մի մասն է կազմել: Հարևանական մեկ համայնքի կազմի մեջ կարող էին մտնել մի քանի ազգատոհմեր, որոնցից յուրաքանչյուրը այս կամ այն բնակավայրում ուներ իր դեկավարությունը, թաղը, ժողովատեղին, սրբավայրերը, գերեզմանոցը, արտավայրերը, անտառամասերը, համատեղ մշակելի դարձրած այգիներն ու հողահանդակները: Ազգատոհմերը որոշակի դեր են խաղացել հարևանական համայնքների առաջացման գործում, շատ դեպքերում էլ որոշել են նրա բնույթը, ներքին հարաբերությունները: Հետևաբար, հարևանական համայնքի ճիշտ բնութագրման համար պետք է հետազոտվի նրա ազգատոհմային կազմը համայնքի գոյության ամենատարբեր փուլերում:

Ժամանակի ընթացքում ազգատոհմը կորցնում է իր ինքնուրույնությունը հարևանական համայնքում, բայց չի դադարում վերապրուկային տեսքով հանդես գալուց: Ազգակցական երբեմնի կապերը վերափոխվում են համայնականի:

Ազգը, մեր օրերում դադարելով անհատի հենման կետ լինելուց, վերածվեց ազգակցական այնպիսի կապերի, որոնք նպաստում են ազգակից ընտանիքների ու հարևանների համերաշխ հարաբերությունների հաստատմանը: Այստեղից էլ մեր օրերում հնչող՝ «Մոտ հարևանը ավելի լավ է, քան հեռավոր բարեկամը» արտահայտությունը:

Հայ իրականության մեջ «ազգ» արենակցական խմբի քայքայման պրոցեսը ավելի վաղ էր ընթացել, այդուհանդերձ՝ ազգը Հայաստանում երկար դարեր է գոյատևել: Ազգ-արենակցական կապերը ավելի կայուն էին պահպանվում Արևմտյան Հայաստանում, մեր ժողովրդի այն մեծ հատվածում, որին վերաբերող ազգագրական նյութերը հայ ազգագրական գիտական գրականության մեջ վատ են հավաքված և սակավ են ուսումնասիրված: Թուրքական բռնապետական, ավատական երկրում արևմտահայ գյուղական բնակչության շրջանում ավելի կայուն էին պահպանված նահապետական հին հարաբերությունների մի շարք ինստիտուտների վերապրուկներ, որոնցից կարելի է առանձնացնել ազգ-արենակցական խումբը՝ իր ներքին յուրօրինակ հարաբերություններով, որոնց վերաբերյալ 1970-ական թվականներից ի վեր

մեր գրառած դաշտային ազգագրական տարաբնույթ նյութերի մի մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Այդ նյութերը գերազանցապես վերաբերում են արևմտահայերով բնակեցված պատմաազգագրական շրջաններին:

Ազգի մասին վկայություններ կան հայ մատենագիրների երկերում: Ցավոք նրանք շատ կցկտուր են անդրադարձել այս հարցին, որովհետև նպատակային գրանցում չի եղել:

Տոհմատիրական կարգերի վերապրուկային այս կամ այն երևույթներին հայ գիտական գրականության մեջ բազմաթիվ ազգագրագետներ են անդրադարձել: Խ. Սամուելյանը իր մի շարք աշխատություններ նվիրել է մայրիշխանության, սովորության իրավունքի, հնավանդ ստուսնության ձևերի, ընտանեկան համայնքի և այլ հարցերի լուսաբանմանը: Ինչպես «Ազգագրական հանդես»-ի տարբեր հատորներում իր վաղ հրատարակած, այնպես էլ «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր<sup>9</sup> և «Հին հայ իրավունքի պատմություն»<sup>10</sup> ուսումնասիրություններում հեղինակն իր առջև խնդիր է դրել քննարկել տոհմային կարգերից հայ իրականության մեջ մինչև XX դարի 30-40-ական թթ. գոյատևած բազմաթիվ վերապրուկային երևույթների հիմքերը: Հենվելով միջնադարյան պատմիչների հաղորդած վկայությունների և հնագիտական տվյալների վրա՝ Խ. Սամուելյանը ցույց է տվել, որ հայերը մյուս ժողովուրդների նման իրենց պատմական զարգացման ընթացքում ես սարքել են նախնադարյան-համայնական հասարակարգի ժամանակաշրջանում: Սակայն գիտնականը որոշ երևույթների նկատմամբ ցուցաբերել է միակողմանի մոտեցում, փորձել է տոհմային կարգի մնացուկային երևույթների արմատները տանել նախնադարյան հասարակություն՝ վերապրուկների վերլուծությամբ ներկայացնել համայնատոհմային կարգերի այս կամ այն հաստատության նախնական վիճակը՝ հաշվի չառնելով, սակայն, ժամանակի ընթացքում դրանց դերն ու նշանակությունը հասարակության զարգացման համեմատաբար ուշ փուլերում:

Վաղ դասակարգային հասարակական այս կառույցների տեղի և դերի հարցը վաղ ավատական Հայաստանի պետական համակար-

<sup>9</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. 1-3, Երևան, 1931-1941:

<sup>10</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, Երևան, 1939:

գում ներկայացված է վրաստանցի պատմաբան Ի. Ջավախովի ուշագրավ աշխատության մեջ<sup>11</sup>, թեև նա շատ է ուռճացրել տոհմի դերը՝ այն համարելով Հին Հայաստանի վաղ ավատական շրջանի վճռական գործոնը, սոցիալական կարգի հիմքը: Սոցիալական հնավանդ այս կառույցների խնդրով զբաղվել են նաև Գ. Իփեկյանը<sup>12</sup>, Կ. Կոստանյանը<sup>13</sup>, Ա. Ղլտչյանը<sup>14</sup>, սեփական դաշտային ազգագրական նյութի ընդգրկմամբ՝ Ե. Լալայանը<sup>15</sup>: Հին Հայաստանի պետական կարգի և սոցիալական հարաբերությունների բնույթի, հնավանդ սոցիալական ինստիտուտների ուսումնասիրության առումով ուշագրավ են նաև Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի և այլոց ուսումնասիրությունները<sup>16</sup>:

Ազգագրական նյութի առումով ուշագրավ տեղեկություններ են հատրդել նաև Վ. Թեմուրճյանը՝ Գամիրքի հայերի<sup>17</sup>, Բենսեն՝ Հարք կամ Բուլանըխ գավառի<sup>18</sup>, Երվանդ Շահազիզը՝ նոր-նախիջևանցիների<sup>19</sup>, Ե. Կարապետյանը և Վ. Պետոյանը՝ սասունցիների<sup>20</sup>, Գ. Հալաջյանը՝ Դերսիմի հայերի<sup>21</sup>, Ստ. Լիսիցյանը՝ զանգեզուրցիների և արցախցիների<sup>22</sup> վերաբերյալ: Սակայն նշված հեղինակներից և ոչ մեկը

<sup>11</sup> Տե՛ս Ի. Ժախախով, *Государственный строй Древней Грузии и Древней Армении*, Կ. 1, СПб., 1905:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Իփեկյան, *Քաղաք*, ԱՀ, գ. XXIV, № 1, Թիֆլիս, 1913:

<sup>13</sup> Տե՛ս Կ. Կոստանյան, *Պոռոգ և Տուայր* ԱՀ, գ. XIII, № 1, Թիֆլիս, 1906:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Ղլտչյան, *Հայ հին իրավունքը*, ԱՀ, գ. XXII, № 1, Թիֆլիս, 1912, գ. XXIII, № 2, Թիֆլիս, 1912, ԱՀ, գ. XXIV, № 1, Թիֆլիս, 1913:

<sup>15</sup> Տե՛ս Ե. Լալայան, *Ջավախք, Երկեր*, հ. 1, Երևան, 1983, նույնի՝ *Վարանդա, Երկեր*, հ. 2, Երևան 1988, նույնի՝ *Բորչալուի գավառ, Երկեր*, հ. 3, Երևան, 2004 և այլն:

<sup>16</sup> Տե՛ս Կ. Ադոնց, *Армения в эпоху Юстиниана*, Երևան, 1971, Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, Ա, Երևան, 1957:

<sup>17</sup> Տե՛ս Վ. Թեմուրճյան, *Գամիրքի հայերը*, ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970:

<sup>18</sup> Տե՛ս Բենսեն, *Բուլանըխ կամ Հարք գաղառ*, ԱՀ, գ. Ե., Թիֆլիս, 1899:

<sup>19</sup> Տե՛ս Երվանդ Շահազիզ, *Նոր Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք*, ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902:

<sup>20</sup> Տե՛ս Ե. Կարապետյան, *Սասուն (Ազգագրական նյութեր)*, Երևան, 1963, Վ. Պետոյան, *Սասնա ազգագրությունը*, Երևան 1965:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Հալաջյան, *Դերսիմի հայերի ազգագրությունը*, ՀԱԲ, հ. 5, Եր., 1973:

<sup>22</sup> Տե՛ս Ստ. Լիսիցյան, *Ձանգեզուրի հայերը*, Երևան, 1969, նույնի՝ *Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 12, Երևան 1981:

հատուկ նպատակադրումով չի անդրադարձել հայոց ազգակցական համակարգին:

Ազգագրական գիտության տեսանկյունից տոհմային հարաբերությունների վերապրուկների, մասնավորապես գյուղական համայնքի և նրա հետ կապված այլ հարցերի ուսումնասիրության առումով բացառիկ արժեք ունեն Ս. Եղիազարովի ուսումնասիրությունները<sup>23</sup>: Սակայն դրանք նույնպես չեն շոշափել այս խնդիրը:

«Ազգ» արենակցական խմբի մասնագիտական ուսումնասիրությամբ Հայաստանում առաջինը զբաղվել է ազգագրագետ Վ. Բոդյանը<sup>24</sup>, այնուհետև առավել հանգամանորեն՝ Է. Կարապետյանը<sup>25</sup>: Վերջինս անդրադարձել է խմբի կառուցվածքին, ազգի ընդհանրության՝ տարածքային, տնտեսական, հասարակական, գաղափարական մնացուկային դրսևորումների ձևերին, փորձել է բացահայտել դրա սոցիալական էությունը, ցույց տալ նրա տեղը սոցիալական և հասարակական հարաբերությունների ընդհանուր համակարգում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին: Այդ առումով էմմա Կարապետյանի մենագրությունը, որը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքն է, գալիս է լրացնելու այդ բնագավառում եղած բացը և կարևոր նշանակություն ունի վերոհիշյալ հարաբերությունները ուսումնասիրելու տեսակետից: Հեղինակը, հմտորեն օգտագործելով այդ մասին եղած մատենագրական, արխիվային և հատկապես իր հավաքած դաշտային ազգագրական նյութերը, կարողացել է հան-

<sup>23</sup> Տե՛ս Ս. Եղիազարով, *Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1. Сельская община, Казань, 1889, նույնի՝ Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края*, Тифлис, 1887:

<sup>24</sup> Տե՛ս Վ. Բոդյան, *Кровнородственный "азг" и родственные отношения у армян*, СЭ, 1952, № 1, նույնի՝ *Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)*, Երևան, 1974, էջեր 155-165:

<sup>25</sup> Տե՛ս Է. Կարապետյան, *Պատրոնիմիայի վերապրուկները հայերի մեջ, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ)*, 1963, № 1, Զ. Կարապետյան, *Пережитки патронимических отношений у армян*, գեկուցում կարդացված Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսում, տպագրված է Մոսկվայում, 1964 թ., Զ. Կարապետյան, *Родственная группа "азг" у армян*, Երևան, 1966, նույնի՝ *Армянская семейная община*, Եր., 1958:



զամանորեն քննության առնել հայերի մեջ պահպանված ազգակցական հարաբերությունների բնույթը և լուծել դրանց հետ կապված մի շարք հարցեր՝ արենակցական խումբ ազգի կազմը, ազգի տնտեսական, գաղափարական, տարածքային ընդհանրությունները և այլն:

Է. Կարապետյանը հայկական «ազգը» նույնացրել է կովկասյան ժողովուրդների պատրոնիմիայի հետ, մինչդեռ Վ. Բոյանը գտնում է, որ հայկական «ազգը» պատրոնիմիայից որոշ չափով զանազանվում է: Հայկական արյունակցական «ազգը» ժամանակագրորեն պատրոնիմիայից հետո և նրա հիմքի վրա առաջացած կառուցվածք է: «Ազգը» հայերի մեջ երբեք չի ունեցել հյուսիսկովկասյան ժողովուրդների օրինակով ընդհանուր՝ հոդօգտագործման համակարգ: Ընդհակառակը, ազգի ընտանիքների միջև ծագող հակամարտությունների բուն պատճառը մասնավոր հողատիրությունն էր: Եվ չնայած այդ հակամարտությանը՝ յուրաքանչյուր ընտանիքի սեփականության կոլեկտիվ պաշտպանությունն ազգի հիմնական հատկանիշներից մեկն էր<sup>26</sup>: Մենք ընդունում ենք այս մոտեցումը: Ազգը որքան համախմբված է, նույնքան ապահովված են նրա ընտանիքները և՛ նյութական, և՛ բարոյական տեսակետից:

Պատմական Հայաստանի Աղձնիք նահանգի հայ բնակչության գերդաստանին, ազգակցական համակարգին և այլ հարցերի նվիրված կենցաղամշակութային նյութերի հիման վրա կատարված մասնագիտական ուսումնասիրություններ ունի նաև տողերիս հեղինակը<sup>27</sup>: Ի մի բերելով գերդաստաններին, ազգակցական համակարգին և այլ հարցերի նվիրված ազգագրական նյութերը՝ հանգել ենք այն եզրակացության, որ տնտեսական, տարածքային, հասարակական-գաղափարական ընդհանրության տարրերի պահպանմամբ «ազգ» արենակցական խումբը պահպանում էր հնագույն սոսիալային հարաբերությունների բազմաթիվ վերապրուկներ:

<sup>26</sup> Տե՛ս Բ. Բոյան, *Кровнородственный "азг"...*:

<sup>27</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դարում և XX դարի սկզբներին*, «Երևանի համալսարան» (Գիտական լրատու), 1977, թիվ 2, նույնի՝ *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ)*, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, թիվ 1, նույնի՝ *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը*, էջ 73-86:

Հայոց ազգակցական տերմինների ուսումնասիրությամբ զբաղվել է Բ. Զաքարյանը<sup>28</sup>: Նա տվել է այդ տերմինների զարգացման պատկերը՝ սկսած V դարից մինչև մեր օրերը. ինչպիսին են դրանք եղել հին հայերենում, ինչպիսին են ներկայումս գրական հայերենում, նաև որոշ բարբառներում: Հեղինակը նյութեր է հավաքել տարբեր շրջաններից, որոնց բնակիչները տարբեր տարածքային լեզվամշակութային հանրություններ են և խոսում են հայերենի տարբեր բարբառներով: Ժամանակակից հայկական ազգակցական տերմինները նա համեմատության մեջ է դրել գրաբարյան և բարբառային տերմինների հետ: Սա հնարավորություն է տվել հեղինակին վեր հանելու տերմինների աստիճանական զարգացումը:

Հայկական ազգակցական տերմինների պատմությանն է անդրադարձել Ա. Ասմանգուլյանը<sup>29</sup>: Նա փորձել է բացահայտել դրանց ծագումը (հնդեվրոպական և, թե՛ ոչ հնդեվրոպական): Ներկա ժամանակների հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունների, ազգակցական կապերի բնութագրության որոշ հարցերին են անդրադարձել նաև Լ. Աբրահամյանը<sup>30</sup>, Թ. Զաքարյանը<sup>31</sup> և ուրիշներ:

<sup>28</sup> Տե՛ս Բ. Закарян, *Система родства у армян*, Автореферат диссерт. на соиск. уч. ст. канд. ист. н., Ереван, 1990: Տե՛ս նաև Մ. Крюков, *Система родства китаЙцев*, М., 1972:

<sup>29</sup> Տե՛ս Ա. Асмангулян, *История армянских терминов родства*, Ер., 1983:

<sup>30</sup> Տե՛ս Լ. Աբրահամյան, *Ազգ-պետություն և, թե՛ ընտանիք-պետություն. Հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները*. – Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված էմմա Կարապետյանի հիշատակին, Եր., 2001:

<sup>31</sup> Տե՛ս Թ. Զաքարյան, *Գյումրիի ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների մի քանի հարցեր (ըստ 1980-1990-ական թթ. էթնոսոցիոլոգիական հետազոտությունների)*. – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, հ. III, Գյումրի, 2000:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### «ԱՁԳ» ԱՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԽՍԲԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Սովորաբար ազգն իր նախնական փուլում կազմավորվում էր միայն ընտանեկան համայնքներից՝ գերդաստաններից: Սակայն հետագայում՝ տոհմական կարգերի քայքայումից և մեծ ընտանիքների տրոհումից հետո «ազգ» արենակցական խումբը կազմվում էր ինչպես մեծ, այնպես էլ փոքր ընտանիքներից, իսկ XIX դարի վերջերին և XX դ. սկզբներին՝ հիմնականում փոքր ընտանիքներից: Ընտանիքների թիվը կարող էր հասնել մինչև 100-ի, գուցե ավելի: Յուրաքանչյուր մեծ ընտանիք կամ գերդաստան կարող էր լինել ազգի առաջացման սկիզբ: Այստեղից էլ հետևում է, որ յուրաքանչյուր ազգի ներսում կարող էին աճել նոր դուստր ազգեր:

Հայերենում «ազգ» եզրույթի նախնական նշանակությունն է «դաս», «ճյուղ»<sup>32</sup>: Այն գործածվել է մի շարք իմաստաբանական առումներով, որոնք բանավոր խոսքից անցել են ինչպես Աստվածաշնչի թարգմանության, այնպես էլ բուն հայ գրականության մեջ: Ըստ Աստվածաշնչի և հայ մատենագիրների տվյալների՝ «ազգ» եզրույթով էին արտահայտվում ա) գերդաստանը՝ իբրև վերընթաց և վարընթաց գծերով մի քանի արյունակից սերունդներից կազմված ամբողջություն, բ) մարդիկ ըստ սեռի. «ազգ կանանց», «ազգ արանց», գ) կենդանական ու բուսական առանձին տեսակներ, դ) հասարակական խավեր, միևնույն զբաղմունքի տեր մարդկանց խմբեր. «ազգ երկրագործաց», «զազգս պղծագործ քրմացն»<sup>33</sup>, կամ «Որք էին տոհմք և ազգք աշխարհակերք աշխարհավերք ժանդագործ քրմացն»<sup>34</sup>, ե) առանձին լեզվախմբեր. «ազգք լեզուաց», գ) առանձին դավանանքներ (հեթանոսները քրիստոնյայի նկատմամբ), է) առանձին ժողովուրդներ, առանձին պետություն-

ներ, էթնիկ հանրության բարձրագույն տիպ. «Ազգն հայոց», «ազգն հունաց», ը) նախարարական տան անվանում. «զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին»<sup>35</sup>, «Ազգն Արշակունեաց»<sup>36</sup>, Ղազար Փարպեցու մոտ՝ «էր յազգէն Արծրունեաց», «Մեպոսի մի յազգէն Ամատունեաց»<sup>37</sup>, Հայաստանն ամբողջապես՝ իբրև մի «տուն», մի «հարկ»: Բայց առավել շատ այն գործածվում է որպես արյունակից, ազգակից ընտանիքների միասնական խումբ իմաստով:

Որոշակի անճշտություններ կան տերմինաբանության հարցերում, որ գալիս է միջնադարյան հայ պատմագիրներից: Շատ հաճախ գրականության մեջ մատնանշվում են «տոհմ, ազգատոհմ» տերմինները, որտեղ տոհմի հիշատակումը խորհրդանշում է երբեմնի տոհմական սերտ միասնությունը: «Տեղ» բառը հին ժամանակներում ավելի մոտ ազգակցական կապ է նշանակել՝ որպես ազգի մի ճյուղ, սերունդ, մի ընդհանուր հայր<sup>38</sup>: Մ. Խորենացին «ցեղը» դիտում է որպես ազգի ճյուղ, այսինքն՝ ազգականների ավելի մերձավոր շրջանակ, մինչդեռ հետագայում «ցեղը» իմաստավորել է ազգականների ավելի լայն և հեռավոր շրջանակ, քան անգամ «տոհմ» հասկացության մեջ ընդգրկած ազգականների շատավիղիները: Չի բացառվում, որ «ցեղ» անվանումը հենց այն հայկական բառն է, որ կիրառվել է ազգ-արենակցական խմբի համար և որը պարսկական գերիշխանության շրջանում դուրս է մղվել «ազգ» և «տոհմ» բառերի կողմից. «տոհմ» նշանակում է ընտանիք, ազգ, դաս, ճյուղ, որոնք ձեռք են բերել ազգակցական խումբ իմաստը: Ազգին հոմանիշ է «դաս»-ը, որը թեև բուն հայկական տերմին է, բայց հիմնականում արտահայտել է հասարակական դասերն ու դասակարգերը և համանման այլ խմբերը: «Ազգին» հոմանիշ են նաև «տուն» և «գերդաստան» բառերը, որոնք ունեին տարբեր իմաստներ՝ տոհմ, ընտանիք, տուն (բնակարան), կալվածք, նախարարական տուն (Արծրունյաց տուն), երկիր և բուն հայկական դաս իմաստները: Արևմտահայոց մեջ, առհասարակ, ազգին համարժեք է գերդաստան բառը, որ նշանակում է

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 114, 164:

<sup>37</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցույ *Պատմութիւն Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնեան*, Տիֆլիս, 1904, էջեր 23, 45, 52:

<sup>38</sup> Տե՛ս Մտ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 4, Երևան, 1980, էջ 521, 554:

<sup>32</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Երևան, 1971, էջ 84:

<sup>33</sup> Տե՛ս Ազգաթանգեղեայ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1882, էջ 484:

<sup>34</sup> Տե՛ս Փավստոսի Բուզանդացույ *Պատմութիւն Հայոց*, ի Վենետիկ, 1832, գ. 8:

գերդաստանից անջատված, բայց միասնական կապեր պահանող ընտանիքների խումբ: Հետագայում փոփոխվել է ազգակցական կապը մատնանշող դրանց գործածությունը: Ներկայումս «ցեղ», «ցեղակից» բառերն ավելի հեռավոր ազգակցություն են մատնանշում, մինչդեռ ազգը խորհրդանշում է ազգականների ավելի սերտ խումբ:

Հայերը ազգ-արենակցական խմբի համար գործածում են նաև *ազգական, ազգակից, ազգակցություն, ազգականություն, ազգուտակ, ազգային, ազգացեղ, ազն, էրամ, ազգ ու էրամ, տոհմ, ազգատոհմ, ցեղ, ցեղակցություն, արյուն, խզուկ, խսում, լերդակից եղբայր, դաս, քոբուբուս* բառերը: Ջավախքում կանադոր ընդհանուր անվան տակ ընկալում էին մերձավոր ու հեռավոր ազգականների շրջանակ՝ հորեղբայր, մորեղբայր, հորաբորոջ որդի, թոռ, ծոռ, հեռավոր ազգական:

Ազգակցական խմբերը վաղ միջնադարյան գրականության մեջ հիշատակվում են «ազգ», «տոհմ», «ազգատոհմ» բառերով,<sup>39</sup> ինչպես օրինակ՝ «տանուտիրական պատին [Բագրատունիների – Ռ.Ն.] ազգին» (Խորենացի Բ, է): Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմություն» աշխատանքում խոսում է Արծրունյաց *տոհմի*, Արծրունյաց *ազգի* մասին: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է միևնույն ազգակցական խմբին: Սրանից հետևում է, որ վաղ միջնադարյան գրականության մեջ ազգ, տոհմ, ազգուտակ, ազգատոհմ տերմիններն ունեցել են միևնույն իմաստը: Շատ հաճախ այդ տերմինները գործածվել են իբրև հոմանիշներ՝ արենակցական ընտանիքների մերձավոր կապերով և որոշակի փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով շաղկապված անձանց որոշակի շրջան: Ազաթանգեղոսի մոտ գտնում ենք. «...վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին», կամ «խրեանց ազգատոհմին և եղբայրութեանն», «հրաման տայր զազգատոհմն սատակել»<sup>40</sup>: Ըստ Փավստոս Բուզանդի՝ «...դներ թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս և կենդանեացն ի կեանս, ազգի և տակի և տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց»<sup>41</sup>, Ղազար Փարպեցու երկում կարդում ենք. «...վասն ազգատոհմին փրկութեան»: «...Քանզի մեծարէր զնա, նախ՝ վասն ազգականութեան առնն», «ազգակից քո եմ՝ և զբարին քո կամին», «...ազգախառն և

արին ձեր եմ», «...յազգակից են Յոհաննա»<sup>42</sup> և այլն: Ազգակցական խմբերի վերաբերյալ հարուստ նյութեր են պահպանված ձեռագրերի հիշատակարաններում և միջնադարյան կալվածագրերում: Ամբողջ միջնադարի գրեթե բոլոր նյութերն էլ, ընդհուպ մինչև XIX դարի սկզբները, միանման են և հանդիսանում են ազգանվան սաղմերը: XIV դարի սկզբի ձեռագրերը վկայում են. «նաև ծնողսն իմ և զամենայն ազգատոհմն», «...և զամենայն ազգայինսն իւրեանց», «և զամենայն ազգականս», «...արեան մերձաւորաց նոցա», «Եւ զազգսն ամենայն», «Եւ զայլ ազգայինսն մեր», «...որոյ անուն Ըորզուքան ճանայի... (է) ի հոչակաւոր և ի մեծ ազգէ», «...յաղթող և բարձրաբազուկ իշխանաց իշխանն՝ յազգէ Վաչէի, որդի Տայիրին»<sup>43</sup>: Հայրական գծով արյունակիցների խումբը մատնանշելու համար XVII դարի պատմագիրներից նախ Ջաքարիա Ագուլեցին, ապա Առաքել Ղավրիժեցին հաճախ են գործածել *ազգ* տերմինը. «Այս Բանաւշահիս մայր ուներ անվանի, մեծ ազգի, անունն՝ Խանում»<sup>44</sup>, «Այլ այրս այս մովրով՝ ոչ էր ինքն ազնիորդի, և կամ իշխանագուն՝ և յերևելի յազգէ՝ գոր ազգն վրաց գլխին ասեն», «Վասն զի կային այլ նս մեծ ազգի կանայք յազգէն վրաց», «Լըցեալ էին զայնովի կանամբք և տանտիկնօք, և իւրեանց ազգայնօք», «Մեկնեցան ի տանց և ի տեղեաց և ելեալ ի բնիկ աշխարհէն հեռացան անջատեալք յնտանեաց և յազգաց պանդուխտք», «...եւ ազգականք եբրայեցոց եկեալ արտաքոյ կացեալ», «զնաց ի վանքն Օծոպու մերձ իւրոց ազգականացն», «...եւ յոմանց թէ ազգական քո եմ, ամենայն ինչ և ստացուածք քո ինձ հասանի՝ տուր ինձ» և այլն<sup>45</sup>:

Նմանատիպ տողերի հանդիպում ենք նաև կալվածագրերում. «Ոչ ազգոց և ոչ բարեկամաց», «Ոչ որդէ, ոչ դադերէ, ոչ ազգէ և ոչ բարեկամէ խօսող կամ բան ասող չ[ի]նի», «փարաքարցի իմ ազգական տիրացու Նիկողոսին», «Այսօրէն վաղն թէ մեր ազգէն դաւի անող լինի» և այլն: Արդէն XVII-XVIII դարերում՝ այդ նույն կալվածագրերում «եան», «ունի», «ենց» վերջավորություններով նախարարական

<sup>39</sup> Տե՛ս Մ. Խորենացու *Պատմութիւն Հայոց*, Տիֆլիս, 1913, էջեր 148, 162, 167, 216, 296, 301, 307, 322:

<sup>40</sup> Տե՛ս Ազաթանգեղեայ *Պատմութիւն Հայոց*, Ա – էջեր 25, 26, Բ – էջ 32:

<sup>41</sup> Տե՛ս Փավստոսի Բուզանդացու *Պատմութիւն Հայոց*, էջ 114:

<sup>42</sup> Համապատասխանաբար՝ տե՛ս Ղազարայ Փարպեցույ *Պատմութիւն Հայոց*..., էջեր 52, 23, 24, 58, 127:

<sup>43</sup> Տե՛ս ԺԴ դարի *հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջեր 16, 25, 29, 20, 62, 174, 207, 270:

<sup>44</sup> Տե՛ս Ջաքարիա Ագուլեցու *օրագրությունը*, Երևան, 1988, էջ 92:

<sup>45</sup> Տե՛ս *Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցույ, Վաղարշապատ*, 1896, էջեր 107, 144, 288, 384, 463, 430, 67 և այլն:

տների հիշատակությունները. «Դախթենց այգու կողման հողն քեզ էին տուեալ», «Օռկենց արտն...»<sup>46</sup>: Այդ վերջավորությունները այս կամ այն հասարակական խմբերի կամ նախարարական տների պատկանելություն էին ցույց տալիս:

Հայկական բառարաններում «տոհմ» և «ազգ» բառերի իմաստներում էական տարբերություններ չկան: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում գրված է. «Ցեղը մարդկանց խումբ է, որ սերված է մի ընդհանուր հորից և նշանակում է տոհմ, սերունդ, ընտանիք: Տոհմը մի նախահորից սերված մարդկանց խումբ է, որոնք իրար հետ կապված են արենակցական կապերով»: «Ազգ նշանակում է՝ տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապված են արյան կապով»<sup>47</sup>: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» առաջին հատորում «ազգ» տերմինը բացի սեռ, տեսակ (մարդկանց, կենդանիների), ժողովուրդ, հանրույթ, վիճակ մարդկանց, կարգ, դաս և այլ նշանակություններից, բացատրվում է նաև՝ «գարմ և գավակ սերեալ ի միոյ ի նախնեաց, Օնունդք միոյ նահապետի առաջնոյ», «ցեղ և տոհմ սերեալ ի նմին ազգի ի մասնաւոր ցեղապետէ», «տուն, ազգատոհմ, ծնունդք և սերունդք», «արեանառու ազգականք», «սերունդ որդւոցն և թոռանց, պորտ»<sup>48</sup>, այսինքն՝ ազգը ներկայացված է որպես միևնույն մարդուց կամ նախահորից սերված ժառանգների, արյունակից ազգականների միավորում (միասնություն): Նույն տեղում նշված է, որ «տոհմ»-ի հոմանիշներն են ազգ, ցեղ, ճյուղ, սերունդ, գարմ, ազգատոհմ, տուն անվանաձևերը<sup>49</sup>:

Պատմագիրքների աշխատություններում հանդիպում ենք նաև համազգություն՝ համազգի, տարազգակից՝ օտար, ազգացեղություն տերմինների: Օրինակ՝ Առաքել Դավրիժեցու երկում կարդում ենք. «...զի գուցե ոք տեղեակ իցէ ազգացեղութեան նոցա, որոյ ի լսելն՝ եկեալ յառաջագոյն ծանուցէ. և այսպէս յետ բազում քննութեանց՝ թէ ոչ գտցի ազգացեղութիւն ի մեջ նոցա...»<sup>50</sup>:

<sup>46</sup> Գալվաճագրեր, կազմեց Հար. Աբրահամյան, պրակ Ա, Երևան, 1941, էջ 71, 166:

<sup>47</sup> Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 7:

<sup>48</sup> Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1 (Ա-Կ), Երևան, 1979, էջ 6-7:

<sup>49</sup> Նույն տեղում, հ. 2, Երևան, 1981, էջ 887:

<sup>50</sup> Տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, էջ 333:

Ուշ միջնադարում առանձին բարբառներում սկսեցին օգտագործել արաբական ծագում ունեցող, ազգակցությունը մատնանշող «ջընս» տերմինը: Օրինակ՝ Սասունում կոչում էին *սայն* ու *ջընսը*՝ տոհմ, ազգ, ազգատոհմ, դոլ և այլ տեղերում՝ սենսիլէ (սերունդ, ճյուղ), պարսկական՝ թախում (թոխում-սերմ), թայֆա (կողմնակիցներ, արյունակիցներ, ամբոխ, ժողովուրդ), թուրքերեն՝ սոյ, քրդերեն՝ *պսմամ*, *կոճ* տերմինները՝ ազգ, ցեղ, գարմ իմաստներով:

Մեր գրառած դաշտային նյութերում սասունցիների ազգակցական աստիճանը բնութագրող անվանումներից են նաև *քոք*-ը՝ արմատ, *քոք* ու *բուս*-ը՝ արմատ և ծիլ նշանակությամբ, հեռավոր ազգակցություն, ծագման ընդհանրություն մատնանշելու իմաստով, նաև խրատւրնին՝ արյունակից, ազգական նշանակությամբ: Քոք տերմինը ջընս-ից (տոհմ) ավելի հեռու ընկած ազգակցական կապն է խորհրդանշում: Ջընսը *քոքի* մի ճյուղն էր: Սասունում ամուսնության արգելքը ազգի ներսում պահպանող հեռավորության սահմանը մատնանշվում էր տարահունչ տերմինով՝ պսմամ: Այսինքն՝ պսմամի շրջանակները ընդգրկում էին 6-7 սերունդ ունեցող ազգակցական խումբը: Դրանից այն կողմ ջընս-ի, *քոք*-ի շրջանակներն են, որոնք երբևէ ունեցել են ընդհանուր ազգակցական ծագում: Այդպիսի նշանակությամբ գրավոր աղբյուրներում «ազգ» տերմինը հիշատակված է նաև թայրաթոտ անվամբ<sup>51</sup>: Այստեղ առավել մոտ ազգականների խումբը մատնանշվել է նաև քրդական ծագմամբ բրազի օտարահունչ ձևով<sup>52</sup>:

Գործածվել են նաև ազգ ու էրամ տերմինները՝ հեռավոր ազգակցական կապերը մատնանշելու պարագայում: Սասունցիների շրջանում տոհմ տերմինը ավելի մոտ ազգակցություն է նշանակում, քան ցեղը: Ցեղը տոհմի ճյուղավորումներից մեկն է՝ «Շարեզու տոհմի ցեղից՝ սերունդներից են»: Երկու անվանաձևերն էլ հեռավոր ազգակցություն են խորհրդանշել<sup>53</sup>: Կարինում, Ջավախքում կանաղոր են անվանվում մոտ և հեռավոր ազգականները՝ հորեղբայր, մորեղբայր, հորաքրոջ, մորաքրոջ որդի, թոռ, ծոռ ազգականների խումբը:

<sup>51</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 149:

<sup>52</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տ. 3, էջ 68-70:

<sup>53</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 8, Իրինդ, 1971, էջ 15-17:

Ազգը հայրական գծով հիմնադիր նահապետից սերված վարընթաց և շեղակի կամ հորիզոնական ճյուղավորումներով մերձավոր արյունակից ընտանիքների միավորում է, որի մեջ ընդգրկված են սովորաբար վեցից յոթ, երբեմն էլ ավելի սերունդներ: Ազգի հիմնադրի անունից էլ սովորաբար առաջանում է ընդհանուր ազգանունը: Ազգի սերնդային հաշվարկը կատարվում է արական գծով, որը կոչվում է պորտ: Եթե ազգի մեջ տղամարդ չկա, այն համարվում է անհետացող: Տվյալ պարագայում ազգի ներկայացուցիչները կարող են միևնույն հեռավոր ազգական ընտանիքից որդեգրվել: Որդեգրվածը ձեռք է բերում այդ ազգի անվանումը և նրա բոլոր իրավունքները:

Արյունակցական ազգի նախապայմանն ուղիղ գծով երրորդ սերնդի ծնունդն է: Հետևապես երեք պորտը մեկ ազգ է, որն ունի իր հատուկ անունը՝ ազգանունը: Արյունակցական ազգը կազմավորվում է երրորդ սերնդից ուղիղ գծով: Երեք պորտից այն կողմ բոլոր արյունակից եռաստիճան սերունդները համարվում են ազգակիցներ: Նրանք մեկ ազգ են համարվում այնքան ժամանակ, քանի դեռ հետևորդ սերունդները հիշում են իրենց ազգակցական կապի մասին<sup>54</sup>:

Բացի արյունակիցներից, տվյալ ազգի անդամ էին համարվում երկու սեռի այն բոլոր անձինք, որոնք այդ ընտանիքի կողմից հարսնացվում, որդեգրվում կամ ծայրահեղ դեպքերում տնփեսայացվում էին: Մյուս կողմից՝ իրավաբանորեն ազգի շրջանակներից դուրս էին համարվում այն բոլոր աղջիկներն ու կանայք, որոնք ամուսնանալով պետք է թողնեին իրենց հայրական տունը: Այսպիսով, հարսը իր հայրական ազգի համար դառնում էր լոկ «ցեղակից», իսկ սկեսրայրենց համար՝ ազգազրված ազգակից: Սկեսրայրենց ընտանիքի հանդեպ ունեցած պարտականություններից մեկը ամուսնու տոհմանունը ընդունելն էր, որն ուներ անգիր օրենքի կամ սովորութաիրավական պարտականության ուժ: Թեև այդ պարտականությունը ոչ մի օրենսդրական ակտով սահմանված չէր, բայց եղել է մշտապես գործող կարգ: Ամուսնու տոհմի համար մեծ անպատվություն էր, եթե կինը արհամարհում էր նրա տոհմանունը<sup>55</sup>: Այս մասին անգամ վաղ միջնադարյան աղբյուրներն են հավաստել: Օրինակ՝ Մովսես Խորենացին

նշում է, որ Տրդատը կնության առնելով Աշխադարի դուստր Աշխենին՝ «հրամայե գրել գնա Արշակունի»: Մեծատոհմիկ տիկնայք, որպես գավառի տիրուհիներ, կոչվում էին ամուսնուն պատկանյալ գավառի անունով: Այդ են հավաստում «Ջտիկինն Ռշտունեաց Համագասպուհի», «Շուշանիկ աշխարհատիկինն Աղուանից», «տիկինն Վասպուրական Հոփսիսիմե» և այլ անվանաձևեր, որոնք հանդիպում են Բուզանդի, Խորենացու, Կաղանկատվացու, Արծրունու և այլոց երկերում<sup>56</sup>: Հավանաբար հասարակ բնակչության շրջանում առավել գործածական է եղել ամուսնու անվամբ կանանց ներկայացնելը, որով ցույց է տրվում նրանց տոհմանունը և դասային դրությունը: Ամուսնու տոհմանունը կանայք պահպանում էին ցմահ: Նրանք զրկվում էին ամուսնու տոհմանունը կրելու իրավունքից, երբ ամուսնուն մահվան կամ ամուսնալուծության պատճառով նորից էին ամուսնանում: Ազգն իր հարսնացած աղջկան դիտում էր որպես կիսաօտարացածի, սուկ ցեղակցի, բայց ոչ երբեք ազգի ու ընտանիքի լիազոր իրավունքներով օժտված անձի: Հարսնացողը հայրական տնից օժիտ էր տանելու ամուսնու օջախ և «օտար ազգի» համար ժառանգներ էր մեծացնելու, ուլքեր չէին կարող համարվել մայրական գծով ազգի անդամներ, բայց համարվում էին ուղղակի ցեղակիցներ: Այդ պատճառով կինը մահանալիս ոչ թե հայրական, այլ սկեսրանց գերեզմանաշարքումն էր թաղվում: Ըստ էության, նա կամուրջ էր հայրական և սկեսրանց ընտանիքների ու նրանց ազգակցական խմբերի միջև: Նրա երեխաները թեև համարվում էին հորեղբայրների և ազգակիցների համար «միս ու արյուն», «իրենց շիզյարը», բայց ոչ ազգակիցը:

Բազմաթիվ զարդաքանդակներում և ձեռագրերում մեր նախնիներն ընտանիքը նմանեցրել են «կենաց ծառին»: Նրա բունը կազմում էր հայրական պապի ընտանիքը, զանազան կողմեր թեքված հաստ ու բարակ ճյուղերը և ոստերը արտահայտում էին նախնու հետ որոշակի արենակցական մտիկություն կամ հեռավորություն: Այդ կապը կոչվում էր ազգականություն կամ ազգակցություն:


Արյունակից են մի ընդհանուր նախահորից սերվածները, ինչը կարող էր լինել վերընթաց, վարընթաց և շեղակի: Ուղղագիծը նախնի-սերունդ կապն է, ըստ կենաց ծառի՝ բունը, որ լինում է վերընթաց

<sup>54</sup> Տե՛ս В. Бдолян, *Кровнородственный "азг"*:

<sup>55</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Կինը հայոց ավանդական ընտանիքում* (ըստ սա-սունցիների ազգագրական սովորությունների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-87:

<sup>56</sup> Տե՛ս Վարդան Հացունի, *Հայուհին պատմութեան առջև*, Վենետիկ, 1936, էջ 34-35:

և վարընթաց: Մտողներ-նախնի՝ ծնող, պապ, պապի պապ կապը կոչվում է վերընթաց ազգակցություն, իսկ ծնողներից սերունդ զարգացող կապը՝ ծնողներ, զավակներ, առն՝ թոռ, թոռան թոռ, ծոռ, ծոռնորդի և այլն՝ ուղիղ վարընթաց ազգակցություն:



Ղահրամանյանների տոհմաձառը  
XVIII դարի վերջերին 7 հոգի, որոնց մեջ նաև Թորան,  
վանքից իջել են գետահովիտ, հիմնել Ներքին Շեն գյուղը  
(Տոհմաձառը տրամադրել է Խաչատուր Աբովյանի անվան  
Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս,  
պատմական գիտությունների դոկտոր Կիմ Ղահրամանյանը)

Նկ. 1

Շեղակի կամ հորիզոնական են այն արյունակիցները, որոնք կազմում են ընդհանուր նախահոր ճյուղավորումը, կամ ըստ կենաց ծառի՝ ընդհանուր բնի ճյուղեր: Այս տեսակետից ուշագրավ է Ղահ-

րամանյանների տոհմաձառը (ԼՂՇ Շահումյանի շրջանի Ներքին Շեն գյուղում): Տոհմը հիմնվել է 1610 թ.՝:

Ազգակցության մերձավորությունը որոշվել է սերունդներով կամ պորտերով: Յուրաքանչյուր սերունդ կազմում էր մեկ պորտ, մեկ աստիճան: Օրինակ՝ պապն ու թոռը երկրորդ աստիճանի ուղղագիծ ազգականներ են: Նույն սկզբունքով որոշվել են նաև շեղակի, հորիզոնական կամ կողային ազգակցության աստիճանները: Սակայն այստեղ ընդհանուր նախահոր սերունդն իբրև աստիճան հաշվառման ենթակա չէ: Օրինակ՝ երկու եղբայրների զավակները հորիզոնական չորրորդ աստիճանի ազգականներ են, որովհետև երկու ճյուղերում (չհաշված նրանց ընդհանուր նախնու՝ պապի ծնունդը) առկա է երկուական սերունդ:

Հայոց միջնադարյան կանոնագրքերում արյունակցական աստիճանները հաշվառելու կարգը վերցվել է հռոմեական իրավունքից, ըստ որի՝ արյունակցական աստիճանների հաշվառման կարգը այս է. վերընթաց գծով հաշվում են կողագիծ անձանց սերունդների թիվը մինչև ընդհանուր նախահայրը, բաց թողնելով այն՝ վարընթաց գծով հաշվում են մյուս ճյուղի սերունդների թիվը: Որքան սերունդ՝ այնքան աստիճան<sup>57</sup>:

Մեր նախնիները խնամիրությանը ևս տվել են ազգակցական կապի գորություն, որի շնորհիվ երկու օտար, անգամ թշնամի տոհմեր կամ ընտանիքներ միմյանց հետ կապվում էին բարեկամության խորհրդով, որը ոչ հազվադեպ գնահատվում էր հարազատական:

<sup>57</sup> Տոհմի հիմնադիրն էր Թորան: Նա ըստ Կիմ Ղահրամանյանի հավաստման, թրի նման ուժեղ, սուր լինելու համար էր ստացել այդ մականունը: Նրա թոռ Ղահրամանի՝ հերոս, քաջ լինելու համար էլ տոհմը ստացել է Ղահրամանյան ազգանունը, որով հիշվում են հետագա սերունդները 1780 թ-ից ի վեր (Ղահրամանը ծնվել է 1780 թ.): Ղահրամանյան ազգությանը պատկանող ազգատոհմը տեղացիները հիշում են նաև որպես Թորանց տներ: Ղահրամանների ճյուղավորված տոհմը 1992 թ. հունիսին Շահումյանի շրջանի հայաթափումից հետո ցրվել է աշխարհով մեկ (ՀՀ, ՌԴ, Ուկրաինա, Ֆրանսիա, ԱՄՆ և այլն): Տոհմի 400-ամյակը շուքով նշվել է ՌԴ Պյատիգորսկ քաղաքում: Հոբելյանի առթիվ լույս է տեսել տոհմի պատմության պատկերագրող այբուբերանում 2010 թ. (Ким Каграманян, Познай свои корни: гордись и украси, Ереван, 2010):

<sup>57</sup> Տե՛ս Ս. Հովհաննիսյան, *Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում*, Երևան, 1976, էջ 226:

Հայ ազգագրության նշանավոր հետազոտողներից Ս. Պ. Ջելինսկին հայկական ազգակցական համակարգը բաժանել է երեք խմբի՝ արյունակցական ազգակցություն, խնամիական ազգակցություն և հոգևոր ազգակցություն: Առաջինում ընդգրկվում էին բոլոր արյունակիցները, երկրորդում՝ հարսի համար ամուսնու ծնողները, եղբայրները, նրանց կանայք, քույրերը, փեսայի համար՝ աներանք (կնոջ ծնողները, եղբայրները, քույրերը, փեսաները և այլն), երրորդում՝ կնքահայրը և պսակի քավորը, քավորների կանայք (քավորկին), սանիկները, սանահայրերը, սանամայրերը, այնուհետև՝ որդեգիրները, եղբայրացածները և քույրացածները<sup>58</sup>: Այստեղ նկատելի է, որ գիտնականը խնամիական ազգակցությունը շփոթում է խնամիական իրարից հետ:

Հայերը երեք խնամիներից ազգակից չեն ճանաչել, քանզի իրավագրության իմաստով աղջկա երեխաները չէին համարվում ազգի անդամներ, բայց այն ժամանակ, երբ խնամիներից մեկն ու մեկը փորձանքի կամ այլոց կողմից հարձակման էր ենթարկվում, ամբողջ ազգությունը, իբրև դաշնակից, միմյանց թիկունք էր կանգնում:

Հայ իրականության մեջ սովորույթի ուժով երբեմն փեսային իրավունք է վերապահվել իր կնոջ մահից հետո ամուսնանալ քենու հետ: Ամուսնությունը բացառիկ դեպքերում հանդուրժելի է եղել նաև նրա հոր ու գոթանչի, աներոջ ու մոր, եղբոր ու քենու, աներձագի ու քրոջ և մնացած բոլոր մերձավոր ու հեռավոր ազգակիցների և աներանց ազգակցության բոլոր անդամների միջև: Հայկական կենցաղում այս երևույթները հանրության կողմից չեն դատապարտվել: Մինչդեռ արյունակցական ազգակցության սահմաններում պահպանվել է հատուկ կարգ ու կանոն: Խնամիական, կամ կաթի ազգակցության ամուսնությունը թույլատրելի է եղել չորրորդ աստիճանում, մինչդեռ արյունակցական խմբերի միջև՝ 7-րդ աստիճանն անց<sup>59</sup>:

Գրեթե նույնը կարելի է ասել նաև ազգի անդամ այրի հարսի երկրորդ սկետրանց ընտանիքի ու ազգականության մասին: Մահացած

ամուսնու ընտանիքի կամքով, այրիացած հարսը կրկնոց՝ երկրորդ անգամ ամուսնանալու դեպքում, նրա ամուսնու հետ եղբայրանում էին: Երկրորդ ամուսնուց ծնված զավակները ընդունվում էին որպես իրենց քույրեր ու եղբայրներ:

Հոգևոր ազգակցությունը, ելնելով ժառանգության և փոխադարձ տնտեսական օգնության հանգամանքներից, նորմավորվում էր յուրատեսակ բարոյական ու իրավաբանական հանգամանքներով: Հատկապես տնտեսական ու փոխադարձ օգնության գաղափարներով էին օժտված որդեգրությունը, տնփեսայությունը, եղբայրակցությունը (ողջումախպերություն, ողջումաքիրություն կամ կաթնախպերություն և կաթնաքիրություն):

Ազգը՝ որպես արյունակցական մեծ խումբ, բաժանվում է ճյուղերի: Ազգի ներսում առավել նեղ ազգակցական խումբ է համարվում ազգի հիմնադրի որդիներից կազմված ճյուղը, եթե նրանք (որդիները) մի քանիսն են: Իսկ եթե ազգի հիմնադիրն ունի մեկ որդի, ապա առանձին ճյուղերը հաշվվում են երրորդ սերնդից: Ամեն ազգակցական ճյուղ իր ներսում բաժանվում է ավելի նեղ խմբերի, որոնց մեջ մտնում են եղբայրների, զարմիկների, նրանց որդիների ընտանիքները: Այս խմբին տարբեր շրջաններում տարբեր կերպ են կոչել՝ թաբուն, թիրա (թուրքերեն է, նշանակում է «ճյուղ»՝ մերձավոր ազգական), թախում, թայֆա, դաս, սերունդ, ճյուղ և այլն: Օրինակ՝ Տավուշում օգտագործել են թիրա, թաբուն, Մուշում՝ դաս, Միսիանում, Արմավիրում՝ թախում, Գորիսում, Ստեփանավանում՝ սերունդ, ճյուղ, ցեղ տերմինները: Յուրաքանչյուր ճյուղ իր հերթին բաժանվում է ավելի փոքր, բայց ավելի մոտ ազգականների խմբի, որոնք տարբեր բարբառներում կոչվում են բիձոնք, հոպարանք, ապերանք, ամիանք, հոխարտանք, հոպկա-ձժեր, ըմո ձժեր, ապո տղեք, ապկղիք,<sup>60</sup> այլ կերպ ասած՝ հորեղբոր տղերք կամ եղբոր տղերք: Յուրաքանչյուր ճյուղ ներառում է հինգ-վեց սերունդ, որոնք սերված են ազգի հիմնադրի որդիներից կամ թոռներից, իսկ ավելի փոքր միավոր համարվող «ապերանք» խմբի մեջ մտնում են եղբայրներն իրենց երեխաներով և թոռներով: Մրանք վարընթաց և հորիզոնական ճյուղավորումներով երեք սերնդից բաղկացած ընտանիքներ են:

<sup>58</sup> Տե՛ս Ս. Պ. Зелинский, *Народно-юридические обычаи у армян Закавказского края. "Известия Кавказского отдела Императорского русского географического общества*, том XII вып. III, 1899 г., էջ 151-153:

<sup>59</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)*, Երևան, 2007, էջ 46:

<sup>60</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, «Ազգ»-արենակցական համակարգը հայոց մեջ, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, 2011, թիվ 2, էջ 35-46:

Ժամանակի ընթացքում մայր ընտանիքից առանձնանում են ավելի փոքր դուստր ընտանիքներ, որոնք գիտակցում են տվյալ ազգակցական խմբին իրենց պատկանելը և հինգ-վեց, որոշ դեպքերում նաև ավելի հեռու սերունդներ հիշում են տվյալ ազգի հիմնադրի անունը:

Ազգակցական խմբի մեջ մտնում են այն ընտանիքները, որոնք ապրում են միևնույն բնակավայրում: Կան դեպքեր, երբ ազգի մի ճյուղը, որոշակի հանգամանքներից ելնելով, բնակության է տեղափոխվում այլ վայր, որն էլ համարվում է նոր ազգի հիմնադրման սկիզբ: Սկզբնական շրջանում այդ ճյուղը շարունակում է կրել նախկին տոհմական անվանումը՝ պահպանելով գաղափարաբարոյական կապերը, բայց ժամանակի ընթացքում թուլանում են դրանք, և նոր բնակավայրում հաստատվածները դառնում են լիիրավ ազգ՝ պահպանելով հիշողությունը մայր ազգի նկատմամբ: Ռոպես կանոն՝ հինգ-վեց սերունդ հետո հին անվանումը փոխարինվում է նոր ձևավորվող ազգի հիմնադրի անունով:

Ազգ կազմավորվելու ընթացքը այլ կերպ է տեղի ունեցել 1826-1828 թթ. ռուս-պարսկական, 1828-1829 թթ. և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, ինչպես նաև Մեծ եղեռնից ու 1920-ական թթ. և 1940-ական թվականների կեսերից հետո Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայերի մեջ<sup>61</sup>: Ազգի ընտանիքների մի մասը մնացել է իր հայրենիքում, իսկ այն մասը, որ գաղթավայր է հասել առանց անվանափոխության, զարմանալիորեն հարատևում է նաև այստեղ: Կիսված ազգակցական խումբը նոր հայրենիքում վերակառուցվել ու հարմարվել է տեղական պայմաններին: Նոր կազմավորվող ազգերը կա՛մ ձևավորվել են մի անձից, կա՛մ մի ընտանիքից, թեև գաղթի ճանապարհին որոշ ազգեր կոտորակվել են տարբեր պատճառներով: Նախ նրանց մի մասը շարունակել է ապրել ամբողջական կազմով, մի մասն էլ բնակավայրի ընտրության,

<sup>61</sup> Ներգաղթի ընթացքը և այդ հենքի վրա՝ դրա փուլային առանձնահատկությունները, ներգաղթածների և տեղաբնիկների փոխընկալումների (լեզվական, կենցաղային և այլն) ու փոխառնչությունների, կենցաղամշակութային փոխներթափանցումների, նորեկների ադապտացման և ինտեգրման խնդիրների, նոր միջավայրում ներգաղթածների ինքնության ու վարկանիշի փոփոխությունների և այլն հարցերին հանգամանորեն է անդրադարձել Արմենուհի Մտեփանյանը՝ իր «XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում» (Երևան, 2010) գրքում:

վարելահողերի, արոտավայրերի, բնակլիմայական պայմանների առնչությամբ առաջացած տարածայնությունների պատճառով կիսվել է, որոշները, համաձայն չլինելով նոր հաստատվող բնակավայրի պայմաններին, հեռացել են այլ վայրեր՝ նոր բնակավայրերի հիմքը դնելով կամ էլ հաստատվելով նուր բնակեցված բնակավայրերում: Այսպես, 1830 թվականից հետո Արևելյան Հայաստան եկողները տեղավորման ժամանակ էլ կոտորակվում են՝ նախընտրելով տարբեր բնակավայրեր:

Այս գործում որոշ դեր է խաղացել ազգի նահապետական բնույթից, նրա եաստիրությունից ազատագրվելու միտումը: Մեծ և, ըստ ամենայնի, յոթ պորտը վաղուց անցած ազգերը պատմականորեն թուլանում են, և նրանց մեջ ուժեղանում են կենտրոնախույս ուժերը: Այս տեսակետից թուրքերի և քրդերի բռնակալական ռեժիմից՝ ազգատուների ազատագրելուց հետո, Ռուսաստանի՝ անհամեմատ խաղաղ պայմաններում, պետք է որ թուլանային ազգակցական երբեմնի կապերը, ազգի մեջ մտնող ընտանիքները ձեռք էին բերելու որոշ ինքնուրույնություն: Մեծ ազգերի կոտորակման ցայտուն օրինակներ է տվել Արևելյան Հայաստանում հաստատված ընտանիքների պատմությունը՝

\* 1971 թ. Թալինի տարածաշրջանի Իրինյ գյուղում բանասաց Արթին Հարությունյանի հավաստմամբ Մասնա Մեմալ գյուղի Շաբեգու տների հիմնադիրը՝ Շաբեգը, քուրդ աղայի չարագործության համար (հայ հարսների՝ իր կողմից առաջին գիշերվա իրավունքից օգտվելու կարգ սահմանելու) նրա նկատմամբ վրեժխնդիր լինելով, փախել է Ադձնիքի դաշտային շրջանից՝ հաստատվելով լեռնային Մասնա Մեմալ գյուղում: Շաբեգի իրական անունը Շավարշ է եղել, ով ըստ բանասացի հավաստման՝ բազում զավակներ ու գորեղ ընտանիք ունենալու շնորհիվ՝ բեգ կամ իշխանավոր լինելու համար կոչվել է Շաբեգ: Յոթ եղբայրներից երկրորդը հաստատվել է Մասնա Հիթիք գյուղում, երրորդը՝ Մուշ քաղաքի մոտ գտնվող Փեթաթ գյուղում, չորրորդը՝ նրան հարևան Ունան, հինգերորդ և վեցերորդ եղբայրները՝ Մասնա Դավրնի և Դարիբջան գյուղերում, իսկ յոթերորդ եղբայրը՝ Արևելյան Հայաստանի Աշտարակի տարածաշրջանի Ոսկեվազ գյուղում՝ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո: Եղբայրները ցրվել են տարբեր կողմեր, տարբեր գյուղեր՝ քրդական հետապնդումներից ու հալածանքներից խույս տալու նպատակով (տե՛ս թիվ 3 սխեման): Յոթ եղբայրներից հինգի սերունդները ամբողջովին գոհ են գնում Եղեռնին՝ թուրքական յաթաղանին: Շաբեգու տան սերունդներն ըստ սխեմայի մինչև 1970 թվականը վարընթաց ուղիղ գծով 7 պորտի են հասել, իսկ



Գաղթից հետո, ըստ մեր դաշտային ազգագրական նյութերի, որքան ազգը ջլատվել ու կորուստներ է ունեցել, այնքան ձգտել է ուժեղ դրսևորվել, սերտացնել իր կապերը: Ինքնապաշտպանության բնագոյը և իրականության դժվարությունները նպաստել են փոքր և իրար կորցրած ազգերի միավորվելուն, մի երևույթ, որ հարատևել է մինչև 1930-ական թվականները: Նման պայմաններում ազգն այն ընտանիքի հիմնադրի անվամբ է հիշատակվում, որը նոր բնակավայրում հաստատվածն է: Այլ վայրից տեղափոխվելով նոր բնակավայր,

առ այսօր երկու սերնդային աստիճան լա լրացած կլինի: Այժմ նրանց շառավիղները, ինչպես Իրինդ գյուղում, այնպես էլ Երևանում և այլուր, կրում են Հարությունյան ազգանունը՝ ոմանք պապի, ոմանք էլ ապուպապի՝ տոհմական անունով (տե՛ս ԴԱՆ, տ. 6, 1971, Իրինդ գյուղ):

Արագածոտնի Աշտարակի տարածաշրջանի Լեռնարոտ գյուղից Գելիեգուզան (Մասուն) գյուղի Խզրո տների շառավիղներից Արշակ Առաքելյանի (Ըոքոն), Դանիել Գրիգորյանի (Դանա) և Արշակ Ներսիսյանի՝ աշխույժ, բանիմաց, հիշողությունը «Էրզրի» մասին լավ պահպանած բանասացների հավաստմամբ՝ Գելիեգուզանի ամենահեղինակավոր ազգերը Խզրո և Մուրո տներն էին, որոնք ընդհանուր ծագում ունեին: Այս ազգանվանումները կապված են «Կրպրի» կոչված ազգատոհմի յոթ եղբայրներից երկուսի՝ Խզրոյի և Մուրոյի՝ Գելիեգուզանում հաստատվելու և այստեղ ազգի հիմնադիրներ դառնալու հանգամանքի հետ: Եղբայրները վրեժխնդիր են լինում իրենց ընտանիքների արժանապատվությունը ստորացնող քուրդ աղայի նկատմամբ, այրում են նրան չորացած տերևների դեզի մեջ և, իրենց ձեռքի սմբակները հակառակ ուղղությամբ պայտելով, գաղտնի հեռանում են: Եղբայրներից երբորը հաստատվում է Հավկունք (Տավոքիկ) բնակավայրում, չորբորը՝ Էրզրումի գյուղերից մեկում, մյուսների մասին չհիշեցին:


Գելիեգուզանում Խզրո տները աճելով, կազմում են յոթ ճյուղ՝

1. Պետո (Պետրոսի) դըվընին (տներ),
2. Մադո դըվընին,
3. Մարտո (Մարտիրոսի) դըվընին,
4. Միմո (Միմեոն) դըվընին,
5. Օվո (Հովհաննեսի) դըվընին,
6. Նիգո (Նիկողոսի) դըվընին,
7. Ազոքնին:


Խզրո տների Պետո և Մադո եղբայրական տների սխեմաները ներկայացվում են ըստ 1895, 1914, 1926 թթ. տվյալների: Տե՛ս սխեմա 1, 2: Տվյալները՝ ըստ բանասացներ Արշակ Առաքելյանի, Արշակ Ներսիսյանի և Դանիել Գրիգորյանի հաղորդման (ԴԱՆ, տ. 11, 1972, գ. Լեռնարոտ):

այստեղ սերունդներ տալով՝ հիմնադրվում է նոր ազգատոհմ, որն էլ կրում է հիմնադրի անունը: Հայկական բնակավայրերի պատմությունը ցույց է տալիս, որ անընդհատ տեղաշարժ է կատարվել Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան, կամ էլ քրդական հալածանքներից՝ Տիգրանակերտի դաշտից դեպի Մասնա լեռները: Մյուս կողմից էլ նկատվել է հակառակը՝ Մասնա սակավահող լեռնային շրջաններից հայ բնակչությունը հարկադրված իջել է դաշտային հարավային գավառները (Բշերի, Սլիվան, Խարզան և այլն): Այս շրջաններում XVII-XVIII դդ. քրդերի և վաչկատուն կյանք վարող այլ մահմեդական տարրերի ասպատակություններից ավերվել են նստակյաց կյանքով ապրող հողագործ հայերի բնակավայրերը, կողոպտվել են, մի մասն էլ հեռացել է, որով դատարկվել և ամայացել են երբեմնի շեն բնակավայրերը: Բայց սրանով էլ վաչկատուն, սարվորային կյանքով և թալանով ապրող քրդական ցեղերը զրկվել են ձմռանը հայկական գյուղերում կերակրվելու հնարավորությունից: Դրա համար էլ նրանց ձեռնառու էր հողագործ և շինարար հայերի գոյությունը, ուստի չէին արգելում հայության վերստին հաստատվելուն՝ նրանցից հարկեր, տուրքեր գանձելու, նրանց իրենց ծառայեցնելու համար: Մեր բանասացների հաղորդման համաձայն՝ քրդերի մի մասն էլ ունեցել է հայկական ծագում: Ըստ նրանց՝ Խարզան (Արզն)՝ Բաթման գետի հովտի գյուղերը բնակեցվել են Մասունի լեռներից իջած հայերով: Օրինակ՝ Գալիոկ գյուղում Մասունի Կուսգետ և Կոփ գյուղից եկածներն են բնակավորվել<sup>62</sup>:

<sup>62</sup> Նյութերը 1972 թ. Վանաշենում հաղորդեց Հովհաննես Մերջիկյանը՝ 86-ամյա գրագետ մի ծերունի: Քրդական որոշ ցեղերի հայկական ծագման մասին փաստերով ուշագրավ և հարուստ տեղեկություններ են հաղորդում մի շարք հեղինակներ՝ Հ. Շահպազյան,՝ *Քուրդո-հայ պատմություն*, Կ. Պոլիս, 1911, էլիզե Ռեկյու՝ *Լազիստան, Հայաստան և Քուրդիստան*, Վաղարշապատ, 1893, Մ. Շվոտ, *Քրդերը Տաճկաց Հայաստանում* (ազգագրական նյութեր), Ս. Պետերբուրգ, 1905, Թ. Մկրտչյան, *Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քուրդերու զազանությունները*, Գահիրե, 1919, Անդրանիկ, *Տերսիս, Ճանապարհորդություն և տեղագրություն*, Թիֆլիս, 1900, Գ. Հալաջյան, *Դերսիսի հայերի ազգագրությունը*, էջ 61, *Линч Х., Армения*, Т. II, Тифлис, 1910. *Некоторые сведения о турецких курдах-кызылбашах (Из путевых заметок французского вицеконсула в г. Эрзеруме г-на Гренара составил П.И. Аверьянов)*, "Изв. штаба Кавказского военного округа", № 19, стр. 47 և այլն:



Մխենա 1. Պետո տներ



Մխենա 2. Սառա տներ

Ավելի ուշ՝ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ապրանքադրամական հարաբերությունների՝ հայկական գյուղ արագորեն ներթափանցումը, արտագնա աշխատանքից, առևտրից ստացված եկամուտների խտրական ծախսումները, առանձին անձանց մոտ մասնավոր կուտակումների ուժճացումը, «իմն ու քոնը» մեջտեղ գալը հանգեցրեցին մի կողմից գերդաստանական տների վերջնական քայքայմանը և անհետացմանը, մյուս կողմից՝ ազգակցական կապերի թուլացմանը:

Նահապետի ազդու ճնշումներն ու խստությունները այլևս անկարող էին կանգնեցնել գերդաստանի տրոհումը: Նահապետի և նրա կնոջ մահից հետո բաժանքը անխուսափելի էր դառնում: Սովորաբար բաժանքը կայանում էր ծնողների մահից հետո, որպեսզի տան մեծերը կենդանության օրոք որդիների բաժանման կսկիծը չապրեին, քանի որ բաժանքը նրանց կողմից աղետ էր դիտվում:

Խոշորացող գերդաստանից նախ առանձնանում էին նրա կողմնային կամ հորիզոնական ճյուղերը՝ հորեղբորորդիների ընտանիքները, ապա՝ ուղիղ գծով սերունդները: Դրանով դրվում էր ազգի, ազգակցական թաղի հիմքը: Լինում էին դեպքեր, երբ ուղիղ, վարընթաց գծով սերունդներից կազմված գերդաստաններից բաժանվում էր դժգոհ որդիներից մեկը: Եղբայրական որոշ գերդաստաններում իրար նեցուկ լինելու համար երկու եղբայրները բաժանվում էին համատեղ, մեկ ընտանիք կազմելու պայմանով: Եվ այդ առանձնացած փոքր ընտանիքները կրկին շարունակում էին պահպանել բազմասերունդ և բազմանդամ կազմը՝ 15-25 և ավելի հոգի<sup>63</sup>:

Բաժանումից հետո էլ յուրաքանչյուր ընտանիքի սեփականության կոլեկտիվ պաշտպանությունը ազգի հիմնական հատկանիշներից մեկն էր: Որքան համախմբված էր ազգը, այնքան նրա ընտանիքները ապահովված էին և՛ նյութապես, և՛ բարոյապես:

Թույլ ազգերը համախմբվում էին խնամիական կամ հեռավոր ազգակցական կապերի միջոցով: Նման համախմբման համար հարմար միջոց էր նաև արյան եղբայրությունը, երբ երկու ոչ մերձավոր անձինք ճկույթներից հանված արյունը ծծում և զենքեր էին փոխա-

նակում: «Փոխադարձաբար ծծելով ճկույթների արյունը, եղբայրացածներն այնուհետև իրար պաշտպանում էին փորձանքների ժամանակ, օգնում տնտեսական դժվարությունների դեպքում և սրբությամբ պահպանում վրիժառությունը»<sup>64</sup>: Դա ինքնապաշտպանության միջոց էր մանավանդ այն դեպքերում, երբ անձը զուրկ էր մերձավորներից: Հնում սոցիալ-տնտեսական որոշակի հարաբերությունների պայմաններում, երբ գյուղական կամ թաղային կոիվներն անխուսափելի էին, այս ձևով ազգականացումը անհրաժեշտություն էր: Չանգեզուրի հայերի վերաբերյալ եղբայրանալու ծեսի ուշագրավ նկարագրություն է թողել Ջելինսկին. «Եղբայրակցությունը կատարվում է թե՛ միննույն սեռին և թե՛ տարբեր սեռերին պատկանող անձանց միջև: Եղբայրանալու ծեսը կայանում էր Չատկի օրը, պատարագից հետո. երկու անձինք, որոնք եղբայրանալու են, միմյանց ձեռքերը բռնած համբուրում են Ավետարանը և փոխադարձ խոստում տալիս՝ իրենց վրա վերցնել եղբոր կամ քրոջ (նայած սեռին) պարտավորությունները և մինչև մահ դրանք կատարել: Այլ տեղերում եղբայրակցության ծիսակատարության միջոցին, ծակում են իրենց ճկույթների ծայրերը և փոխադարձաբար ծծում միմյանց արյունը: Այս եղանակով եղբայրացածները կոչվում են Ավետարանի եղբայր կամ ողջույն եղբայր»<sup>65</sup>: Եղբայրության, հարագատ բարեկամության ուխտը, որ կատարվում էր եկեղեցում ձեռագիր Ավետարանի վրա երդում տալով՝ կոչվում էր նաև աղբրգիր: Իսկ Մուշում, Ակնում հոր կամ մոր կողմից որդեգրվելով եղբայր դարձած տղան դառնում էր ոչ արյունակցական կապով մեկի եղբայրը:

*Ախպեր, կաթնախպեր, կաթնաքիր, ավետարանի ախպեր, ավետարանի քիր, քուրիկ* հոգևոր ազգակցությունը մեր իրականության մեջ գոյատևեց մինչև 1930-1940-ական թվականները: Սա երբեմն վավերացվում էր եկեղեցու կողմից: Հոգևոր ազգակցությունը, ելնելով ժառանգության և փոխադարձ տնտեսական ու բարոյական օգնության հանգամանքներից, նորմավորվում էր յուրատեսակ բարոյական ու իրավաբանական գործոններով: Տնտեսական և փոխադարձ օգնության գաղափարներով էին օժտված որդեգրությունը, տնփեսայություն-

<sup>63</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը*, էջ 77:

<sup>64</sup> Տե՛ս Խ. Մամուլեյան, *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. III Երևան, 1941, էջ 148:

<sup>65</sup> Տե՛ս Շ. Зелинский, *Народно-юридические обычаи Закавказских Армян*, էջ 6:

նը, եղբայրակցությունը (*կաթնախայերություն, կաթնաքություն*): Եկեղեցական կանոնագրքում գրանցված է այսպիսի հարց ու պատասխան. «Հարցումն. – Երախայք, որ մի մօր կաթով սնեալ են, օտարք միմեանց, արժան է ամուսնանալ: Պատասխանի. – Չէ արժան, զի ծնող և սնուցող մի են»<sup>66</sup>: Միջնադարյան Հայաստանում կենցաղավարող դայեկության սովորույթի համաձայն թագավորներն ու իշխանները դայակ-դաստիարակի խնամքին էին հանձնում իրենց արու զավակներին՝ հիմնելով հոգևոր ազգակցություն՝ դայեկատոհմ անվամբ<sup>67</sup>:

Ազգակից էին դառնում նաև կնոջ երկրորդ ամուսնու տուն բերովի՝ հետը բերած առաջին ամուսնուց սերված երեխաները, որպիսիներին, օրինակ՝ Սասունում կոչում էին մոզի<sup>68</sup>, թեև արյունակցական ոչ մի կապ չէին ունենում երկրորդ հոր և սրա ազգականների հետ: Նրանք երկրորդ հոր նախկին կնոջից ծնված երեխաների հետ եղբայրանում կամ քույր ու եղբայր էին դառնում: Դրանով էլ ամուսնությունն այդ երկու տարբեր արյունների միջև իսպառ արգելվում էր: Բայց խորթ երեխաները, մինչև հասուն տարիքը և ընտանիք կազմելը, խորթ հոր ծնողների և ազգականների կողմից տնական ժամանակ օտարոտի էին ընդունվում, նույն կերպ էլ խորթ մոր կողմից էին ընդունվում երկրորդ ամուսնու որբացած զավակները: Որբ երեխաները նրանց խնամող ծնողների համար «կարկտան» էին համարվում: Հորը և մորը կորցրած որբի նկատմամբ խնամակալություն վերցնող անձը՝ հորեղբայրներից ավագը կամ մեկ այլ մերձավոր ազգական, համայնքում մեծ հարգանքի արժանանալուց բացի, տնտեսապես շահագրգռված էր խնամակալության հանձնառության համար, քանզի օրենքով որբը եղբայրներին հավասար իրավունք ուներ ստանալու տնաբաժին, հող, շարժական գույք, անասուններ և այլն: Յուրաքանչյուր խորթ հայր կամ խորթ մայր խիստ տարբերություն էր դնում նմանների նկատմամբ սննդի, աշխատանքների հանձնարարությունների, հագուստի, վերաբերմունքի և այլ հարցերում:

<sup>66</sup> Տե՛ս *Կանոնագիրք Հայոց*. ձեռագրերի համեմատությամբ խմբեց Արսեն Դլոյցան, Թիֆլիս, 1913, էջ 214:

<sup>67</sup> Տե՛ս Գր. Կարախանյան, *Հայոց ժողովրդական մշակույթը*, Երևան, 2003, էջ 144:

<sup>68</sup> Երկրորդ կամ երրորդ կնոջ հետ եկող երեխաները վերջին ամուսնու համար ոչ թե որդի, այլ մոզի էին կոչվում (տե՛ս Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 486):

Տնտեսությունը և դրա ծուխը հավերժ պահելու գաղափարները ծագում են մասնավորապես փոքր ընտանիքներում, մանավանդ անզավակության դեպքում: Անզավակությանը գրեթե հավասարազոր են ճանաչվել միայն աղջիկների տեր ընտանիքները, քանզի աղջիկը, սովորության իրավունքի համաձայն, հորական գծով ազգակցություն ստեղծել չէր կարող, հայրական ազգը պահպանելու իրավունքներ չուներ: Այդ պատճառով էլ հայերի մեջ բացառիկ դեպքերում տարածում է գտել տնփեսա ունենալու սովորությունը, երևույթ, որը բացառված էր գերդաստանական ընտանիքներում: Տնփեսան անարգվում, անվանարկվում էր այն ազգակցական խմբի մեջ, որի կազմի մեջ էր ընդունվել: Նա, իբրև պատրաստի ունեցվածքի վրա իշխող, թուրքերեն կամ քրդերեն մուֆտա զավան, մալադոնդի (ձրիակեր նշանակությամբ) անվանարկող բառերով էր բնութագրվում: Նա նույն ճնշված հարսն էր ընտանիքում և ազգակից ընտանիքների հետ ունեցած հարաբերություններում: Տնփեսան, որ սովորաբար անտուն, երբեմն նաև հեռավոր ազգական էր, տնտեսական ու բարոյական տեսակետից սկզբնական շրջանում լիարժեք դերակատարում չուներ, միայն իր սեփական վաստակով կարողանում էր ձեռք բերել որոշ իրավունքներ: Նա հարսի նման պետք է փոխեր ազգանունը և ընդուներ կնոջ հայրական տան ազգանունը, իսկ նրանց երեխաները պետք է կրեին մորական պապի ազգանունը:

Գերդաստանին բնորոշ չէր նաև որդեգրությունը: Որդեգրումը բնորոշ էր անզավակ փոքր ընտանիքին, երևույթ, որը ավելի նոր ժամանակների պահանջ էր, մինչդեռ նախկինում այն կարող էր առաջ բերել որդեգրող ընտանիքի ազգականների խուլ դժգոհությունը, քանի որ որդեգրվածը նրանց գրկում էր որդեգուրկ ընտանիքի կարողությանը տիրանալու հնարավորությունից: Մինչև անգամ հարագատ եղբայրներն էլ որոշ դեպքերում դրսևորում էին ներքին հակասություններ, այստեղից էլ «մեռնի ախպերս, լեննա աղբիս» ասացվածքը: Որդեգրմամբ շահագրգիռ էր միայն անզավակ փոքր ընտանիքը, քանզի ձգտում էր եղբայրներին հավասար տնտեսություն ունենալ, որպեսզի որդեգրվածը կարողանա տեր կանգնել նրա հարստությանը: Որդեգրությունը հայտնի էր «խոգու որդի»՝ հոգևոր որդի նշանակությամբ: Սովորաբար որդեգրվող զավակին արյունակից դարձնելու նպատակով նրան երեք անգամ անց էին կացնում որդեգրող մոր շապիկի միջով, օձիքից դեպի վար, որը ծնելը խորհրդանշող գործողություն էր:

Հավատում էին, թե այս գործողությունը սեր էր արթնացնում միայնց նկատմամբ մի կողմից մոր, մյուս կողմից՝ զավակի մեջ: Ծծկերին որդեգրելիս միաժամանակ նրա ձեռքը դնում էին որդեգրող մոր ստիկների: Մովորութեան այս ծեսով որդեգրվողը ճանաչվում էր արյունակից զավակ կամ բնությամբ որդի: Անցյալում, սովորաբար որդեգրում էին հեռավոր ազգականի զավակին<sup>69</sup>:

Ազգակցական հարաբերությունների պահպանման աստիճանը հստակորեն պայմանավորված է եղել տիրող պատմաքաղաքական և տնտեսամշակութային հանգամանքներով:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԱԶԳԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Ազգ» արենակցական խումբն իր տնտեսական-արտադրական ընդհանրությունն ավելի շուտ է կորցնում, քան գաղափարական և տարածքային ընդհանրությունը: Ազգի ընդհանրության տարրերից ավելի հաստատունը գաղափարականն է, որը պահպանվում է մյուս հատկանիշների չքացման դեպքում անգամ: Ազգի գաղափարական ընդհանրությունը դրսևորվում է առաջին հերթին ընդհանուր ազգի հարատևության, ընդհանուր նախահոր հիշողության պահպանման և ազգի ինքնանվանման պահպանման մեջ: Ազգի ինքնանվանման պահպանումը նրա համեմատաբար կայուն հատկանիշներից մեկն է: Ազգի հիմնադրի հետ կապված հիշողության պահպանումը ընդհանուր ծագումը մատնանշող հանգամանք է: Ազգի ինքնանվանումը ծագում է այդ ազգը հիմնադրող նախնու անունից:

Ազգի ընտանիքների համախմբման գրավականներից մեկը XIX դ. ընդհանուր ազգանունն էր, որին, որպես այդպիսին, անձանոթ էր ավելի վաղ շրջանի ազգը: Եղել են ազգը կոչելու և ազգակցական աստիճանները ցույց տալու տարբեր ձևեր:

Ազգանվան նախնական ձևը նույնքան հին է, որքան ամուսնության պատմությունը: Հասարակության բոլոր երևույթների նման ազգանունը ևս ապրել է անընդհատ զարգացում, մինչև հասել է այժմյան աստիճանին: Հինգերորդ դարից սկսած՝ գրականության մեջ արձանագրվել են ազգանվան մի շարք ձևեր: Ըստ մեզ հասած գրավոր և բանավոր տվյալների՝ հայկական ազգանունը միջնադարում ձևավորվել է երեք հիմնական սկզբունքներով.

1) ամենահինը՝ նախնու անունով, 2) բնակավայրի անունով, 3) զբաղմունքի անունով:

Ազգի ինքնանվանումը նրա համեմատաբար կայուն հատկանիշներից մեկն է: Ազգի հիմնադրի մասին հիշողությունը պահպանվում է մինչև վեց-յոթ, երբեմն նաև ութ սերունդ: Մասնագիտությունը

<sup>69</sup> Տե՛ս Ե. Լալայան, *Բորչալուի զավառ, Երկեր հինգ հատորով*, հ. 3, Երևան, 2004, էջ 163:

դրվում է ինքնանվան հիմքում այն ժամանակ, երբ այն դառնում է տվյալ ազգի սերնդի գլխավոր և ժառանգական զբաղմունք: Նման ինքնանվանումները (Ռսկերչյան, Դարբինյան, Ջարգարյան, Նալբանդյան, Դեմուրձյան և այլն) տարածված են արևմտահայոց, մասնավորապես Վանի, Կարինի և այլ ազգագրական շրջանների հայերի մեջ: Դա արհեստավոր լինելու վկայություն է: Ազգի հիմնադրի անվանումը դուրս է մղվում նրա մասնագիտության անվանումից այն դեպքում, երբ մասնագիտությունը փոխանցվում է սերնդե-սերունդ: Արհեստի անունով ազգանունը կոչելը վերաբերում է ոչ թե մեկ ընտանիքի, այլ ազգակցական ընտանիքների խմբին: Այն բնակավայրերում, որտեղ բնակչությունը կազմում են տեղաբնիկները (Գորիս, Ստեփանավան) կամ բնակեցված են պարսկահայ վերաբնակիչներով (Միսիանի, Արմավիրի, Աշտարակի շրջաններ), որտեղ հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, բնատնտեսության պայմաններում ազգակցական խմբի անվանումներն ըստ մասնագիտությունների՝ տարածում չունեին: Ազգատոհմերը ճանաչվում էին միայն նրա հիմնադրի անվամբ: Երբեմն ազգը կարող էր կորցնել հիմնադրի անունը, նման դեպքերում հիշվում էր ազգի հիմնադրի զբաղմունքը, պաշտոնը, օրինակ՝ Ժամկոչանց, Իրիցանց, Տերտերանց և համանման այլ ազգանունները<sup>70</sup>: Հաճախ ազգի մի ճյուղը

<sup>70</sup> Հազո քաղաքից (Մասուն) Ուջան գյուղում հաստատված բանասաց Քերոբ Սարգսյանի հավաստմամբ՝ իրենց ազգությունը Հազոյում կրել է Մուղսի Մրկոյի տներ ազգանվանումը: Մուղսի՝ Երուսաղեմ Տիրոջ գերեզմանին այցելած անձը մեծ հեղինակություն էր համարվում, նրանով էլ հիշատակվում էին հարազատները:

Հազո քաղաքում ամենատարածված զբաղմունքը արհեստագործությունն էր, որտեղ ազգանունների մեծ մասը առնչվում էր նրանց տոհմական զբաղմունքներին: Օրինակ՝ Փրգոյենց (Բագրատ) ազգը այստեղ հայտնի էր Ղաֆախենք անվամբ, որ նշանակում է, թե նրանց տոհմական զբաղմունքը եղել է կավագործությունը և այդ արտադրանքի վաճառքը: Իսկ նույն գյուղի գյուղխորհրդի նախագահ և կուսկազմակերպիչ Միքայել և Կոյա Երիցյանների ազգանունը առաջացել է Հազո քաղաքում իրենց ազգի հիմնադրի երեց լինելու զբաղմունքից: Բանասացի հավաստմամբ՝ այդ ազգը Հազո քաղաքում հիշվել է Իրիցու տներ անվամբ, որովհետև նրանցից էին պարբերաբար լինում տերտերները, երեցները, որոնք ժամանակի գրագետ մարդիկն էին: Նրանց հաշվումներով 1972 թ. Մփյուռքում (Միրիայի Ղամշու) և Ուջան գյու-

նշելու համար մատնացույց էր արվում ընդհանուր անվանումը (օրինակ՝ Նահապետենց ազգից): Երբեմն ազգի հիմնադրի անունը մոռացվում էր, և նրա սերունդները հիշատակվում էին կենդանության օրոք ճանաչում ստացած նրա մականունով:

Ազգը, բացի ազգանուններից, կարող էր ունենալ նաև մականուն (ավել կամ «փուտ» անուն), որն օգտագործվում էր ազգանվան հետ միասին: Արևմտահայերը, մեծ մասամբ կտրված լինելով հայրենի հողից և ցրված օտար երկրներում, զարկ են տվել արհեստագործությանը, ուստի և իրենց անձնանուններից բացի, ստացել են զբաղմունքը հատկանշող որևէ մականուն, օրինակ՝ «Թեմուրչի» (երկաթագործ), «Թուրունչի» (ծխախոտագործ), «Թվանքչի» (հրացանագործ) և այլն, որպիսի մակդիրներն էլ հետագայում դարձել են տոհմանվան համարժեք ազգանուններ՝ Թեմուրձյան, Թուրունջյան, Թվանքյան և այլն<sup>71</sup>:

Ազգի հիմնադրի անունը երբեմն մոռացվում էր, և հիշվում էին նրա վարքագծով կամ ֆիզիկական որևէ հատկանիշով պայմանավորված մականունները: Ազգի երկրորդ անվանման՝ մականվան առաջացումը պայմանավորված է եղել ազգի այս կամ այն անդամի անձնական, առանձնահատուկ հատկանիշներով, վարքով, այն տարածվում էր ամբողջ ազգի վրա: Պատահել են դեպքեր, երբ որոշ ազգեր երկանուն են եղել այն պատճառով, որ իրենք իրենց անվանել են ապուսպապերի անունով, իսկ համայնքը՝ մականուններով կամ այդ ազգի առավել նշանավոր անձի անունով<sup>72</sup>: Վերջինս երբեմն դառ-

ղում Իրիցու տների շառավիղ ընտանիքների թիվը հասնում է 17-ի (տե՛ս ՂԱՆ, տ. 6, Ուջան, 1971-1972, էջ 185-186): Հազո քաղաքում առանձին մեծ ազգություն էին Հաղաթենք, որոնց հիմնական զբաղմունքը դարբնությունն էր (նույն տեղում):

<sup>71</sup> Տե՛ս Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, *Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը*, Եր., 1963, էջ 89:

<sup>72</sup> Մասնա Գեղիեզուզան գյուղում Խզրո տները եղել են գյուղի ամենամեծ ազգությունը, որոնք մինչև Մեծ Եղեռնը ապրել են գերդաստանական ընտանիքներով: Խզրո ազգության մի ճյուղը՝ Ազոքնի թախումը՝ մերձավոր արյունակից ընտանիքների այս խումբը, համայնքի կողմից ճանաչվել է Բալլքոնի անվամբ: Այդպես են նրանց կոչել իրենց ամատանոց-արտավայրերում ունեցած կացարանների՝ սև այծի մազից հյուսված կոնների (վրան) ծակծկված տեղերը սպիտակ այծի մազերից հյուսածո կարկատելու և սև ու

նում էր իսկական գրոց ազգանուն՝ դուրս մղելով պապենական ազգանունը: Եղել են դեպքեր էլ, երբ ազգի կեսը շարունակել է կոչվել ավանդական, պապենական ազգանվամբ, իսկ մյուս կեսը՝ համայնքի կոչած անունով: Այս պարագայում, սակայն, մականունով գրվողները, արյունակցության հետքերը չկորցնելու նպատակով, իրենց համար երկրորդ անունն էին պահում ավանդականը:

Մեր իրականության մեջ կան նաև կանանց անունով ազգանուններ: Սովորաբար դրանք կապվում էին ազգի հիմնադրի կնոջ անվան հետ, որը փառավորվել է իր խիզախությամբ, իմաստնությամբ, գեղեցկությամբ և այլ դրական հատկանիշներով: Երբեմն էլ անբարոյական վարքը և այլ բացասական հատկանիշներն են նկատի ունեցել: Վերջինը ձաղկելու, դատապարտելու խորհուրդ է ունեցել: Օրինակ՝ Սունեց տներ:

Հնում ազգանունն այսօրվա նման մի ընդհանուր վերջավորություն չի ունեցել, և որևէ մեկին հիշատակելու համար նախ տալիս էին նախնու, ապա պապի ու հոր անունները, օրինակ, Ավետներանց Մարգարի Մկոյի Ենոք, որը նշանակում է Ավետի ազգատոհմի Մարգարի որդի Մկրտիչի տղա Ենոք<sup>73</sup>: Ժամանակակից ազգանվան նախորդ ձևերից են եղել նաև հայրանվամբ կամ եղբոր անվամբ հիշատակվելը, ինչպես, օրինակ՝ «Արտավազդ որդի Տիգրանայ»<sup>74</sup>, «Արշամ եղբայր Տիգրանայ»: Հին և միջին դարերում ազգանունը կրում էին ազնվական ընտանիքները (Մամիկոնյաններ, Արծրունիներ և այլն): Միջնադարյան Հայաստանում նշանավոր ընտանիքները հիշատակելիս նրանց ընդհանուր ճանաչում գտած ազգանվան ավելացվում էր «ազգ», երբեմն «տուն» բառը՝ «Ազգն Մամիկոնեից»,

սպիտակ խայտաբղետ գույների պատճառով: Իսկ նույն գյուղի Տանեի տները կրել են Բուլուզնի մականունը: Այդպես էին կոչվում, որովհետև արհեստական դարավանդային արտեր են հիմնել ցցված ժայռոտ վայրերում և քրդերեն՝ բուլուզ-ցից քար նշանակությամբ կոչվել են Բուլուզնի: Նույն գյուղում Ղազարի տներն էլ կոչվել են Գախորնի, քրդերեն՝ եզ ուտոզ (շատ միս ուտող) և Դավրաշնի, քրդերեն՝ սև բերան, այսինքն՝ Գայլի ախորժակով, գայլի նման հոշոտողներ, նույն՝ շատ ուտող նշանակությամբ (տե՛ս տ. 6, գ. Իրինդ, 1972, էջ 198-200):

<sup>73</sup> Տե՛ս Վ. Բդոյան, *Հայ ազգագրություն*, էջ 160:

<sup>74</sup> Տե՛ս Մամուել քահանայի *Անեցույ Հավաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 50:

«Տունն Արծրունյաց» և այլն: Երբեմն մարդկանց անվանը կցվում էր ծննդյան կամ հիմնականում գործունեության վայրի անունը, որը ազգանվան դեր էր կատարում. Սովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Մամուել Անեցի և այլն: Սա բացատրվում է նրանով, որ վաղ միջնադարում գյուղացիության շրջանում միայն հանգուցյալի և նրա հոր անունները նշելը, ինչպես գրվում էր տապանաքարերի վրա, բավական էր համագյուղացուն ճանաչելու համար: Մինչև ուշ միջնադար «ազգի անուն»՝ ազգանուն գոյություն չի ունեցել, քանզի ֆեոդալական ինքնաբավ, մասնատված տնտեսության պայմաններում առանձին անձանց հասարակական գործունեության սահմանները անչափ նեղ են եղել: Ժամանակի ընթացքում, երբ գյուղատնտեսությունը ներքաշվում է ապրանքադրամական հարաբերությունների մեջ, և երբ ամրանում է գյուղացիության կապը շուկայի հետ, ստեղծվում է ազգային շուկա, առաջանում է ազգանունների օգտագործման անհրաժեշտություն: Ազգանունը միայն կապիտալիստական հարաբերությունների ամրապնդման, գիտակրթական կենտրոնների, գրականության, մամուլի զարգացման արդյունք է ինչպես զարգացած ժողովուրդների, այնպես էլ հայերի կյանքում, որ նշանակում է որևէ ազգակցական խմբի բոլոր անդամների վրա հավասարապես տարածվող անուն:

Արդեն ուշ միջնադարում՝ XVII–XVIII դարերում, ինչպես վկայում են մատենագրական և արխիվային կյութերը, ազգի նահապետի անունով ազգանվան սաղմերը արդեն երևում էին: Ազգանունը մատնանշող վերջավորություններն էին՝ «անց», «անք», «եանք», «եց», «ենց», «ից», «ունց», «ոնց», «եանց», օրինակ՝ Բաբեց, Սահականց, Մևուց: Սրանց հետագայում հավասարազոր են դառնում «յան», «յանց» վերջավորությունները: Գործածվել է նաև «ունի» վերջավորությունը, որն առավել հին ձև է (Արշակունի, Խոռխոռունի, Մաղխազունի, Բզնունի և այլն): Այս վերջավորությունները արյունակցական կապ ու պատկանելություն են ցույց տալիս: Հասարակ ժողովրդի մեջ առավել տարածվածը «անց», «ենց» ձևերն են: Պատմագիր Առաքել Դավրիժեցին առատ վկայություններ ունի թվարկված վերջավորություններով ազգանունների մասին, ինչպես օրինակ՝ «Տեր Գրիգոր, որ մականուն Մուսաբեզենց կոչի», «Մահուեսի Խոջայ Գրիգորն՝ զոր մականուամբ Մոծակենց Գրիգոր ասեին...», «...զոր խոջայ Ատոմեանք նորոգեցին...», «զոր Գերաքենց Զիարքն շինեաց»,

«...Խանենց Խոջայ Թումայի որդին, «Մայ Ընույունց տան հարսն [եր]», «Որ Քուրդունց Աղամիր որդի Շմաուն Ագուլիս Մաքխանենց Մուրադի դուստրն Գուլաղէն առաւ իւր կին», «Դաւիթենց այգու կողման հողն քեզ էին տուեալ»<sup>75</sup> և այլն: «Եան» վերջավորությունը միջնադարում միաժամանակ ավելանում էր և՛ հայրանվանը, և՛ ազգանվանը: XIX դարում հաճախ «եան» վերջավորությունը հայրանունն էր ցույց տալիս, իսկ «եանց»-ը՝ ազգանուն (Արտաշես Աշոտեան Սմբատեանց)<sup>76</sup>: Միջնադարում, բացի նախնիների անունով կոչվելուց, տարածված էր նաև հայրանունով կոչվելը, օրինակ՝ Դավիթ Ալավկա որդի, այսինքն՝ Ալավկայի որդի Դավիթ:

Ինչպես ասվեց, սկսած XVIII դարի վերջերից, հայկական ազգանվան վերջնամասնիկ էր ծառայում «յան»-ը («եան»), որը մեզ է հասել դեռ վաղ միջնադարից՝ «Մամիկոնեան»: «Արծրունի», «Արշակունի», «Ամատունի» և այլ ձևերը, որ նախարարական կազմակերպություններին պատկանելն էր ցույց տալիս, սկսեցին ծառայել ավելի փոքր կազմակերպությունների՝ ազգակցական խմբերի համար: Հատկապես XIX դարում «յան» մասնիկը զուգահեռաբար ծառայում էր նաև իբրև հայրանվան վերջավորություն: Որպեսզի հայրանունն ու ազգանունը տարբերվեին, ազգանվան վերջում ավելացվում էր «ց» տառը, որն ավելի էր ընդգծում արյունակցական խմբի մեծությունը:

XIX դարի վերջին XX դարի սկզբին վերականգնվեց հայրանվան ժողովրդական ձևը՝ հայրանվանը ավելացվելով «ի» վերջնամասնիկը, իսկ ազգանվանը՝ «յան»-ը: «Յան»-ը դարձավ ժամանակակից ազգանվան վերջավորությունը, իսկ «եանց»-ը գործածությունից դուրս եկավ (Արտաշես Աշոտի Սմբատյան): Ռուսաստանում որոշ հայեր մինչև օրս էլ շարունակում են կրել «յանց» վերջավորությամբ ազգանուններ: Զանգեզուրը միակ ազգագրական միջավայրն է, որը ազգանվան «ունց» վերջավորությունը պահպանելով, զգալիորեն չենթարկվեց «յան» վերջավորությանը:

Մի հանգամանք նա. դեռ XVII դարից հայտնի է, որ նշանավոր առևտրականներ և արհեստավորներ առևտրական կապերով կապվելով Ռուսաստանի հետ, սկսել են ռուսական «օ» վերջնամասնիկով ազգանուն կրել: Այն ավելի տարածում ստացավ, երբ Անդրկով-

կասը ներքաշվեց ռուսական կապիտալիստական հարաբերությունների ոլորտը: Դա նաև ռուսական գրագրության պարտադրանքն էր հայերի հանդեպ: Այժմ էլ Ռուսաստանում ապրող շատ հայեր կրում են «օ»-ով վերջացող ազգանուններ:

Թվարկված վերջավորություններից «ոնք»-ն ու «ունց»-ը առավել օգտագործելի են համարվել բարբառներում, գյուղական վայրերում, երբ գյուղական ընտանիքը ճանաչելի է դառնում ազգի հիմնադրի սերնդին պատկանելու առումով: Այդ վերջավորությունները ավելացնելով պատյի անվանը՝ ստացվում էր ազգանունը: Մասունցիները մինչև Խորհրդային Հայաստանում հաստատվելը «յան» վերջավորությամբ ազգանուններ չէին կրում, այլ տոհմավազի անվանը ավելացնում էին անք, ենք, ենց, անց<sup>77</sup>: Անձը ներկայացվում էր հոր անվամբ՝ Համզե (Համազասպ) Պճուկ, այսինքն՝ Համազասպի որդի Պճուկ, իսկ նրանց ազգությունը նշելու համար գործածում էին Գըմմե դըվընի, այսինքն՝ Գըմմեից սերված ընտանիքներ: Մա նշանակում է, որ Մասունում մինչև Մեծ եղեռնը անձը և ազգությունը մատնանշվում էին ինչպես միջնադարում: Մի ուշագրավ հանգամանք նա. 1908 թ. Մասուն գավառի Հագո քաղաքում բացված դպրոցի աշակերտները մատյաններում գրանցվում են հայրանվանը ավելացած «յան» վերջավորությամբ ազգանուններով: Այսպես, Ուջանաբնակ բանասաց Արշակը հոր անվամբ կրում է Շահինյան ազգանունը, իսկ հորեղբոր որդի Կարապետը՝ իր հոր անվամբ՝ Մանվելյան ազգանունը<sup>78</sup>: Ներկայումս բացարձակ տիրապետող ձևը «յան»-ն է: Ի դեպ, «ունց», «ունի» վերջավորություններն ավելի տարածված էին Արցախում և Սյունիքում: Մասունում գործածում էին նաև «նին» վերջածանցով ազգությունը մատնանշող ազգանվանաձև. Ագոքնին, Մուրոնին կամ դըվընին՝ տներ նշանակությամբ: Պատկանելություն ցույց տվող «նին» վերջածանցից բացի, Մասունում տարածում ուներ նաև «գու»՝ Օհանգու, Հարանգու վերջածանցը՝ դարձյալ ազգին պատկանող տներ, ընտանիքներ նշանակությամբ: Ուշագրավ է նաև դինք վերջավորությունը՝ *այկդինք*՝ հորեղբոր սերունդներ, հորեղբոր տղերք նշանակությամբ: Մեր կարծիքով, այս վերջածանցները առ այսօր բանասիրական մեկնություն չեն ստացել և արժանի են գիտական վերլուծությունների: Համենայն դեպս, մեզ թվում է, որ արյունակցական ազգակցություն մատնանշող «նին», «գու», «դինք»

<sup>75</sup> Տե՛ս *Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցույ*, էջ 107, 144, 288:

<sup>76</sup> Տե՛ս Վ. Բրդյան, *Հայ ազգագրություն*, էջ 161:

<sup>77</sup> ԴԱՆ, տ. 6, գ. Իրինդ, 1971, էջ 17:

<sup>78</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 7, Ուջան, 1972, էջ 182:



վերջածանցները ամենահին արտահայտչամիջոցներից են: Ազգուտակը մատնանշող վերջածանց է նաև արևելահայերի, պարսկահայերի շրջանում գործածված «քեր»-ը՝ Գիրքորքեր=Գրիգորյաններ և այլն:

Նշենք նաև, որ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Արևելյան Հայաստան գաղթած պարսկահայերը և 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո այստեղ հաստատված արևմտահայերը, անգամ 1915-ի եղեռնից փրկվածները ժամանակակից «յան» վերջավորությամբ ազգանուններ հիմնականում չեն կրել, գործածվել են ներկայումս գյուղական վայրերում շրջանառվող «անք», «ենք», «ենց» և այլ վերջավորություններով տոհմանուններ: Ժամանակակից ազգանունը զանգվածային բնույթ ստացավ XX դարի 20-ական թվականներից՝ Հայաստանում պետականության վերականգնումից ի վեր:

Ազգի հիմնադրի որդիների կամ թոռների անուններից առաջացած ազգանունների դեպքում պարտադիր էր դառնում ազգի ընդհանուր անվան հիշատակումը: Մինևույն ազգի ներսում առաջանում էին մի քանի ազգանուններ: Նույնիսկ մի ընտանիքում կարող են լինել տարբեր ազգանուններ. մի որդին կարող էր կրել պապի անունը, մյուսը՝ պապի հոր, իսկ երրորդը՝ ազգի տոհմական անվանումը<sup>79</sup>: Մեկ ընտանիքում տոհմական, ապա պապի անվանումներով ազգանունները բավական լայն տարածում ունեին XX դարի կեսերին և դրանից հետո<sup>80</sup>: Գրանցվել են դեպքեր, երբ նաև ազգանվան փոփոխություններ են կատարվել, օրինակ, երբ մականունն ավելի շատ է օգտագործվել ու վերածվել ազգանվան: Մայր ազգանվան պահպանումը ազգային հպարտության խորհրդանիշ է համարվել: Մեկից ավելի ազգանուն ունենալը բնորոշ է եղել պարսկահայերին, մինչդեռ

արևմտահայերի ազգանունը ավանդական է, և շարունակում են պահպանվել մեկուկեսից երկու հարյուր տարվա վաղեմություն ունեցող ազգանուններ: Ազգի ներսում մի քանի ազգանունների առաջացումը ուշ երևույթ է, այն հատկապես տարածում ստացավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ ամերիկյան օգնություն ստանալու հետ կապված: Անհրաժեշտություն էր առաջացել ընտանիքների մանրացումը (տարբեր ազգանուններով) ամերիկյան 15 մետր սպիտակ կտավ՝ «ամրիկա» օգնություն ստանալու համար<sup>81</sup>:

Նորածինների անունների շարքը ներկայացնելիս նկատելի է դառնում, որ այլ էթնիկ ու տարակրոն միջավայրում հայության համար կարևոր նշանակություն էր ստանում ազգատոհմի ինքնության հետ կապված անձնանունների ընտրությունը<sup>82</sup>: Անշուշտ, անձնանունների անվանաձևերը հիմնականում պայմանավորված են եղել պատմաքաղաքական, էթնիկական, կենցաղամշակութային, ընտանեկան, տոհմական գործոններով:

Ազգանվան ներկայիս ձևի առաջացման և պահպանման մեջ մեծ դեր ունի ազգային ինքնագիտակցությունը: XIX դարը այդ զգացման վերելքի շրջանն էր, թեև այլ էթնիկ միջավայրում, ինչպես, օրինակ՝ ռուսական իրականության մեջ հայ ազգի բարձրաստիճան գինվորականությունը, հատկապես այլ երկրներում կառավարման մեջ ընդգրկված հայ պաշտոնյանները, վաշխառուները, վաճառականությունը և այլք ընդունել էին տվյալ երկրին բնորոշ ազգանուններ՝ հիմքում պահելով հայկական ծագմամբ ազգանվան արմատը՝ Լորիս-Մելիքով, Լազարև, Ղուկասով: Բարեբախտաբար, ներկայումս հայրենիքում և օտար երկրներում, անգամ ազգային ինքնությունը

<sup>79</sup> Դ. Վարդումյանի՝ Լոռու մարզի Վահագնի գյուղում գրառած դաշտային ազգագրական նյութերի համաձայն՝ Ղարաբաղից այստեղ հաստատված Քոչինի սերունդների մի ճյուղը դեռ XIX դ. առաջին կեսերին գրվում էր Քոչինյան, իսկ նրա որդիներ Ղազարի և Այվազի սերունդները՝ Ղազարյան, Այվազյան, բայց գյուղում բոլորին անվանում են Քոչնանց տներ (Տե՛ս Դ. Վարդումյան, Է. Վարապետյան, *Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը*, Երևան, 1963, էջ 89):

<sup>80</sup> Բանասաց իրինդաբնակ (այժմ՝ հանգուցյալ) Խաչատուր Խափլանյանի որդիները, թոռները, ծոռները կրում են տոհմական՝ Խափլանյան ազգանունը, իսկ որդիներից մեկն էլ՝ Մխիթարը, իր ընտանիքով պապի անվամբ կրում է Բարսեղյան ազգանունը (ԴԱՆ, տ. 6, էջ 17):

<sup>81</sup> ԴԱՆ, 2005, Աշտարակի տարածաշրջան, գյուղ Ուջան, տ. 19, էջ 11-13:

<sup>82</sup> Այս մասին տե՛ս Ն. Մարգարյան, *Անձնանվան ընտրությունը արևելահայոց մեջ (XIX-XX դդ.)* (ազգաբանական ուսումնասիրություն), պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2000, նույնի՝ *Հայոց անձնանունները ոչ նյութական մշակութային ժառանգության համատեքստում*. – Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ. Միջազգային չորրորդ գիտաժողովի հողվածների ժողովածու, Երևան, 2009, էջ 36-43, նույնի՝ *Անվանակոչության որոշ յուրահատկություններ հայոց ընտանիքում (ըստ Գյումրիում անցկացված հարցախույզի արդյունքների)*. – Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները. Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված էմմա Վարապետյանի հիշատակին, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 2001, էջ 70-75:

կորցրած հարյուրավոր հայեր հրաժարվում են օտար ազգանվանումներից և վերականգնում են պապենական հայկական ազգանունը: Այդ գործընթացը թափ է ստացել Եղեռնի հետևանքով թուրքացած կամ քրդացած հայերի շրջանում:


Հայ իրականության մեջ անձնանունների համալիրում նկատելի է անունների սերնդային կրկնությունը: Սովորույթի համաձայն՝ առաջնեկ տղային շնորհում էին տան մեծի անունը, աղջկան՝ տատի անունը, ապա հանգուցյալ հարազատ նախնիների: Դրանով կամենում էին ննջեցյալ ազգականի հիշատակը վառ պահել, հավերժացնել:

Այդ նպատակով ննջեցյալի հոգու համար պատարագ էին մատուցում եկեղեցում, հոգեհանգիստ կատարում և հոգեհաց տալիս: Զգուշանում էին ողջ ազգականի անունով կոչելուց՝ վախենալով, որ նրա արևը կանցներ նորածնին և կենդանի ազգականը շուտ կմեռներ: Կամ էլ կենդանի պապի անունով կնքելիս՝ վերջինիս անունը չէին կարող տալ մինչև նրա վախճանը: Երեխային անվանում էին Պապ: Այս տաբուն նպատակ ուներ չար ուժերից թաքցնել մարդու իսկական անունը՝ վնասազերծել նրան: Ներկայումս անվանակոչում են պապի և տատի կամ ազգամեծի կենդանության օրոք ևս:

Արևմտահայ իրականության մեջ անձնանունների համալիրում առավել նկատելի է եղել անունների սերնդային կրկնությունը<sup>83</sup>: Շաբեգու տների տոհմավազ Արթին-Հարություն տոհմաձառի անվան կրկնությունը նկատելի է հետագա սերունդների շրջանում և հետևապես՝ Հարությունյան ազգանունը պահպանվում է առ այսօր (տես սխեմա 3):

Ազգի մեծամեծերի, երևելիների, ազգային հերոսների անուններով ազգանվան պահպանումը համարվել է տվյալ ազգի հպարտության խորհրդանիշը: Ժողովրդական մտայնությամբ՝ ազգի անվանման պահպանման հետ մեկտեղ պահպանվում է նաև ազգի միասնությունը: Փաստորեն հայ իրականության մեջ անձնանուններն ունեն նաև արժեքաստեղծ, միավորող, ինքնություն ձևավորելու, ներկայացուցչական, ծիսաստեղծ գործառույթներ, քանզի պապի անունն էին դնում, որ նորածինը պապի պես իմաստուն ու հայրենասեր լիներ, նմանվեր համբավավոր անվանատիրոջը:

<sup>83</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը* (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 93-94:



Մխեմա 3. Շաբեգու տներ (ազգատոհմը)

Մարդուն տրվող անձնանունը հասարակության մեջ նրան անհատականացնելու նպատակն ունի: Անունների միջոցով որոշվում էր նաև, թե ինչ միջավայրում են ապրում: Դրանք ոչ միայն զանազանում են մարդկանց, այլև միավորում, նրա միջոցով ընկալում են նաև ժողովրդի հոգեբանությունն ու վարքագիծը: Դրա համար էլ նախկինում հայերի մեջ ամեն տարի նշում էին անվան կամ անվանակոչության օրերը, որն ուղեկցվում էր շնորհավորանքներով և ծիսակատարություններով եկեղեցում կամ տանը:

Ցավոք, վաղուց մոռացության է մատնվել անվանակոչության հայտնի ծեսը: Անվանակոչության մի շարք սովորույթներ աստիճանաբար տեղի են տալիս, անվանակոչողները հազվադեպ են հարցնում մեծերի կարծիքը երեխաների համար անուններ ընտրելիս: Ավելի հազվադեպ են սկսել, իբրև նորածնի անուն, գործածել ընտանիքի ավագների անունները անբարեհունչ համարվելով, մինչդեռ նախկինում ավանդական անունների վերաբրտադրության համար կարևոր պայմաններից մեկն ընտանիքի ավագ անդամների անձնանունների ժառանգումն էր<sup>84</sup>: Անձնանունների պատմաճանաչողական արժեքը նկատի ունենալով՝ Հր. Աճառյանը դիպուկ է ասել. «Ոչ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի զանազան էլևեջները, մեր կրած ազդեցությունները օտար ժողովուրդներից, ինչպես և մեր ձգտումները, որչափ հատուկ անունները»<sup>85</sup>:

Ազգակցական խումբը ցանկացած պարագայում միասնական էր հանդես գալիս: Այն որքան բազմամարդ, նույնքան ուժեղ էր լինում ինչպես տնտեսական, նույնպես և գաղափարական ու հասարակական տեսակետից:

Ազգի կյանքում մեծ նշանակություն է ունեցել ավագությունը: Ազգի գլխավորը, որ սովորաբար եղել է հիմնադիր ընտանիքի ավագը, շատ հարգված և հեղինակավոր դեմք էր: Ազգի նահապետն իր հեղինակությամբ ազդում էր ազգի բոլոր անդամների վրա: Նրա հետ անհրաժեշտ էր խորհրդակցել տվյալ ազգի ընտանիքների կյանքի բոլոր բարդ և կարևոր հարցերում: Նա դատավորն էր առանձին ընտանիք-

ների միջև ծագած վեճերում: Լինում էին դեպքեր, երբ ազգի մեծը այս կամ այն ընտանիքի շահերը և ազգի պատիվը, հեղինակությունը հաշվի առնելով՝ ընդդիմադիր անձանց նկատմամբ խստություն էր ցուցաբերում: Նրան չանսալու համար ազգականները մեղավորին կարող էին ծեծել, ամոթանք տալ: Սասունում, սովորույթի համաձայն, նրա մոտ էին հավաքվում ազգի ընտանիքների ավագները բոլոր կարևոր ընդհանուր գործերը քննարկելու և վճռելու համար: Առևտրական և այլ ձեռնարկումների հարցերով ևս ազգականները դիմում էին իրենց մեծին: Նրան իրավունք էր վերապահված անգամ պատժելու այն անձանց, որոնք իրենց գործողություններով վարկաբեկում էին ազգի պատիվն ու հեղինակությունը համայնքում: Նա էր ազգի ներկայացուցիչը օրենքի առաջ՝ հողային կամ այլ կարևոր հարցեր լուծելիս:

Ավագները որոշակի հեղինակություն էին վայելում ինչպես ազգատոհմում, այնպես էլ ողջ համայնքում: Ազգի մեծի դերի մասին կար ժողովրդական այն ընկալումը, որ եթե «տունը մեծ ունի, պաշտիր նրան, եթե չունի՝ մի մեծ քար դիր նրա տեղը և, իբրև մեծի՝ պաշտիր»: Ահա թե ինչու, ինչպես այլ ժողովուրդների մեջ, հայերի մեջ էլ նա համեմատվել է տան հիմնավոր քարե պատվանդանով կենտրոնական սյան հետ<sup>86</sup>: Յուրաքանչյուր արյունակցական խումբ ուներ որոշակի խորհուրդներ տվող, ազգի անունից համայնքին խնդիրներ ներկայացնող ազգի մեծը, որին կոչում էին «սպիտակամորուս», «նահապետ», «ջոջ հայր», «ջոջ պապ», «ջոջ (ճոճ) բաբ», «թախումի քոթուկ», «ամի», «ջոջ բաբա», «թայֆայի աղսախկալ», «թայֆայի քոթուկ», «ապո», «այա», «աղա», «կակոլ», «կակե», «կակո» և այլն: «Քոթուկ» տերմինը նշանակում է «ծառի բուն», «աղսախկալ»-ը սպիտակամորուս բառն է՝ պատվական նշանակությամբ, «ամի» բառը նշանակում է հորեղբայր<sup>87</sup>: Այս տիտղոսները կրում էին նրանք, ովքեր փորձառու էին, հմուտ կազմակերպիչ, ազգի և համայնքի հարգված, ազդեցիկ ավագագույն տղամարդիկ, ազգի հիմնադիր, ցեղապետ, ձեռունագարդ մարդ: Նրանց էր իրավունք վերապահված խառնվելու ազգատոհմի ընտանիքների ներքին գործերին, նրանց արդար վճռով էր

<sup>84</sup> Տե՛ս Ն. Մարգարյան, *Հայոց անձնանունները ոչ նյութական մշակութային ժառանգության համատեքստում*, էջ 36-43:

<sup>85</sup> Տե՛ս Ն. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ.՝ Է, Երևան, 1962:

<sup>86</sup> Հմմտ. տաջիկների սյունները, որոնց ողջունում էին ներս մտնելիս (տե՛ս Н. Кисляков, *Семья и брак у таджиков по материалам конца XIX – начала XX вв.*, М.-Л., 1959, էջ 70-71):

<sup>87</sup> Տե՛ս Ն. Աճառյան, *Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ*, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 68:

գերդաստանական տների բաժանքի ժամանակ ունեցվածքը վիճակահանությամբ բաժանվում: Բաժանքից առաջացած նոր տան կրակը առաջին անգամ իր ձեռքով ազգի մեծն էր վառում, որպեսզի բարին առաջնորդեր, նոր տնավորվողն էլ ապագա սպիտակամորուս դառնալուն արժանանար: Երանք պարտադիր կրում էին ձեռքի գավազան՝ որպես իշխանության, իրավունքի տեր խորհրդանշան:

Հարկ է նշել, որ տվյալ հասարակության մեջ նախնադարյան-տոհմային հարաբերությունների քայքայման և դասակարգային տարրերի ներթափանցման հետ նշված ավագությանը միանում էր նրա տնտեսական գործընթացները և դասակարգային բնույթ ստանում: Այս հարաբերությունների մեջ առկա էին նաև հարստահարության որոշ, երբեմն նույնիսկ անխիղճ ձևեր: Ներքին փոխհարաբերություններում երբեմն-երբեմն գերիշխել է նահապետական բռնակալությունը: Ազգակցական խմբի մեծը (ազգազուխը) հաճախ օգտագործել է իր դիրքը և փոխադարձ օգնության անվան տակ շահագործել չքավոր ազգականներին:

1970-ական թվականների սկզբներին մեր դաշտային ազգագրական հետազոտությունների ժամանակ Թալինի տարածաշրջանի գյուղերից մեկում՝ Իրինդում, նման հարգանքի ու պատվի էին արժանանում Ղազար Մաֆարյանը, Ապրե Մարտիրոսյանը, Գիրո Կարապետյանը, Գալուստ Քոթանյանը, Ղազար Մուրադյանը, որոնց խոսքը անբեկանելի էր ոչ միայն իրենց ազգատոհմերում, այլև համայնքում և նրա սահմաններից դուրս<sup>86</sup>: Համընդհանուր ձեռնարկելիք գործերի վերաբերյալ խորհուրդները և քայլերը նրանց ակամա դարձնում էին ազգապետ՝ ազգի մեծ: Մի երևույթ, որն ընդհանրական էր Հայաստանում մինչև 1930-40-ական թվականները: Ներկայումս այդպիսի խրատատուները մեծ մասամբ կրթված անձինք են, ուստի տարիքը, ավագությունը այլևս վճռական դեր չեն խաղում, դեռ ավելին՝ նոր, փոփոխված հասարակական երևույթներին ոչ լավատեղյակ ծերերը ավելի շատ են դիմում իրենից երիտասարդ կրթված ազգականին: Այս պատճառով էլ այդ պատվանունները աստիճանաբար դուրս են մնում գործածությունից:

Ազգակից ընտանիքները, ամուսնության ավանդական կապեր պահպանելու, նոր տուն կառուցելու, առևտրական որևէ գործարքի,

ընտանեկան բաժանքի, թաղման տեղի և կարգի, կենցաղային, համայնքային բազմապիսի հարցեր, հողային և այլ կարգի վիճելի խնդիրներ խաղաղությամբ լուծելու նպատակով, դիմում էին ազգի մեծին, որի վրա էր ընկնում ընդհարված ազգատոհմերին հաշտեցնելու պարտականությունը, որ հաճախ ավարտվում էր կողմերին խնամիացնելով: Լինում էին դեպքեր, երբ ազգի մեծը և նրա կինը, շատ դեպքերում՝ վերջինիս դրոմամբ, համոզում և բեկանում էին որևէ ամուսնություն, որն իրենց կամքին հակառակ է կատարվել:

Կապիտալիստական կացութաձևի ամրապնդմանը զուգընթաց ազգի մեծի դերակատարությունը փոփոխություն էր կրում: Երբեմնի հարգված ծերունին այժմ հարկադրված էր լսել նրան, ով թեև տարիքով իրենից երիտասարդ էր, բայց օժտված էր մեծ հարստությամբ, «իշխանավոր էր»: Այդպիսի հարուստներից ոմանք նույնիսկ ազգի սահմաններից էլ դուրս էին գալիս՝ իշխելով գյուղական հասարակության վրա կամ դառնալով պետական ապարատի ֆունկցիոներ: Այդպիսիներին պիտակավորում էին որպես «իշխանավոր մարդ»: Չքավորը, որքան լինե՞ր տարիքով ավագ և խելամիտ, չէր կարող դառնալ ազգակիցների խրատատու ավագ: Այդ դերը ստանձնում էր ամենահարուստ ընտանիքի այն տղամարդը, որը միաժամանակ օժտված էր կազմակերպական ընդունակություններով: Մակայն սովորության իրավունքով ամրագրված ազգի մեծի գործառույթը նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետևանքով անհատների և ընտանիքների ինքնուրույնության տենչը թուլացնում և սահմանափակում էր:

Կապիտալիստական հարաբերությունների հայկական գյուղներթափանցման, գյուղական բնակչության ունեցվածքային արագ շերտավորման պայմաններում անկման հասավ ազգատոհմի ավագի հեղինակությունը, հանգամանք, որը նաև թուլացրեց «ազգ» արենակցական խմբի հասարակական, տնտեսական, տարածքային կապերը: Ազգակցական խումբը մեր օրերում ևս ունի իր խորհրդատուն, որը, եթե նկատի չունենանք մարդկանց գիտակցության մեջ հնի մնացուկը, կոչված չէ իր խորհուրդներում հետապնդելու զուտ ազգակցական խմբին վերաբերող նպատակներ: Ազգակցական խմբի ավագները այն փորձառու ծերերն են կամ շատ անգամ այն երիտասարդները, որոնք մեր ժամանակի ոգուն համապատասխան դաստիարակչական աշխատանք են տանում: Բոլոր դեպքերում փորքե-

<sup>86</sup> Տե՛ս ՂԱՆ, տ. 6, Իրինդ, 1972-1973, էջ 97-99:

րը կամ փորձ չունեցող ազգակիցները նրանց են դիմում ոչ թե ազգակցական նեղ հարցեր պարզելու, այլ առօրյա կենցաղի, բարոյադաստիարակչական հարցերի կապակցությամբ: Նրանք քարոզում են առավելապես հանրային կարգ ու կանոնի, գյուղական ընդհանուր շահերի, ինչպես նաև խորհրդի դիմողների ու հասարակական միջավայրի միջև անխզելի կապերի մասին ունեցած իրենց փորձը: Իսկ այդպիսիք ներկայումս կրթված անձինք են:

Ազգի մեծի դերը XX դարի սկզբներին արևելահայության մեջ թուլացել էր, մինչդեռ Արևմտյան Հայաստանի շատ ազգագավառներում դեռ երկար ժամանակ պահպանվեց:

Ազգի մեծի կինը կազմակերպչական ընդունակություններ ունենալու դեպքում, ինքնաբերաբար դառնում էր ազգատոհմի կանանց ներքին գործերի խորհրդատուն, մասնավորապես՝ ամուսնության, հարսանիքի ու բարոյական դաստիարակության, թաղման, հոգեհացի ու այլ հարցերում և, ընդհանուր առմամբ, ամուսնու կամքի արտահայտիչն էր: Ազգի ընտանիքները իրենց բոլոր նախաձեռնությունների ժամանակ բարոյական պարտք էին համարում ներկայանալ ազգի մեծին ու նրա կնոջը և խորհրդակցել նրանց հետ: Ազգամեծի կինը շատ հաճախ ժողովրդական բժշկությամբ և մանկաբարձությամբ համայնքում աչքի ընկնող դեր էր կատարում: Նրան ևս դիմում էին պատվանուններով՝ «Մեծ մամ», «խաթուն մամ», «նանի», «այա», «զիզի», «խանում» «աբլա», «խանում աբլա», «ադե» մեծարման այլ ձևերով:

Ազգի մեծի տիկնոջ խոսքն անգամ 1940-50-ական թվականներին դեռ օրենք էր հիսունն անց, առանձին ընտանիքների տեր որդիների և մյուսների համար, որոնք, սասունցիների հնավանդ սովորույթի համաձայն, ոչ մի պատասխանատու քայլ չէին անում առանց նրա հետ խորհրդակցելու: Մեծ տիկնոջ խոսքը, կամքը վճռորոշ էր հատկապես որդիների ամուսնության հարցում: Բերենք մի օրինակ. երբ մեր գրուցակից բանասացի հորը ցանկացել են ամուսնացնել սիրած աղջկա հետ, տատը չի տվել իր համաձայնությունը՝ ասելով՝ «Նրա քեռին լավ մարդ չէ», դրանով իսկ մատնանշելով աղջկա մորական կողմի բարոյական վատ բնութագիրը: Մի խոսքով, մեծ տիկինը նշանակալի դեր ուներ աղջիկներին ու տղաներին նշանելու, հաջող փեսացու ու հարսնացու ընտրելու, հարսնատեսը, հարսանիքը և նման մեծ խնջույքները, կերակուրները պատրաստելու, տոնական հանդեսները, հյուրերի պատվով ընդունելությունը կազմակերպելու գործում: Նա

այս և այլ գործերում անփոխարինելի խորհրդատու էր: Ազգակից ընտանիքների բարոյական պարտքն էր տարվա գլխավոր տոների, առանձնապես Նոր տարվա օրը, նրանց ներկայանալ նվերներով: Նա ամեն ինչ անում էր որդիների և տեգրերի ընտանիքների միջև տնտեսական հավասարություն ապահովելու համար: «Հորեղբայրս, - ասում է բանասացը, - աշխատում էր կարի արհեստանոցում: Երբ նա նոր հագուստ էր հագնում, տատս նախ շնորհավորում էր, ապա ասում. «Շատ լավն է, մի հատ էլ եղբորդ համար կարել տուր»: Հաջորդ օրը չափսերը վերցվում էին: Հետպատերազմյան սուղ տարիներին (Երկրորդ աշխարհամարտը նկատի ունի. - Ռ.Ն.) հենց որ հայրս այլուր էր բերում տուն, տատս գոհունակություն էր հայտնում և ասում. «Մի պարկ էլ եղբորդ տուն տար»: Օջախը, տուն ու տեղը նրանց համար պաշտամունքի աստիճան սրբազան հասկացություն էր, և չէին հաշտվում այն լքելու մտքի հետ: Երբ հայրս և հորեղբայրներս տեղափոխվել էին Երևան, իրենց մորը չէին կարողացել համոզել մեկնել իրենց հետ: Ում թողնեմ այս հսկայական «դիրլիզը» (ունեցվածքը), պատճառաբանել էր տատս, թեև նրա ամբողջ ունեցվածքը հողն կտուրով մի տուն էր, մի ամբար և ցեցը կերած մի պահարան<sup>89</sup>:

Նրանց համանման հարցերով էին դիմում նաև համայնքի այլ ընտանիքներ: Ազգի մեծը ըստ էության ուներ այն պարտականությունները, ինչը ունեցել է վաղնջական ժամանակների տոհմավազը: Ազգի մեծը և նրա կինը ազգի դաստիարակներն էին և հարաբերությունները կարգավորողները: Բայց եթե ազգի մեծի կնոջից ավելի խելացի մեկը առավել լայն գիտելիքներ ու հեղինակություն էր ունենում, դառնում էր կանանց տարերային ղեկավար: Ստեղծագործ միտք ունեցող կնոջ խորհուրդները լսում էին ոչ միայն կանայք, այլև տղամարդիկ:

Ազգակցական խմբի մեջ այս երկու անձերը թեև ընտրությամբ չէր, որ ղեկավար դեր էին կատարում, բայց մեծ էին նրանց իրավունքներն ու պարտականությունները: Այս երկուսը կենտրոնական դեմքեր էին, որոնց դերն այն էր, որ ազգակցական խմբի ներսում պահպանվեր տնտեսական, հասարակական և գաղափարական միասնությունը:

Այստեղից էլ նրանց նկատմամբ մեծարանքը, որ պաշտամունքի էր հասնում, նրա բարձր հեղինակությունն ու հարգանքը համայնքում: Այս իմաստով արյունակցությունը սույն գործում չափազանց կարևոր

<sup>89</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Կինը հայոց ավանդական ընտանիքում*, էջ 75-76:

նշանակություն ունեցող գործոն էր: Այդ կապի շնորհիվ էլ հազարամյակների ընթացքում մշակվել էին փոխադարձ վերաբերմունքի նորմեր, ազգակցական սիրո և հպարտության զգացմունքներ:

Չոզևո-գաղափարական կապի դրսևորումներից մեկն էլ ազգի նախնիների մեծարումն էր, որ երբեմն հասնում էր պաշտամունքի աստիճանի, մշակվել էին փոխադարձ վերաբերմունքի նորմեր, համատարած էին ազգակցական սիրո և հպարտության, ազգի մեծարման դրսևորումները: Ազգի հիմնադրի անվամբ ազգանվան պահպանումը առավել արտահայտված էր սասունցիների շրջանում: Իրինդ գյուղի (Թալինի տարածաշրջան) բանասացների հաղորդմամբ՝ շուրջ մի քանի սերունդ հեռավորությամբ «Կարմիր Իրիցու» անվամբ ազգատոհմին պատկանող շառավիղներից Միրիայում բնակվող Կարապետ Կարապետյանի որոնումները բերում են Իրինդ, որտեղ բնակվող, այդ նույն տոհմի սերունդներից Արշավիր Քոթանյանի (1972 թ. նա Իրինդի կոլտնտեսության նախագահն էր) հետ հաստատվում են սերտ հարազատական կապեր: Նրան հերթով նույն ազգի ընտանիքները հյուրընկալում են տնտեսուն: Արտերկրում մերձավորներ, ազգակիցներ փնտրելու, գտնելու վերաբերյալ նմանօրինակ բազմաթիվ նյութեր ունենք գրառած<sup>90</sup>: Ազգի մեծերի կողմից տարվող դաստիարակությունն այնպիսին էր, որ ազգի մեջ ամեն մի նոր սերունդ, այդ թվում նաև՝ որդեգրվածը, տնփեսան, հարսը, բուրբի հետ կապվում էին միասնական ու սերտ կապերով: Բացի նախնու մեծարումից ու պաշտամունքից, նույնպիսի մեծարանքի էր արժանանում ամբողջ ազգը: Ազգի հասցեին ուրիշների ամեն մի սուտ և անպատշաճ արտահայտություն անպատկառություն էր դիտվում, լուրջ, անզամ արյունահեղ կոիվներ էին ծագում: Ժողովրդի մեջ կար այն ըմբռնումը, թե «ով իր ազգը լքի, հոգին էլ կկորցնի»: Ազգը գորավիզ էր իր անհատին: Հորական կամ արյան ազգակցությունը ավելի ամուր էր ու սերտ, մինչդեռ նույնը չէին մորական կամ կաթի գծով ազգակցական կապերը: Այն ազգը, որն ավելի բազմաքանակ էր, համարվում էր գորեղ, անխոցելի: Նման պարագայում «ոչ մեկը չէր իշխընա դիպչեր նրա տնտեսական կարողությանը, ազգի պատվին ու նամուսին»: Ազգակիցները մեկը մյուսին թև ու թիկունք էին ինչպես համայնքում, այնպես էլ համայնքից դուրս:

<sup>90</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, Իրինդ, 1972, էջ 85-88:

Տարբեր սերունդների, մոտ ու հեռավոր ազգականների միջև եղած կապերն ու փոխազդեցությունները, կազմելով ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունները, դրսևորվում էին առօրյա կյանքում օգտագործվող և ազգի ընտանիքներում գերիշխող բազմաթիվ սովորույթների, վարքագծերի, սահմանված կարգերի, կարծիքների ու հասկացողությունների ձևերով: Դրանց կիրառումն ու կատարումը ընտանիքների համար պարտադիր նշանակություն ունեին: Մտերմության այդ սովորույթները, սերնդից-սերունդ փոխանցվելով, ներկան կապում էին անցյալի հետ, որով պահպանվում էր ընտանիքի կայունությունը:

Ըստ ազգագրագետ Թ. Զաքարյանի անցկացրած սոցիոլոգիական հարցումների՝ օրինակ շիրակցիների ընտանիքի կայունության, կենսապահովման, երեխաների դաստիարակության և նոր սերնդաձի խնամքի գործում այսօր էլ կարևոր դեր ունեն ոչ միայն համատեղ ապրող հարազատները: Առանձնացած երիտասարդ ընտանիքները, պահպանելով սերտ հարաբերություններն ինչպես ծնողների, այնպես էլ մոտ ազգականների հետ, համագործակցում են՝ ցույց տալով թե՛ նյութական և թե՛ բարոյական աջակցություն<sup>91</sup>:

Այդ համերաշխության, համախմբվածության, համագործակցության, միմյանց գորավիզ լինելու զգացումները առավել վառ է դրսևորվել այլ էթնիկ տարրերի հետ ապրող արևմտահայերի շրջանում:

Ազգագրական նյութերի հավաստմամբ՝ Դիարբեքիր նահանգի մեջ մտնող Խարզանի, Բշերի, Սլիվանի և այլ հովտային գյուղերի հայությունը իր բերքը, ցորենը վաճառքի հանելիս ազգակից ընտանիքներով գաղտնի զինված քարավան էին կազմում՝ քրդերի հարձակումներից պաշտպանվելու համար:

Ազգի հասարակական, գաղափարական միասնության վառ դրսևորումներից մեկն էլ, որ գոյատևում էր դեռևս XX դարում, ազգակիցների ընդհանուր գերեզմանոցների առկայությունն է: Հայտնի է, որ հայկական գյուղերում ազգերն ունեցել են իրենց առանձնացված գերեզմանոցը կամ ընդհանուր գերեզմանատան առանձին

<sup>91</sup> Տե՛ս Թ. Զաքարյան, *Գյումրիի ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների մի քանի հարցեր (ըստ 1980-1990-ական թթ. էթնոսոցիոլոգիական հետազոտությունների)*, էջ 210:

հատվածը, որն ավելի բնորոշ երևույթ էր: Ազգի գլխավորի պարտականությունների մեջ էին մտնում գերեզմանոցում գերեզմանաշարքի կամ գերեզմանատան իրենց հատվածի հսկողությունը, տնկիների ու ծառերի մշակումը, մաքրումը և այլ արարողություններ: Յուրաքանչյուր ընտանեկան գերեզմանոց ուներ իր պաշտամունքային նշանակության ծառը<sup>92</sup>: Առանձին ազգակցական գերեզմանոցները հազվադեպ երևույթ էին: Ամենատարածվածը միևնույն գերեզմանոցում տարբեր ազգատոհմերի ննջեցյալների առանձին շարքն էր՝ «երանք», որը հատուկ էր տոհմային կարգերին: Այս ավանդույթը սկսեց խախտվել XX դարի 30-ականներին: Մինչև վերջերս էլ շատ վայրերում հանգուցյալին հուղարկավորում են միևնույն ազգին պատկանող տարածքում, կամ՝ որքան հնարավոր է նրան մոտ:

Դեռ XX դարի սկզբներին գերեզմանոցների ազգակցական տարածքների ազատ մնացած հատվածներում մրգատու ծառեր էին տնկում, որոնց խնամքն ընկնում էր տվյալ ազգի բոլոր անդամների վրա: Ստացված բերքից օգտվում էին ազգակից բոլոր ընտանիքները:

Հայոց մեջ տարածված էր հանգուցյալին օտար վայրից իրենց գերեզմանատուն տեղափոխելու սովորույթը: Այդ սովորույթի համաձայն՝ ազգակիցները պետք է ապրեին միասին ոչ միայն այս կյանքում, այլև անդրժիրիմյան աշխարհում: Նույնիսկ այն դեպքում, երբ անձը մահանում էր ոչ իր ծննդավայրում, նրան բերում և հուղարկավորում էին իր ազգի գերեզմանոցում: Մեղք էր համարվում օտար հողում հանգուցյալին թողնելը: Տեղափոխում էին նաև ժողովրդական այն ընկալման համաձայն, ըստ որի՝ հարազատ հողը չի ճնշի հանգուցյալին: Հեթանոսության ամենանախնական շրջաններում անգամ ննջեցյալներն ամփոփվում էին ընտանեկան-ազգակցական դամբարաններում, որովհետև կարծում էին, թե նախնիները հետզհետե փոխվում են ոգիների, մի տեսակ արյունակից պահապան գորությունների, որոնց հովանավորության տակ էին մտնում գերդաստանի կենդանի բոլոր անդամները, նրանց համար պարբերաբար կատարվում էին ծեսեր և զոհաբերություններ: Այստեղից էլ ահա տոհմական դամբարանների գոյությունը սեփական կալվածքում, ազգականներից ոչ հեռու: Փավստոս Բուզանդը հիշատակում

է, որ ննջեցյալներին, լինի հայրապետ, եպիսկոպոս, իշխան կամ թագավոր, թաղում էին նրանց կալվածքում, նախնիների մոտ<sup>93</sup>:

Ազգից որևէ մեկի թաղմանը տվյալ ազգի բոլոր մեծահասակ տղամարդիկ պետք է ներկա գտնվեին, որոնք պարտավոր էին մինչև «յոթը», անգամ «քառասունքը» սուգ պահել: Հանգուցյալի տանը յոթ օր չպետք է օջախ վառվեր, կերակուր եփվեր, նրա ընտանիքի մասին հերթով հոգ էին տանում նույն ազգի բոլոր ընտանիքները:

Նշանավոր անձի մահվան դեպքում ազգի ընտանիքները և համայնքը դադարեցնում էին բոլոր աշխատանքները՝ ննջեցյալի գերեզմանափոսը փորելու և այլ բնույթի օգնություն ցույց տալու պատրաստակամությամբ: Մասունցիների կենցաղում հուղարկավորությանը զուգընթաց կազմակերպվող ձիարշավը և հրացանաձգությունը համայնքում ազդարարում էին մահվան բոթը: Ազգակցի թաղման ծեսում արտահայտվում էին մահացածի հանդեպ ամենատարբեր զգացումները. սեր, հարգանք, ափսոսանք, կորստի ցավ, նաև երկյուղ և վախ: Դրա համար էլ համայնքում հատկապես մեծ հեղինակություն վայելող անձի մահվան դեպքում այդ և շրջակա գյուղերում մեկ տարի հարսանիք չէին անում: Մեռնողի ազգականները 40 օր պարտադիր սուգ էին պահում, երիտասարդ աղջիկներն ու հարսները կտրում և ննջեցյալի գերեզմանի վրա էին դնում իրենց մեկ կամ երկու ծամը, տարեց հարազատները գլուխները ծածկում էին սև փուշիներով, տղամարդիկ մինչև քառասունքը լրանալը չէին սափրվում, իսկ հուղարկավորման ժամանակ գրակները շուտ էին տալիս և թարս դնում, վերնազգեստները հագնում էին «շրջոնք» (շրջված): Կամ էլ թափորի էտևից գնացող յուրաքանչյուր տղամարդ գլուխը ծածկում էր ննջեցյալի հագուստներից մեկով: Սուգ պահող կանայք երբեմն տարիներով մնում էին սևազգեստ, ուրախության չէին մասնակցում: Մեռելին լողացնելու, պատանքելու, գերեզմանոց տեղափոխելու, գերեզմանափոսը փորելու գործողություններն ամբողջովին վերապահված էին ազգին և համայնքին: Գյուղերում մինչև այսօր էլ հատուկ, վճարովի գերեզմանափորներ չկան, մերձավոր բարեկամներից կամ հարևաններից 3-4 փորձառու երիտասարդ

<sup>92</sup> Տե՛ս В. Бдоян, *Кровнородственный "азг"...*, էջ 35-39, նույնի՝ *Հայ ազգագրություն*, էջ 155-165:

<sup>93</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, *Պատմություն Հայոց*, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1989, դպր. III գլ. Բ, էջ 15, գլ. ԺԲ, էջ 53, դպր. IV, գլ. ԻԴ, էջ 221-225:

տղամարդիկ առանց զգուշացման փորձում են գերեզմանը: Հանգուցային հուղարկավորելը և հետագա հիշատակման օրերը ընթանում էին ազգականների կողմից «աշխարելով»՝ սուգ ու կոծ անելով: Քառասունքը լրանալու օրը, արարողությունը կատարելուց հետո՝ նոր ննջեցյալի մերձավորներին քահանայով և բարեկամներով եկեղեցի էին տանում և հասարակության մեջ հանում: Այս արարողությունը կոչվում էր «սգահան անել»:

Ազգովի համախմբվածությունը դրսևորվում էր ոչ միայն հուղարկավորման արարողությունների, այլ նաև ամուսնահարսանեկան, մանկան ծննդի, խնամքի, դաստիարակության, ընտանեկան տոների ժամանակ: Ամուսնության հարցը քննարկվում էր ազգի ավագների պարտադիր մասնակցությամբ և իրագործվում էր միայն նրանց համաձայնությամբ: Մասնակցում էին ոչ միայն իրենց խորհուրդներով, այլև նյութական օգնությամբ:

Ամուսնության համար ընտրությունը կատարվում էր այն հետանկարով, որ ազգատոհմը և տոհմանդամ ընտանիքը համալրեին աշխատավոր ու տոհմին գորավիզ կանգնող սերնդով: Ազգանդամ ընտանիքների, ինչու չէ ամբողջ գյուղական հասարակության մեջ, ամուսնությունը և հարսանիքը պարտադիր և հեղինակություն ու հարգանք բերող ամենանշանակալից իրադարձությունն էր, քանզի այն նոր ընտանիքի կայացման հասարակական վավերացումն էր: Աղջիկը հայոց մեջ ամենուր իր հայրական տանը հյուր էր ընկալվում, փոխարենը՝ տանտիրուհին էր, սերունդ ապահովող նոր տանը, ուր հարս էր գնում: Ամուսնությամբ աղջիկը փոխում էր իր ընտանիքը, համալրում ազգը դուստր ընտանիքով, ուստի այդ իրադարձությունը տոնվում էր ազգովի, հրապարակային հանդիսավորությամբ: Ահա թե ինչու ամուսնության հարցում նրանց գիտությանը հաշվի էր առնվում կողմերի ազգուտակը, ընտանիքը, ծնողների վարքագիծը, հեղինակությունը համայնքում, ունեցվածքը, դասային պատկանելությունը<sup>94</sup>: Անձնական հատկանիշներից կարևորվում

<sup>94</sup> Մեր գրառած նյութերում հարսնացու կամ փեսացու ընտրելիս մեծ կարևորություն է տրվել «ազգուտակին», «ջրնսին», «քոքին», նրանց հեղինակությանն ու հարգանքին: Մասունցիների ըմբռնմամբ քոքը նույնացվել է ծառի արմատների հետ. որքան արմատները խորը լինեին, այնքան ծառը արագ և անվնաս կաճեր անգամ աննպաստ պայմաններում: Դրա համար էլ նրանց

էին աշխատասիրությունը, համեստությունը, հորորդի՝ մայրական դաստիարակություն տեսած, առաքինի ծնողների զավակ լինելը: Հասկապես մեծ կարևորություն էր տրվում մոր կերպարին: Ամուսնացողները լռությամբ հնազանդվում էին մեծերի ընտրությանը: Այս կարգով կանխվում էին մերձավորների ամուսնության դեպքերը, տարիքային անհամապատասխանությունը, պատահական ամուսնությունները և այլն:

Խոր անցյալում, հայրիրավական կարգերի համաձայն, հարսին, որդեգրին և տնփեսային լիովին յուրային դարձնելու համար պետք է նրանց մարմնին դնեին դաջ-նշան, որպիսիք հայտնի էին նաև այլ ժողովուրդներին: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին արևմտահայոց մեջ դեռևս պահպանվում էին հարսնացուին կտածուններով «նշան դնելու» սովորույթը: Այն սովորաբար դաջում էին աղջկա ճակատին՝ երկու հոնքերի կենտրոնում մեկ և աջ ձեռքի բութ ու ցուցամատի միջև ընկած հատվածում հինգ պուտեր<sup>95</sup>: Այս կտածունների վերաբերյալ մենք ակնարկ ունենք նաև մեր մի այլ աշխատությունում<sup>96</sup>, որտեղ, հիմնվելով Գ. Սրվանձոյանցի<sup>97</sup> Տիգրանակերտում կատարած գրառումների վրա, նշել ենք գրականության մեջ եղած կարծիքները. անձ հաստատող նշան, պատկանելության, հասարակական դիրքի վավերագիր, մոգական պաշտպանություն չար ոգիներից, հիվանդություններից, սեռատարիքային որոշակի խմբերի պատկանելու իմաստ, սեռահասունության նշան և այլն: Ենթադրվում է, որ այն առաջացել է նախնադարյան տոհմական շրջանում և կապված է եղել տարիքային լիահաղորդության ծեսերի հետ: Տվյալ պարագայում այն առնչվում է «յուրայնացման», «ազգին պատկանելու» հնագույն սովո-

հարսանիքներում խնամիների կենացը խմելիս ասում էին. «Փեսայի քոքը մեծ է (ազգություն), ծառ կեղնին և ճյուղ կիդան, իրենց օջախը պուճախ չի դառնա»: Մեծ ազգի հետ խնամիություն հաստատելը պատիվ էր երկուստեք (տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 99):

<sup>95</sup> Դաջումը կատարվում էր 1 կամ 4 ասեղով: Օղիով թմբեցրած ճակատին և ձեռքին, ասեղների թեթևակի հարվածներով, ծակծկում էին և սև թանաք քսում: Չորանալուց հետո առաջացած պուտերը մշտապես պահպանվում էին:

<sup>96</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքսհայերի ամուսնահարսանեկան սովորություններն ու ծեսերը*, էջ 38-39:

<sup>97</sup> Տե՛ս Գ. Սրվանձոյանց, *Մանանա, Երկեր*, հ. 1, Երևան, 1978, էջ 168, նույնի՝ *Թորոս Աղբար, Երկեր*, հ. 2, Երևան, 1982, էջ 438-441:



րույթի հետ: Դա աղջկան «տարուացնելու», «իրենցով անելու», «նշան դնելու», «նշանված աղջիկ» դարձնելու խորհրդանշան էր:

Հայերի մեջ տարածված է այն կարծիքը, թե ազգն ուժեղ է այնքան, որքան արու զավակներ ունի, ուստի տղաների ծնունդն ավելի մեծ խանդավառությամբ է ընդունվել, ինչը չենք կարող ասել աղջիկների մասին: Նրանք համարվել են օտարի տունը շենացնողներ, օտարի ճրագը վառողներ: Տղաների և աղջիկների դաստիարակությունը տարբեր ձևերով է իրականացվել: Ազգի մեջ պահպանվում էր նոր սերնդին ազգատոհմի նկատմամբ նվիրվածության ոգով դաստիարակելու ձգտումը: Տղաները մեծերի կողմից ստանում էին տիրելու, բռնացքներով պաշտպանվելու դասեր: Տղան դառնալու էր իր հայրական տան և ազգի շահերի պաշտպան, իսկ աղջիկը՝ ընտանիքի և ազգի պատիվը բարձր պահող, որի նկատմամբ դաստիարակությունն ավելի խիստ էր. անհանդուրժելի էին այն դեպքերը, երբ տվյալ ազգի կամքից անկախ՝ հակառակորդ ազգի տղաների հետ որևէ ձևով սիրային կապեր էին հաստատվում:

Ազգի մեջ եղել է վրիժառության զգացում և պրակտիկա, որը գոյատևել է մինչև XX դարի առաջին քառորդը: Հարյուրամյակներ շարունակ համատեղ ապրելու ընթացքում համայնքը ներկայացնող ազգերը տնտեսական ու սոցիալական հարաբերությունների մեջ միշտ էլ ընդհարման և առճակատման առիթներ են ունեցել: «Ազգ» արենակցական խմբի հասարակական միասնությունը նրա համերաշխության մեջ է: Ազգի յուրաքանչյուր անհատին հատուկ է եղել արժանապատվության գիտակցությունը: Ազգատոհմի բոլոր անդամները պաշտպանում էին ազգի շահերը, իսկ ազգն էլ՝ իր ամբողջ ուժով պաշտպանության տակ էր առնում յուրաքանչյուր անհատին: Սոցիալ-դասակարգային հողի վրա առաջացած հակամարտություններում փոքր ազգերը տառացիորեն տառապել են մեծ ազգերի ձեռքին: Այդպիսի դրդապատճառներ են հանդիսացել հողային հարաբերությունները, որոնց հավասարեցվում էր բարոյական վարքագծից առաջացած հակամարտությունը:

Առնանգումը, կանանց սիրահետումը վրիժառության և հակամարտության բուն պատճառներից էին, որոնք երբեմն կողմերին հասցնում էին սուր ընդհարումների, երևույթ, որ կարող էր գոյատևել սերնդե սերունդ: Այստեղից էլ ազգի միասնության կարևոր դրսևորումներից մեկը բարոյական նորմերի անաղարտության ապահովումն է

եղել: Ազգի պատվագրկումը հիմնականում առնչվում էր իգական սեռի բարոյական վարքի հետ: Օտարներին իրավունք չէր վերապահվում խոսել երիտասարդ կանանց և հասունացած աղջիկների հետ: Հանցավոր արարք էր համարվում, երբ փորձում էին բռնությամբ խաղալ կանանց պատվի հետ կամ առնանգել ազգի աղջկան և կամ հարսին: Ազգի կնոջ պատվի հետ խաղացող տղամաղկանց նկատմամբ խիստ միջոցներ էին ձեռնարկում՝ ընդհուպ սպանություն: Նման դեպքում հանցավոր անձի մեղքի համար պատասխանատու էին նրա ընտանիքը և ողջ ազգը: Այլ կերպ ասած՝ ազգի բոլոր անդամները պարտավոր էին վրեժխնդիր լինել նրա անդամներից մեկին հասցրած վիրավորանքի համար: Վրեժը լուծում էին առաջին հերթին տուժողի մերձավոր հարազատները, վերջիններիս բացակայության պարագայում դա ազգի յուրաքանչյուր այլ անդամի բարոյական պարտքն էր համարվում: Երբ պատահում էր, որ ազգերի միջև ծագած կոիվների ժամանակ ութի էին կանգնում երկու կողմերի բոլոր հասուն տղամարդիկ. կովում էին մահակներով, երբեմն նաև՝ սառը զենքով:

Իգական սեռի պատվի, հողային հարցերի և երեխաների պաշտպանության համար սկիզբ առած կոիվներում վրիժառությունը երբեմն ավարտվում էր մարդասպանությամբ: Վերջինս կասեցնելու կամ վերջ տալու միջոցներից ամենազլխավորը տուժող կողմի հետ խնամիական կապեր հաստատելը և նյութական միջոցներով հատուցելն էր: Նման պարագայում համապատասխանորեն կարգավորվել են նաև հարաբերությունները քրեական տուգանքը հատուցելիս կամ ստանալիս: Եթե հանցավորի ընտանիքը ամուսնացնելու աղջիկ չունեք, գոհողության էր գնում նրա մերձավոր ազգականը: Եթե տուժող կողմը հաշտության առաջարկը մերժում էր, նշանակում է՝ նա հետապնդելու էր հակառակորդ ազգի հանցավոր ընտանիքին՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատամն վրեժ լուծելու համար: Նույնիսկ տասնյակ տարիներ անց որևէ ձևով այն ի կատար էր ածվում: Եղել են դեպքեր, երբ հրդեհվել է հանցավորի անասնակերի ձմեռային պաշարը կամ ծղոտի դեզը, անգամ տունը: Դա այն դեպքում, երբ դրամական հատուցմամբ բավարարելը համարվում էր անպատվություն՝ «արյունը փողով չեն լվանում»: Բոլոր դեպքերում ընտրվում էին թշնամացած երկու կողմերին հաշտեցնող միջնորդ մարդիկ: Ներկայումս անցյալի գիրկն են անցել նմանատիպ երևույթները: Հայ ազգագրագետներից Խ.

Մամուէլյանը հանգամանորէն անդրադարձել է այս հարցին<sup>98</sup>: Նա գրում է. «Ամենուրեք, ուր հասարակական կազմակերպությունները տակավին հիմնված են արենակից ազգակցության վրա, այնտեղ անպայման գոյություն ունի և արյան վրեժը: Վերջինս ծաղկում է իբրև մի պարտավորություն, սրբազան հոգևոր պարտք, որ ի կատար է ածում մոտակա ժառանգը և կամ էթէ նա չկա՝ նրա արենակից սերնդի մոտակա ազգականը»<sup>99</sup>: Այնուհետև շարունակում է. «Արյան վրեժն էլ իբրև հնադարյան մի ինստիտուտ, սրբագործված սերնդական-ցեղական պաշտամունքներից, անշուշտ պարտադիր էր սերնդի, նույնիսկ ցեղի բոլոր բաղկացուցիչ տարրերի համար: Երբ նրա անդամներից մեկի համար վրեժ էր հարկավոր առնել, իհարկէ այդ պարտականությունը ամբողջապէս ծանրանում էր ամենամոտիկ ազգականի վրա, սակայն և սերնդի յուրաքանչյուր անդամը սրբազան պարտք էր համարում յուր գործակցությամբ օժանդակել վերժխնդիր սերնդակցին: Բայց երբ վրիժառություն էր պահանջում նահապետի կամ սերնդի (ազգի) որևէ մեծավորի սպանությունը, խոսք չկա, որ այս դեպքում վրեժ էին կանչում ոչ միայն մոտակա ազգականները, այլև սերնդի բոլոր անդամները, իբրև այդ նահապետի նախահայրերից սերվածներ»<sup>100</sup>: Նման դեպքերում վրեժխնդրությունն ազգակցության մի աստիճանով չէր ավարտվում, անցնում էր սերնդից սերունդ:

Վրեժխնդրությունը բավական տարածում էր գտել հայ իրականության մեջ, առանձնապէս լեռնաբնակների շրջանում: Օրինակ՝ Ջեյթունում «վրիժառությունն ընդհանրապէս սերնդական հանգամանք մ'ունի»<sup>101</sup>: Այստեղ սպանության դեպքերում սպանվածի ազգականները պատրաստ են եղել միշտ պատասխանել նույնով՝ այդպիսով հազեցնելով սերնդական վրեժխնդրության պարտավորությունը: Ոչ միայն սպանության դեպքերում, այլև ամեն մի անձնական և ընտանեկան ընդհարման ժամանակ, երբ հակառակորդ կողմերի կրքերը հասնում էին թշնամականի, առաջ էր գալիս վրեժխնդրու-

<sup>98</sup> Տե՛ս Խ. Մամուէլյան, *Արյան վրեժ և փրկանք*, ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 269-303, նույնի՝ *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. III, էջ 132-153:

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 270:

<sup>100</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>101</sup> Տե՛ս Հ. Ալլահվերդյան, *Ուլնիա կամ Ջեյթուն*, Կ. Պոլիս, 1884, գլ. Ե, էջ 133-135:

թյան հարցը: Ջեյթունում վրեժխնդրությունը արտահայտվել է ոչ միայն հետապնդումով և սպանությամբ, այլև միմյանց մի շարք նյութական վնասներ պատճառելով, անձնական վիրավորանքներ հասցնելով: Վրեժխնդրության մի շարք ձևեր է ներկայացնում Հ. Ալլահվերդյանը. օրինակ՝ հակառակորդ կողմերից մեկը զիջերը, գաղտագողի մտնում էր մյուսի տուն և նրա քնած տեղը հրացանով վառող է դնում՝ ահաբեկելու և զգուշացնելու նպատակով, կամ էլ թշնամացած կողմերից մեկը զիջերը եկեղեցուց մյուս կողմի ննջեցյալի դագաղն էր գողանում և բերում հետապնդողի դռան առջև կանգնեցնում՝ զգուշացնելով, թէ նույնկերպ կվարվեն իր նկատմամբ, կամ էլ զիջերվա ընթացքում միմյանց տներն էին քարկոծում և այլև: Առավել հաճախակի էին նյութական վնասներ պատճառելու դեպքերը և այլև<sup>102</sup>: Մշո Հարք գավառում, ըստ Սահակ Մովսիսյանի (Բենսէ) հաղորդման՝ առևանգման դեպքերում. «Եթէ ժամանակին կիմացվի, աղջկա ծնողները, ազգականները, մերձավորները վրեժխնդիր կերպով կհետապնդեն և շատ անգամ կամ աղջիկը կվերադարձնեն, կամ սպանություն և արյունահեղություն տեղի կունենար, իսկ երբ չհաջողվեր, վրեժ լուծելը կթողնէին ապագային նման առևանգմամբ տոհմային վրեժխնդրության հագուրդը գոհացնելու»<sup>103</sup>: Շատ հաճախ ազգի բարոյական պատվի հարցերը դուրս էին գալիս ներհամայնքային շրջանակներից և ավարտվում միջհամայնքային բանակցությունների փոխզիջման որոշումներով<sup>104</sup>:

<sup>102</sup> Տե՛ս Հ. Ալլահվերդյան, *Ուլնիա կամ Ջեյթուն*, էջ 133-135:

<sup>103</sup> Տե՛ս Բենսէ, *Հարք կամ Բուլանըխ գաւառ*, ԱՀ, գ. V, Թիֆլիս, 1899, էջ 117:

<sup>104</sup> Մասնա Շենիկ գյուղից Ապրեի աղջկան նշանել էին Գեյլեգուզանի Պետո (Պետրոս) տներից Օհանի հետ: Հարևան Մեմալ գյուղի Ճիճոյի Եղոն (Շիլազարը) նպատակ է դնում առևանգել Օհանի նշանածին: Կազբի (մանանա) հավաքելիս Եղոն իր ընկերների հետ իրականացնում է առևանգումը: Շենիկցիները իբրև հատուցում գողանում են Մեմալից երեք լծո եզ, որով էլ սկսվում է միջհամայնքային պայքարի նոր փուլ՝ սեմալցիների և շենիկցիների միջև: Եղոն ստանում է Կոփ գյուղի ռես (ցյուղապետ) Արեի տան հովանավորությունը: Շենիկցիները 40 տղամարդով որոշում են ուժով հետ վերցնել համացյուղացի Ապրեի աղջկան: Ի պատասխան ոտքի է կանգնում Կոփ գյուղի կովող ուժը՝ ահել, ջահել, թիկունք կանգնելով իրենց համայնքապետին:

Մեկ այլ դեպքում՝ Մեմալ գյուղի Պետո (Պետրոս) տներից Վարդանը առևանգում է նույն գյուղի ռես Տոնեի (Տոնապետ) արքունիքի չհասած տղայի նշանածին՝ Խունավին: Գյուղի ռեսի տղայի հարսնացուին փախցնելը մեծ

XIX դարի և XX-ի սկզբների մամուլը առատ նյութ է պարունակում այս երևույթի մասին, նշելով նաև, թե վրիժառույթունը հայերին է անցել հարևան քուրդ և մահմեդական այլ ժողովուրդներից: Մակայն վրիժառույթյան սովորույթը միայն տեղական երևույթ չէ, այն բնորոշ է եղել անցյալի գրեթե բոլոր ժողովուրդներին: Այն նույնքան բնական է հայերի, որքան և քրդերի կամ պարսիկների, մահմեդական այլ տարրերի, մասնավորապես հյուսիսկովկասյան ժողովուրդների համար, որոնց մեջ վրեժխնդրությունը արտահայտվել է ավելի խիստ ու բիրտ, քան հայ իրականության մեջ, քանզի հայերը կուլտուրապես ավելի բարձր էին հարևաններից<sup>105</sup>:

Պետական և քաղաքացիական կյանքի զարգացմամբ վրիժառույթունը, իբրև պատմական երևույթ, այսուհետ համարվում էր հասարակական անդորրը խանգարող հանգամանք: Եվ քանի որ պետական ներկայացուցիչների վրա էր ընկած հասարակական անդորրը պահպանելու պարտականությունը, բնականաբար միջոցներ էին ձեռնարկվում վրիժառույթյան իրական երևույթները կասեցնելու համար: Այդ նպատակին էին ծառայում այսպես կոչված հաշտության

---

համարձակություն էր և նույնքան անպատվություն էր համարվում: Առևանգողները հանձնվում են Հոգե անուևով մի քուրդ բեգի հովանավորությանը: Մովորույթի համաձայն, եթե որևէ մեկի տանը ապաստան տրվեր, ապա անվտանգությունը երաշխավորված էր համարվում: Ռեսը անհամար նեղություններ էր պատճառում առևանգողի մերձավորներին: Բիարզունը՝ պատվի և նամուսի ոտնահարումը հանգեցրել էր ծայրահեղ վրիժառույթյան: Ի վերջո, համայնքից ընտրված հեղինակավոր անձանց միջնորդությամբ հաշտությունը կայանում է 40 ոսկի, մի սառը գենք՝ խանչալ, 3 արտ վճարելու և առևանգողի հորեղբոր աղջկան ռեսի տղայի հարսնացու ճանաչելու գնով: Այս և նման դեպքերը շատ են բնորոշ եղել սասունցիներին (ԴԱԼ, տ. 6, էջ 85-88):

<sup>105</sup> «Մշակ»-ում կարդում ենք. «Ինչպես քրդերի, պարսիկների և այլ կիսավայրենի ցեղերի մեջ հաճախ աղջիկ ուզելու դեպքում, տեղի են ունենում զանազան արյունահեղ դեպքեր, միևնույն բանը և հաճախ տեղի է ունենում հայերիս մեջ էլ: Հայ գավառներում... Ապարանում... միշտ անպակաս են արյունահեղ դեպքերը: Շատ անգամ ամբողջ մի գյուղի բնակիչներ, երկու կողմի բաժանված, մի աղջկա համար միմյանց միս են կրծում, մեկը մյուսի տավարը թալանում, մարագը, դեզը, քուլաշը կրակին տալիս, ծառերը կտրում և այլն: Կոպիտ գյուղացու համար դա ինքնասիրության խնդիր է...» («Մշակ», 1902, № 141):

պահանջը և ապաշխարանքը, որ գործադրվում էր հոգևոր իշխանությունների կողմից՝ քահանայի հորդորով, խաչով և Ավետարանով երդվեցնելով: Եկեղեցին խստիվ արգելում էր փոխադարձ թշնամությունից դրդված արյուն թափելը:

Վրիժառույթյանը վերջ դնելու համար հանցավոր անձը, նայած գործած ոճիրին, մի դեպքում ներկայանում էր սպանվածի տուն՝ իր կյանքը հանձնելով սպանվածի հարազատների ողորմածությանը. ներկայանում էր թների վրա իր երեխային պառկեցրած, երեսը դեպի երկինք դարձրած՝ ասելով. «Ահա ես մեկին եմ սպանել, դուք մեկի տեղ երկուսիս սպանեցեք»: Մեկ այլ դեպքում, որ թողության համար ավելի բնորոշ էր, պատանքի համար նախատեսված կտավով ներկայանում ու նստում էր թոնրի ակին և դիմում սպանվածի մերձավորներին՝ իր անձը նրանց կամքին հանձնելով և ներում ստանալով, «տան հարսներ, հանում էին նրա տակից պատանքու կտավը, ձևում և շապիկ էին կարում ու հագնում թողություն ստացածին՝ իբրև աշխարհ նոր ծնած և թույլ կտային հեռանալու»: Կամ էլ հանցավոր անձը սպանվածի գերեզմանի շուրջը յոթ պտույտ էր կատարում, որպեսզի սպանվածի մեղքերը սպանողի վզին ընկներ: Երբեմն էլ սպանողի վզին պարան անցկացրած տանում էին եկեղեցի, ապա սպանվածի տիրոջը հայտնում. «Կամ պետք է ներես, կամ պիտի խեղդես»: Ներելու պարագայում, երկու կողմերն էլ համբուրում էին Ավետարանն ու խաչը և հաշտված հեռանում<sup>106</sup>: Նույնիսկ այն դեպքում, երբ մարդասպանը վարչական մարմինների կողմից պատժի էր ենթարկվում, այնուամենայնիվ չէր կարող ազատվել սպանվածի մերձավոր ազգականների արյան վրեժից:

Արյան վրեժի խնդրին հանգամանալից կերպով անդրադարձել են նաև Ս. Հայկունին<sup>107</sup>, Խ. Մամուլեյանը<sup>108</sup> և այլք: Նրանք առանձնացրել են այն բազմաթիվ արարողակարգերը, որոնց դեպքերում սպանություն կատարած անձը կարող էր ներվել, ինչպես օրինակ՝ սպանվողի տուն մտնելը և թոնրի շուրջ նստելը, «պատանք» կարել տալը և այլն: Գրավոր ու դաշտային նյութերի վկայությամբ՝ սպանո-

---

<sup>106</sup> Տե՛ս Խ. Մամուլեյան, *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. III, էջ 143:

<sup>107</sup> Տե՛ս Ս. Հայկունի, *Բագրևանդ (Ջրաբաշխ գավառ)*, Վաղարշապատ, 1894:

<sup>108</sup> Տե՛ս Խ. Մամուլեյան, *Արյան վրեժ և փրկանք*, ԱԶ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 269-303:

ղը տուժողի տուն էր մտնում առանց պատանքի: Նման դեպքում տան նահապետը հարսներին կարգադրում էր «պատանք կարել»<sup>109</sup>:

Մուշ-Մասունի մեջ մեկուսացած և ինքնամփոփ բարքերով ապրող բնակչության մեջ վրիժառության սովորությոնը երկար պահպանվեց՝ չնայած այդ սովորության իր դասական ձևերով շատ վաղուց էր տեղի տվել երկրագործ հայ ժողովրդի ավանդական կենցաղում: Այս առումով ուշագրավ է սասունցի գրող Խ. Դաշտենցի արյան վրեժի վերաբերյալ նկարագրությունը «Ռանչպարների կանչը» վեպում: Երբ սպանողը որոշում է պատանքով ներկայանալ սպանվողի կնոջը, սնագգեստ կինը դիմելով «պատանքով տղամարդուն» ասում է. «Քո խոստովանանքը այս կրակի առաջ կատարիր. – Մեծ մեղք եմ գործել, ... եկել եմ իմ սպանածի արյան դիմաց իմ արյունը վճարելու: Էս կրակը վկա, այդ սպանությունը կանխամտածված չի եղել: Ուզում եք սպանեք ինձ, իսկ եթե ներում եք, մի խանձող տվեք ձեր կրակից, որ իմ օջախի հանգած կրակը վառեմ, – ասաց լեռնեցին, ճերմակ կտավը և գործիքը ծերունու [տան նահապետի] առաջ դնելով: Ծերունին կռանալով, կրակից մի խանձող հանելով, երկարեց նրան. – Գնա վառիր քո օջախը»<sup>110</sup>:

Միջնադարյան դատաստանագրքերում արյան վրեժի սովորությունը փոխարինվում էր արյան գին կամ փրկանք վճարելու պահանջով<sup>111</sup>: Արյան գին վճարելու սկզբունքով հաշտության կայացումը, իհարկե, վերջ չորեք վրեժխնդրության սովորությունն, բայց լայն դրսևորումներ ունեցավ հայ իրականության մեջ մինչև XX դարի սկզբները համայնքային միջնորդ անձանց և պետական պաշտոնյա-

ների ջանքերի գնով: Հակառակ հրահրիչ-սաղորիչների՝ գյուղերում կային բարի կամքի տեր, ազդեցիկ մարդիկ, որոնք միանում և համատեղ այցելում էին տուժած և տուժեցնող ընտանիքներին ու ազգերի մեծերին՝ հաշտեցնելու մտադրությամբ: Սպանվածների տերերը բացառիկ դեպքերում հաշտվում էին հասուցման՝ արյան գին ստանալու մտքի հետ: Նման դեպքում զոջումները հաշվի էին առնվում, և տուժած կողմը մեծահոգաբար խոստանում էր չեզոք մնալ: Թշնամացած ազգերի միջև միջնորդների շնորհիվ խնամություն էր հաստատվում, որով դադարում էին փոխադարձ հետապնդումները և հալածանքները, ասելությունը միմյանց նկատմամբ:

Ազգակցական վրիժառության գաղափարը երբեմն տարածվում էր ամբողջ համայնքի վրա՝ տվյալ համայնքում որևէ ազգատոհմին պատկանող ընտանիքից այլ համայնքի անդամների կողմից կատարված աղջկա առնանգման կամ կողոպուտի պատճառով:

Վրիժառությունը արդեն XX դարի սկզբներին դրսևորվում էր ոչ այնքան սպանությամբ, որքան տնտեսական վնաս հասցնելով: Խորհրդային կարգեր հաստատվելու առաջին իսկ տարիներին ազգակցական կոփվները դադարեցվեցին օրենքի խիստ ուժով: Սակայն թշնամական հարաբերությունները պահին համապատասխան ստանում էին նոր երանգավորում: Օրինակ՝ նոր հողաբաժանման, մանավանդ կոլտնտեսություններ կազմակերպելու ժամանակ գլուխ էր բարձրանում հին վրիժառության ոգին: Վրիժառուն վարկաբեկում, բաժնասանքներ էր հորինում հակառակորդի հասցեին: Այդպիսի հոգեբանությամբ խորհրդային տարիներին վրիժառուն կարողանում էր անստորագիր նամակներով խաղալ մարդկանց ճակատագրերի հետ:

1950-ական թվականներին այդպիսի հարաբերություններն սկսեցին թուլանալ, սակայն ստեպ-ստեպ գլուխ էին բարձրացնում ազգակցական խմբերի միջև կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների նախագահների, բրիգադավարների, պահեստապետերի և այլ պաշտոնների ընտրության ժամանակ: Այդ պայքարը հաճախ ավարտվում էր ձայների մեծամասնություն շահած բազմանդամ ազգի անարժան ներկայացուցիչների ընտրությամբ, երևույթ, որից խուսափել հնարավոր չէ նաև ներկայումս: Աշտարակի տարածաշրջանի Լեռնարոտ գյուղում 1970-ական թթ. մեր կատարած դաշտային ազգագրական հետազոտությունների ժամանակ բանասացները հավաստեցին, որ դեռ «երգրում» Մասնա Գելիեզուկան գյուղում Խզրո և Մուրոքնի տների (ազգերի) միջև սկիզբ առած վրիժառության զգացումները շարունակ-

<sup>109</sup> Պատանքը պարկատիպ էր, սև կամ սպիտակ կտորից կարված: Մինչև զանգվածային կերպով դազադով թաղումներին անցնելը (XX դ. 30-ական թթ.), հանգուցային թաղում էին պատանքով: Ըստ Վ. Բոդյանի՝ դա պայմանավորված էր հետևյալով. «Առաջինը կռոնական հայացքն էր, ըստ որի՝ մարդու մարմինը պետք է մերկ հանձնվեր այն հողին, որից ինքը գոյացել էր: Իսկ երկրորդը կապված էր նյութական պայմանների հետ (տե՛ս Վ. Բոդյան, *Հայ ազգագրություն*, էջ 178):

<sup>110</sup> Տե՛ս Խ. Դաշտենց, *Ռանչպարների կանչը*, Երևան, 1984, էջ 132: Տե՛ս նաև Ա. Պետրոսյան, *Ժողովրդագիտական տվյալների արտացոլումը Խաչիկ Դաշտենցի ստեղծագործություններում*. – Տարեգիրք, Բ, ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, Երևան, 2010, էջ 239-257:

<sup>111</sup> Տե՛ս Խ. Մամուկյան, նշվ. աշխ., էջ 290, Մ. Գոշ, *Գիրք դատաստանի*, Երևան, 1975, գլ. II:

վում էին Խորհրդային Հայաստանում՝ նրանց սերունդների միջև, որոնք արտահայտվում էին որպես տնտեսական և բարոյական վեճեր: Լեոնարոտ գյուղում այդ հին վեճերը հասկապես բորբոքվում էին նախագահ, բրիգադիր և այլ պաշտոնատար անձ ընտրելու ժամանակ. յուրաքանչյուր կողմը ձգտում էր հասնել իր ազգակցի ընտրությանը: Որոշ չափով պահպանվում էր հակառակորդ ազգի նկատմամբ խտրականության կիրառումը: Դա դրսևորվում էր հատկապես գարնանը և ամռանը՝ գյուղատնտեսական աշխատանքներում աշխատավորներին ընդգրկելու գործում. յուրաքանչյուր բրիգադիր շահագրգռված էր առաջին հերթին իր ազգանդամին աշխատանքով ապահովելու<sup>112</sup>: Հին վեճերի այդ մնացուկները երբեմնի գյուղական համայնքի ներսում եղած գույքային և սոցիալական անհավասարությունների հետևանք էին: Հասկանալի է, որ վերջիններիս հարատևումը պայմանավորված էր տնտեսական կյանքի օբյեկտիվ պայմաններով: Այժմ սոցիալ-տնտեսական արմատական տեղաշարժերի հետևանքով փոխվել են ազգակցական և հարևանական կապերը, որտեղ վնասակար դրսևորումների ձևով շարունակություն ստացած այդ հին հարաբերությունների մնացուկները առանձին դեր չեն խաղում:

Պատմական գրականության մեջ կան սակավ, բայց ցայտուն օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ վրիժառույթյան հիմքում ընկած են եղել ոչ միայն տնտեսական ու բարոյական, այլև քաղաքական դրդապատճառները: Այսպես, օրինակ, Փ. Բուզանդը գրում է, թե Մանավազյան և Որդունի նախարարական տների միջև քաղաքական նկատառումներով արյունահեղ կռիվներ են մղվել: Միմյանց մեծապես վնասելուց բացի՝ նրանք ավերել են նաև Հայոց Արքունական Տունը<sup>113</sup>:

Նույն հեղինակը իր գրքի չորրորդ դպրության ԺԲ գլխում էլ գրում է, որ՝ եթե պետության կողմից ապաստանի երաշխիք է տրվում, ապա այդ անձին իրավունք չունեն հետապնդել և վրեժ լուծել: Ահա այդպիսի ապաստանի մասին մենք կարդում ենք դարձյալ Բուզանդի երկում: «Այս ժամանակ թագավորը իր համար մի դաստակերտ շինեց Հովիտ կոչված Կոզ գավառում, և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց. հրամայեց, որ ամեն տեղ մուսնեհիկները կանչեն հրապարակներում, բոլոր գավառներում, բոլոր կողմերում հայտնեն թա-

գավորական հրամանը, «... Եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է՝ թող բոլորը գան այդ դաստակերտը, և ապահով կլինեն: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է կամ պարտապան է. կամ մեկի գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի՝ թող գա այն տեղը. նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին մի բան պարտք է, և պարտատերը այդ տեղը գա (պահանջելու)՝ նրան առանց դատի ու արդարադատության բռնեն և դուրս հանեն»<sup>114</sup>:

Եզնիկ Կողբացին էլ, անդրադառնալով արյան վրեժի իրագործման արդարացի լինելուն, գրում է. «Իսկ երբ տեսնում ենք, որ թագավորը իր օրենքներին (հակառակվելու համար) պատժում է ու պատժելով հանցանքը պակասեցնում է, դատավորը գողին, ավագակին ամուր կապում ու տանջում է՝ վնասակարությունը մեջտեղից վերացնելու համար, և հայրը դաժան որդուն, որպես մահապարտի, դատավորներին է հանձնում, ուրիշ բոլորն էլ իրենց անարգանքների համար պատժվում են՝ անձամբ կամ իշխանների միջոցով...»<sup>115</sup> Մովսես Խորենացին մի քանի աղիթներով է անդրադառնում այս երևույթին: Նա գրում է. «Վրեժի ձայնը թելադրել է Խոսրովին պատերազմի գնալ խազարների և սարմատացիների դեմ, որոնք սպանել էին նրա հորը...»<sup>116</sup>: Խոսրովի այդ վրեժն ավելի անհատական երանգ է կրում. նա հանդես է գալիս իբրև անձ, թեև նա այդ վրեժը իրականացնում է մի ամբողջ ժողովրդի դեմ և այն էլ իր գորքի օգնությամբ:

Վրիժառույթյան հիմքում բոլոր դեպքերում եղել են սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական ու բարոյական դրդապատճառներ:

Մեր գրառած դաշտային ազգագրական նյութերը հավաստում են նաև օտար, մահմեդական բռնակալների կողմից հայերի ընտանեկան բարոյական արժանապատվությանը հասցրած վիրավորանքը և վերջիններիս հարկադրական վրիժառույթյունը: Այդպիսի դեպ-

<sup>114</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>115</sup> Տե՛ս Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց* (Աղանդների հերքումը), թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, Առաջին գիրք, գլ. ԺԵ, էջ 57:

<sup>116</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Մտ. Մալխասյանց, Երևան, 1961, գ. երկրորդ, գլ. ԿԷ, էջ 226-227:

<sup>112</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 12, 1972, գ. Լեոնարոտ, էջ 32-38:

<sup>113</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, գլ. Դ, ԺԵ, թարգմանությունը և ծանոթագրությունները Մտ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 93:

քերում, վրեժը լուծելուց հետո, հայերը գերդաստաններով կամ ազգովին իրենց մշտական բնակավայրերից հեռանում և այլ վայրերում են բնակություն հաստատում: Հայտնի է, Արևմտյան Հայաստանում, միջնադարից սկսած, իրենց վերաբնակեցումների ընթացքում քոչվոր քրդական ցեղերը վայրագ ոեժիմ էին հաստատում: Չանագան ազգակցական խմբերի գոյացման մասին ավանդված պատմության ուսումնասիրությունը բացահայտում է, թե ինչպիսի տեղաշարժեր են կատարել հայ գերդաստանները կամ ընտանիքների խմբերը՝ քրդական վայրենի սովորություններից խույս տալու համար: Բարոյական, քաղաքական ու տնտեսական հալածանքների հետևանքով իրենց բնակավայրերը լքողները նոր գյուղեր էին հիմնադրում, որպիսի վկայություններ էին պահպանված նաև Հարք գավառում: «Վերին Բուլանխա արևմտյան գյուղերը և քիչ բացառությամբ ամբողջ ներքին Բուլանխայ բնակիչները, - գրում է Բենսեն, - Բշերու, Սասնոյ, Խոյթայ, Մուտկանայ և Տարոնոյ գավառներու նախկին բնակիչներից են: ...Տեղափոխությունը կը կատարվեր նշանավոր գերդաստաններու միջոցով, որոնք իսկույն նեթ գյուղեր հաստատելով գերդաստանի օջախի հիմքը կը դնեին և գյուղի ավագությունը կստանձնեին»<sup>117</sup>:

Արյան վրեժի և համերաշխության հասարակական-ազգակցական ընդհանրության վերապրուկային մնացուկները գոյատևեցին մինչև XX դարի 50-60-ական թվականները՝ բոլորովին փոփոխված սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում անգամ:

Արենակցական ազգի գլխավոր ու կարևոր հատկանիշներից մեկը *էրզրզամ* (ազգից դուրս) ամուսնությունն էր, ազգի ներսում այն թույլատրվում էր միայն յոթ պորտ անց: Այն ազգերը, որոնք չունեին յոթ պորտ սերնդային կապեր, ամուսնությունը թույլատրվում էր միայն հինգերորդը լրանալուց հետո: Ամուսնական արգելքը կիրառվում էր նաև մայրական գծով, ընդ որում, սովյալ պարագայում իբրև արգելքի սահման համարվում էր չորս պորտ լրանալը: Հայրական կողմը կոչվում էր արյան ազգակցություն, իսկ մայրական կողմը՝ կաթի<sup>118</sup>: Հայոց ամուսնական արարողակարգերում խստորեն արգելվել է մերձավորների միջև ամուսնությունների այդ չափանիշների անտե-

սումը, հակառակ դեպքում խախտողները արժանանում էին հասարակության նախատինքին, իսկ եկեղեցին մերժում էր պսակադրությունը: Ըստ Պերճ Պոռոջյանի «Ցեցեր» վեպի՝ երբ գյուղացիներից մեկը ցանկացել է իր քեռու աղջիկ թոռանն ուզել իր տղային, արժանացել է համագյուղացիների պարսավանքին<sup>119</sup>, քանզի համայնքում դեպքը համարվել է անհասուկ՝ մերձավոր ազգակցության պատճառով ամուսնության համար անթույլատրելի: Փավստոս Բուզանդը, հենվելով կանոնական դրույթների վրա, գրում է. «Ներսես Մեծը նաև կարևորում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից»<sup>120</sup>: Մովսես Խորենացին, նույնպես խոսելով Ներսես Պարթևի գործունեության մասին, նկատում է, որ նա նախարարական ցեղերի միջից վերացնում է «խնամիրությունը մերձավոր ազգականների միջև, որ գործադրում էին սեպուհական ազնվականության համար աչք տնկելով»<sup>121</sup>: Պատմագիրների երկերում արենակցական ամուսնությունը որակվել է «խառնակություն», «անարժան և չար վարք», «այլո՞ծ ամուսնություն» և այլն: XIX դ. նման վերաբերմունքն ամուսնական կարգը խախտողների նկատմամբ վկայում է, որ դարերից եկող նորմերը դեռևս բավական կենսունակ էին: Հայոց Եկեղեցու կողմից սահմանված կանոնակարգը, հասարակական կարծիքը, ավանդական ներփակ կենցաղը նպաստում էին հին բարքերի պահպանմանը:

Ինչպես արյունակցական ազգակցության սահմաններում, այնպես էլ հոգևոր ազգակցության համակարգում հայկական սովորույթները, ըստ XVII դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու հավաստման՝<sup>122</sup> ուշ միջնադարում (և ապա դրանից հետո մինչև XX դարի սկզբները, - Ռ.Ն.) ստեղծել ու պահպանել են հատուկ կարգ ու կանոն. մինչև չորրորդ պորտը ամուսնությունն արգելվել է: Աղջիկների սակավության պայմաններում թույլատրվել է ամուսնու-

<sup>117</sup> Տե՛ս Բենսե, *Բուլանխա կամ Հարք գաւառ*, էջ 35-36:

<sup>118</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը*, էջ 46:

<sup>119</sup> Պ. Պոռոջյան, *Երկեր*, կազմեց և առաջաբանը գրեց Ս. Մարիկյանը, Երևան, 1987, էջ 77, տե՛ս Ա. Պետրոսյան, *Ժողովրդագիտական տվյալների արտացոլումը Պ. Պոռոջյանի երկերում*, ՊԲՀ, 2009, թիվ 1, էջ 91:

<sup>120</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, դպր. IV, գլ. Գ, էջ 121:

<sup>121</sup> Տե՛ս Մովսիս Խորենացու *Պատմութիւն Հայոց*, էջ 284:

<sup>122</sup> Տե՛ս *Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցույ*, էջ 128:

թյունը հինգերորդում, իսկ որոշ դեպքերում արյունակցական խմբերի միջև ամուսնությունը, սկսած ծնողներից, թույլատրելի է եղել միայն 6-րդ կամ 7-րդ աստիճանում<sup>123</sup>:

Առանձին դեպքերում հասու (հասուկ) դարձնելու նպատակով տղայի ծնողները փորձել են տերտերներին կաշառել, որը երբեմն առնչվում էր ազգային քաղաքական հանգամանքների հետ՝ օտարների՝ քրդերի, թուրքերի և մահմեդական այլ տարրերի կողմից հայ աղջկա առևանգումը կանխելու համար: Եղեռնից մազապուրծ արևմտահայերի բեկորները արտագաղթի ճանապարհին և օտար հողում հաստատվելիս, կանանց թվի կրճատման պատճառով և օտարների առևանգումից խուսափելու նպատակով, երբեմն խախտում էին մերձամուսնության անթույլատրելիության սահմանը: Եկեղեցու մերժման դեպքում պսակում էին տղայի հայրական տանը՝ թոնրի վրա, որը հայտնի էր «թոնրի պսակ» անվամբ<sup>124</sup>:

Հայոց կանտնագործներում սահմանված է խնամիական չհասության երեք կարգի արգելքներ՝ քենու, գոքանչի և երկու եղբոր ու երկու քույրերի ամուսնությունը: Սակայն, արյունակցական չհասության կանտնների խախտման համեմատ ավելի զուսպ ու մեղմ էին խնամիական չհասության խախտման պատիժները:

1900 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակներից մեկում հրահանգվում էր պսակի իրավունք չույլ խնամիական չորրորդ և ազգակցության վեցերորդ աստիճանում գտնվող անձանց: Խնամիական հինգերորդի և վեցերորդի միջև, ազգակցության յոթերորդի և ութերորդի միջև թույլատրվում էր ամուսնությունը: Ժողովրդի մեջ ամուր է պահվել դարերով սրբագործված «յոթը պորտը», թեն այն ուշ շրջանում և աստիճանաբար է կայունացել: Սակայն երբեմն աղջիկների պակասի պատճառով Սասունում և ազատագրական պայքարի այլ օջախներում Եկեղեցին XX դարի սկզբներին ներքին կարգով հարկադրական որոշ զիջումների գնաց՝ թույլատրեց ամուսնությունը 4-րդ սերունդը լրանալուց հետո: Որոշ դեպքերում էլ այլ ելք չու-

նենալով՝ XX դարի սկզբներին ընդունում էին կաթոլիկություն՝ մերձամուսնությունը վավերացնելու համար<sup>125</sup>:

Ամուսնական արգելք էր սահմանված նաև հոգևոր ազգակցության ժամանակ, ինչպես օրինակ՝ քավորի ընտանիքի հետ: Մովսրության իրավունքի չափանիշների համաձայն՝ նույնը պահպանվում էր որդեգիր տղայի նկատմամբ, որին իրավունք չունեին ամուսնացնել ազգի որևէ աղջկա հետ, քանզի որդեգրվածը համարվում էր ազգի անդամ: Արգելված էր ամուսնությունը կաթնեղբայրների ու կաթնաքույրերի միջև, չէր թույլատրվում երկու հարազատ եղբայրների ամուսնությունը երկու հարազատ քույրերի հետ: Ազգի ներսում արգելված է եղել ամուսնանալ եղբոր այրու հետ, թեպետ այդ սովորույթի աննշան մնացուկներ հարատևել են մինչև XIX դարի վերջերը: Այդ երևույթը ազգագրական գիտության մեջ կոչվել է լիիրատ (տեգրամուսնություն): Լիիրատի դեպքեր հաստատագրվել են դեռևս վաղ միջնադարում: Դրանցից մեկը Գնելի այրու՝ Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունն էր<sup>126</sup>: Խորենացին, որն Արշակ արքային դատապարտում էր իր եղբոր որդի Գնելի կնոջ՝ Փառանձեմի հետ ամուսնանալու համար, գրում է. «Իսկ Արշակը չզոջաց, չապաշխարեց, այլ անամոթաբար նրա կնոջը՝ Փառանձեմին էլ իրեն կին առավ»<sup>127</sup>:

Ազգի հասարակական միասնությունը դրսևորվում էր նաև ազգովի միասնական թաղերով ապրելու և ազգովի հյուրընկալման, հյուրասիրության սովորույթում: Հայ ժողովրդի ավանդական մշակույթում հյուրին դիմավորելու և ընդունելու սովորույթը ծիսականացված է. հյուր ընդունելը համարվում էր պատասխանատու արարողություն: Վաղնջական հյուրընկալման սովորույթը, որն ինքնաբերաբար ու կամովի է եղել, միշտ զգալի տեղ է գրավել հայոց ավանդական ընտանեկան-հասարակական կյանքում: Հյուրընկալման և հյուրասիրության հայոց ավանդույթների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի համայնական սովորույթների, փոխօգնության, սոցիալ-դասակարգային հարաբերությունների, հյուրանոցների, իջևանատների ծագման ու զարգացման պատմության և այլ տեսանկյուններից<sup>128</sup>:

<sup>123</sup> Տե՛ս Ստ. Կանայանց, *Ամուսնական արտակարգ երևույթներ*, «Արարատ», 1917, էջ 517: Առավել հանգամանորեն տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը*, էջ 46-49:

<sup>124</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը*, էջ 46-47:

<sup>125</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47-48:

<sup>126</sup> Տե՛ս Փաւստոս Բուզադույ *Պատմութիւն հայոց*, էջ 194:

<sup>127</sup> Տե՛ս Մովսիսի Խորենացույ *Պատմութիւն Հայոց*, էջ 288:

<sup>128</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայոց հյուրընկալման ավանդույթը (XIX-XX դդ.)*, ՊԲՀ, 2005, թիվ 1, էջ 160-169:

Հյուրընկալները պարտավոր էին պահպանել հյուրին դիմավորելու, ողջունելու, տեղավորելու, հանգիստն ապահովելու, ճանապարհելու հետ կապված որոշակի չափանիշներ: Նրանք հավատում էին, թե անհյուրընկալները կարող են պատժվել, հրեշտակները հյուրերի կերպարանքով փորձում են նրանց և պատժում զանցառուների: Հյուրը շատ ժողովուրդների, նաև հայերի մեջ համարվել է սրբազան անձնավորություն, որին պետք էր պատվել ամեն կերպ, ըստ ժողովրդական պատկերացումների՝ նա գտնվում էր աստվածների հովանավորության ներքո:

Գյուղի մեծերը գալիս, շարվում էին հյուրի շուրջը և ամեն կերպ աշխատում էին շահել, գրավել նրա ուշադրությունը: Ամենուրեք մեծ հարգանք էր վայելում այն ընտանիքը, ազգատոհմը, ուր ամենից շատ էին իջևանում հյուրերը:

Հյուրի ընդունումը, հյուրասիրությունը, նրա պաշտպանությունն ու անվտանգությունը ոչ միայն հյուրընկալ ընտանիքի, այլև ողջ ազգատոհմի պարտքն է համարվել: Հյուրն արտակարգ ուշադրության էր արժանանում ամեն պարագայում՝ անկախ նրա սոցիալական և ազգային պատկանելությունից: Եթե հյուրերը շատ էին լինում, նրանք համարվում էին հյուրընկալի ազգականներինը և հարևաններինը: Տվյալ պարագայում ազգի հիմնադրի օդա-հյուրանոցը համարվել է հյուրի դիմավորման, հյուրընկալման պաշտոնական կացարան: Այն դեպքում, երբ հյուրը տանտիրոջ ծանոթն էր և հանրահայտ անձնավորություն, տան մեծերը, ազգականները նրան դիմավորում էին Բակում, փողոցի սկզբում կամ բնակավայրի մատույցներում:

Հյուրին ողջունելուց հետո սեղան էին գցում, որի շուրջը հյուրի և տանտիրոջ հետ նստում էին նաև գերդաստանի և ազգատոհմի տարեց տղամարդիկ: Հյուրին նստեցնում էին պատվավոր տեղում՝ տան «վերին գլուխը», դռան դիմաց, կարպետի, գորգի կամ բարձի վրա: Հյուրերի համար նախատեսվող հատուկ անկողին չունեցողները դիմում էին դրկից ազգականներին կամ հարևաններին: Այստեղից էլ «մեզ նեղ կանենք, ձեզ տեղ կանենք» ասույթը: Ազգակցի թանկագին հյուրը ազգի մեջ մտնող մյուս ընտանիքների հյուրն էր համարվում, և նրան իրենց տներն էին հրավիրում հերթով: Կամ էլ «որացիները հիւուր ընդունող տան օգնութեան կը փութային գաղտնօրէն անկողին ու ծածկոցներ կը հասցնէին, դոյլ մը մածուն կամ ծրար մը բանջարեղէն, կամ որևէ բան, որ դրացին կարողանար «երես ճերմկցնել» հիւու-

րին ներկայութեան: Տանտէրը իր կարգին հիւրը այցելության կտաներ բարի գալուստի եկածներուն տունէրը: Ասիկա կարգ էր»<sup>129</sup>:

Ճաշկերույթների կամ հավաքույթների ժամանակ ազգի մեծերը բազմում էին բարձերին՝ ըստ ավագության կարգի, որը հիշեցնում է հին հայկական «Գահնամակի» կարգը<sup>130</sup>: Եթե հյուրը հայտնում էր իր ուժ լինելն ու այցի նպատակը, և տանտերը հասկանում էր, որ նրա այցը գաղտնի չէ, տունը շուտով լցվում էր բարեկամ հարազատներով, որոնք ձգտում էին զբաղեցնել և ուրախացնել հյուրին: Ազգովի, հաճախ նաև համայնքային ուշադրության էին արժանանում բարձրաստիճան անձինք, հեռուից եկող խնամիները, քավորը, հայ մտավորականության, ազգային-ազատագրական պայքարի գործիչները և այլք:

Ընտանեկան, ազգատոհմային հյուրընկալմանը զուգակցում էր նաև համայնքային հյուրընկալումը: Հնագույն սովորույթի համաձայն՝ XIX դարի վերջերին հայ համայնքը կառուցում էր իջևանատներ՝ գոմեր իրենց օդաներով, որոնք հատկացվում էին հատկապես մեծ քարավանատերերին, սայլվորներին, գրաստավորներին, բազմաքանակ հյուրերին և գյուղին անձանոթ այլ անձանց: Գեղջավազը (ոտեր, քյոխվան) օտար հյուրերին կերակրելու և անասնակեր հայթայթելու միջոցները՝ հացը, վառելիքը, անասնակերը հոգում էր համայնքի ընտանիքներից՝ հաճախ հերթական կարգով: Այն իրականացնում էր գյուղի կատարածուն, նրա բացակայության դեպքում՝ նշանակված անձինք, մեկ շաբաթ տևողությամբ. սրանք հայտնի էին շաբթազգիր անվանմամբ: Համայնքային հյուրընկալումն ընկնում էր համայնքի վարչական մարմնի՝ գեղջավազի և հեղինակավոր գյուղական ավագանու վրա: Այցելու օտարականները կամ պաշտոնյա խմբերը բաժանվում էին գերդաստանական տների վրա, իսկ նրանց թիվը սահմանափակ լինելիս բավարարվում էին ռեսի տանը հյուրընկալություն կազմակերպելով: Հյուրին լավ ճանապարհելը, ըստ եւրոպյան, դառնում էր համայնքի պարտականությունը: Ինչպես և ինչով հյուրասիրելու հանգամանքն այնքան մեծ ուշադրության էր արժանանում հյուրերի և հյուրընկալողների կողմից, որ հյուրընկալող ընտանիքը ստանում էր պատվական և կամ էլ նվաստացուցիչ մականուն: Պաշտոնատար, անվանի հայ կամ օտար հյուրերի համար երինջ կամ արջառ էին մորթում, մորթելու պատիվն էլ նրանց էր

<sup>129</sup> Տե՛ս 3ակոբ Զուլպեան, *Քեսուպ*, Բ հատոր, Հալեպ, 1998, էջ 160:

<sup>130</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 164:



տրվում: Արևմտյան Հայաստանում թուրք կամ քուրդ պաշտոնյաները երբեմն չարաշահում էին հայերի հյուրընկալ այդ սովորույթը՝ վայել չհամարելով հայի ձեռքով մորթված անասունը:

Վիպասան Բաֆֆին ուշագրավ նկարագրություն է թողել Բիթլիսի նահանգի գյուղերից մեկի ռեսի տանը հյուրընկալվելու վերաբերյալ. «Ամենքը սպասում էին քահանային, որ սեղանը օրհնե և ապա սկսեին ուտել: Թե՛ կերակուրները և թե՛ հացը այնքան առատությամբ դրված էին սեղանի վրա, որ ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չէր մնացել: Այդ նրա համար էր, որ հյուրերը չամաչեին, չքաշվեին, որ ուտեին, որքան կամենում էին, և դարձյալ մեծ մասը մնար սեղանի վրա: Այդ ամուրթը ոչ այնքան շատակեր հյուրին, որքան տան տիրոջը կվերաբերեր, եթե նրա սեղանի մի փոքրիկ մասն անգամ բացվեր: Ուտքի վրա՝ մեզ պատվելու համար ծառայում էին տան հարսները, աղջիկները և պատանիները: Կատարյալ իրարանցում էր տիրում, երբ որևիցե պատվեր էին տալիս այդ ընտանեկան սպասավորներին: Կանայք թեև մեզ հետ չէին խոսում, բայց ուրիշ տեղերի հայ կանանց նման երեսները չէին ծածկում: Ռեսի ընտանիքից բացի նրա ավագ եղբայրներից ոչ ոք սեղանի վրա նստած չէր: Կրտսեր եղբայրները, ձեռքերը կրծքի վրա խաչաձև դրած, անշարժ կանգնած էին և հրամանի էին սպասում: Կանանցից ոչ ոք սեղանակից չէր: Այդ սովորությունը պահպանվում է ոչ միայն այն ժամանակ, երբ սեղանի շուրջ օտար հյուրեր կան, այլև իրենց ընտանեկան շրջանում կինը տղամարդու հետ միասին չի ճաշում: Նախ ուտում էին տղամարդիկ և ապա կանայք»<sup>131</sup>:

Անչափ ուշագրավ են Հովսեփ Օրբելու ազգագրական դիտարկումներն Արևմտյան Հայաստանի Մոկս գավառում, ուր նա եղել էր 1911-1912 թթ.: Այստեղ Հ. Օրբելին հավաքում է շատ հետաքրքիր, կարելի է ասել՝ ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական եզակի նյութեր: Ուշագրավ են հատկապես միջերևիկ հարաբերությունները, հեղինակին հյուրընկալած՝ իր հայանպաստ գործունեությամբ հայտնի քուրդ գավառապետ Մուրթուլա բեկի տանը հյուրընկալման մանրամասները: Սովորույթի համաձայն՝ Մոկսում ևս հավաքությունների կամ ճաշկերույթների ժամանակ բազմում էին բարձերին՝ ըստ ավագության կարգի<sup>132</sup>:

<sup>131</sup> Տե՛ս Բաֆֆի, *Երկերի ժողովածու տասը հատորով*, հ. 4, Երևան, 1965, էջեր 162, 332-333:

<sup>132</sup> Տե՛ս Ի. Օրբելի, *Фольклор и быт Мокса*. М., 1982:

Հյուրընկալող ազգատոհմի սրբազան պարտքն էր հյուրի անձնական անվտանգության ապահովումը: Ինչպես ասվում էր՝ «հյուրի գլխից մազ անգամ չախտի պակասեր»: Հյուրընկալ օջախը պարտավոր էր պաշտպանել իր տունը ոտք դրած, ապաստան խնդրող մարդուն: Նման դեպքերում ազգի տղամարդիկ ստիպված էին լինում գեներով պաշտպանել իրենց ապավինած հյուրի անվտանգությունը և հետևել այնքան ժամանակ, քանի դեռ նրան չէին հասցրել իր ուզած ապահով վայրը: Հյուրի պաշտպանությունը և անվտանգությունը ոչ միայն հյուրընկալած ընտանիքի, այլև ազգատոհմի պարտքն էր: Հյուրի անսպասելի մահվան պարագայում, հավաքվում էին համայնքի հեղինակավոր տղամարդիկ, որոնք էլ ապահովում էին հանգուցյալին իր բնակավայր հասցնելը, հոգում ծախսերը, որպես ուղեկից նշանակում հյուրընկալին և ազգատոհմի կամ համայնքի մի հեղինակավոր անձի՝ դրանով հարգանքի տուրք մատուցելով ոչ միայն մեռելի ընտանիքին, այլև նրա համայնքին<sup>133</sup>:

X-XIV դդ. սկսած՝ Հայաստան թափանցած քրդական ու թուրքական ցեղերը հայ ժողովրդին պարտադրել էին հարկադրական հյուրընկալում: Քրդական զինյալ խմբերը, հարկահանները, ցեղապետերն ու նրանց պատվիրակներն արևմտահայ սահմանային գավառներում (Մոկս, Աղձնիք և այլն) իրենց այցելություններով մշտապես պատուհաս էին դառնում տարաբախտ հայ բնակչության գլխին: Օգտվելով տեղաբնիկների անպաշտպանվածությունից՝ վայրենաբարոները հյուրի անվան տակ մեծ վնասներ էին պատճառում ոչ միայն նյութական, այլ նաև բարոյական առումով, որովհետև իրենց կացութաձևի մեջ տակավին պահպանում էին հյուրասիրական հետերիզմի հետքերը: Ուստի և պատահական չէր, որ հայերը հարկադրված էին կառուցել համայնքային իջևանատներ:

Համայնքային հյուրանոց օդաները գտնվում էին գզիրի մշտական հսկողության տակ: Այնտեղ սաքունների (բուխարու աջ և ձախ կողմերի հողե կամ քարե թմբերի) կամ առգելների (փայտե թախտերի) վրա դրվում էին անկողինները, ճամփորդական իրերը: Համայնքային հյուրընկալման վայր կարող էր ծառայել նաև գյուղի տանտիրոջ տանը կից կամ վերնամասում առանձին մուտքով կառուցված օդան: Նման հյուրեր ունեցողները կանանց առանձնացնում էին

<sup>133</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայոց հյուրընկալման ավանդույթը (XIX-XX դդ.)*, էջ 166:

բնակարանի խուլ անկյուններից մեկում: Կանայք մեկուսացված էին մնում մինչև անցանկալի հյուրերի հեռանալը: Գզիրը անկոչ հյուրերի համար տեղ էր հաստատում համայնական օդա-հյուրասենյակում և անմիջապես սուրճով կամ թեյով հյուրասիրում, մինչև ուտեստ պատրաստելը: Այս դեպքում հյուրերի ձեռքին ջուր լցնողները պատանհներն էին, իսկ մատուցողները՝ գզիրը և տան կամ մերձավոր երիտասարդները: Երբ հաճախակի էին կրկնվում ստվար խմբով նման հյուրերի այցելությունները, գզիրը հերթական կարգով ըստ տան կարողության պատրաստի ուտելիք էր հավաքում համայնքից: Համայնքային հյուրանոց-օդաներում երկու ծալքատեղ էին հասկացնում՝ հայերինը առանձին, այլադավաններինը՝ առանձին:

Աղձնիքի դաշտային շրջանների Շքաստակ, Բրա, Գալիոկ, Սլքիշան և այլ հայկական գյուղերում հյուրընկալվող պաշտոնյաները, զինվորականների խմբերը բաժանվում էին գյուղական տանուտիրոջ՝ *քյայի* և բնակավայրի վարչական մարմինը կազմող չորս հեղինակավոր անձանց միջև՝ գզիրի ուղեկցությամբ<sup>134</sup>:

Հայ և քրիստոնյա այլազգ հյուրերն ընդունվում էին որպես տան անդամ և հյուրասիրվում մեծ տան մեջ, օջախի շուրջ<sup>135</sup>:

Հայ հյուրընկալը, բարձրաստիճան թուրք ու քուրդ անձանց հյուր ընդունելիս, երբեմն ցուցաբերում էր հարկադրական ստրկամտություն, ողջունում քրդական ժեստերով, խոնարհվում նրանց առջև և ձեռքը հասցնում մինչև գետին, ապա դնում ճակատին, որ նշանակում էր՝ նրանց տրորած հողը դնում է իր գլխին: Քիչ թե շատ պատվավոր օտարականին ողջունելիս տանուտերը ձեռքը դնում էր կրծքին, ապա ճակատին, որ նշանակում էր, թե հյուրը տեղ ունի իր սրտի և գլխի վրա: Բարեկամին ընդունելիս, նախ ձեռքը դնում էր շուրթերին, ապա ճակատին, ցանկանալով ասել, թե համբուրում և զվիցի բարձր է պահում նրա պատիվը: Ձեռք թոթվելով ողջունելը կիրառվում էր հայազգի հյուրեր ընդունելիս<sup>136</sup>:

Անցողիկ-հարկադրական հյուրընկալումը, համեմայն դեպս, հայերը մի կերպ տանելի էին համարում: Կար ավելի անտանելին: Պատմական Հայաստանի հարավային նահանգներում վաչկատուն

քրդերը ձմեռանոցներ չունենալու պատճառով աշնան վերջին իջնում էին հայոց գյուղերը և պահանջում հյուրընկալել իրենց ընտանիքներին ու կերակրել, տեղավորել իրենց անասունները գոմերում ու փարախներում և ապահովել կերով: Հայ ընտանիքները հարկադրված էին «հյուրընկալել» բարբարոսներին և 5-6 ամիս անհատույց ծառայել նրանց: Նրանք «տարվան երեք եղանակներուն՝ գարուն, ամառ և աշուն, զանոնք իրենց հաշվոցն աշխատեցնելն զկնի՝ ձմեռն ալ խշլա դրությամբ իրենց բոլոր անասուններ՝ ձի, ոչխար, տավար կը ցրվեին անոնց վրա պահելու մինչև գարնան, և եթե այդ անասուններն մեկ սատկեր ժողովուրդ պարտական կըլլար անոր փոխարեն երկու հատ վճարեր և գոհացնել»<sup>137</sup>: Անպաշտպան հայը պարտավոր էր կերակրել և օթևան տալ նաև հարկահաններին: Գյուղական գզիրն օրը երեք անգամ ուտելիք էր մատակարարում նրանց՝ նախաճաշին՝ սեր, մեղր, կարագ, մածուն, ճաշին՝ փլավ, հավ, մածուն, ընթրիքին՝ ձվածեղ, թանապուր և այլն: Ուտեստը մատակարարվում էր հերթական կարգով՝ ըստ ցուցակի: Երևույթ, որի վերաբերյալ ուշագրավ նկարագրություններ են թողել Գ. Սրվանձտյանցը<sup>138</sup> և Րաֆֆին<sup>139</sup>: Գ. Սրվանձտյանցը գրում է. «Վրանաբնակ քյուրդեր աշնան եղանակներ կուգան հայոց գեղերը ձմեռելու և հայեր ամեն տարի իրենց տուն ու անասնոց պետքերուն հետ կը հոգան ու կը պատրաստեն նոցա համար ևս ամեն կերպ պիտույքն ու կարիքը»:

Դարերի ընթացքում արդեն կենցաղ էր դարձել, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք պարտավոր էր ոչ պակաս երեք օր իր տանը «հյուրընկալել» մահմեդական ճանապարհորդի և պետական ծառայողի: Քրիստոնյա համայնքն իրավունք չունեի հրաժարվելու դրանից և պարտավոր էր առանց առարկության հայթայթել այն ամենը, ինչ նա կպահանջեր, կատարել նրա քմահաճույքները: Այդպիսի հյուրերը երբեմն կամայականությունների գոհ էին դարձնում հյուրընկալողին: Հաճախ անկոչ հյուրի կողմից ոտնահարվում էին հայ բնակչության բարոյական սրբությունները, պատվի իրավունքը<sup>140</sup>: Հայ գյուղացին, հարկերը հավաքելու ընթացքում պարտավոր էր կերակրել

<sup>134</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 96-99:

<sup>135</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 8, էջ 104-105, տ. 9, էջ 81-84:

<sup>136</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Գերդաստանական տոնը և կենցաղը Աղձնիքի Ազնվացձոր գավառում*, ԲԵՂ, 1973, թիվ 1, էջ 240-241:

<sup>137</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 59000, ք. 516-518:

<sup>138</sup> Արծուի Վասպուրականի, 1862-1863, 3, էջ 73:

<sup>139</sup> Տե՛ս Րաֆֆի, *Եժ*, հ. 4, էջ 318-319:

<sup>140</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայոց հյուրընկալման ավանդույթը*, էջ 168:

մյուլթեզիմին ու նրա հետ եղածներին այնքան ժամանակ, որքան որ նրանք գտնվում էին գյուղում՝ «Երբեմն ալ կը ծեծվին և երբեմն ալ կանանց պատիվն կարատավորվի»<sup>141</sup>:

Բանասաց, Աշնակ գյուղի բնակիչ Պճուկ Կիրակոսյանի հաղորդած ուշագրավ տեղեկության համաձայն, այդ բանն առավել ցայտուն էր դրսևորվում թուրքական կառավարության՝ քրիստոնյա կանանց համար սահմանած տուրքը հավաքելիս: Ըստ այդ տուրքի՝ մաղի խեմքը, որ մաղատար էին անվանում, անցկացնում էին կնոջ գլխով և մեջքով: Եթե խեմքը մնար կնոջ կոնքերին, հարկ էին վերցնում: Հայ բնակչությունը, առանձնապես սասունցիները, թեպետ վերին աստիճանի հյուրասեր էին և ամեն հարգանք ցույց տվող օտարականին, բայց վրեժխնդիր էին բարոյագուրկների նկատմամբ: Մեր գրառած նյութերից մեկում ասվում է, թե Մասնա Գոմս գյուղից Իսրոն դառնում է հայդուկ՝ թուրք հարկահանին սպանելու և իր տունն այրելու համար: Այդ բանը կատարվում է այն ժամանակ, երբ նա հարկահաններից պահանջում է չչափել կնոջ կոնքերը և մաղատարը չանցկացնել կնոջ գլխով ու մեջքով՝ պատրաստ լինելով տալ պահանջվող տուրքը<sup>142</sup>:

Ազգի ընտանիքներին բնորոշ էր նաև ընդհանուր պաշտամունքային սրբություններ ունենալն ու համատեղ արարողություններ կատարելը և ուխտագնացությունը: Ունեին իրենց առանձին պաշտամունքային առարկաները՝ բռնչի (բոնչենի) ծառ, փոքր եկեղեցի, սուրբ գրքեր համարվող Նարեկ, Աստվածաշունչ և Ավետարան, ինչպես նաև գրավոր թալիսմաններ, հմայիլներ: Որպես կանոն՝ դրանց ձեռքբերումը ազգի հիմնադրի խնդիրն էր: Դրանք գերդաստանի տրոհման ժամանակ մնում էին պապենական տանը: Պապենական տունը հրդեհվելու կամ փլվելու դեպքում պաշտամունքային առարկան նոր տուն էին տեղափոխում: Նման դեպքում սրբի անվամբ մատաղ էին անում: Սրբություն համարվող առարկան երբեք դոնից չէր հանվում, այլ պատի մեջ բացված անցքից: Սրբությունը տանից հանողի աչքերը անպայման կապում էին: Ազգատոհմն ուներ իր ընդհանուր սրբատեղի ուխտավայրը, որտեղ տոնական և այլ արարո-

<sup>141</sup> Տե՛ս Ատենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 470:

<sup>142</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 3, 1971-1972, գ. Աշնակ, էջ 120-121:

ղությունների ընթացքում կատարվում էին ուխտագնացություններն ու զոհաբերությունները:

Բնորոշ էր նաև ազգատոհմային և համայնքային մատաղների կազմակերպումը, սովորույթ, որ այսօր էլ կատարվում է Հայաստանի շատ բնակավայրերում: Երևանամերձ Առինջ գյուղում «Գետարգել» կոչվող վանքում «Կանաչ Կիրակի» կոչվող տոնին հավաքվում է ուխտավորների հոծ բազմություն, մատաղ է արվում, լարախաղացներ են զալիս, նվագածուներ, տոնավաճառներ են կազմակերպվում, մինչև ուշ երեկո մերձավոր ազգական ընտանիքները զվարճանում են, պարում, հյուրասիրում այլ տեղերից եկածներին: Առինջում «Գետարգել»-ի օրը մերձավոր ազգականների, այլ վայրերից, հատկապես Երևանից հրավիրված բարեկամների համախմբվածության այնպիսի տոնախմբություն է, ինչպես Վարդավառը Տավուշում<sup>143</sup>: Սովորույթի համաձայն՝ փոքրիշատե լուրջ հիվանդության կամ դժբախտության դեպքում մի գառ կամ ոչխար են տանում ազգի համար ընդհանուր դարձած ուխտատեղի կամ նախընտրած եկեղեցի, ուր արյուն էին հոսեցնում շեմին: Մատաղն ուտելու հավաքվում էին հիմնականում ազգականներն ու բարեկամները և բաժին հանում 7 տուն դրկիցների:

Ազգագրագետ Ս. Մկրտչյանի ազգագրական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավանդական տոների կենցաղավարման ամենատարածված ոլորտն ազգակցական միջավայրն է, մասնավորապես՝ ընտանիքը, քանի որ այն սերտորեն կապված է անձի կենսագործունեության գլխավոր փուլերի հետ՝ սկսած ծնունդից, անվանակոչությունից, ամուսնական հարաբերություններից ընդհուպ նախնիների հիշատակման և հանգուցյալներին առնչվող արարողությունները<sup>144</sup>: Դարերի ընթացքում տոները որպես ծիսասովորութային խորհրդանշական չափորոշիչներ, կարգա-

<sup>143</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ն. Խառատյան-Առաքելյան, *Հայ ժողովրդական տոները*, Երևան, 2005, էջ 149-160:

<sup>144</sup> Տե՛ս Ս. Մկրտչյան, *Ընտանիքն ու ազգակցական-բարեկամական միջավայրը տոների ավանդույթացման համատեքստում*, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված էմմա Կարապետյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 75-81, նաև նույնի՝ *Հայոց տոնական համակարգի էթնոլոգիայի առանձնահատկությունները* (Ավանդույթ և արդիականություն), պատմագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության սեղմագիր, Երևան, 2011:

վորել կամ կանոնարկել են ինչպես ներքնտանեկան, այնպես էլ ազգակցական, դրացիական և սոցիալական այլ խմբերի փոխհարաբերությունները՝ դրանով իսկ ձևավորելով հարաբերությունների որոշակի համակարգ: Հայոց տոնական համակարգում այդ գործառույթը կատարել են ավանդական տոները:

Ավանդական տոներից ընտանեկան-ազգակցական միջավայրում ամենից շատ նախընտրում էին նշել Նոր տարին, Քրիստոսի Մուռնդը, Ս. Խաչը, Չատիկը, Տյառնընդառաջը, Վարդավառը: Վերջինս, օրինակ՝ Տավուշում, ներկայումս էլ ընկալվում է որպես ընտանեկան-ազգակցական խնջույքների տոն: Այս առումով խորհրդային տոներից ընտանեկան-ազգակցական միջավայրում լայնորեն կենցաղավարված տոներից էին նաև քաղաքական բնույթի՝ Կանանց միջազգային օրը՝ Մարտի 8-ը, Աշխատավորների միջազգային համերաշխության օրը՝ Մայիսի 1-ը և այլն: Տոների կենցաղավարման չափերը պայմանավորված են ընտանիքների բազմանդամությամբ: Մեծ ընտանիքն է այն առանձնահատուկ սոցիալական խումբը, որը նահապետական գերդաստանային և ազգակցական ավանդույթների հիմնական կրողն է: Անցյալում տոները նշվում էին առավելապես համայնական միջավայրում. ճիշտ է՝ ընտանեկանի և ազգակցականի գործոնը կար, սակայն ամենաակտիվ սոցիալական խումբը համայնքն էր: Ներկայումս այն սահմանափակվեց ընտանեկան-ազգակցական միջավայրի շրջանակներում: Դադարեց հանդիսավայրերում՝ քրիստոնեական սրբավայրերում, սար-յայլաներում տոնական խնջույքների կազմակերպումը, առաջին պլան մղվեց գյուղական ընտանեկան տարածքը, իսկ տոնը նշողների սոցիալական կապն էլ սահմանափակվեց ընտանեկան-ազգակցական նեղ միջավայրով: Ընտանիքն ու ազգակցական միջավայրը, ըստ Ս. Մկրտչյանի սոցիոլոգիական հարցումների, ոչ միայն ավանդության և կրոնական տոների կենցաղավարման ամենատարածված սոցիալական օղակներն են, այլև այդ արժեքները սերունդներին փոխանցող տեղեկատվական միջոցները: Այդ տոները նշելու ձևերին ու ժամկետներին ամենաքաջատեղյակ սոցիալական խումբը ընտանիքն էր, հատկապես տարեց սերունդը՝ կանանց որոշակի առավելությամբ<sup>145</sup>:

<sup>145</sup> Տե՛ս Ս. Մկրտչյան, *Ընտանիքն ու ազգակցական-բարեկամական միջավայրը տոների ավանդության համատեքստում*, էջ 76-77:

Տոները մշտապես կապված են եղել անձի կենսագործունեության գլխավոր փուլերի հետ, որոնցից էր անվանակոչությունը: Մա ազգի մեծի կամքով կապված էր նույն անունը կրող սրբի տոնի հետ: Օրինակ՝ Հովհաննես-Մկրտչի տոնը համարվում էր բոլոր Հովհաննիսյանների, Մկրտիչների և Կարապետյանների տոնը, Քրիստոսի Մուռնդը՝ Քրիստափորների, Քրիստիանների, Մելքոնների, Գասպարների, Բաղդասարների (Մելքոնը, Գասպարը և Բաղդասարը մանուկ Հիսուսին առաջինը նվեր տանող մոզերն են), Ավետիսների, Սուրբ Սարգիսը՝ Սարգիսների, Վարդանանցը՝ Վարդանների, Չատիկը՝ Հարությունների, Համբաձումը՝ Համբարձումների, Ս. Աստվածածինը՝ Մարիամների, Սահակ-Մեսրոպը՝ Սահակների, Մեսրոպների, Լուսավորչինը՝ Գրիգորների և այլն<sup>146</sup>: Ներկայումս անվանակոչության ավանդական ձևերի անկմանը զուգահեռ, աստիճանաբար կենցաղում ամրապնդվում են կնուրի, ծննդյան տարեդարձի տոնակատարությունները, որոնք մեր օրերում արդեն համատարած բնույթ ունեն: «Ազգականներու հանդէպ սէրն ու յարգանքը, - գրում է սփյուռքահայ ազգագրագետ Հակոբ Չոլաքյանը, - նահապետական բարքերուն մաս կը կազմէր: Տօն-տաղաւարին առաջին այցելութիւնները ազգականներուն կը տրուէին: Կնուրքը, ածիլունքն ու հարսանիքը առանց ազգական ընտանիքներու ներկայութեան չէին ըլլար: Յարգանքի և այցելութիւններուն մէջ նահապետական կարգ ու կանոնը խստագոյն կերպով կը պահպանվէին...»<sup>147</sup>:

Ընտանեկան-ազգակցական միջավայրում տոնական արարողակարգը առանձնապես շքեղ էր դրսևորվում ամուսնահարսանեկան տարբեր փուլերում՝ նշանվածների, նորապսակների, մանկան ծննդի առթիվ ազգականների ու խնամիների միջև շնորհավորական փոխայցելությունների և նվիրատվությունների կազմակերպման ձևերով<sup>148</sup>:

<sup>146</sup> Տե՛ս Ե. Շահազիզ, *Նոր Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք*, էջ 39:

<sup>147</sup> Յակոբ Չոլաքեան, *Քեսապ*, էջ 154:

<sup>148</sup> Հայերիս մեջ շատ էր տարածված նվիրատվության սովորույթը: Գրեթե բոլոր տոներին միմյանց ընծաներ էին տալիս, մանավանդ նոր խնամի դարձած գերդաստանները: Նոր տարվան ծնողները զավակներին, զավակները՝ ծնողներին և ազգականներն ու խնամիները միմյանց պետք է մի որևէ բանով «կադանդէին»: Ավելի ուշագրավ են նոր խնամիների միջև փոխանակվող ընծաները, որ փայ կամ խոնջա է կոչվել և միանգամայն պարտադիր են համարվել,

Տոների ավանդության մյուս գլխավոր չափանիշը հանգուց-  
յալ նախնիների հիշատակման գործուն է եղել: Հիշատակման օրերը  
(Քրիստոսի Օնուկ, Ջատիկ, Խաչվերաց) իրենց ծիսաստվորության  
նորմերով դարերի ընթացքում ձևավորել են փոխհարաբերություն-  
ների յուրահատուկ համակարգ:

այնպես, որ, եթե նույնիսկ պսակը վաղ է կատարվել, այնուամենայնիվ այդ  
փայերից մի քանի գլխավորները պահանջվել են: Խոնչաները փեսացուի տնից  
ուղարկվում էին հարսնացուի տունը Բարեկենդանին, Մեծ Պահքի առաջին  
օրը, Միջինքին, Ծաղկազարդին, Ջատիկին, Վարդավառին, Նավասարդին: Այն  
բաղկացած էր լինում թարմ ու չոր մրգերից, քաղցրավենիքից, խմիչքներից և  
զանազան նվերներից, զարդերից: Փայի փոխարեն հարսնացուի տնից ևս զա-  
նազան ուտելիքներ և խմիչք էր ուղարկվում տղայի տուն, որը դարձվածք էր  
կոչվում: Հարսնացուի տնից ուղարկված ընծաների մեջ գրեթե միշտ անպա-  
կաս էր լինում գուլպան, որը ոչ միայն այս, այլև ուրիշ առիթներով փեսացուի  
մերձավոր ազգականներին ընծայաբերության ամենահարմար առարկան է  
համարվել: Փեսացուի ազգականները հարսնացուին և հարսնացուի ազգա-  
կանները փեսացուին նաև դրամական նվերներ էին տալիս, որ կոչվում էր  
«երեստեսնուկ»: Նույնը՝ ազգականները հարսանիքի ժամանակ:

Ընտանեկան-ազգակցական կյանքում ծննդաբերությանը ազգական ըն-  
տանիքները պարտավոր էին «ծննդգավաթ» ուղարկել, որը բաղկացած  
պետք է լիներ ծննդկան կնոջ առողջությունը արագ վերականգնող սննդա-  
բար կերակուրներից և խմորեղենից: Իսկ ազգականի մահվան միջոցին  
ննջեցյալի տուն կերակուրներ էին ուղարկում, Սուրբ Խաչին՝ ուլ և սև  
յազմա (գլխաշոր) նվիրում: Պանդխտության գնացողին ևս պարտադիր էր  
ազգական ընտանիքների օգնությունը՝ թխվածքով, իսկ վերջինս վերադար-  
ձին ազգականներին որևէ ընծա էր բերում (տե՛ս «Միսակյան կարգերը հայոց  
մեջ (ըստ Մպեեսների)», կազմեց Ե. Լալայեան, Թիֆլիս, 1913, էջ 70-71):

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԱԶԳԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՒՎՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ազգատոհմի տնտեսական և զաղափարական շահերը պահան-  
ջում էին ունենալ փոխադարձ օգնության, տնտեսական-արտադրա-  
կան կյանքը կազմակերպելու և ինքնապաշտպանության հնարավոր-  
ություն, որի գլխավոր պայմանը ազգի ընտանիքների համատեղ  
բնակվելն էր՝ երբեմն կազմելով առանձին գյուղ կամ գյուղակ, իսկ  
հետագայում՝ առավելապես առանձին թաղամաս: Համախմբված  
թաղը հայ իրականության մեջ ամենից առաջ ուներ պաշտպանա-  
կան նկատառումներ, մանավանդ այն պարագայում, երբ ազգակցա-  
կան խումբն ունեցել է ընդհանուր օգտագործման համար հողա-  
կտոր, ռոտզման համակարգ, համատեղ ցանքս, ընդհանուր արտադ-  
րական կառույցներ՝ ջրաղաց, ձիթհան, դարբնոց, կալ, գոմ, մարագ և  
այլն: Ինքնապաշտպանության խնդիրը առաջ էր գալիս ոչ միայն  
կյուրթական շահերի, այլև բարոյական նորմերը պահպանելու, ազ-  
գակցական խմբի արժանապատվությունը բարձր պահելու և, վեր-  
ջապես, վաչկատուն թշնամիների անակնկալ հարձակումներից  
պաշտպանվելու մղումներից: Բնակավայրերի առաջացման պատ-  
մությունը ցույց է տալիս, որ դրանք սկզբնապես բնակեցված են եղել  
մի գերդաստանի ճյուղավորումից առաջացած ընտանիքներով: Հե-  
տագայում է, որ համալրվել են այլ ազգատոհմերին պատկանող ըն-  
տանիքներով: Այդպիսի բնակավայրերն էլ հիմնականում ունեցել են  
այս կամ այն գերդաստանի հիմնադրի անվանումները<sup>149</sup>: Ազգովի

<sup>149</sup> Չեխ պատմաբան Ֆրանտիշեկ Պալացկին (1792-1876) առաջինն էր, որ «Չեխ  
ժողովրդի պատմություն» (1836) աշխատության մեջ ուշադրություն դարձրեց  
չեխական գյուղերի անվանման հատուկ ձևին՝ «իչի» կամ «ովիչի» վերջավորու-  
թյամբ: Հեղինակը այդ ձևը անվանել է «պատրոնիմիական»: Ըստ Պալացկու՝  
հին Չեխիայում, ինչպես և հնում բոլոր սլավոնների մոտ, ընտանիքներն աճելով  
չէին բաժանվում, այլ պահպանում էին իրենց միասնությունը: Այս եղանակով  
առաջանում էին հին չեխական բնակավայրերը, որոնց բնակիչները սկզբնապես

թաղերով բնակեցման համակարգը ավելի կայուն էր ու հարատևել է մինչև XX դարի 50-ական թթ. լեռնային և նախալեռնային բնակավայրերում, որտեղ չկար բնակչության հոսունություն: Նրանցում թաղերի միջև բնական սահման հանդիսացել են կիրճերը, բլուրները, գետակները և այլն, իսկ հովտային գոտու գյուղերում դրանք հեշտությամբ խառնվել են իրար:

Ազգակցական թաղերը սովորաբար կազմվում էին ազգի հիմնադրի ընտանիքի տրոհման և դուստր ընտանիքների առաջացման հետևանքով: Առանձնացած դուստր ընտանիքներն իրենց տները վերակառուցում կամ կառուցում էին կողք կողքի, միմյանց կպած: Մայր ընտանիքից բաժանված յուրաքանչյուր նոր ընտանիքի համար նախօրոք կառուցված տան համալիրը կցվում էր մայր համալիրին: Հետագայում բաժանված նոր ընտանիքի շենքերը դարձյալ կցվում էին նախորդներին և հնարավորության դեպքում շարք ստեղծում փողոցի մի եզրի վրա: Փաստորեն գերդաստանի երբեմնի տան մեկ մուտքի փոխարեն սրա շուրջն աճած պատկից տները բազմապատկվում, նոր տարածություն էին գրավում. դռները, որ հին սովորության համաձայն բացվելու էին միայն արևելյան կողմից, այժմ բացվում էին գրեթե բոլոր կողմերից: Նրանց կտուրները կազմում էին մի ընդհանուր հարթություն: Ազգակից ընտանիքների տները թիկունք թիկունքի էին տալիս, ժամանակի ընթացքում լայնանում և երկարում էին: Իսկ եթե տեղանքը հնարավորություն չէր տալիս, կցաթաղն ընդունում էր անկանոն շրջանի, քառակուսու և այլ տեսք՝ հորիզոնի բոլոր կողմերին ուղղված դռներով: Այս պարագայում խիստ նեղվածությունն անխուսափելի էր դառնում:

Ազգակցական թաղերի տները միմյանց հետ ներսից կապված էին նեղլիկ դռներով կամ պատուհաններով, որոնք հայտնի են «ակ-

---

կազմում էին մի ընտանիք: Այստեղից էլ այդ գյուղերի անվանման համապատասխան ձևը: Դրա հետևանքով «պատրոնիմիա» տերմինը տարածվեց և առաջին անգամ մտավ գիտական շրջանառության մեջ: Այն սկզբնապես հիմնականում կրել է բնակավայրերի հիմնադրի կամ ազգակցական խմբի անվանումները: Սակայն բնակավայրի պատրոնիմիական (ազգ, ազգատոհմ) անվանումները հետագայում մոռացվել են, բնակավայրերը ձեռք են բերել նոր անվանումներ՝ նրանց մեծացման, ազգակցական կազմերի փոփոխության, բնակչության քանակական աճի և այլ պատճառներով (տե՛ս *М. Косвен, Семейная община и патронимия*, էջ 92):

նատ» կամ «դրիճակ» անվամբ: Մասունցիները դրանք անվանել են «շբակ», Մուշում՝ «խոռ», Տիգրանակերտում՝ «ակնակ», այլ տեղերում նաև «աչքունք», որ ծառայում էր նաև իբրև որմնախորշ, որմնապահարան: Մրանք հաղորդակցության լավ միջոցներ էին և տնտեսական նշանակությունից գատ ունեցել են առանձնապես պաշտպանական նշանակություն: Ազգակցական կցատները և անգամ կցաթաղերը առաջին հերթին ինքնապաշտպանության համար էին: Դրանցով ազգի ընտանիքները հարևանություն էին անում, լուրեր հաղորդում, իրեր փոխանակում, վտանգի դեպքում ինքնապաշտպանությունն ապահովում: Ուրախ կամ բոթաբեր լուրերը մեկ ակնթարթում թաղի մի ծայրից մյուս ծայրն էին հասնում, եթե անհրաժեշտ էր լինում, թշնամու հարձակումների դեպքում ոտքի էր կանգնում ամբողջ ազգը: Սակայն ազգակցական թաղն ընդհատող փողոցների, ձորակների և ամեն տեսակ խոչընդոտների առկայության պարագայում լուրերը հասցվում էին տնից դուրս գալով: Այս և այլ պատճառներով ազգակից ընտանիքները համախմբվելով՝ կենտրոնանում էին մայր ընտանիքի շուրջը՝ ստեղծելով մի ազգակցական թաղ, որը կրում էր ազգի հիմնադրի անունը: Մասունում, լեռնային բնակավայրերում, որպես բացառություն, տներն իրարից հեռու էին ընկած՝ գոմերին, մարագներին, արոտավայրերին մոտ, մինչդեռ հովտային բնակավայրերում, ինչպես օրինակ՝ Մոտկանի ենթաշրջանի Մդունդ, Խսխեք, Սլաֆան, Հրորք, Ծման, Ցրտուտ մեծ ու փոքր գյուղերում՝ ազգակից ընտանիքների տներն այնքան մոտ էին, որ հաղորդակցվում էին միմյանց հետ ներսից՝ շբակ-ակնատներով: Նույնը նաև Հագո քաղաքում<sup>150</sup>:

Ազգակցական այդ թաղերը փորձում էին, որքան հնարավոր է, թույլ չտալ օտարի մուտքն իրենց մեջ: Խոսելով Հարք գավառի հայկական գյուղական բնակավայրերի, դրանց կառուցապատման մասին՝ Բենսեն վկայում է, որ այս կողմերում բնակարանը կառուցելիս երկու հարևան շինության միջևորմի մեջ թողնում են «փոքրիկ անցք՝ ակնատ»<sup>151</sup>: Հայաստանի շատ շրջաններում մինչև XX դարի 20-30-ական թթ. պահպանվում էին ակնատավոր շենքեր ունեցող որոշ թաղամասեր կամ առանձին բնակարաններ: Այսպես, անգամ Գյումրի

<sup>150</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, գ. Ուջան, 1971-1972, էջ 164-170: Ուջանում հաստատված մասունցիները հիմնականում վերը նշված բնակավայրերից են:

<sup>151</sup> Տե՛ս Բենսե, *Բուլանդիս կամ Հարք գաւառ*, էջ 43:

քաղաքի երկու մեծ թաղամասերի՝ «Գեղացոց Մահլի» և «Ձորի Բողազի» կամ «Ձորի Մահլի» հարևանությամբ ապրող ընտանիքների բնակարաններին կից պատերին անընդմեջ բացված ակնատների միջոցով քաղաքի այս զանգվածի բնակչությունը վտանգի դեպքում չափազանց արագ հաղորդակից էր լինում քաղաքի անցուղարձին:

Ստեփան Լիսիցյանը գրում է, որ դեռևս XX դարի 20-ական թթ. վերջերին Մեղրու շրջանի գյուղերի ազգակցական կամ հարևանական թաղամասերի բնակարաններին կից կամ ընդհանուր պատերին բացում էին հատուկ քառակուսի անցքեր՝ «միմյանց կրակ, ուտելիք, ամանեղեն, մանր իրեր կամ տեղեկություններ փոխանցելու համար: Դրանք խոսում են անմիջական հարևանների միջև անցյալում գոյություն ունեցած սերտ տնտեսական և, ամենայն հավանականությամբ, նաև ազգակցական կապերի մասին»<sup>152</sup>:

Ակնատները բավական չափի մեծության էին, որտեղով պետք է ֆիդայիները կամ հեղափոխականները տնից-տուն անցնեին և թաքնվեին թուրքական կամ ռուսական ոստիկանների հետապնդումներից<sup>153</sup>: Գիտնականը իր հետագա աշխատություններում գրում է, թե անգամ «Տփղիսը, որտեղ վրացական պետական կազմակերպության մեջ դասակարգային շերտավորումը համեմատաբար ավելի խորացած էր և բարդված, քան թե Անդրկովկասի այլ վայրերում, հայկական բնակչության մեջ գերիշխում էր գերդաստանային կազմակերպությունը ոչ միայն աշխատավորների և մանր առևտրականների խավի, այլև խոշոր վաճառականների՝ մօքալաքեների՝ առաջնակարգ քաղաքացիների ու իշխանական տների մեջ: Հին Տփղիսում Չիթախենք, Ումիկենք, Գուլուկենք, Խատիսենք, Շերմագանենք կազմում էին մի-մի դեռ անբաժան և տնտեսապես ներքուստ սերտ շաղկապված գերդաստաններ: Բեհբուլթենց իշխանական տունն իր յոթանասուն անդամներով միատեղ, միևնույն դարբասում էին ճաշում: Միայն հիվանդներն ու ծերունիներն էին ստանում իրենց բաժինն առանձին»<sup>154</sup>: Դա նշանակում է, որ Բեհբուլթենց ազգական ընտա-

նիքները ապրում էին պատկից, պարսպապատ, մեկ դարբասով ընդհանուր բակ ունեցող տներում:

Բնակարանային ժողովրդական ճարտարապետության ասպարեզում համապատասխան կառուցվածքների հանդիպում ենք նաև հարևան ժողովուրդների մեջ<sup>155</sup>:

Ազգակցական թաղերի ընդլայնումը հանգեցնում էր կցաթաղերի առաջացմանը, և ակնատային համակարգը գործում էր գրեթե ամբողջ բնակավայրում: Ակնատները կամ այսպես կոչված «անթել հեռախոսի» այդ նախնական ձևերը հայերի մեջ նորություն չէին: Ինչպես ցույց են տալիս Կարմիր Բլուրի պեղումները, դրանք հայտնի էին դեռևս ուրարտական ժամանակներից: Ըստ Ն. Մարտիրոսյանի էին հետազոտությունների՝ նման պատկեր է արձանագրվել դեռևս վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում: Տոհմական բնակատեղիները բաղկացած էին ընտանեկան միակտուր թաղերից, որոնք հազիվ էին իրարից բաժանվում ծուռ ու մուռ, նեղ փողոցներով: Բնակավայրի յուրաքանչյուր թաղ աճում ու ընդլայնվում էր յուրովի՝ իր ներքին օրենքներին համապատասխան, նահապետական ընտանեկան համայնքի տրոհմանը զուգահեռ: Այդ համայնքների տնտեսական ու կենցաղային պահանջներով էին պայմանավորված գոյություն ունեցող «տնաշինարարական» հաստատուն ու որոշակի կանոնները, որոնք ակնհայտորեն հանդես են գալիս, օրինակ, Կարմիր Բլուրի շինությունների համալիրներում և իրենց ճարտարապետական ձևերով հիշեցնում են Արարատյան դաշտավայրի հնագույն բնակատեղիները, հատկապես Շենգավթի վաղ բրոնզեդարյան բնակատեղին, ինչպես և Հին Արևելքի վաղ երկրագործական ցեղերի կացարանները<sup>156</sup>: Ակնատներ էին սարքում նաև բակերի պարիսպների վրա, որոնցով հարևանություն էին անում: Դրանք տնտեսական և ինքնապաշտպանական նշանակություն ունեին ոչ միայն ազգակցական ընտանիքների, այլ նաև ողջ գյուղական հասարակության համար<sup>157</sup>:

Սասունում, Դերսիմում և Արևմտյան Հայաստանի լեռնային այլ գավառներում հիշատակվում են գյուղեր, որոնք բնակեցված են եղել

<sup>152</sup> Տե՛ս Ստ. Լիսիցյան, *Из материалов по изучению жилищ Армении. Крестьянское жилище Мегринского района, "Известия Кавказского историко-археологического института"*, Тифлис, 1927, VI, էջ 131:

<sup>153</sup> Տե՛ս Ստ. Լիսիցյան, *Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник"*, I, М., 1955, էջ 202-203:

<sup>154</sup> Տե՛ս Ստ. Լիսիցյան, *Չանգեզուրի հայերը*, էջ 227:

<sup>155</sup> Տե՛ս Մ. Կոսովեն, *Կովկասի ժողովուրդների պատրվածքային*, էջ 97:

<sup>156</sup> Տե՛ս Ա. Մարտիրոսյան, *Город Тейшебаини*, Ереван, 1961, նկ. 8-10, էջ 28-31, նույնի՝ *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964, էջ 160-190:

<sup>157</sup> Տե՛ս Վ. Բдолян, *Кровнородственный "азг"...*, նույնի՝ *Հայ ազգազրույթուն*, էջ 155-165:

բացառապես ազգականներով<sup>158</sup>: Հայկական գյուղը վերածվում էր կցաթաղերի մի գանգվածի՝ կլորության ձգտող հատակագծով: «Ազգի» ընտանիքների տները շատ հաճախ այնպես էին կպած միմյանց, որ ամբողջության մեջ հիշեցնում էին միասնական ճարտարապետական համալիր: Սասունի Գեյիեզուզան գյուղում ազգակից ընտանիքների տները միմյանց այնքան մոտ էին հիմնված, որ, օրինակ՝ Պետո (Պետրոս) տների՝ Գորքե (Գրիգոր), Ավե (Ավետիք), Գիրո (Կիրակոս), Սրկո (Սարգիս), Խչո (Խաչատուր) շենքերի կտուրները ունեին մի ելարան, իսկ նույն գյուղի Նիկո (Նիկողոս) ազգության Մոսոյի (Մովսես), Ավեի, Միեի (Միսիթար), Մարտոյի (Մարտիրոս), Գուրջոյի, Մուրոյի տների կտուրները վերածվել էին նաև կալատեղի, ուր կալտուրը կատարվում էր գոռի կամ կոռի կոչվող եզների խմբի շրջանաձև պտույտի տրորման եղանակով<sup>159</sup>: Նույն պատմական Աղձնիք նահանգի հարավային շրջանների հայկական գյուղերը (Ալմաստինա շրջանի Բրա, Շքաստակ, Մլքիշան և այլն) բնակեցված էին ազգակցական միակտուր տանիքներով ազգակցական թաղերով, պարսպապատ բակերով, տարբեր ուղղություններով բացվող մուտքերով, երբեմն մեջք մեջքի, երբեմն էլ՝ կողք կողքի դասավորությամբ տներով, գաղտնի, ներսից, շատ հաճախ գոմից, միմյանց տները կապող նեղլիկ դռներով կամ պատուհաններով՝ *շքակներով*:

Ըստ ուջանաբնակ Արշակ Շահինյանի՝ հայերը Սասնա Հագո քաղաքում կենտրոնացված էին Բերդի, Եկեղեցու և Անջոս թաղամասերում, իսկ քրդերը՝ Շենդեզ և Մուլեյման-բեկի թաղամասերում: Այստեղ հայերը, մինչև XIX դարի 90-ական թվականները և XX դարի սկզբների քրդական և թուրքական հալածանքներն ու կոտորածները, եղել են 2500 տուն, իսկ հետո քաղաքից հայերի հեռանալու պատճառով այն ամայացել է և կենտրոնում եղած աշտարակը (մինարեն) հայտնվել է քաղաքի եզրին: Խիտ շարքեր կազմած տներով ապրել են այն հայերը, որոնք արհեստագործությամբ զբաղվելու համար այստեղ էին հաստատվել հիմնականում Բիթլիսի, Խարզանի, Նփրկերտի, Սղերդի շրջակա գյուղերից<sup>160</sup>:

<sup>158</sup> Տե՛ս Գ. Հալաջյան, *Դերսիմի հայերի ազգագրությունը*, ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 201, Վ. Պետոյան, *Սասնա ազգագրությունը*, Երևան, 1965, էջ 230-231:

<sup>159</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, 1972, գ. Ուջան, Լեոնարտ, Ավան, էջ 208-210:

<sup>160</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, 1972, գ. Ուջան, էջ 182, տ. 8, 1973, գ. Ուջան, էջ 184:

Ըստ մեկ այլ ուջանաբնակ բանասաց Հովհաննես Պետրոսյանի հավաստման՝ Մոտկանի Խսխեր գյուղում հայերը ապրում էին քրդերից առանձին թաղով, և թաղն էլ քրդերի կողմից կոչվում էր *Թագաֆլա*: Խսխեր խառը բնակված գյուղում հայկական ընտանիքները պարտադիր բնակվում էին ազգովի, համատեղ: Բանասացը ներկայացրեց *Թուշիկա թախումը*.

- |                  |                   |
|------------------|-------------------|
| 1. Միմոյենց տուն | 7. Շահինենց տուն  |
| 2. Պողոսենց տուն | 8. Ուսեփենց տուն  |
| 3. Մուխսու տուն  | 9. Մշենց տուն     |
| 4. Գյորոզի տուն  | 10. Վարդեի տուն   |
| 5. Սարգսենց տուն | 11. Ռաշոյենց տուն |
| 6. Պետոյենց տուն | 12. Զաղոյենց տուն |

Նշված տները կազմել են մի ընդհանուր կտուր, որը վերածվել էր կոլեկտիվ հավաքությունների, հարսանեկան պարերի, խաղահրապարակների վայրի: Ըստ բանասացի՝ այս ազգի հիմնադիր *Թուշիկը* Մոկսից է այստեղ հաստատվել՝ քուրդ աղայից վրեժխնդիր լինելուց հետո՝ նոր ազգատոհմի հիմնադիր դառնալով<sup>161</sup>: Քրդական հալածանքներից խույս տալով և վրեժխնդիր լինելով՝ հայերը նոր բնակավայրեր են հիմնել նաև՝ Հագո քաղաքին կից Խարզանի շրջանում՝ Ծման, Մամլա, Ցրտուտ, Սլաֆան, Մղունդ և այլ գյուղեր: Ծման գյուղում հաստատվում է Միրունի ազգատոհմը, որոնց ժառանգները Ուջանում հայտնի են Միրունյան, Մամլա գյուղում Իսրայելի որդի Պետուն, որի սերունդները կազմում են 7 տուն՝ Օվանեսի, Գենջոյի, Խագարի, Ասլանի, Գրիգորի, Զուրաբի, Սարգսի տները, որոնք հիմնականում զբաղվում էին փայտամշակությամբ՝ օրորոց, արոր, լուծ, գղալ, շերեի, ձուամի սաքք և այլ փայտեղեն իրերի պատրաստմամբ և քրդերի շրջանում դրանց վաճառքով<sup>162</sup>: Ցրտուտ գյուղից Ուջանում հաստատված Առաքել Բոզիկյանի հավաստմամբ՝ այս գյուղի հիմնադիրն է Խուբուն, ով այստեղ էր եկել Դերչոչ գյուղից՝ դարձյալ տեղի քուրդ աղային սպանելով և իր որդիներով գյուղից հեռանալով: Նրա երկու որդիները՝ Նադիրը և Խաչոն, հաստատվել են Բշերի դաշտի Զևակ և Քըվրըզու գյուղերում, երրորդ որդին՝ Գորքեն՝ Մոտկանի Կրխու, հե-

<sup>161</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, գ. Ուջան, 1972, էջ 165:

<sup>162</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 168-169:



տո՝ Մդունդ գյուղերում, չորրորդը՝ Տեր-Առաքելը՝ Մլաֆան գյուղում, հինգերորդը բունի քրդացվում է (շնորհալի արհեստավոր է եղել), վեցերորդը՝ Ասլանը՝ Ցրտուտ գյուղում: Գյուղի անվանումը կապված է ցուրտ կլիմա ունենալու հետ: Ցրտուտը մեկ ազգով բնակեցված գյուղ էր՝ Խուբոյի ժառանգներով՝ 7 տուն կազմած<sup>163</sup>: Նման պարագայում, ինչպես վերը նշեցինք, կտուրները վերածվում էին անցուղիների, ժողովարանների, մանկական ու մարզական խաղերի, հարսանեկան պարերի, խմբական աշխատանքների՝ էրիշտա կտրելու, բուրդ փռելու, վերմակ կարելու և այլ միջոցառումների վայրերի<sup>164</sup>: Փողոցի ձևը պայմանավորված էր նրանով, թե ինչպես, ինչ ուղղությամբ էին կառուցվում ազգակցական թաղերը: Հարևան ազգակցական խմբերը փոխադարձ համաձայնությամբ ճանապարհը հարմարեցնում էին փոխադրական միջոցների տեսակներին: Փողոցի ձևը և մեծությունը թելադրում էին կողմերը, մանավանդ գորեղ «ազգ»-ը, որը հնարավորին չափ սեղմում էր, փոքրացնում այն: Կողմերի պահանջի վրա ազդում էր նաև գյուղական հասարակության պահանջը: Օուտոսիկ փողոցները ծառայելու էին երկանիվ սայլերով փոխադրություն կատարելուն: Այս էր պատճառը, որ հայկական գյուղը մինչև 1920-ական թվականները կցատների մի խիտ զանգված էր՝ կլորության ձգտող հատակագծով: Ազգակցական թաղերը սակավ բացառությամբ, գուրկ էին տնամերձ հողերից: Այգիները մեծ մասամբ գտնվում էին թաղերից դուրս: Թաղերն ու փողոցները կազմվում էին հիմնականում տարերայնորեն, առանց պլանավորման:

<sup>163</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 169:

<sup>164</sup> Համանման նկարագրություն է թողել Արևմտյան Հայաստանի քրդերի կենցաղը հետազոտող Մ. Շվետը. «Մի թաղի կամ հաճախ ամբողջ գյուղի տների կտուրները մինևույն բարձրությամբ իրար անմիջապես կից, կներկայացնեն մի հսկայական հրապարակ, ուր տեղի կունենան համայնական աղոթքները, հասարակական ճաշկերույթները, հարսանեկան և այլ տոնական զվարճություններն ու պարերը: Մինևույն հրապարակ-կտուրի վրա քրդուհիները կփռեն չորացնելու համար նոր խաշած ձավարը, լվացած աղունը, կանաչ ծխախոտը, կյավուրներեն գողացված տավարի մորթերը: Ապրիլ ամսի կեսերեն սկսած մինչև աշուն, մինչև սեպտեմբերի վերջերը նույն այդ կտուրներն կփոխվին ընդհանուր կամ համայնական ննջարանի: Այդտեղ էր ննջում նաև հյուրը» (Մ. Շվետ, *Քրդերը Տաճկաց Հայաստանում*, Մ. Պետերբուրգ, 1905, էջ 76):

Ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից որևէ ընտանիքի խցկումը անհանդուրժելի էր: Այս երևույթը Արևմտյան Հայաստանի լեռնային շատ բնակավայրերում որպես սովորույթ պահպանվել էր մինչև Եղեռնը և գաղթը: Ազգատոհմի որևէ ընտանիք վերանալու դեպքում՝ նրա տունն ու տեղը ժառանգում էր ամենամերձավոր ազգակա-նը՝ որդին, եղբայրը, հորեղբայրը և այլն: Վերացման եզրին կանգնած ընտանիքը, սակայն, բարոյական իրավունք չունեի տունը կտակել ոչ ազգակից որևէ ընտանիքի: Այդպիսի քայլ նախաձեռնելիս ամբողջ ազգը դիմադրում էր նրան: Բայց տնփեսան իրավունք ուներ ժառանգել աներոջ տունը և նրա վարելահողերը: Ազգանդամն իրավունք չուներ վաճառել իր վարելահողերը ոչ ազգակից գնորդին: Ազգը նրան խորհուրդ էր տալիս այդ հողերը վաճառել ազգի որևէ անդամի՝ ազգի հարստությունը «ներսում» պահելու դիտավորությամբ:

Մեր դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի շատ շրջաններում ազգովի թաղերով բնակվածության սովորույթը էական փոփոխությունների չէր ենթարկվել անգամ մինչև XX դարի սկզբները, թեև հովտային շրջաններում գերդաստանական տների տրոհման հետևանքով առաջացած մերձավոր ազգականների կցատներով թաղամասերը, ծավալվելով, միավորվել էին հարևան ազգակցական թաղերին, կազմելով կցաթաղեր<sup>165</sup>: Մասունում «Հարևան ընտանիքները, – նշում է Վ. Պետոյանը, – ընդհանրապես արյունակիցներ էին, որովհետև գյուղերի և հողերի իրարից ցրված լինելու համար ամեն մի գյուղի կամ թաղի և հողա-մասի վրա տեղավորված էին գերդաստաններից գոյացած հարևաններ: Այնուամենայնիվ, այս հարևանների մեջ երբեմն այս կամ այն պատճառով կային և ոչ արյունակից դրացիներ»<sup>166</sup>:

Տարածքային միասնությունը դրսևորվում էր նաև հեռագնա անասնապահության ժամանակ. սարվորների կացարանները՝ *օղանե-րը*, հիմնվում էին կողք կողքի: Տավուշում օղա էին անվանում ամառանոցներում և ձմեռանոցներում սարվորների ժամանակավոր տները: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականու-թյունը խախտվել էր, ապա նույնը չէր կարելի ասել օղաների վերաբերյալ, որտեղ անպայման ազգակիցները հաստատվում էին կողք

<sup>165</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 78-81, 157-213, տ. 12, էջ 4, 19-20:

<sup>166</sup> Վ. Պետոյան, *Մասնա ազգագրությունը*, էջ 230:

կողքի: Եղել են դեպքեր, երբ ձմեռանոցները վեր են ածվել մշտական բնակավայրերի: Ձմեռանոցում հաստատված ազգը ժամանակի ընթացքում բազմանալով՝ սկսում է յուրացնել շրջապատի ազատ տարածքները՝ տներ կառուցելով: Ժամանակի ընթացքում դրանք վեր էին ածվում մշտական բնակավայրի: Պապենական տնից անջատված դուստր ընտանիքները, բնակվելով իրար կողքի, ստեղծում էին ազգակցական թաղամաս: Նման բնակավայրի օրինակներ են եղել Տավուշի Արծվաբերդ, Նավուր, Ենոքավան, Խաչթառակ գյուղերը, Գեղարքունիքի մարզի Թթուջուր բնակավայրը և այլն: Դեռ ոչ վաղ անցյալում Տավուշի Արծվաբերդ գյուղում հարևանությամբ ապրել են Ալիբեկյան գերդաստանի սերունդները՝ Ավետի երեք որդիների ընտանիքները, սակայն թաղամասը հայտնի է այլ անվանումով՝ Բուղաքար: Պատճառը այլ ազգի ընտանիքների մուտքն է եղել տվյալ թաղամաս, և կցաթաղի վերածված թաղամասն էլ ստացել է բնական դիրքի հետ կապված աշխարհագրական անվանում: Այդ նույն գյուղում ազգակից ընտանիքները հիմնականում համախմբված են բնակվել:

Սակայն XIX դարի վերջերին և հատկապես XX դարի սկզբներին, երբ տնտեսական հարցերում ազգի ընտանիքները ձեռք էին բերում տնտեսական ինքնուրույնություն, ազգապետի հեղինակությունն անկում էր ապրում, շուկայական հարաբերությունները հայկական գյուղ էին թափանցում, և անխուսափելի էր դառնում տունն ու տեղը նաև օտարին վաճառելը: Նման պայմաններում խախտվում էր համատեղ ապրելու միտումը, ազգակցական կապերը սկսում էին թուլանալ, և քաղաքամերձ գյուղերից առանձին ընտանիքներ դրամական վաստակի համար մեկնում էին արտագնա աշխատանքի արդյունաբերական կենտրոններ: Ազգատոհմային կապերը լավ պահպանված էին մնում հիմնականում լեռնային և նախալեռնային, հաղորդակցության ուղիներից կտրված բնակավայրերում: Ազգի ունոր ընտանիքը, օտարի մուտքն արգելելու նպատակով, սեփականացնում էր գաղթող ազգակցի տունն ու հողատարածքը: Այս պարագայում անհնարին էր դառնում տունն ու տեղը օտարին վաճառելը: Մակայն միշտ չէ, որ ազգի հարուստ ընտանիքը գնելով սեփականացնում էր ազգականի տունը, երբեմն անխուսափելի էր դառնում այն օտարին վաճառելը: Նման վաճառք կայանում էր այն դեպքում, երբ նոր թաղակիցը իրենց հետ խնամիական կամ բարեկամական և այլ կապեր ուներ: Հետզհետե համատարած բնույթ էր ստանում կցա-

թաղերի մեջ տարբեր եղանակներով այլ ազգատոհմերի ներկայացուցիչների հաստատվելը: XIX դ. վերջերին և XX դարի սկզբներին ազգակցական կապերը վերջնականապես փոխարինվեցին հարևանական, տարածքային կապերով, երբ ազգովի տարածքային միասնության պահպանումը դառնում էր գրեթե անհնարին: Այդ գործընթացը արագանում է XX դարի 20-30-ական թթ. խորհրդային շրջանում ինդուստրացման և կոլեկտիվացման նոր քաղաքականության կենսագործման պատճառով:

Նոր առաջացող անհատական ընտանիքը նոր տուն կառուցում էր մի այլ հողամասում, օրինակ՝ գյուղից դուրս՝ չանվանակոչված տարածքներում՝ առաջացնելով նոր թաղամասեր, որոնք անվանվում էին տարածքի բնական դիրքին համապատասխան կամ էլ տրվում էր մականուն, օրինակ՝ «անկիսուր մահլա» (թաղ):

Ազգակցական թաղամասից հեռանալու և ինքնուրույն կյանք վարելու անխուսափելիությունն արտահայտվել է նույնիսկ ժողովրդական երգերի մեջ.

*Քյանի տղա եմ, տղեղ եմ,  
Որ ճոչացա՝ դրկեցղ եմ,  
Որ պսակվա օտար եմ<sup>167</sup>...*

Օբյեկտիվ հանգամանքների բերումով թուլանում էին ազգակցական կապերը, վերանում էր նաև ակնատային համակարգով և կցատներով ապրելու անհրաժեշտությունը: Տնտեսական ու հասարակական փոփոխված նոր հարաբերություններում հիմնվում էին նոր, բարեկեցիկ, լուսամուտավոր բնակարաններ, ուղիղ ու լայն փողոցներ, աստիճանաբար անհատի շահերը շահկապվում են հասարակության շահերի հետ, ինչի շնորհիվ վերանում են հին ազգակցական կցաթաղերի մնացուկները: Հարթավայրային շրջաններում տարածքային միասնությունը պահպանում էին հիմնականում մերձավոր ազգականները:

Ազգակցական թաղերի պահպանման հարցում կարևոր դեր էր խաղում նաև բնակչության մշտական բնակեցվածությունը և արտահոսքի բացակայությունը: Այն գյուղերում, որտեղ բնակչության հոսք չկար, ազգակցական թաղերն ավելի կայուն էին պահպանվում:

<sup>167</sup> Տե՛ս Գևորգ Շերենց, *Վանա սագ*, Ա, Թիֆլիս, 1895, էջ 34:

Դրանք հիմնականում գուրկ էին տնամերձ հողից կամ այլ տարածություններից:

Մինչև XX դարի կեսերը Իջևանի տարածաշրջանի Աչաջուր գյուղում հստակ առանձնանում էին ազգակցական թաղերը: Ընդհանուր առմամբ գյուղն այդ տարիներին ուներ 35 թաղ, որոնք պահպանում էին ոչ միայն ազգի անվանումը, այլ նաև ազգի միատարրությունը: Օրինակ՝ Մելիքբեկանց թաղում բնակվում էին մոտ քառասուն ազգակից ընտանիքներ, իսկ Ղաթախյան ընտանիքները երեսունմեկն էին, որոնք զբաղեցնում էին երկու թաղամաս՝ մեկում՝ քսաներկու, մյուսում ինն ընտանիքներ<sup>168</sup>:

Ազգի տարածքային միասնության վկայություն էր նաև ընդհանուր ազգակցական գերեզմանաշարք ունենալը, գրեթե այնպես, ինչպես ազգակցական թաղերը: Ազգակցական հատուկ գերեզմանատներ մեզ հայտնի չեն: Քանի դեռ որևէ գերդաստան միայնակ էր լինում, սրա գերեզմանաշարքը կրում էր ընտանեկան բնույթ: Այդպիսի շարքերը չէին մեծանում: Բայց ազգակցական խմբի մեծացմամբ մեծանում էին նաև ազգակցական գերեզմանաշարքերը<sup>169</sup>:

Գերեզմանաշարքն իր հերթին, եթե հնարավոր էր լինում, պահպանում էր ընտանիքների դասավորության կարգը: Գոնե ամուսինների համար այդ բանը կիրառվում էր առանց վերապահության: Մի գերեզմանաշարքը լրանալիս ընտրվում էր նորը: Մեր օրերում գերեզմանաշարքերը կրում են առավելապես ընտանեկան, քան ազգակցական բնույթ:

Ի մի բերելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ XIX-XX դարերում մենք ունեցել ենք ազգակիցներով համախմբված ապրելու երեք ձև:

1. Ողջ ազգն է զբաղեցրել մի գյուղ: Այս ձևը առավել տարածված է եղել միջնադարում: Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Թովմա Արծրունին. «Եվ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թե ոք յարանց զօ-

<sup>168</sup> Տե՛ս Զ. Կարապետյան, *Родственная группа "азг" у армян*, էջ 76:

<sup>169</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, 7, 9, 1971-1972, Աշտարակի տարածաշրջանի Ուջան, Լեռնարոտ, Ավան, Թալինի տարածաշրջանի Իրինդ, Կարավաձոր, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Շղարշիկ, Աշևակ գյուղերում ազգակցական հարաբերությունների վերաբերյալ զրառված կյուրեր:

րատրաց ի բարձրաբերձ տեղաց ուժգին խանչիցե, հազիւ թե ուրեք կարիցե առնուլ զբուժիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով»<sup>170</sup>:

Վաղ միջնադարյան հիշատակություններից երևում է, որ բնակավայրերի մեծ մասը իրենց անվանումները ստացել է առանձին ազգերի անուններից՝ Ռշտունյաց գավառ կամ Ռշտունիք, Սյունաց աշխարհ կամ Սյունիք և այլն: Այս անվանումները ծագել են նախարարական տների անվանումներից, որոնք եղել են տվյալ երկրամասերի իշխանները: Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրերի անվանումների ստուգաբանությունը նս կապվում է ազգանվանումների հետ, որպիսիք են՝ Կճանք, Արենանք, Աղամանք և այլն<sup>171</sup>: Աբխազիայում և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզում XIX դարի վերջերին հայկական բնակավայրերը կոչվում էին թվաքանակով գերիշխող ազգի անունով<sup>172</sup>: Մա առավել արտահայտված էր արոտավայրային ժամանակավոր բնակավայրերում: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականությունը չէր պահպանվում, ապա նույնը չի կարելի ասել արոտավայրային բնակավայրօղաների վերաբերյալ, որոնցում ազգակիցները անպայման հաստատվում էին կողք կողքի՝ ժամանակավոր սեզոնային մի բնակավայր կամ առանձին թաղամաս հիմնելով: Օրինակ՝ Բերդում Անանյանների թաղի ընտանիքները 1950-ական թվականներին կորցնելով նախկին միասնությունը՝ բնակվում էին քաղաքի տարբեր հատվածներում, միայն ազգի հիմնադրի թոռների՝ երեք եղբայրների տներն էին կողք կողքի, մինչդեռ բիւնաներում՝ արոտավայրային կացարաններում, նույն ազգի տները մի թաղամաս էին հիմնել: Նույն պատկերն էր նաև ձմեռանոցներում, որոնք անգամ կրում էին հիմնադիր ազգի անվանումը: Ե. Կարապետյանի հավաստմամբ՝ Մասունում, սովորույթի համաձայն, գոմերն ու մարագները հիմնվում էին արոտավայրերի մոտ, գյուղերից դուրս, հետագայում դրանք աստիճանաբար մեծանալով՝ վերածվում էին ազգակցական մշտական

<sup>170</sup> Տե՛ս Թովմա Արծրունի, *Պատմություն Տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917, էջ 134:

<sup>171</sup> Տե՛ս Ե. Կարապետյան, *Մասուն* (ազգագրական կյուրեր), Երևան, 1963, էջեր 3-4, 50:

<sup>172</sup> Տե՛ս Զ. Կարապետյան, *Родственная группа, "азг" у армян*, էջ 89-92:

բնակավայրերի: Ե. Կարապետյանը թվարկում է Մասնա գավառի մեծ ազգերի անվանումներով հիշատակվող մի շարք գյուղեր, որոնցից են՝ Բրկանք, Կծանք, Գիլոնք գյուղերը՝ Խուրթի շրջանում, Մրցանք, Հուսենք, Աբու Թաղ, Միրի Թաղ, Մարենք՝ Մոտկանի շրջանում, Փասնք, Թաթանք, Քաջառենք, Սգթենք, Բալոյենք՝ Փասնաց շրջանում, Մաղտուն, Ահարոնք, Խիանք, Դվալենք, Սպաղանք, Հրդիսք՝ Խիանքի շրջանում<sup>173</sup> և այլն: Ըստ մեր բանասացների՝ Տալվորիկի 11 թաղերը ներկայացված են իբրև ազգակցական բնակատեղիներ, որոնք հետագա դարերում վերածվել են ինքնուրույն գյուղերի, և դրանցից շատերը կրել են ազգակցական անվանումներ՝ Իրիցանք, Այանցիք: Նույնը Շատախ գավառում՝ Հրեկոնք, Վիժնանք, Ջալալիք, Դոլանք, Արջոնք, Շեղկոնք, Ջմալենք, Թաթանք, Ճախրկանք, Մորպանք, Քրդամանք, Մաղենք, Քիսթաղ, Դմալենք, Քաշքշենք, Օտտեկանք, Հազգոյի շրջանում՝ Փիրշենք, Զիլանք և այլ գյուղեր, որոնք եղել են ազգակցիցներով բնակեցված փոքր գյուղեր և հետագայում է, որ աճել և մեծացել են<sup>174</sup>: Ամառանոցային արոտավայրային ժամանակավոր բնակավայրերը և մշտական բնակավայրից հեռու ընկած գոմերն ու հարակից տարածքները ազգակցական բնակավայրերի վերածումը՝ ավելի արագ ընթացավ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին՝ Արևմտյան Հայաստանում պարբերաբար, գրեթե մշտապես կրկնվող հայ բնակչության կոտորածների, ուղեկցվող սովի, ապրուստի դժվար հայթայթման հետևանքով<sup>175</sup>: Մասնա ազգակցական անվանումներով գյուղերի մի զգալի մասը փոքր գյուղեր էին՝ բաղկացած 14-15 տներից, որոշ մասն էլ՝ 250-300 և ավելի տներից: Առաջինները մեծամասնություն էին կազմում:

Վ. Պետոյանի հավաստմամբ՝ Մասունի գավառի գյուղական հասարակությունը մեծ մասամբ բաղկացած էր մոտավոր և հեռավոր ազգակցական կապ ունեցող ընտանիքներից, ուստի հարս էին բերում հիմնականում հարևան գյուղերից<sup>176</sup>: Գ. Հալաջյանը նույնպես

նշում է, որ Դերսիմում կային գյուղեր, որոնք բնակեցված են եղել միայն մեկ ազգակցական խմբի ընտանիքներով<sup>177</sup>:

XIX դարի վերջին արձանագրվել են արևելահայերին վերաբերող՝ բնակավայրը մի ազգակցական խմբի ընտանիքներից կազմված լինելու մասին նյութեր: Այդպիսին են Ե. Լալայանի հաղորդած տեղեկությունները Լոռվա Իգահատ (այժմ՝ Այգեհատ) և Արդվի բնակավայրերի մասին: Դրանցից յուրաքանչյուրը բնակեցված էր մեկ ազգով՝ Իգահատը՝ Շահվերդյաններով, Արդվի գյուղը՝ Քալանթարյաններով: Ուշագրավ է, որ այդ ազգերի անուններով չեն կոչվել նշված բնակավայրերը<sup>178</sup>: Մտ. Լիսիցյանի հավաստմամբ՝ Ջանգեզուրում Բեխ գյուղը կազմված է եղել գրեթե բացառապես Մելիք-Փարսադանյաններից: Այդ մելիքական տան բազմանալն էր, որ պատճառ էր դարձել Հալիձորի նեղ պատերը թողնելու և տնատեղերի համար ավելի ընդարձակ տարածության անցնելու, որի հետևանքով հիմնվեց Բեխ գյուղը: Բնակավայրում այդ իշխանական տունը չէր տեղավորվել ընդհանուր տնտեսությամբ, այլ յուրաքանչյուր ընտանիք, առանձնացնելով իր վարելահողերը, արոտավայրերն ու անտառամասերը, ուներ իր անջատ եկամուտները և անկախաբար սպառում էր դրանք՝ ըստ իր կարիքների: Միայն Հալիձորի պղնձահանքերը մնացին չբաժանված, և մինչև հեղափոխությունը նրանցից ստացված ընդհանուր եկամուտը բաշխվում էր ազգական ճյուղերի մեջ որոշ բաժիններով<sup>179</sup>:

2. Ազգակցական թաղեր հիմնելն էր: Այս ձևը XIX դարի վերջերին տարածված էր Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջաններում: Արևելյան Հայաստանի գյուղերում ազգակցական թաղամասերով բնակեցման մասին Մտ. Լիսիցյանը գրում է, որ ամբողջական թաղամասեր կրում էին ազգակցական անվանումներ. Հաղպատում՝ Եղիազարյանների, Դսեղում՝ Չատիսյանների, Թումանյանների, Գորիսում՝ Մինասանց, Դոլունց: Դեռ 1960 թ. Խնձորեսկում արձանագրել է 13 ազգակցական թաղ: Ռուսական տիրապետության հաստատման առաջին տասնամյակներում իրար ազգական գերդաստանները, այդ բազմանդամ ծխերը, հավանական է, որ մեծ մասամբ դեռ զետեղված էին լինում միևնույն թաղում, իրարից ոչ հեռու: Այդպես էր, օրինակ,

<sup>173</sup> Տե՛ս Ե. Կարապետյան, *Մասուն*, էջ 3-4, Վ. Պետոյան, *Մասնա ազգագրությունը*,

էջեր 9-10, 14-15, Ա. Քալանթար, *Մասուն*, Թիֆլիս, 1895, էջ 15 և այլն:

<sup>174</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 4, 1973 թ., Աշնակ, էջ 44-48, տ. 6, Իրինդ, 1973, էջ 23-31, տ. 12, Ուջան, 1975, էջ 24-27 և այլն:

<sup>175</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 211-212 և այլն:

<sup>176</sup> Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 312:

<sup>177</sup> Տե՛ս Գ. Հալաջյան, *Դերսիմի հայերի ազգագրությունը*, էջ 230-231:

<sup>178</sup> Տե՛ս Ե. Լալայան, *Բորչալու գավառ, Երկեր*, հ. 3, Երևան, 2004, էջ 152:

<sup>179</sup> Տե՛ս Մտ. Լիսիցյան, *Ջանգեզուրի հայերը*, էջ 228:

Խնձորեսկում: Այդպիսի թաղի մեջ դրկիցության և ազգակցության կապերն իրար հետ խաչաձևվում էին, և դրանց կից մշակվում էին միջթաղային փոխհարաբերության ձևերը<sup>180</sup>: «Ճշմարիտ է՝ հին գյուղերում թաղերը հաճախակի, այժմս էլ կրում են արյունակցական անուններ, այսպես. Խնձորեսկում՝ Արչանց, Կատվանց, Բըրդանոնց (դղում), Բոզունց, Դադալունց բերդ (որտեղ սպանվել էր Մխիթար սպարապետը), որի դիմացն է Ջանունց բերդը: Թաղերը ունենում էին և հատուկ իրենց բերդը Գորիսում՝ Մինասանց, Դոլունց ձորը, Ափունց քալա (հմմտ. արաբ. kale – բերդ), Օհանին թաղը: Դրանք մեծ մասամբ աճած գերդաստաններ են, իրարից բաժանված ընտանիքներից առաջացած և կազմում են *ասկ* կամ *գոխ* (ցեղ)»<sup>181</sup>: Մխիթանի Լծեն գյուղը, որ փռված է բարձր լեռան վրա, վատ ճանապարհների պատճառով առանձնացվել է հարևան գյուղերից և երկար ժամանակ բնակեցված էր մեկ ազգի ընտանիքներով՝ Գրիգորյաններով, որոնք այստեղ էին տեղափոխվել 1830 թ. Պարսկաստանի Խոյ գավառից: Ավելի ուշ այստեղ են հաստատվում Լեռնային Ղարաբաղից Վարդանյան, Սահակյան, Մանուկյան ընտանիքները: Վերջիններս իրենց հերթին հիմնում են իրենց ազգանվամբ թաղամասեր<sup>182</sup>: Ինչպես գրավոր, այնպես էլ դաշտային ազգագրական նյութերն աներկբա հավաստում են Հայաստանի տարբեր շրջաններում ազգակցական թաղերով բնակեցման համակարգի գոյությունը մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկզբները, երևույթ, որ նաև կովկասյան ժողովուրդների կենցաղին բնորոշ ամենակայուն հատկանիշներից մեկն է եղել<sup>183</sup>:

Նույնը առավել կայուն ձևով տարածված էր Արևմտյան Հայաստանում, որի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ջեյթունցին<sup>184</sup>: Ըստ նրա՝ Ջեյթունում կային չորս հիմնական թաղեր՝ Շովրոյանների, Յաղուբյանների, Ենիթունյանների և Մուրենյանների: Թվարկված թաղամասերն իրարից բաժանվում էին որոշակի աշխարհագրական սահմաններով՝ ձոր, գետ և այլն, որոնց առկայության պատճառով թաղերը մեկուսացված էին:

<sup>180</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 230:

<sup>181</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>182</sup> Տե՛ս Զ. Карапетян, նշվ. աշխ., էջ 76:

<sup>183</sup> Տե՛ս Մ. Կոսովեն, *Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան*, էջ 95-97:

<sup>184</sup> Տե՛ս Ջեյթունցի, *Ջեյթունի անցյալն ու ներկայեն*, Վիեննա, 1900, էջ 21:

3. Ամենատարածված ձևը փոքր կազմ ունեցող ազգակցական թաղերն էին, որոնց մեջ մտնում էին ամենամոտ ազգականները: Այսպիսի փոքր, առավել մերձավոր ընտանիքներով ապրելու սովորույթը պահպանվել է հատկապես խորհրդայնացման շրջանում, հարթավայրային բնակավայրերում: Այստեղ ազգակցական կապերը փոխարինվում էին հարևանական տարածքային կապերով:

Վ. Բոդյանը, 1949 թ. Արտաշատի շրջանի Շահումյան գյուղում դաշտային ազգագրական նյութեր գրառելիս, ուշադրություն է դարձրել այստեղ ազգակցական թաղերով բնակվող համակարգի՝ Ղարիբենց և Բարսեղենց ազգակցական թաղերի նկարագրմանը: Հեղինակը գրում է, որ 1949 թ. Ղարիբենց թաղն ուներ հետևյալ պատկերը.

1. Ավագի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
2. Թումասի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
3. Հարթենի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
4. Առաքելի տուն = Ղարիբենց ազգից = Մայարյան:
5. Ակոբի տուն = Ղարիբենց ազգից = Շահգելոյան:
6. Գաբրիելի տուն = Ղարիբենց ազգից = Շահգելոյան:
7. Եզորի տուն = Ղարիբենց ազգից = Հակոբյան<sup>185</sup>:

Այստեղ, դժբար չէ նկատել, որ Ղարիբյան ազգատոհմի ներսում արդեն առաջացել էին դուստր ընտանիքներ, որոնք, սակայն, դեռևս պահպանում էին տարածքային միասնությունը: Սակայն նույն գյուղի մեկ այլ՝ Բարսեղենց տներ ազգանվամբ թաղում արդեն ապրում էր խնամիական կապեր ունեցող երկու ընտանիք.

- |  |   |            |
|--|---|------------|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Թևոսի տուն = Բարսեղենց ազգից</li> <li>2. Ներսոֆի տուն = Բարսեղենց ազգից</li> <li>3. Մարգարի տուն = Բարսեղենց ազգից</li> <li>4. Մարքրայի տուն = Մարգարի քեռին՝ Հախվերդենց ազգից:</li> <li>5. Վիրաբի տուն = Բարսեղենց ազգից (Ազիգյան):</li> <li>6. Ալեքսանի տուն = Խազրտի ազգից՝ Բարսեղենց խնամին:</li> <li>7. Խաչոյի տուն = Բարսեղենց ազգից:</li> </ol> | } | եղբայրներ: |
|--|---|------------|

Ուշագրավ է, որ այս դեպքում ազգակցական թաղերը որոշակի դեր են կատարել կոլեկտիվացման շրջանում: Արտադրական բրի-

<sup>185</sup> Տե՛ս Վ. Бодян, *Кровнородственный "азг"...*

գաղները կազմվում էին տարածքային սկզբունքով՝ ընդգրկելով առանձին թաղեր: Դրանք հիմնականում համընկնում էին հին ազգակցական թաղերի հետ: Համատեղ ապրելու սովորույթը շատ հաճախ վճռական դեր է խաղացել հատկապես գյուղի այս կամ այն պաշտոնի ընտրարշավի ժամանակ, երբ յուրաքանչյուր ազգ ձգտում էր համախմբված ընտրել իր ազգականին բրիգադի, գյուղապետի և այլ պաշտոններում: Բացառիկ դեպքերում է, որ գյուղում ազգակցական թաղերի մեջ կարող էին հայտնվել օտար ընտանիքներ: Թաղերով ապրելու սովորույթը խախտվում էր այն դեպքում, երբ թուլանում և անկում էր ապրում ազգապետի հեղինակությունը: Սովորույթի համաձայն, ինչպես նշեցինք, գաղթող ազգականի տունուտեղին տիրանում էին միայն նրա մերձավոր ազգականները:

Ինչո՞վ էր պայմանավորված համատեղ ապրելու ձգտումը: Ամենից առաջ երբեմնի տոհմական համախմբվածության հնագույն ավանդներով, երկրորդ՝ ազգակիցների տնտեսական սերտ կապերով, որ դրսևորվում էր փոխօգնության բազմազան ձևերով, երրորդ՝ բարոյական անաղարտությունն ու ազգի հեղինակությունը պահպանելու ձգտումով, չորրորդ՝ ազգակցական խմբերի միջև ծագող վեճերի ժամանակ համատեղ գործողություններ ծավալելու անհրաժեշտությամբ, օտարի հարձակումների ժամանակ արագ ինքնապաշտպանության կազմակերպմամբ և այլն: Դրա համար էլ ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից ընտանիքի գոյությունը անհանդուրժելի էր համարվում: Ինքնապաշտպանության ապահովումը պայմանավորված էր ինչպես համատեղ սեփականության (հողակտոր, ոռոգման համակարգ, համատեղ վարուցանք, ընդհանուր արտադրական կառույցներ՝ ջրաղաց, ձիթհանք, կալ, գոմ) և այլնի պաշտպանությամբ, նյութական համատեղ շահերով, այլ նաև բարոյական չափանիշների համատեղ պահպանմամբ: Եվ, որ ոչ պակաս կարևոր է, օտարի լծի տակ, օտար էթնիկ տարրերի հարևանությամբ ապրելը թելադրել է համախմբվածությունը մշտապես պահպանելու անհրաժեշտությունը:

1920-1930-ական թվականներից ի վեր հասարակական զարգացման նոր պայմանները, աշխատանքի կազմակերպման, հողագործության և անասնապահության նոր ձևերը բնականորեն վերափոխեցին գյուղատիպերը, աստիճանաբար հիմնվեցին նոր թաղեր, ուր կանոնավոր փողոցների վրա, իրենց հատկացված տնամերձ հողամասերում կառուցվեցին լուսավոր, ժամանակակից տներ, վերացան հին ազգակցական թաղերն ու դրանց մնացուկները:

## Գ Լ ՈՒՆ Չ ՈՐՐ ՈՐ Դ

### ԱԶԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ազգակցական հարաբերությունների մեջ կարևոր տարրերից էր, տնտեսական ընդհանուր շահերի պահպանությունը: Գերդաստանի տրոհման հիման վրա առաջացած փոքր ընտանիքների համար փոխադարձ օգնության և ինքնապաշտպանության առումով ազգակցական կապերն անհրաժեշտություն էին:

«Ազգ» արենակցական խումբն իր տնտեսական և արտադրական ընդհանրությունն ավելի շուտ է կորցնում, քան գաղափարական և տարածքային ընդհանրությունը: Հին Հայաստանում, երբ արտադրական միջոցները վերածվում էին մասնավոր սեփականության, ազգատոհմն այլևս չէր կարող դիտվել իբրև ինքնուրույն տնտեսական միավոր: Այդպիսին դառնում էր ազգի մեջ մտնող ընտանիքը, սակայն ազգը պահպանում էր տնտեսական ընդհանրությունն այն չափով, որն արտահայտվում էր արտադրության թանկ գնահատվող միջոցների ազգովի համատեղ օգտագործմամբ, աշխատատար պրոցեսների ազգի կոլեկտիվ ուժերով կազմակերպմամբ, ազգովի փոխօգնությամբ<sup>186</sup>:

#### *§ 1. Ազգի ընդհանուր սեփականության դրսևորումները XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին*

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ազգի տնտեսական վաղեմի ընդհանրության վերապրուկները դրսևորվում էին հիմնականում հողօգտագործման և հողատիրության բնույթի, արտադրության թանկ միջոցներից օգտվելու, ինչպես նաև ազգովի փոխօգնության կարգի մեջ:

<sup>186</sup> Տե՛ս Ծ. Карапетян, Родственная группа "азг" у армян, էջ 94-149:

Հայոց պատմության վաղ շրջանում, երբ գյուղացիներն օգտագործել են հողաբաժանմամբ իրենց բաժին ընկած հողակտորը, թեև հողաբաժնի միավորը եղել է առանձին ընտանիքը, այդուհանդերձ համայնքը հողը բաժանել է ոչ թե առանձին ընտանիքների, այլ ընտանիքների խումբ կազմող թաղերի միջև, և միայն թաղի ներսում է վարելահողը բաժանվել ընտանիքներին: Նման թաղերը կազմել են հողամշակութային ընկերակցություններ՝ «համկալ» կամ «սաբան» (գութան) անվանումներով<sup>187</sup>: Վարելահողերի բաշխման այս կարգի մեջ ընտանիքը հանդես է եկել ոչ թե իբրև ամբողջ համայնքի հողի, այլ համաթաղային հողամասի բաժնետեր, իսկ թաղը դեռևս XIX դարավերջին հայկական շատ բնակավայրերում բացառապես ներառում էր «ազգ» արենակցական խումբը կամ ազգատոհմը:

Վարելահողերի բաշխման միավորներ հանդիսացող թաղերը դեռևս անցյալ դարի սկզբներին գրեթե համընկնում էին ազգակցական թաղերին և բնորոշվում արտադրական ընդհանրության տարրերի պահպանմամբ: Առանձին դեպքերում, տվյալ թաղի համար առանձնացված վարելահողը մշակվել է ընտանիքների խմբի կողմից համատեղ, և ապա կատարվել բերքի բաշխում՝ առկա անձերի թվին համապատասխան: Այս համակարգը ակնառու էր խոպան, ճահճոտ և հատկապես անտառահատմամբ ձեռք բերված հողահանդակների համատեղ օգտագործման դեպքում, որը, սովորաբար ազգակից ընտանիքների միջև բաժանման ենթակա չէր: Ազգակից ընտանիքների խմբի կողմից վարելահողերի համատեղ օգտագործման կարգի մեջ դրսևորվում էին «ազգի» տնտեսական ընդհանրության մնացուկային շատ տարրեր:

Համայնքը և առանձին համայնականները խորապես գիտակցում էին, որ յուրաքանչյուր 2-3 տարին մեկ անգամ հողերի բաժանումն ու վերաբաժանումը աննպատակահարմար է, որովհետև այդ կարգը գյուղացուն չէր շահագրգռում իրեն հատկացված հողակտորի վրա մեծ աշխատանք կատարելու, ներդնելու նյութական միջոցներ և այլն: Սա էր հիմնական պատճառը, որ համայնքն իր անդամներին հողը բաժանում էր ավելի երկար ժամանակով, բայց այս ձևով բաշխված հողն աստիճանաբար դառնում էր մշակողի ժառանգական տիրույթ:

<sup>187</sup> St' u C. Егизаров, *Исследование по истории учреждений в Закавказье*, т. 1, *Сельская община*, Казань, 1889, էջ 62, Э. Карапетян, *Родственная группа "азг" у армян*, էջ 120:

րույթը: Բացի այդ, համայնքը, համայնաժողովն առանձին գերդաստանների և նույնիսկ առանձին համայնականների սեփականություն էր ճանաչում անձնական աշխատանքով և սեփական միջոցներով մշակված հողահանդակները, այգիները, տնամերձ հողերը: Ցանկապատված հողակտորը բաժանքի ենթակա էր դառնում, եթե այն մշակելու համար մեծ միջոցներ և շատ աշխատանք չէր գործադրվել: Այդուհանդերձ, համայնքի իրավասության տակ գտնվող վարելահողերն ու արոտավայրերը դիտվում էին որպես համայնքային հողի անկապտելի մաս՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ դեպքում ովքեր էին օգտագործում դրանք:

Անցյալ դարասկզբին դեռևս նկատելի էր սերնդեսերունդ փոխանցվող պապենական հողի, ինչպես նաև շարժական ու անշարժ գույքի՝ անկախ անձերի թվից, եղբայրական ընտանիքների միջև վիճակահանությամբ բաժանման՝ ախպերաբաժնի (հավասար) սկզբունքը, որը վկայված լինելով նաև միջնադարյան օրենսգրքերում՝ համարվում էր ազգի կոլեկտիվ սեփականության իրավունքի վաղեմի սովորույթի մնացուկային դրսևորում: Բացառություն էր կազմում գնմամբ ձեռք բերված հողը, որն անցնում էր միայն այդ հողը ձեռք բերողի ժառանգներին: Համազգի հողամասերը չէին կարող վաճառվել առանց «ազգի» յուրաքանչյուր անդամի համաձայնության, քանզի նույնիսկ ամենահեռավոր անդամն ուներ հողի գնման նախապատվության իրավունք: Մարած ծխերի հողը ախպերաբաժնի սկզբունքով բաժանվում էր «ազգի» անդամների միջև՝ ըստ մերձավորության աստիճանի:

Գերդաստանների տրոհման ժամանակ վարելահողերը, ողջ անշարժ ունեցվածքը վիճակահանությամբ հավասարաչափ բաժանվում էին եղբայրների միջև: Այս դեպքում Արևմտյան Հայաստանում բաժանված հողը միաժամանակ գյուղի ռեսի և համայնքի ժողովի կողմից *թափու* էր արվում անհատական ընտանիքների վրա, որը վավերացվում էր *կոչանագրով* հողահարկի չափը որոշելու համար<sup>188</sup>: Անշարժ գույքի և հատկապես պապենական հողի սեփական-

<sup>188</sup> 1867 թ. հրապարակվեց հողային մի օրենք, որով գյուղացիներին պարտադրվեց ձևակերպել տալ իրենց հողահանդակները *թափու*-ով, այսինքն՝ փրկագնել դրանք, վճարելով տարեկան եկամտի 15 տոկոսը: Թուրքական կառավարությունը հաճախ անցկացնում էր թափուների ստուգում: Գերդաստանի նահապետի մահվանից հետո թափուն փոխանցվում էր բա-

նատեր կարող էին լինել առաջին հերթին արական սեռի ներկայացուցիչները: Իսկ շարժական ունեցվածքը՝ հացահատիկը, այլ մթերքներ, կահ-կարասին, անկողնային պարագաները, հագուստը, աշխատանքի գործիքները, դրամը և այլն, բաժանվում էր ըստ անձերի՝ և որդիների և դուստրերի թվին համապատասխան: Արու զավակներից գուրկ ընտանիքը, եթե անգամ ուներ մի քանի աղջիկ, համարվում էր անհետանկար մարդ ընտանիք, ուստի նման դեպքում իշխանությունները Արևմտյան Հայաստանում հողը **թափու** էին անում այլոց վրա, որոնք այն փրկագնում էին պետությունից:

**Թափու**-ն հողի սեփականության պայմանագիր էր<sup>189</sup>: Թափու ձեռք բերողն իրավունք ուներ օգտվելու հողամասից ոչ միայն ցմահ, այլև ժառանգաբար: 1873 թ. սուլթանը կարգադրել էր անցկացնել թափուների ստուգում: Թափուի մեջ նշվում էր հողամասն ստացողի անունն ու ազգանունը, հողամասի սահմաններն ու չափերը, արժեքը, ձեռքբերման եղանակը (արդյոք այն ժառանգված է, գնված, նվիրված, գրավ է տրված, թե՛ տրվում է վաղեմության իրավունքով): Այնուհետև թափուի մեջ նշվում էր այն գումարը, որն ստացողը մուծում էր պետական դրամարկղ: Թափուն հանձնվում էր ակտով, որը համապատասխան համարի տակ պահվում էր մեջլիսի (զավառական գրասենյակ) գործերում<sup>190</sup>:

ժանվող ընտանիքների միջև (տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ)*, Պատմաազգագրական ուսումնասիրություն, Եր., 2004, էջ 75):

<sup>189</sup> Տե՛ս Ա. Համբարյան, *Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)*, Երևան, 1965, էջ 51-52:

<sup>190</sup> 1972 թ. Աշնակ գյուղում Տալվորիկի Հոսնուտ գյուղից այստեղ հաստատված 86-ամյա բանասաց Պճուկ Կիրակոսյանը հաղորդեց, որ եթե ընտանիքում արու ժառանգորդ չլիներ, պետական մարմինների կողմից հողը թափու չէր արվում: Իրենց ազգատոհմի հիմնադիր Հոպելը 6 տղաներ ուներ, որոնք բոլորն էլ վախճանվում են տիֆ հիվանդությունից: Նրանցից 4-ը ամուսնացած էին և նրանց կանայք հղի էին: Հոպելը հողի ետ վերցնելը կանխելու համար հարկադրված հղի հարսին տանում է զավառական կենտրոն՝ Բողկանք՝ մի քոչված պաշտոնյային (զավառապետ) ցույց տալու հարսի հղիությունը: Ըստ բանասացի՝ եթե ընտանիքում հարյուր աղջիկ էլ լիներ, արու զավակ չլիներ, ընտանիքը հողի սեփականատեր չէր համարվի: Վեց զավակների կորուստ կրած Հոպելը վշտից կծկված նստում է ջորուն թարս ձևով՝ բռնելով ջորու պոչից, իսկ հղի հարսն էլ ջորու գլխից քաշելով ներկայանում

Աղջիկը կարող էր անշարժ գույքի ժառանգորդ համարվել միայն այն դեպքում, երբ հաշմանդամ էր և ծնողագուրկ կամ ընտանիքի միակ զավակն էր և ամուսնացած էր տնփեսայության իրավունքով նույն ազգի հեռավոր անդամի հետ: Ամուսնու մահից հետո միայն նրա անշարժ ու շարժական գույքի սեփականատեր կարող էր դառնալ կինը: Այս հարցի վերաբերյալ խոսվում է Գոշի «Դատաստանագրքում», որտեղ ասվում էր, որ եթե հանգուցյալը չունի ո՛չ որդիներ, ո՛չ դուստրեր և ո՛չ էլ եղբայր, ապա ունեցվածքը փոխանցվում է նրա հորեղբորը, եթե սա էլ չկա, ապա ժառանգորդ կարող է լինել հայրական գծով նրա որևէ հարազատ, միայն ոչ մայրական գծով (հողված 62)<sup>191</sup>: Դժվար չէ նկատել, որ հայ միջնադարյան օրենսգրքի համաձայն՝ անշարժ գույքը նախ և առաջ փոխանցվում էր որդիներին և կամ արական գծով մյուս հարազատներին: Ըստ Մխիթար Գոշի՝ ժառանգորդների շրջանակը սահմանափակվել է չորրորդ սերնդով, որի մասին հստակորեն խոսվում է նաև Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում», որտեղ նշվում է՝ եթե չկային որդիներ և դուստրեր և, բնականաբար, նրանցից ծնված թոռներ, ապա ժառանգությունը փոխանցվում է եղբորը և նրա որդիներին մինչև չորրորդ պորտը: Եվ եթե սա էլ չէր լինում, ապա ունեցվածքն անցնում էր հորեղբորը և նրա որդիներին մինչև չորրորդ սերունդը լրանալը<sup>192</sup>: Ունեցվածքից բաժին էր հատկացվում նաև հաշմանդամ քույրերին, որոնք գտնվում էին եղբոր խնամքի տակ: Եթե կին ժառանգորդն ամուսնանում էր այլազգու հետ, զրկվում էր հողի ժառանգման իրավունքից: Իսկ եթե այրի կինը ամուսնանում էր իր հանգուցյալ ամուսնու մերձավորներից մեկի հետ, պահպանում էր իր սեփականության իրավունքները նաև անշարժ գույքի (հողի, բնակարանի և այլն) նկատմամբ: Ամուսնության այս ձևը ազգագրության

են Միրին: Այս տեսարանը զարմանք է պատճառում շրջապատին: Հոպելը հարցմանը պատասխանում է. «Ասու բախտը մեզնից դառավ, 6 տղեք մեզեն գնացին, ասուն գիտաթ, ունիմ 4 հարս փորով, հալբաթ մը տղեմ աստված կիդա»: Միրը փոխում է վճիռը՝ հողի տնօրինումը թողնում է ընտանիքին՝ մինչև հարսների ծննդաբերությունը և արու զավակ ունենալը: Հարսներից երկուսը տղա են ունենում, ուստի պահպանվում է Հոպելի գերդաստանի հողային սեփականությունը (տե՛ս ԴԱՆ, տ. 3, 1972, գ. Աշնակ):

<sup>191</sup> Տե՛ս Մխիթար Գոշ, *Գիրք Դատաստանի*, գլ. Գ, էջ 33-34:

<sup>192</sup> Տե՛ս Սմբատ Գունդստաբլ, *Դատաստանագիրք*, էջ 118:



մեջ հայտնի է լեհրատ (տեգրամուսնություն) անվամբ, որն իր արմատներով գալիս է ամուսնության վաղ ձևերից: Լեհրատի դեպքում այրին շարունակում էր մնալ գույքի իրավատեր: Ամուսնության այս ձևը, բայց հետավոր ազգականների շրջանակներում, թույլատրելի էր նաև եկեղեցու կողմից,<sup>193</sup> որի նպատակն էր չմասնատել, պահպանել ազգի ընդհանուր ունեցվածքը: Պարսիկները, գիտենալով, որ հայոց սովորույթի համաձայն գոյություն է ունեցել հողի ու գույքի ազգանդամի ժառանգման իրավունք, ձգտել են ահաբեկման միջոցով օգտվել դրանից: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ ոմն պարսիկ գրպարտությամբ դիմելով մի հայի՝ ասում է. «Ազգական քո եմ, ամենայն ինչ և ստացուածք քո ինձ հասանի՝ տուր ինձ»<sup>194</sup>: Նրանք օրենք էին դարձրել պարսկացած հայի սեփականությունը խլել նրա ազգականներից: Այդ ապօրինությունը տարածում էին նույնիսկ կրոնափոխվածների մեծածաղկավորների վրա՝ սրանց գույքը հափշտակելու համար: «Բռնի ամուսնությամբ հայուհուն մահմեդականացելուց հետո, – գրում է Ս. Երևանցին, – ոմն պարսիկ դիմում է դատարան և պահանջում, որ կնոջ հայրական այգուց բաժին ստանա, իսկ պորտաբույծ մի այլ պարսիկ քանաքեռցի Միքայել էպիսկոպոսին սուտ ազգական է ձևանում և պահանջում, որ նա իր այգին ու գույքը թողնի իրեն: Եպիսկոպոսին քարշ տալով նախապես կաշառած շեխի մոտ՝ պարսիկը գրավոր փաստաթղթով դառնում է նրա ազգակիցը»: Երևանի խանը, իհարկե, բեկանելով այս ապօրինի որոշումը՝ պատժում է շեխին, բայց կարևորն այստեղ հայկական ազգատոհմի օրենքներն են, որոնցից օգտվում էին անօրեն տիրապետողները<sup>195</sup>:

Ըստ Ե. Լալայանի, Բորչալու (Լոռի) գավառում մինչև XIX դարի վերջերը դեռևս պահպանվում էին պապենական ազգովի հողամշակման ձևերը, թեպետ այդ հողը կարող էր բաժանված լինել ազգի ընտանիքների միջև, սակայն մշակվում էր համատեղ, բոլորի կողմից: Մինչև խորհրդայնացումը ըստ էության պահպանվեց ազգապատկան հողային սեփականության ձևը: Ազգանդամ ընտանիքը հողային այդ տարածքները նվիրելու, վաճառելու իրավունք չուներ:

<sup>193</sup> Տե՛ս Մելիք Թանգյան, *Հայոց եկեղեցական իրավունք*, հ. Ա., Շուշի, 1903, էջ 348, Խ. Մամուլեյան, *Մայրական իրավունքը*, ԱՂ, 1908, գ. 18, № 2, էջ 88-89:

<sup>194</sup> Տե՛ս Ա. Դավրիժեցի, *Պատմություն*, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 63:

<sup>195</sup> Տե՛ս Վ. Բղոյան, *Հայ ազգագրություն*, էջ 157:

Դա ազգի ընդհանուր սեփականությունն էր համարվում: Եթե ինչ-որ մեկը փորձեր խախտել հողային սահմանը, ազգի բոլոր անդամների իրավունքն էր շտկելու, լուծելու ծագած խնդիրը<sup>196</sup>: Թեև հողը բաժանված էր ազգի ընտանիքների միջև, այն համարվում էր պապենական և ամբողջ ազգի սեփականությունը: Ազգի յուրաքանչյուր ընտանիք պապենական հողի նկատմամբ որոշակի իրավունք ուներ, ուստի անկարող էին վաճառել որևէ հողակտոր՝ առանց ազգի բոլոր մեծերի համաձայնության: Նույնիսկ, երբ գերդաստանը բաժանված էր առանձին ընտանիքների, նախկինում ողջ գերդաստանին պատկանող վաճառված կամ այլ ճանապարհով օտարված այս կամ այն կալվածքը ենթակա էր հետգնման, եթե մերձավոր ազգականներից որևէ մեկը համաձայն չէր օտարման այդ գործարքին: Գրիգոր Տաթևացին այս կապակցությամբ գրում է. «Եւ որ կամի զհայրենիս աղքատին յետ գնել՝ պիտոյ է՝ նախ, որ լինի ազգական նմա, զի օտարն ոչ կարէ գնել»<sup>197</sup>:

Վանական որևէ հաստատության նվիրաբերած կալվածքներն ազգականների հետագա միջամտությունից զերծ պահելու նպատակով նվիրաբերական արձանագրությունների մեջ հաճախ շեշտում էին այն հանգամանքը, որ ազգականներից և ոչ մեկը իրավունք չունի երբևէ վեճ բացելու տվյալ նվիրաբերության առթիվ. համարձակվողների հասցեին անեծքի սարսուղոյ խոսքեր էին ասվում: Օրինակ, 1489 թվականին ոմն Դավիթ երեց Արտամետի Կորնկեց Սուրբ Աստվածածնի վանքին նվիրաբերել էր իր ողջ ունեցվածքը՝ անշարժ ու շարժական կալվածքներ: Այս մասին շարադրված հիշատակարանի վերջում Դավիթ երեցը գրանցել է այսպիսի տողեր. «Ով որ հակառակ է յետ իմ անցման, կամ դավլ է անէ, կամ դալապ անէ մազի մի չափ, թե ազգ է, թե աղբոր գարմ է, թե հօրեղբոր գարմ է, դավլ է և տալապ անէ, եկեղեցոյ ֆարզիանդէն հանէ և ցուէ, նա զանեծքն օձին և զԿայենին, զՅուդային և զՆեոնան առցէ, ամէն»<sup>198</sup>: Ունեցվածքը դառնում էր ընդհանուր համայնական սեփականություն այն դեպքում, երբ նրա տերը վախճանվում էր առանց ժառանգներ և ազգականներ ունենալու:

<sup>196</sup> Տե՛ս Ե. Լալայան, *Բորչալուի գավառ*, էջ 153:

<sup>197</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի ձմռան հատոր*, Կ.Պոլիս, 1740, էջ 86:

<sup>198</sup> Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի պահպանության թանգարան, Մատենադարան, ձեռ. № 5537, էջ 298<sup>ա</sup>:

Ազգի որևէ ընտանիքի վերանալու դեպքում՝ նրա տունն ու տեղը ժառանգում էր ամենամերձավոր ազգականը՝ որդին, եղբայրը, հորեղբայրը և այլն: Այդպիսի ընտանիքի վերջին անդամի մահից առաջ երբեմն գրավոր կտակ էր արվում, թեև բանավոր կտակը նույն գորությունն ուներ: Վերացման եզրին կանգնած ընտանիքը, սակայն, բարոյական իրավունք չունեի տունը կտակել ոչ ազգակից որևէ ընտանիքի: Այդպիսի քայլ նախաձեռնելիս ամբողջ ազգը դիմադրում էր նրան: Բայց տնփեսան իրավունք ուներ ժառանգելու աներոջ տունը և նրա վարելահողերը:

Քանի որ հողի օտարում կարող էր կատարվել միայն ազգի ներսում, ուստի այդ հանգամանքը հնարավորություն էր ընձեռում ունեւոր ազգակիցներին աստիճանաբար հողը կենտրոնացնելու իրենց ձեռքում և չարաշահելու արյունակիցների աշխատանքը:

Ազգի ներսում որք լինելու դեպքում նրա բաժին հողը ժամանակավորապես անցնում էր նրա հորեղբորը կամ մերձավոր խնամակալ ընտանիքին: Որքը, չափահաս դառնալով, համարվում էր իր հայրական ունեցվածքի սեփականատեր: Այս և նման բոլոր հարցերը լուծվում էին սովորության իրավունքով:

Ըստ սովորության իրավունքի նորմերի՝ ընտանիքի բաժանման ժամանակ ամբողջ շարժական և անշարժ գույքը «ախպերաբաժին» սկզբունքով ենթակա էր բաժանման: Ջրադացներն ու ձիթհանները նա բաժանվում էին «ախպերաբաժին» հավասար սկզբունքով, Բայց դա ավելի շատ մտովի բաժանում էր, քան իրական: Եթե դրանք պատկանելիս են եղել ազգի հիմնադրին, ապա դրանք կարող էին օգտագործվել ազգովի՝ համատեղ: Արտադրության նշված միջոցների ընդհանուր օգտագործմամբ բաժանված եղբայրների ընտանիքների միջև գույքային կապ էր պահպանվում, ժամանակի ընթացքում այդ խումբն ընդարձակվում էր, և արտադրության հիշյալ միջոցներն օգտագործվում էին ամբողջ ազգի կողմից: Որոշ գյուղերում պահպանված ջրադացներից ու ձիթհաններից ազգովի օգտվելու սկզբունքը հին ծագում ուներ. այդ են վկայում սովյալ միջոցներից հավասարապես օգտվելու երբեմնի սովորույթը, վարձու աշխատողներին բնամթերքով վարձատրելը, ինչպես և այդ միջոցներից միայն սպառողական նպատակներով օգտվելու սովորույթը: Ջրադացներն ու ձիթհանները նա կրում էին համազգի անվանումներ: Ազգակից ընտանիքները ջրադացներն ու ձիթհանները շահագործում էին կամ «ազ-

գի» մեջ մտնող ընտանիքների կողմից հերթով օգտագործելով և արդյունքը հավասարապես կիսելով, կամ էլ ջրադացյան էին վարձում. եկամտի 1/3-ը նրանն էր, իսկ մնացած 2/3-ը հավասարապես բաժանվում էր փայտտեր ընտանիքների միջև: Այլ դեպքերում, ջրադացյանի վարձը շաբաթվա մեկ օրվա համար վերցրած վարձն էր: Վարձը 20 կոտ աղալիս մեկ կոտ այլուրն էր, կամ մեկ կոտից (16 կգ)՝ մեկ *աուճը* (800 գ)<sup>199</sup>: Ջրադացը, ձիթհանը և դինգը նորոգում էին համատեղ: Ամենուրեք ազգի և հարևանների օգտագործման տակ էին դրվում աղքատերը, որոնք փոխարինում էին սանդերին՝ կորկոտ ծեծելու, աղ մանրացնելու համար: Ազգի մեջ երբ մի ընտանիք երկանք էր ունենում, նրանից լիովին օգտվում էին նաև ազգականներն ու հարևանները: Ազգականներից մեկի ցուլը և խոյը առանց վարձատրության օգտագործվում էին նաև ազգի բոլոր ընտանիքների կողմից ու մաքիների բեղմնավորման համար:

Եթե գերդաստանը բաժանքից առաջ ունենում էր խոպան տարածքներից կամ քարքարուտից հարդարված հողահանդակ, որը որակով զիջում էր մյուս հողահանդակներին, ապա բաժանքի դեպքում այն թողնվում էր ընդհանուր օգտագործման և մշակվում համընդհանուր ուժերով: Եթե բաժանված կողմերը բավարար քանակի լծկան չէին ունենում, ապա եղածները թողնվում էին ընդհանուր օգտագործման այնքան ժամանակ, մինչև բոլորին ապահովելին քաշող ուժով:

Ազգի ընտանիքների միջև ընդհանուր էր խոտհարքը, որն իր փոքր տարածքի պատճառով ընտանիքների միջև չէր բաժանվում: Որքան էլ հետագայում աճել են նոր ընտանիքներ, այդ խոտհարքը միշտ մնացել է ընդհանուր: Քաղը կատարվում էր ընդհանուր ուժերով, և արդյունքը վիճակահանությամբ հավասար չափով բաժանվում էր: Ստ. Լիսիցյանը նշում է, որ Հալիձորից տեղափոխված Մեղիք-Փարսադանյանները Բեխ գյուղը հիմնադրելիս շարունակում էին համատեղ շահագործել Հալիձորի պղնձահանքերը, և նրանից ստացված եկամուտը բաշխվում էր ազգակից ընտանիքների միջև<sup>200</sup>:

Մեր դաշտային ազգագրական նյութերի հավաստմամբ՝ Մասունում ազգի ընդհանուր սեփականությունն էին կազմում նաև ամառանոցային բնակավայրերի մերձակա արոտավայրերը և անասնակեր թավի անտառատարածքները, անտառահատմամբ և

<sup>199</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 7-8:

<sup>200</sup> Տե՛ս Մտ. Լիսիցյան, *Զանգեզուրի հայերը*, էջ 229:

հրկիզմամբ ձեռք բերված հողակտորները, որոնք ենթակա չէին բաժանման, առանձնացման, այլ օգտագործվում էին համատեղ, ազգովի: Այստեղ հունձը ևս կատարվում էր ընդհանուր ուժերով, և արդյունքը վիճակահանությամբ բաժանվում էր ընտանիքներին: Բաժանքից հետո հարևանությամբ ապրող մերձավոր ազգակից ընտանիքները մեկը մյուսի տնից կարող էին վերցնել առանց զգուշացնելու մի որևէ գործիք, իր և նյութ ու գործածել: Դա այնքան սովորական բան էր, որ կարծես թե գործիքը, իրը կամ նյութը ընդհանուրի սեփականությունը լիներ:

«Մեկ օր կշեռք էր հարկավորվում, մյուս օրը՝ մաղ կամ հարմար աման, պարապ էշ, ձի..., հազար ու մի այսպիսի դեպքերում փոքր ընտանիքն ավելի և ավելի հաճախ կարիք էր ունենում հարևանի օժանդակության: Ամոթ էր մերժել և չտալ խնդրածը: Միայն սնահավատությունն էր թելադրում այդ փոխառությունը սահմանափակել որոշ արգելքներով, օրինակ՝ երկուշաբթի կշեռքը փոխ չէին տալիս, հում կաթը վերցնելիս պիտի ածուխ ձգեին և այլն: XIX դարի երկրորդ կեսին [Զանգեզուրում.՝ Ռ.Ն.] ընդհանուր գործածության մեջ մտավ թեյը, երբ հյուր ընդունելիս ամեն մեկը պարծենում էր, որ կարող է մեծարել տաք և քաղցր թեյով, և որովհետև հարևանության մեջ ինքնաեռ ունենում էր մեկ կամ երկու ընտանիք, ուստի այն շրջում էր մեկ հյուրատնից մյուսը: Ամեն մեկը շատ լավ գիտեր, թե ինչ ունի հարևանը, նրա իրերից և անասունից որն է ազատ...»<sup>201</sup>:

Այսպիսով, վերը ասված սովորությունները վկայում են երբեմնի կոլեկտիվ սեփականության կամ անբաժանելի ֆոնդերի գոյության մասին<sup>202</sup>: Ընդհանուր օգտագործմանն էին թողնվում մեղվանոցը, ջրադացը, դինգը, ձիթհանը, արորը, գութանը, լուծը, փոկը, տափանը, կալը, սկզբնական շրջանում արոտավայրերին մոտ կառուցված գոմը, մարագը, ցուլը, խոյը, խնոցին, աղքարերը, երկանքը, պղնձե մեծ կաթսան և այլ պարագաներ:

Ազգի ներսում արտադրության գործիքների համատեղ օգտագործման սովորությունը պահպանվել էր նույնիսկ մինչև XX դարի կեսերը: Ուրագ, կացին, գերանդի, եղան, սայլ, մինչև անգամ եզներ մի-

մյանց փոխ էին տալիս առանց վարձի ակնկալության: Նույնը վերաբերում է նաև կարասիքին՝ պղինձ, տաշտ, ամանեղեն, անկողին, կարպետ և այլն: Նահապետական կենցաղավարության մեջ տիրող փոխադարձ օգնության այս սովորությունները դարձել էին գոյատևման, մաքառման անհրաժեշտ պայմաններ, առանց որոնց հայ բնակչության արտադրական կյանքի կազմակերպումն անհնարին կլիներ:

Ազգի ընդհանուր սեփականությանը բնորոշ էին նաև անասունների ականջներին, ճակատներին, ազդրերին արվող տոհմական նշանները<sup>203</sup>: Ազգն ուներ արվող նշանաձևեր, որոնք ավանդվում էին հնից: Դրանք ծագել են մի սկզբնական նշանից: Սմբակավոր կենդանիների համար եղել է երկաթից պատրաստված դաղմա, որը կամ տվյալ ընտանիքի մեծի անվան սկզբնատառն էր և կամ որևէ խորհրդանիշ: Կրակի վրա շիկացնելով՝ դրանով դաղում էին ձիու դունչը, էշի և ջորու ազդրը: Դնչի վրա մայր ընտանիքի նշանն էր մեկ ուղիղ գիծը, որքան ընտանիքների այն բաժանվեր, այնքան գծիկներ կավելանային, բայց ըստ ավագության սկզբունքի: Ազգի ընտանիքները շահագրգռված են եղել պահպանելու նրա նշանները՝ որպես երբեմնի ընդհանուր սեփականության առհավատցյալ: Իսկ ազգի անդամները որտեղ էլ տեսնեին ազգականի տավարը կամ ոչխարը, տեր էին կանգնում, որովհետև ազգի անդամի սեփականությունը բարոյապես իրենցն էին համարում: Երբեմն էլ տոհմական նշաններ էին ներկվում, խազվում կամ փորագրվում տների պատերին, իսկ այդպիսի նշանների առկայությունը որևէ իրի, արհեստագործական արտադրանքի, ապրանքի վրա ցույց էր տալիս վերջինիս պատկանելությունը տոհմանդամ ընտանիքին: Այդպես ծագեցին արհեստագործ վարպետների նշանները, որոնք դարեր շարունակ անփոփոխ կրում էին նույն տոհմի ներկայացուցիչները: Միջնադարի հայկական շինությունների պատերին պահպանվել են վարպետների մեծ թվով նշաններ, որոնց մի մասը նույնությամբ առկա է նաև Վանի թագավորության շրջանում<sup>204</sup>: Տոհմական նշանները տարածված էին

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>202</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը*, էջ 77-78:

<sup>203</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 4, 1971, գ. Աշնակ, տ. 6, 1972, գ. Իրիկո, տ. 7-8, 1972, գ. Իրիկո, Կաթավաձոր, Շղարշիկ, տ. 9, 1973, գ. Ուջան, Լեռնարոտ, Ավան և այլն:

<sup>204</sup> Տե՛ս Կ. Դեմեծ, *Опыт изучения письма*, М., 1982, էջ 45, նաև՝ Ա. Մովսիսյան, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, Եր., 2003, էջ 45-46:

նան Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի, հատկապես քանդակագործության բնագավառներում<sup>205</sup>:

Ազգի տնտեսական ընդհանրությունը դրսևորվել է նաև արտավայրերը համատեղ օգտագործելու ձևի մեջ, երևույթ, որը թերևս պայմանավորված էր անասնապահական տնտեսության յուրահատուկ բնույթով. ազգի ընտանիքների միասնության, ազգովի ինքնապաշտպանության ապահովման, օտար, այլէթնիկ տարրերի հարձակումներին և թալանին դիմագրավելու նպատակով: Անասնապահությունը, երկրագործության համեմատությամբ լինելով տնտեսության ոչ առաջատար բնագավառ, պահպանել է կազմակերպման ավելի պարզունակ ձևեր, որոնք իրենց հերթին կարիք են զգացել այդ տնտեսությունը վարելու ընդունակ մեծ կոլեկտիվների:

Արտավայրերը և վարելահողերը կրում էին համազգի անվանումներ: Եթե մի արոտատեղ օգտագործում էին մի քանի ազգեր, ապա հստակորեն սահմանագծվում էին այդ ժամանակավոր ազգովի բնակավայրերի սահմանները: Բացի վերը նշվածից, ազգը համատեղ էր օգտագործում նաև գոմահանդ-ձմեռանոցները, որոնք գյուղացիներն ընկալում էին որպես ազգի սեփականություն: Լեռնային շրջանների շատ գյուղերում այդ գոմահանդերը վեր էին անվել ազգաթաղերի, իսկ դրանք էլ ժամանակի ընթացքում՝ գյուղական թաղի և նույնիսկ առանձին գյուղի:

Հասարակության սոցիալական շերտավորման և գույքային անհավասարության առաջացման պայմաններում, երբ արտավայրերը վարձակալման եղանակով անցնում էին առանձին ընտանիքների տնօրինությանը, աղքատ ընտանիքները կախվածության մեջ էին ընկնում արոտավայրի տիրոջ կողմից, քայքայվում էր ազգովի հարաբերություններով և միաձուլվում համազգի փոխօգնության ձևերին:

XIX դարի վերջերին գույքային շերտավորման խորացման հետևանքով արտադրության միջոցներից համազգի օգտվելու սկզբունքը սկսել էր խաթարվել: Տնտեսապես զորեղացած ընտանիքները աստիճանաբար կուտակում էին «մեծ հարստություն», այդ թվում՝

<sup>205</sup> Տե՛ս Ստ. Մնացականյան, *Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցեր և քարագործ վարպետների նշանագրերը*, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջեր 101, 104:

նաև ազգակից ընտանիքներից արտադրության մեծարժեք միջոցների հետգնման ճանապարհով: Հիմնականում դրանք հետ էին գնվում երկու-երեք եղբայրների կողմից: Վաճառքը կարող էր կատարվել միայն «ազգի» բոլոր անդամների համաձայնության դեպքում: Խստորեն պահպանվում էր գնման առաջնությունն ազգի անդամին վերապահելու իրավունքը:

Կոլեկտիվ սեփականության և ընտանեկան միասնության երբեմնի սկզբունքները հիմնականում վեր էին անվել գաղափարական կապերի: Մակայն գերդաստանների քայքայման և փոքր ընտանիքների ավելացման հետ, քանի դեռ շարունակում էին պարզունակ մնալ արտադրության միջոցները և աշխատող ձեռքերի պակաս էր զգացվում, աստիճանաբար առաջին պլան էր մղվում ազգատոհմի տնտեսական նեցուկ լինելու գործոնը: Այսինքն՝ բավարար քանակությամբ լծկան, գործիքներ և աշխատող ձեռքեր չունենալով՝ երկրագործական եռուն աշխատանքների շրջանում և աշխատատար այլ զբաղմունքների դեպքում, ազգակիցները հաճախ դիմում էին միմյանց օգնությանը:

XX դարակազմին արդեն կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով ազգի մեջ մտնող ընտանիքները մեծապես անհատականացել էին, երևույթ, որով ազգերի միասնությունը խստորեն թուլանում էր: Ընդհանուր վարելահող, արոտատեղ, շարժական և անշարժ գույք գրեթե չէին հիշատակվում: Ազգի ընդհանուր սեփականությունը հանդիսացող երբեմնի ձիթահանքը, ջրաղացը և արտադրական այլ կառույցներ կորցրել էին սեփականության ազգովի համատեղ օգտագործման իրավունքը և դարձել էին ընտանիքներից մեկի կամ երկուսի անձեռնմխելի սեփականությունը:

## **§ 2. Նյութական փոխօգնության դրսևորումները ազգատոհմում**

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայ իրականության մեջ ազգատոհմի ընտանիքները այս կամ այն չափով միմյանց հետ կապված էին տնտեսական շահերի ընդհանրությամբ, ունեցվածքի որոշ տարրերի համատեղ ժառանգմամբ, տնտեսական և արտադրական փոխօգնությամբ: Ազգակցական հարաբերությունների աստիճանը Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում տարբեր

դրսևորումներ ուներ՝ կախված այդ շրջանի պատմատնտեսական և բնաշխարհի պայմաններից:

Ազգի տնտեսական ընդհանրությունը առավել չափով դրսևորվում էր ազգակիցների նյութական փոխօգնությամբ:

Առանձնապես օգնում էին աղքատության, դժբախտության, արհավիրքների ենթարկված ազգակիցին: Ժամանակի ընթացքում փոխօգնությունը ստանում էր նաև դասակարգային գծեր և երբեմն դառնում աղքատ ազգակիցների քողարկված շահագործման ձև, բայց բնորոշը օգնությունն էր: Առաջին հերթին օգնության էին հասնում ազգի ջրավոր այրի կնոջ ընտանիքին: Օգնում էին անասնակերով, սերմացուով, պարենով, մանր անասուններով, կաթնամթերքով, պարտքերը մարելով և հագուստով՝ երբեմն հատուցելու պայմանով, երբեմն էլ՝ անհատույց: Օրինակ՝ Մասունում «հոխարտանք» կամ էլ «հոպկա ճժերը» բարոյապես պարտավոր էին նյութապես ուտքի հանել ազգակից ջրավոր ընտանիքին: Եթե լծկանն էր պակասում, նրա համար եզ էին գնում կամ էլ նրա վար ու ցանքն էին անում<sup>206</sup>:

Ազգակցական նյութական փոխօգնությունը դրսևորվում էր նաև սերնդաճի հարցերում: Մեր գրառած դաշտային ազգագրական նյութերի համաձայն՝ Մասունում ընտանիքի ամեն մի անդամի, մանավանդ տղա երեխայի ծնունդը դառնում էր ոչ միայն տվյալ ընտանիքի, այլև ողջ ազգատոհմի, անգամ համայնքի ուշադրության առարկան: Նորածնի ակընջկլեի՝ աչքալույսի, ծննդկանի «բարձին» ազգանդամ ամեն ընտանիք իր հետ բերում էր բոխչա-խոնչա՝ գաթա, եփած հավ, մեղր, կանթ (գլուխ) շաքար, երեխայի համար հագուստ, տղա երեխայի ծնվելու դեպքում՝ անգամ երինջ, գառ և այլն<sup>207</sup>:

Ամբողջ «քառասունքի» ընթացքում ամեն մի ծննդկան, լինել հարուստ թե աղքատ, բոլոր ազգականներից և հարևաններից ամեն օր ստանում էր թարմ ու սննդարար կերակուրներ: Համայնական պարտականություն էր «ծննդգավաթ» տանել՝ ուժասպառ ծննդկանին անհրաժեշտ սննդով ապահովելու համար: Անգամ տատմոր վարձը տրվում էր ծննդկանի այցելուների կողմից: Մրանով ազգը, ինչո՞ւ չէ

<sup>206</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբի մեջ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին*, «Երևանի համալսարան» (գիտական լրատու), 1977, № 2, էջ 47-50:

<sup>207</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ձեսերը*, էջ 84-85:

նաև ողջ համայնքը, ողջունում էր իր նոր անդամի աշխարհ գալը և նրա մոր խնամքն ու հոգածությունն իր վրա էր վերցնում մինչև վերջինիս ապաքինումը: Մրանով նորածինը ոչ միայն իր ծնողներին էր պատկանում, այլ նաև ամբողջ համայնքին<sup>208</sup>:

Կար նաև որբախնամքի սովորույթը: Երեխաները, որբանալու դեպքում, վերցվում էին ամենամերձավոր ազգականի, հաճախ, ազգի մեծի խնամքի տակ: Որբերի թիվը շատ լինելիս խնամակալ դառնում էին մի քանիսը: Ազգանդամ մյուս ընտանիքները պարտավոր էին մասնակցել որբի տիրապետած հողը մշակելուն, ցանքին, բերքահավաքին, կալսման ու բերքի վերամշակման և պահեստավորման աշխատանքներին: Խնամքը շարունակվում էր մինչև ամուսնությունը, իսկ հարսանեկան ծախսերը կատարվում էին նույնպես ազգի սների գործուն մասնակցությամբ: Երբ որբը փեսայանում էր, օծիտի կամ գլխագնի ծախսերը հավաքվում էին ազգից և համայնքից: Հարսանեկան ճաշկերույթը ևս ազգն էր կազմակերպում: Որբի խնամքից հրաժարվող ազգանդամը պարտավորվում էր համայնքի կողմից: Ազգական չունեցող կամ ազգականի նյութապես անկարող լինելու դեպքում միայն համայնքի տանուտերը, որին արևմտահայերը անվանում էին ռես, իսկ արևելահայերը՝ քոխվա կամ քեղխուղա, գյուղական ավագանու հետ որոշում էր որբին այլ խնամակալ նշանակել, որն էլ անտրտունջ պարտավոր էր համաձայնվել: Դա սովորական իրավունքի մեջ բարոյական կարևոր նորմ էր համարվում: Պատշաճ խնամքի դեպքում խնամակալի հեղինակությունն ազգի և համայնքի մեջ բարձրանում էր: Կոլեկտիվ ուժերով որբի համար տուն էին կառուցում, հողամաս հատկացնում և մշակում վարելահողը մինչև նրա ինքնուրույն դառնալը: Մեկականագուրկ որբի համար նախատեսվող օգնությունը տրվում էր խնամակալին պետական տուրքերը հավաքելու ժամանակ. հոգուտ որբի լրացուցիչ մթերքներ էին հավաքում համայնքի ընտանիքներից: Այդ սովորությունը Մասունում կոչվում էր թառ անել: Որբախնամքի այդ գեղեցիկ սովորույթը շարունակվեց սասունցիների՝ հայկական հանրապետությունում հաստատվելուց հետո էլ, մինչև կոլտնտեսային կարգերը, երբ այդ գործառույթն անցավ պետական կազմակերպությունների ձեռքը: Այստեղ գյուղական ընդհանուր ժողովում որոշվում էր

<sup>208</sup> Տե՛ս Ե. Լալայեան, *Նախիջևանի գաւառ*, Ա մասն, *Գողթն*, ԱՀ, գ. XII, էջ 138, *Սուշ-Տարօն*, ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 179, *Բորչալուի գավառ*, էջ 146, *Նոր Բայազետի գաւառ*, ԱՀ, գ. XVI, Թիֆլիս, 1907, էջ 37:

որքին տրվելիք օգնության չափը և հատուկ պատասխանատու մարդիկ էին նշանակվում, որոնք, կշեռքներն ու պարկերը ձեռքներն առած, յուրաքանչյուր տնից հավաքում էին որոշված պարենը, կամ դրամ՝ տուն կառուցելու համար: Օգնության չափը պայմանավորված էր օժանդակողի նյութական դրությամբ՝ ազգական ընտանիքների առավել ակտիվությամբ: Այստեղ էլ որքի համար ազգականներն ու համայնքը կուլեկտիվ ուժերով տուն էին հիմնում, իսկ կուլտնտեսությունը հողամաս էր տրամադրում և օգնում նրան մինչև ինքնուրույն կերպով տնտեսություն վարելը<sup>209</sup>:

Արևմտահայերի տնտեսական կենցաղում պահպանվում էր տարերքի ենթարկված և քրդական ու թուրքական ավազակախմբերի կողմից թալանված համագյուղացու կորուստների վերականգնման սովորույթը՝ ազգանդամ ընտանիքների առավել ակտիվությամբ: Այսպես, 1914 թ. Մասնա Գելիեզուզան գյուղում Խզրո տներից Գորքեի տունն ամբողջ ունեցվածքով թուրքերի կողմից հրդեհվելուց հետո, ազգակցական ու համայնքային օգնություններով վերականգնվեց տունը, և ընտանիքն ապահովվեց սննդամթերքով, իսկ անասունները՝ անասնակերով: Նույնը կատարվեց նաև Մեմալ գյուղում՝ Կժեի տան, Հաշկադարան գյուղում Գորքեի անասուններով լեցուն գոմի և Հրորք գյուղի Թաթո տան խոտի դեզերը այրվելուց հետո<sup>210</sup>:

Բաղեշի նահանգի Ազնվացձոր գավառում որևէ մեկի անասունների անկման դեպքում վնասը հատուցվում էր առաջին հերթին ազգակից ընտանիքների հաշվին: Մեծ կորուստների դեպքում գյուղի ռեսի և ավագների որոշմամբ միսը բաժանվում էր տների վրա, նախապես որոշված արժեքով հավաքած գումարը հատկացվում էր տիրոջը՝ նոր անասուն գնելու համար: Ընդ որում, հարուստ տներին ավելի շատ էր ուղարկվում: Կամ էլ՝ շատերը մի-մի գառ, հորթ էին նվիրում, որ պահեր, մեծացներ, տավարի տեր դառնար: Ընչազուրկ ազգականը մեկի թուխս ընկած հավը ժամանակավորապես վերցնելուց հետո դրկիցներից հավկիթներ էր հավաքում, թուխս դնում և

<sup>209</sup> Տե՛ս ՌՍՍՍ տ. 13, էջ 9, 73 և այլն: Նյութերը գրի են առնվել նաև Արարատի, Մասիսի, Էջմիածնի տարածաշրջանների սասունցիներով բնակեցված գյուղերում:

<sup>210</sup> Նյութերը մեզ հաղորդեցին 1972 թ. իրինդաբնակ ծերունիներ Խաչատուր Խափանյանը և Արթին Հարությունյանը (տե՛ս ՌՍՍՍ տ. 6, էջ 60-62, տ. 7, էջ 237-239, 252):

վառեկների ու հավերի տեր դառնում: Այս սովորույթը Թալինում, Աշտարակում վերաբնակեցված սասունցիների շրջանում պահպանվեց մինչև 1950-ականները<sup>211</sup>:

Սովորույթի համաձայն՝ Ձատկի օրերին պատանիների խմբերի կողմից ծիսական կարգով հավաքված մթերքը տարվում էր ամենաաղքատ տունը, որտեղ նույնիսկ զվարճություն էր կազմակերպվում: Իսկ Բարեկենդանի օրերին ազգականներն ու համայնքակիցները իրենց միջոցներով 2-3 շաբաթ շարունակ զվարճություններ էին կազմակերպում ունեզուրկ ընտանիքներում<sup>212</sup>:

Փոխօգնությունն ազգի և համայնքի անդամների միջև փոխադարձ պարտավորության բնույթ ուներ և սովորական երևույթ էր դարձել, այն աստիճան, որ հարևանի խնդրանքը մերժելը դատապարտելի էր համայնքի կողմից:

Ազգակցական և համայնքային օգնությունը դրսևորվում էր ուրախության և հատկապես դժբախտության ժամանակ: Դրանք ոչ միայն առանձին ընտանիքների, այլև ամբողջ ազգի ուրախությունն ու դժբախտությունն էին համարվում: Մահվան և հուղարկավորման հետ կապված մի շարք հավատալիքներում և կենցաղային արարողություններում նույնպես պահպանվել էին և այժմ էլ պահպանվում են տոհմական երբեմնի փոխօգնության շատ վերապրուկներ: Այստեղ «եթե սուզ մի, միասին կը սզային, նույնպես ալ հարսանիք մի կամ երեխայի մկրտության հանդես մի, միասին կվայելեին»<sup>213</sup>:

<sup>211</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբի մեջ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին*, էջ 47-50: Հմմտ. Ե. Լալայան, *Բորչալուի գավառ*, էջ 154:

<sup>212</sup> Ձատկի օրերին Աղձնիքի Ազնվացձոր գավառի Մագ գյուղում պատանիները կտուրների երդիկներից կախում էին վառված ճրագը՝ փոքրիկ կողովով: Պատանիներից մեկը գովերգում էր տվյալ տան տերերին, նրանց բարեմասնությունները, նաև մաղթանքներ ուղղում նորածիններին, որից հետո տանտիկնոջ կողմից ստանում նվեր՝ ձու, յուղ, բլրուր, այուր և այլն: Նվերներն ավելի առատ լինելու համար պատանիները կատակերգեր էին կատարում (տե՛ս Ռ. Նահապետյան, *Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դարում և XX դարի սկզբներին*, էջ 48):

<sup>213</sup> Տե՛ս Տիգրան Մկուրն, *Ամիսայի արձագանքները*, Կ. Ա., Ուիհոքս Նիւ Ճեր-գի, 1950, էջ 1:

Ննջեցյալի հուղարկավորությանը ամենուրեք մասնակցում էր ամբողջ գյուղական համայնքը: Բոլոր ազգականներն ու հարևանները «սգասեղան» էին ուղարկում ննջեցյալի տուն թաղման երեկոյին: Սգասեղանը բաղկացած էր լինում հետևյալ կերակուրներից ու խմիչքներից՝ փլավ, տապակած կամ խաշած հավ, լոբի (եթե պատ է), գինի, օղի և այլն: Արևմտահայոց մեջ (Բաղեշ գավառում) հուղարկավորումն ավարտվում էր հոգեհացի արարողությամբ, երբ համայնքի, առավել ևս ազգի ընտանիքները կանանց միջոցով մեկական աման ուտելիք էին ուղարկում ննջեցյալի տուն և կարեկցանքի սովորությամբ ստիպում էին սգավորներին ճաշելու՝ ննջեցյալի հարազատներին ազատելով անհարկի ծախսերից: Ազգի և հարևան կանայք *հողվերքի* կամ *էրևահողի* արարողությանը մասնակցում էին պատրաստի ուտելիքներով ու կերակուրով, որոշ դեպքերում՝ նաև իրենց ամաններով ու գոլաներով<sup>214</sup>: Սգի հաջորդ օրը սգվորի տանից մեկը գնում էր ու հրավիրում սգասեղան ուղարկողներին, և նրանց հյուրասիրում էին թե՛ ստացած և թե՛ իրենց պատրաստած կերակուրներով ու խմիչքներով: Մեռելատերը յոթ օր հաց չէր թխում և կերակուր չէր պատրաստում (Մասուն): Հարկի (հոգեհաց տալը) և յոթի ճաշկերույթի կազմակերպումը ազգի պարտականությունն էր. տանում էին հաց, սննդամթերքներ, մորթելու համար տավար, ոչխար և այլն: Մասունում, հովտային շրջաններում յոթի օրը մտերիմ ազգականները՝ որպես օգնություն՝ հրվարի, ննջեցյալի տուն էին տանում ոչխար կամ գառ, իսկ մյուսները՝ դրամ, շաքար և այլն: Յոթի օրը բերած օգնությունը կոչվում էր սըրխոջի՝ բառացի՝ օգնություն նշանակությամբ<sup>215</sup>: Քեսապում, Հակոբ Չոլաքյանի հավաստմամբ. «Անոնք եօթ օրը տունը (սգավորի) չէին ձգեր, եկող-գնացող շատ կ'ըլլար, ընտանիքին և սգատր հիւրերուն սեղանը իրենք կը պատրաստէին: Երկրորդ առաւօտ խումբ մը կ'ինէր գերեզմանատուն կ'երթային, նաև եօթնօրին, քառասունքին ու տարելիցին: Վերջին երկու առիթներուն տունը հոգեճաշ կ'ըլլար ու սեղանին կը նստէին բոլոր հարազատները: Հոգեճաշին մեծ ծախսեր ու ծեսեր չեն հիշուիր Քեսապի մէջ: Ամ-

<sup>214</sup> Ե. Լալայանի հավաստմամբ՝ այդ նույնը կատարվում էր Բորչալուի գավառում ( էջ 193-194), Գողթնում (էջ 146), Մուշ-Տարոն գավառում (էջ 191), Նոր Բայազետի գավառում ( էջ 64) և այլուր:

<sup>215</sup> ԴԱՆ, տ. 3, էջ 75-77:

նէն ընթացիկ ճաշերը կ'ըլլան միսով, սիսեռով կորկոտապուրը եւ հերիսան, միշտ պնակ մը մածունի հետ: Քառասունքի ճաշին ոմանք օղի կամ գինի կը հրանցնեն: Հարազատները գերեզմանատուն կ'այցելեն նաև տարուան հինգ մեռելոցներուն»<sup>216</sup>: Հեղինակը նշում է, որ հարազատների, դրկիցների նյութական օգնությունը պարտադիր էր: Սգի ծանրությամբ (երբ մահացողը երիտասարդ էր) կամ թեթևությամբ (երբ զառամյալ ծերունի էր) պայմանավորված՝ ազգականուհիները յոթին, քառասունքին և կամ տարին լրանալիս գնում էին սգավորի տուն՝ սգից հանելու, հետները տանելով հաց, յուղ, միրգ, շաքար, զգեստացու, նաև կարմիր գլխաշոր՝ հանգուցյալի մոր կամ կնոջ սև գլխաշորին փոխարինելու, որից հետո լվանում էին սգվորների հագուստները, տանում բաղնիք ու ուխտավայր: Իսկ տղամարդկանց սգից հանում էին քառասունքին՝ գերեզմանոցից խնկարկումից վերադառնալուց հետո. հասակավոր մի կին և մի տղամարդ իջեցնում էին նրանց գլխի սև քողերը կամ գլխի վրա շրջած վերնագետտները, ուղղում գոյակները: Սգից հանելիս ազգականների պարտականությունների մեջ էին մտնում նաև սգավորին տնից տուն հրավիրելը և զգեստացու կամ գլխաշոր նվիրելը<sup>217</sup>:

Սգավոր ազգական ընտանիքները այդ տարի «դրմուզ» կոչվող տարեմուտի հաց չէին թխում: Ազգականները նյութական օգնության էին հասնում նաև Մեծ պահքի վերջին շաբաթի ուրբաթ օրը կայանալիք մեռելոցին: Ննջեցյալի ազգականները, օրինակ՝ Բաղեշում Մեծ պահքին, «պորտե-պորտ» նախնիների հիշատակը հարգելու համար շաբաթ օրերին կատարում էին պատարագ՝ գերեզմաններն օրինել տալով և ապա տներից բերած բարիքները ներկաներին բաժանելով: Նույն օրը եփում էին կանեփից հարիսա, որը բաժանում էին նախ աղքատներին, ապա ազգականներին և հարևաններին խերանելու համար, իսկ ոմանք էլ զիշերը հաց թխելով՝ առավոտյան կանուխ բաժանում էին անցորդներին, հարևան ընտանիքներին<sup>218</sup>:

<sup>216</sup> Յակոբ Չոլաքեան, նշվ. աշխ., էջ 162-163:

<sup>217</sup> ԴԱՆ, տ. 3, 1971-1973, Արարատի մարզ, գ. Այնթափ, Վանաշեն, Տափերական, էջ 76-79:

<sup>218</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Մասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր* (հուղարկավորության ծեսեր և սովորույթներ), ԲԵՇ, 1987, թիվ 3, էջ 52-62:

Նրանք նյութական օգնության էին հասնում նաև Մեծ Պահքի վերջին շաբաթի ուրբաթ օրը կայանալիք մեռելոցին:

Հոգեհացի՝ այգը տալու (այգողքի), յոթի, քառասունքի, այգալացի (քառասունքի բոլոր կիրակնուտների), մեռելոցների, տապանաքարի տեղափոխման ու տեղադրման և այլ արարողությունների ժամանակ ազգակից ընտանիքների նյութական և ֆիզիկական օգնությունը պարտադիր էր հատկապես այն շրջաններում, որոնցում ազգանդամ ընտանիքները համերաշխ ու համախմբված մաքառում էին ինչպես բնության դաժան արհավիրքների, տնտեսության կազմակերպման, այնպես էլ օտար հարձակումների ու չարաշահումների դեմ:

Փոխօգնության ձևերից էր նաև հարսանեկան հանդեսների կազմակերպումը: «Հարսանիքը, – նշում է Գր. Վանցյանը, – առհասարակ ամենից լավ է պահպանել հայ ժողովրդի նախկին կոմունական կյանքի հետքերը, տեղ-տեղ նա պատկանում է ամբողջ համայնքին, այստեղ մասնակցում են ամենքը և յուրաքանչյուրը»<sup>219</sup>: Ամուսնության բոլոր փուլերին՝ խոսկապին, նշանդրեքին, հարսանիքին, ազգի ընտանիքներից յուրաքանչյուրն ուներ ոչ միայն որոշակի բարոյական պարտավորություններ, այլև պետք է ցույց տար նյութական օգնություն: Ինչպես հայոց այլ ազգագավառներում, այնպես էլ մեր կողմից ուսումնասիրված Աղձնիքում, նշանդրեքի ժամանակ աղջկա հոր տանը մետաքսյա թաշկինակի վրա դրվում էին փեսայի ազգականների նվերները, որոնք մեկ առ մեկ հայտարարվում էին մունետիկի (կանչողի) դերի մեջ մտած քավորի կողմից: Այստեղ ազգականներից յուրաքանչյուրը, ըստ մերձավորության և ունեցած հնարավորությանը, տալիս էր ոսկե զարդեր (մատանի, մանյակ, ականջօղեր: Դրանցում լինում էին նաև *շմսի, գյարդանի, դըրգի, բրնքներ* կոչված արծաթե և վարշաղե զարդեր) կամ խնձորի մեջ խրած ոսկե դրամներ: Նվերները գումարվում էին օժիտին, որոնք միայն հարսին էին պատկանելու: Մինչև XX դարի սկզբները պահպանվում էր աղջկա հարազատներին ևս նվերներ՝ ճրկ կամ կթխա տալու սովորույթը, որն արտահայտվում էր տղամարդկանց՝ զենք, ձի, կանանց ոչխար, զգեստ նվիրելու ձևով: Սա ամբողջությամբ մտնում էր մերձավոր ազգականների պարտականությունների մեջ: Խարզանի

<sup>219</sup> Գր. Վանցյան, *Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության*, «Մուրճ» ամսագիր, 1896, էջ 96:

շրջանում (Աղձնիք) նշանդրեքի ժամանակ հարսի հոր տուն գնում էին 20-25 հոգի, և *նշանավորներից* (նշանդրեքի գնացողներ) յուրաքանչյուրը ոչ միայն նվեր էր տանում իրենց հարսնացուին, այլև նյութապես օգնում էին փեսայի հորը՝ նշանդրեքի ծախսերը հոգալու համար<sup>220</sup>: Հարսի հարսանեկան հագուստը, որը *խլղաթ* կամ *խալաթ* էր կոչվում, փեսայի ընտանիքի կողմից նրա հոր տունն էր տարվում մինչև հարսանիքը: Խլղաթի մասն էին կազմում նաև այն նվերները, որոնք տալիս էին տղայի կամ աղջկա կողմի ազգական բարեկամները հարսնացուին տեսության գալիս:

Հարսի հոր տան հարսանեկան ծախսերը հայոց շատ ազգագավառներում դարձյալ պարտավոր էին կատարել փեսայի ծնողները: Այդ ծախսերը ևս միայն հարսանքատերը չէր հոգում, այստեղ մերձավոր ազգականների նյութական օգնությունը պարտադիր էր, իսկ հեռավորներինը՝ կամավոր: «Կանչի» միջոցով դրամական նվերներ տալով՝ թեթևացնում էին ազգական հարսանքատիրոջ ծախսերը: Հարսանիքին ազգականների և դրացիների կողմից տրվող նվերները քրդախոս տիզորանակերտցիների շրջանում հայտնի էին քրդերեն *սըրբի* բառով: Այժմ Արարատյան հովտում ապրող պարսկահայերը գործածում են նույնիմաստ *թուլուշ* բառը, որը միայն դրամով էր արտահայտվում:

Պահպանված էր նաև հարսանիքից հետո հարսին տնետուն տանելու սովորությունը, որը կա նաև այժմ: Ազգի կանայք սիրով օգնում էին պատրաստելու օժիտի մեջ մտնող գործվածքեղենը և մանվածքեղենը: Նույն Խարզանի և Բշերի գավառների հայերի շրջանում, ավանդական մի սովորության համաձայն, հարսանիքից ութ օր անառջ հարսի մայրը կլոր հացի վրա դրված մի գունդ հավա աղջիկների կամ պատանիների հետ ուղարկում էր ազգական տները՝ կանչի: Դա նախատեսվում էր ուրբաթ օրը, իսկ շաբաթ օրը գրեթե ամ-

<sup>220</sup> Նշանդրեքի համար անհրաժեշտ ծախսերը պարտավոր էր հոգալ փեսայի հայրը: Նրանք խնամու տուն էին ուղարկում նախորդ օրը խորվու ոչխար, մսացու արջառ կամ ոչխարներ, բլրուր, ձավար, յուղ, խմիչք, մրգեր, ընդէղեն: Դրանց քանակությունը կախված էր նշանավորների կամ խանդիների թվից: Նրանց հետ գնում էր նաև հատուկ խոհարար մի կին՝ ուտելիքները պատրաստելու համար (տե՛ս Ռ. Նահապետյան, *Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դարում և XX դարի սկզբներին*, էջ 47-50):



բողջ համայնքի կանայք գալիս էին օժիտ բանալու արարողությանը մասնակցելու, երբ հարսի մայրը մեկիկ-մեկիկ ցույց էր տալիս օժիտացուն: 1972-1973 թթ. մեր կողմից Թալինի և Աշտարակի ենթաշրջանների սասունցիներով բնակեցված գյուղերում գրառված դաշտային նյութերի համաձայն՝ ազգի կանայք հատուկ հրավերով մասնակցում էին նաև «օժիտ բանալու» արարողությանը: Նրանք իրենց հետ բերում էին նվերներ, որոնք համալրելու էին օժիտը<sup>221</sup>: Նույն օրը հավով, կանթ շաքարով, խնձորով գնում էին քավորի տուն՝ կանչի: Այնուհետև վերջինս գալիս էր թանկարժեք նվերներով:

Արևմտահայոց, առավել չափով սասունցիների մեջ պահպանվում էր նաև այլ սովորություն. այն ընտանիքը, որի բնակարանային հարմարությունը չէր ներում նորապսակ ամուսնացած զույգին առանձին քնելատեղ հատկացնելու համար, նրանց թողնվում էր ամբողջ տունը, իսկ ընտանիքի մնացած անդամները տեղափոխվում էին ազգակցի օջան (հյուրասենյակը), երբեմն նույնիսկ համայնքային հյուրանոց օջան: Սովորության համաձայն՝ այնտեղ ազգակցի կամ հարևան ընտանիքների կողմից անկողիններ ու սննդամթերք էին տրամադրվում: Աղձնիքի Խարզան, Բշերի, Մլիվանի շրջաններում ցորենը շուկա հանելու ժամանակ, երբ տարվում էր Սղերդ կամ Դիարբեքի, ազգակիցները միմյանց գրաստներ էին տրամադրում: Հացահատիկը շուկա տեղափոխելիս հայ տղամարդիկ կազմակերպում էին քարավան՝ անվտանգությունն ապահովելու նպատակով՝ գաղտնի զինվելով: Փոխօգնության սովորության համայնքային բնույթը պայմանավորված էր ոչ միայն դարավոր, ավանդական սերտ փոխկապվածությամբ, տնտեսական ընդհանուր շահերով ու համագործակցությամբ, այլև գյուղական բնակավայրերի մի մասը ամբողջությամբ ազգակցի ընտանիքներով բնակեցված լինելու հանգամանքով<sup>222</sup>:

Խորհրդային տարիներին սովորություն էր դարձել բանակ զորակոչվածին նվիրված կերուխում կազմակերպել, որի ժամանակ մտերիմ ազգական ընտանիքները 10-30 ուրբի «նվեր» էին տալիս երիտասարդին, հետև էլ դնում էին բրդյա գուլպա, ձեռնոց, խաշած հավ, գայթա և այլն: «Բարի ճանապարհի» սովորությունը: 1950-1960-ական

<sup>221</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորություններն ու ծեսերը* (պատմաազգագրական ուսումնասիրություն), էջ 82:

<sup>222</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 41-43:

թթ. դեռ պահպանվում էր նաև սփյուռքահայության որոշ հատվածների շրջանում նույնպես: Արտագնա աշխատանքի մեկնող քեսապցու ազգակցի և կամ դրացու ընտանիքին այցելության էին գնում (ով ինչով կարող էր. մրգեր, ձուկ, որսի թռչուն և այլն) բարեմաղթանքներով ճանապարհի գցելով<sup>223</sup>:

Հայ բնակչությունը, որ միշտ առանձնացել է ավանդական սովորությունների պահպանողականությամբ, բարոյա-էթիկական կապերի առանձնահատկությամբ, ոչ միայն տոկունությամբ դիմակայեց դաժան փորձություններին՝ 1988 թ. աղետալի երկրաշարժին և Արցախյան պատերազմի մուր ու ցուրտ, գրեթե սովի պայմաններին, այլև ազգապահպանման փայլուն օրինակ ցուցաբերեց: Ծանր կորուստներ կրած ընտանիքների ողջ մնացած անդամների վերամիավորումը դարձավ պարտադիր երևույթ: Մոտ և հեռու ազգականներն իրենց խնամքի տակ վերցրին հարազատների որբացած երեխաներին, քույրերին, ծերունիներին և ստեղծվեցին նոր, ոչ լիարժեք ընտանիքների ձևեր: 1992-2009 թթ. ժամանակահատվածում երկու ծնողներին կորցրած 1297 երեխաներ խնամակալվեցին ազգականների կողմից և երբևիցե չհանձնվեցին մանկատուն<sup>224</sup>: Ազգականներին օգնության ձեռք մեկնեցին ինչպես հանրապետությունում գտնվող մոտ և հեռու, այնպես էլ արտերկրի հարազատները:

Ընտանե-ազգակցական հարաբերությունների և փոխօգնության կարևոր գործոն է նաև բնակության վայրի մոտ կամ հեռու գտնվելու հանգամանքը և անհատի զգացմունքային ու հոգեբանական հակվածությունը ավանդական սովորությունների պահպանման նկատմամբ<sup>225</sup>: Մ. Գաբրիելյանն իր «Հայկական ընտանիքն անցումային շրջանում» ուշագրավ աշխատության մեջ հանգել է այն եզրակացության, որ գյուղերում, ի տարբերություն քաղաքային միջավայրի, ազգակցական շփումները, օգնությունն ու փոխօգնությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր պայմաններում համեմատաբար ավելի ար-

<sup>223</sup> Տե՛ս Յակոբ Զուլպեան, նշվ. աշխ., էջ 161-162:

<sup>224</sup> Տե՛ս Ա. Մնացականյան, *Մանկատան շրջանավարտների սոցիալականացման էթնոմշակութային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում*, պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012,:

<sup>225</sup> Տե՛ս Թ. Զաքարյան, *Գյումրիի ներքնտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների մի քանի հարցեր*, էջ 210:

տահայտված բնույթ էին կրում, բայց աստիճանաբար մղվում էին տոնածիսական համակարգ՝ հարսանիք, թաղման ծեսեր, տարբեր տոներ ու արարողություններ, առտնին կյանքում ստանալով ավելի շատ խորհրդանշական նշանակություն<sup>226</sup>:

Այսպիսով, ազգակցական տնտեսական միասնության՝ միմյանց նկատմամբ հարեհաս լինելու գիտակցությունից էր բխում ազգականների ու բարեկամների մասնակցությունը և՛ սգո, և՛ ուրախության բոլոր արարողություններին, համատեղ ջանքեր պահանջող բոլոր խնդիրների լուծմանը:

### **§ 3. Տնտեսական-արտադրական ազգովին ընկերակցությունների կազմակերպման մնացուկների դրսևորումները**

Հայաստանում դեռ XIX դարում գյուղացիական տնտեսությունը կազմակերպվում էր գերդաստանների կամ ազգակից ընտանիքների համատեղ ջանքերով, իսկ ավելի բնորոշը հարևանական սկզբունքով կազմակերպվող արտադրական ընկերակցությունների կազմակերպման եղանակն էր: Գերդաստանների տրոհումից առաջացած դուստր ընտանիքները, դառնալով ինքնուրույն տնտեսական միավորներ, միմյանց միջև պահպանում էին գերդաստանական տնտեսական և արտադրական համատեղ գործունեության, փոխադարձ օգնության հարաբերությունները: Ընդ որում, դա իրականացվում էր առավել աշխատատար պրոցեսների՝ անտառահատական և բրնձային երկրագործության՝ վար ու ցանքսի, հերկի, արտերը պարարտացնելու, բերքահավաքի, կալսոցի, մթերքի վերամշակման, անասունների արածեցման, ընդհանուր խոտհարքը հնձելու, հաց թխելու, բնակաշինարարության՝ հիմքեր փորելու, հողանք կատարելու, շինանյութեր տեղափոխելու, տարերային աղետների՝ ձնահյուսքի, հրդեհների, փլուզումների հետևանքների վերացման, վերականգնման և այլ դեպքերում:

Ազգակցական կապերը Հայաստանի տարբեր շրջաններում տարբեր ձևերով են արտահայտվել: «Ազգ» արենակցական կապերն ավելի հաստատուն բնույթ են կրել հատկապես լեռնային, նախալեռ-

<sup>226</sup> Տե՛ս Մ. Գաբրիելյան, *Հայկական ընտանիքն անցումային շրջանում* (ազգաբանական ուսումնասիրություն), Երևան, 2005, էջ 37-38:

նային և մասամբ՝ անտառաշատ շրջաններում<sup>227</sup>: Մրա հիմնական պատճառն այն էր, որ հին նահապետական հարաբերությունների կենսունակության պայմաններում շարունակում էին պարզունակ մնալ աշխատանքի գործիքներն ու միջոցները, աշխատող ձեռքերի պակաս էր զգացվում, առաջին պլան էր մղվում ազգի ընտանիքների՝ միմյանց տնտեսական նեցուկ լինելու հանգամանքը:

Երկրագործա-անասնապահական համալիր տնտեսաձևը Հայկական լեռնաշխարհի բարդ, երբեմն դաժան բնակլիմայական և աշխարհագրական պայմաններում, աշխատանքի գործիքների ու միջոցների պարզունակության և պետականության երկարատև բացակայության, ռազմաֆեոդալական հետամնաց հասարակությունում հնարավոր էր իրագործել միայն սոցիալական կազմակերպվածությամբ, արտադրական ընկերակցությունների ստեղծման, տնտեսությունների փոխադարձ օգնության կազմակերպման եղանակով: Տոհմային հասարակությունից ժառանգված նման շատ վերապրուկներ հարատևեցին մինչև XIX դարը և անգամ XX դարի սկզբները: Աշխատանքային կոլեկտիվիզմը, փոխօգնության ավանդական ձևերը, հասարակական գործերի համատեղ որոշման սովորությունները, արտադրության որոշ միջոցների և հողային ընդհանուր սեփականությունն օգտագործելու ձևերը ազգի և համայնքի հարաբերությունների ամենաբնորոշ կողմերն էին:

Կոլեկտիվ ուժերով գյուղատնտեսական աշխատանք իրացնող խումբը Հայաստանում հայտնի էր մեծ մասամբ հարակաշ կամ համկալ, տանստանու, աղսընկեր, խոճկամուզ, փոռնակ, շրիք-շերիք (արաբերեն է և նշանակում է ընկեր), օրթաղ (թուրքերեն է, ընկեր նշանակությամբ), կիսովի ընկեր, ընկերովի, իլախի, կիսար, բաժնեկից անվանումներով<sup>228</sup>: Միջնադարյան աղբյուրներում այդպիսի ընկերակցությունը կոչվել է «հաղկից»<sup>229</sup>: Այսպես օրինակ՝ 1251 թ. Կոս-

<sup>227</sup> Տե՛ս Ռ.Նահապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ)*, ԲԵՀ, 1979, թիվ 1, էջ 198-206:

<sup>228</sup> Տե՛ս Վ. Բոթյան, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Երևան, 1972, էջ 304-321:

<sup>229</sup> Հայ բարբառներում պահվել է «հախկ» բառը՝ «ընկերակից գութանավորներից ամեն մեկին ընկած վարելու հողի բաժին» իմաստով (տե՛ս Ստ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Երևան 1944, էջ 12):

տանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսի խրատական կանոններից մեկում զգուշացվում է, թե հանդերձյալ կյանքում մեծ պատժի կարծանանան բոլոր նրանք, ովքեր այս կյանքում կզրկեն, կխաբեն ու կենեզեն իրենց ընկերներին: Արվեստակիցների, այսինքն՝ միևնույն արհեստով զբաղվող և համքարության մեջ ընդգրկված արհեստավորների, զինվորակիցների, գևողների ու վաճառողների հետ միասին կանոնի մեջ հիշատակվում են նաև «հաղկիցք» և «խաբկիցք» տերմինները: Այնտեղ ասված է. «Ի գրկանաց և ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստոնեայքն և ի նենգելոյ զիրեարս՝ արք և կանայք, հաղկիցք, և խաբկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, գնաւոք և վաճառաւոք, զի որ մարմնական իրաւք զրկէ բոնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ և յաւիտենական կենաւքն»<sup>230</sup>:

**Երկրագործության բնագավառ** – Կոլեկտիվ, երբեմն անգամ համայնական ձևի աշխատանքն ավելի զանգվածորեն կիրառվում էր երկրագործության ասպարեզում: Բավարար քանակությամբ լծկան, գործիքներ, սերմացու, աշխատող ուժ չունենալով՝ արտադրական, աշխատանքային ընկերակցություններ էին կազմակերպում: Դրանք հաճախ համընկնում էին ազգակցական թաղի մեջ մտնող ընտանիքների խմբի հետ:

Երկրագործությունը եղել է հայ ժողովրդի տնտեսության առաջատար ճյուղը: Այն անցյալում մշտապես արտադրական միջոցների և աշխատավոր ձեռքերի միավորման և աշխատանքի կոլեկտիվ կազմակերպման կարիքն ուներ: Իհարկէ, այդպիսի աշխատատար տնտեսություն վարելը անցյալում ավելի հեշտ էր իրագործել նահապետական մեծ ընտանիքների կողմից: Միայն գերդաստանական տներն էին, որ ապահովված էին աշխատանքի գործիքներով, լծկան անասուններով, բավարար թվով աշխատուժով և պատահական չէ, որ մեծ ընտանիքների տնտեսական առավելությունը խաղում էր վճռական դեր երկրագործական աշխատանքների հաջող կատարման համար: Այդ է պատճառը, որ կոլեկտիվ աշխատանքի տվյալ ինստիտուտի առաջանալը հիմնականում կապում են գերդաստանների քայքայման հետ<sup>231</sup>:

<sup>230</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, *XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին*, էջ 128:

<sup>231</sup> Տե՛ս Ա. Բոբակիձե, *Супруги как одна из форм эксплуатации в дореволюционной Грузии*, «Мамохипепи», том II, 1951, с. 409, 418; Т. Чиковани, *Формы взаимопомощи у цалских урумов*, «Кавказский этнографический сборник», Тбилиси, 1972, с. 92.

Երկրագործական աշխատանքների ժամանակ փոքր ընտանիքները համախմբվում էին ոչ միայն միջնադարում, այլև XIX-XX դարերում<sup>232</sup>:

Գերդաստանների տրոհումից առաջացած անհատական փոքր ընտանիքները, ինքնուրույն տնտեսական միավորների վերածվելով և կորցնելով երբեմնի արտադրական ու սպառողական միասնությունը, անկարող էին գոյատևել առանց տնտեսական և արտադրական փոխադարձ օգնության: Ահա թե ինչու երկրագործական բոլոր աշխատանքների ժամանակ կատարում էին մարդկային ուժերի, լծկան անասունների և գործիքների միավորում:

Հայաստանի լեռնային սակավահող շրջաններում նոր հող յուրացնելու նպատակով օգտագործվում էր անտառահատման համակարգը, և այդ նույն սակավահողության պատճառով լանջային տեղանքներում ստեղծվում էին դարավանդային արտեր<sup>233</sup> որոնց ժամանակ պահանջվում էր հարևանությամբ ապրող մերձավոր ազգականների տղամարդկանց և կանանց կոլեկտիվ, համատեղ ծանր աշխատանք: Ինչպես հավաստում են մեր դաշտային ազգագրական նյութերը, Աղձնիքում, օրինակ, վարուցանքի ժամանակ եզները բաղել էին անում, այսինքն՝ մի-մի եզ ունեցող ազգակից տնտեսությունները համախմբում էին իրենց քաշող ուժերը, կազմում էին մեկ կամ մի քանի լուծ: Մասունի, Մոկսի և Բիթլիսի վիլայեթի այլ լեռնային գավառների գյուղերում վարուցանքի ժամանակ ազգակիցները միավորելով իրենց լծկան անասունները, արորն ու լծասարքերը՝ կազմակերպում էին **ցանքսի գուրարար**: Արևելահայ իրականության մեջ ևս բնորոշ էր նմանատիպ ընկերակցությունների կազմակերպումը: Տավուշում՝ Իջևան-Շամշադին-Դիլիջան շրջաններում ազգակից ընտանիքները մեկական զույգ լծկանով և կամ մեկական եզներով և մեկական արորով համկալ էին դառնում<sup>234</sup>: Նման դեպքերում մերձավոր ազգականները համատեղ ուժերով, հերթականությամբ կատարում էին վարն ու ցանքը: Վարն սկսվում էր ազգանդամի՝ ձյունից

<sup>232</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, *XIV-XV դդ. Հայկական գյուղական համայնքի մասին*, էջ 127:

<sup>233</sup> Այդ մասին ուշագրավ տեղեկություններ տե՛ս Թ. Արծրունի, *Պատմություն Տանն Արծրունեաց*, էջ 202-203:

<sup>234</sup> Տե՛ս Վ. Բրդյան, նշվ. աշխ., էջ 306:

առաջինն ազատված արևահայաց հողից, որպեսզի հողը քեշից դուրս չընկներ<sup>235</sup>: Ուստի նման պայմաններում հերկը թելադրում էր ընկերակցություններ ստեղծել<sup>236</sup>: Աշնանացանի ժամանակ 5 և ավելի

<sup>235</sup> Աղձնիքի հովտային շրջաններում՝ Արզն (Նարգան), Նիկեկերտ (Միլվան), աշնանացան ցորենի մշակության ժամանակ հողը հերկում էին երկու անգամ՝ կրկնավարի նպատակով, իսկ նույն հողում նաև բոստանային կուլտուրաների և աշնանային ցորենի մշակության համար՝ 4-5 անգամ: Դաշտային աշխատանքներում հողահանդակը ցանքի համար նախապատրաստելը ամենաաշխատատարն էր: Ցանքը սովորաբար անում էին 1 գույզ լծկանով և փոքր արոթով, մինչդեռ գարնանացանի և աշնանացանի հերկը, տեղանքի դիրքից և հողի տեսակից կախված, պահանջում էր կրկնավար:

Կրկնավարը անում էին այնքան անգամ, մինչև որ մոլախոտերն ամբողջապես վերանային: Ցուրաքանչյուր վար իրեն (երես) էր կոչվում: Հերկոցն ուներ երկու սեզոն՝ գարնան վերջերից մինչև ամռան կեսերն ընկած ժամանակամիջոցը և աշնանը: Հերկի մեծագույն մասն արվում էր առաջին սեզոնում: Հողի արևահարումը համարելով բերքատվության կարևոր երաշխիքներից, որոշ ընդմիջումներից հետո հերկատեղերը կրկնակի, երբեմն եռակի ու քառակի էին վարում: Ցանքի շրջանը հայտնի էր ցանոց և հերկինը՝ հերկոց անունով: Գութանի հերկածը հաճախ 1-2 անգամ արոթով կրկնավար էին կատարում: Առաջին վարը, որ կատարվում էր հողի փափուկ ժամանակին, կաթնավար էին անվանում, իսկ կրկնավարը, որ շրջվածք էներ էր կոչվում, նպատակ ուներ հողը փափկեցնել, ազատել մոլախոտերից և նախապատրաստել ցանքսին: Սովորաբար հերկելն սկսում էին անձրևից հետո: Վարը օրվա ընթացքում երկու, իսկ երկար օրերին՝ երեք հերթով էր կատարվում: (Տե՛ս ԴԱՆ, տ. 3, Արարատի մարզ, գ. Վանաշեն, Այնթափ, 1971-1973, էջ 120-123):

<sup>236</sup> Առաջին վարը՝ ցրտահերկը, կատարում էին փետրվարին, որը կոչվում էր քրաբ. երկրորդ վարը կատարում էին մարտին՝ խաչաձև կրկնավար կատարելով, այն կոչվում էր դգիսին: Կրկնավարի ժամանակ սերմում էին գարնանացան ցորենը կամ գարին: Երրորդը՝ կատարվում էր ապրիլի կեսերից մինչև մայիսի վերջերք: Երրորդ վարը դարձյալ կրկնավար էր՝ զլգլի և կորեկի արտերը սերմելու համար: Այդ վարն էլ կոչվում էր սեզիսն, իսկ չորրորդը՝ չարգիսը, կատարում էին մայիսի կեսերից հետո: Չորրորդ անգամ վարում էին սեխի, ձմերուկի, վարունգի, բամբակի արտերը. վարը պետք է ավարտվեր մինչև անձրևներ տեղալը՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և կոչվում էր խուլբար վար: Այն կատարում էին բերքահավաքից հետո (տե՛ս նույն տեղը):

տնտեսություն՝ յուրաքանչյուր տնից մի աշխատավոր, իր լծկանով միավորվում և օգնության էր գնում այն հարևանին, որի աշնանացանը ուշանում էր: Տիգրան Մկուռնը հավաստում է, որ Դիարբեքի մոտակա հայկական գյուղերում... «բնագրումով իրարու օգնող նեցուկ էին: Եթե մեկի եզը հիվանդանար, ամենեն մոտ դրացին փոխ պիտի տար իրենն՝ իր արտն հերկելեն վերջ, որչափ կարելի է շուտ... ժամանակի սղության կամ աշխատության վարձատրություն գոյություն չունեի ասոնց համար»<sup>237</sup>: Աղձնիքի Ալմատինա շրջանի Գալիոկ գյուղից Հ. Մերջիկյանը հավաստում է, որ իրենց գյուղում որևէ ազգանդամ ընտանիքում եթե պակասեր լծկան անասունը, նրա համար եզ գնելու նպատակով ազգակից ընտանիքներից դրամ էր հավաքվում: Եթե ազգակիցները դժվարանում էին կազմակերպել նյութական այդ օգնությունը, իրենց հողամասերի հետ վարում և ցանում էին նաև նրա արտերը: Այստեղ կուլեկտիվ աշխատանքը երևում է նաև սերմանելու ժամանակ, երբ ազգակից սակավ աշխատավոր ձեռքեր ունեցողի տան ցորենի հողը առաջինն էր բացվում և գտվում ու տեղափոխվում արտերը<sup>238</sup>:

Գութանը թանկ գործիք էր, և ամեն ընտանիք ունենալ չէր կարող: Այս դեպքում հարակաշի ազգանդամները համատեղ ուժով գութան էին գնում և ստեղծում իրենց արտադրական միավորումը: Եթե նրանք միավորվում էին գութանատիրոջ շուրջը, տերն ստանում էր որոշակի առավելություններ. առաջինը նրա հողը պետք է վարվեր, իսկ հողը վարելու հաջորդականությունը կախված էր հարակաշում յուրաքանչյուրի ունեցած ներդրումից: Հարակաշի անդամների հողը վարելուց հետո՝ մի օր էլ անվճար օգնության էին հասնում սակավ աշխատուժ ունեցող կամ բոլորովին չունեցող ընտանիքին: Անվարձ հերկելու գործողությունը չէր անցնում կես օրվանից: Հիմնականում այրի, տկար կնոջ հունձը, կալսումը, փոխադրումներն էին կատարում: Գոյություն ուներ մատաղի վար կոչված սովորույթը. ընկերությունը վարում էր նաև հարակաշի մեջ չմտնող ընտանիքի հողերը որոշ գումարով, որով գնում էին մատաղացու անասուն և աշխատանքի ավարտը նշում մատաղացուի զոհաբերմամբ՝ այն համայն-

<sup>237</sup> Տիգրան Մկուռն, նշվ. աշխ., էջ 11:

<sup>238</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ*, էջ 201:

քի ընտանիքներին բաժանելով: Ըստ սովորության իրավունքի չափանիշների՝ ում հողը վարում էին, տվյալ ընտանիքը պետք է հոգար հարակաշի անդամների սնունդը: Երբ հողատերը ժլատություն էր ցուցաբերում, արժանանում էր համայնքի ծաղրանքին ու նախատինքին: Հարակաշը դիտվել է որպես արտադրական միավորումների կամ կոոպերացիաների նախնական ձև:

Նման ընկերակցությունների ձևերի ազգագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտելու հասարակական հնավանդ կազմակերպությունների գոյակցության ձևերը և դրանց խաղացած դերերը հայկական գյուղում<sup>239</sup>:



Նկ. 1. Վասպուրական, XX դ. սկիզբ: ՊՊԹ, նեգ. № 2144

Համաձայն Վ. Բոդյանի և մեր դաշտային ազգագրական նյութերի՝ Արևմտյան Հայաստանում՝ Վասպուրականում, Մոկսում, Արձեշում, Սասունում և այլուր, մինչև կոլտնտեսային կարգերը նրանց վերաբնակիչներով բնակեցված Թալինի, Աշտարակի շրջաններում այդ

<sup>239</sup> Հիմնախնդիրը լավագույնս ուսումնասիրել է նշանավոր ազգագրագետ Վ. Բոդյանը՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» անչափ արժեքավոր աշխատությունում: Հարակաշ ձևով կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման մասին ուշագրավ նյութեր են պարունակում Ս.Եղիազարովի ուսումնասիրությունները, մասնավորապես՝ Ս. Եգիազարովի «Административно-экономический очерк сельской общины в Эриванской губернии. «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1887, с. 50-53 և այլն»:

ընկերությունները կազմվում էին ազգակցական սկզբունքով, մինչդեռ Արարատյան հովտի պարսկահայերի մեջ, ընդհակառակը, նախընտրելի էին օտարները, որոնք իրավապահանջության տեսակետից ավելի համեստ էին<sup>240</sup>: Ազգակցական սկզբունքով կազմակերպված հարակաշ ընկերակցությունը Վասպուրականում տե՛ս նկ. 1:

Ազգի ընտանիքների կողմից կոլեկտիվ հողամշակման այս ձևը հայոց մեջ «ազգ» արենակցական խմբի ամենավաղ շրջանին բնորոշ միասնական հողօգտագործման և հողատիրության մնացուկների պատմական ոչ վաղ անցյալում գոյություն ունենալու վկայությունն է: Այդ մասին է վկայում նաև ազգակից ընտանիքների ոչ միայն տների, այլև հողերի կից լինելը, մի երևույթ, որը չէր խախտվել անգամ այնտեղ, որտեղ ազգակցական թաղերը վերածվել էին հարևանական կցթաղերի: Ս. Հակոբյանը գրում է, որ Միջնադարյան Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների «գյուղական համայնքներում դեռևս XV-XVIII դդ. տիրապետող ձևը հողի կոլեկտիվ-համայնական սեփականությունն էր»<sup>241</sup>: Անհատական ընտանիքների կողմից ազգովի մշակված որոշ հողային տարածքների, ինչպես նաև տնտեսական կառույցների և գործիքների համատեղ օգտագործումը նպաստում էր մայր գերդաստանից ճյուղավորված ընտանիքների միջև տնտեսական շահերի ընդհանրությունների պահպանմանը: Այդ ընդհանրությունն իր արտահայտությունն էր գտնում հողերի համատեղ կոլեկտիվ մշակման, անասունների համատեղ արածեցման, կաթնատնտեսության համատեղ կազմակերպման, փոխօգնության ամենատարբեր ոլորտներում:

Փոխադարձորեն իրար աշխատավոր տալով հունձ կատարելը շատ տեղերում հայտնի էր աղսընկերություն անվամբ, այլ տեղերում՝ ընկերովի, համփա (պարսկերեն է, նշանակում է ընկեր)՝ հարակաշ նշանակությամբ: Համփաները կազմվում էին հիմնականում ազգանդամ ընտանիքներից:

Սասունում հացահատիկային մշակաբույսերի՝ գլգլի և կավարսի բերքահավաքի ժամանակ իրավիրվում էին ազգի ջահել աղջիկներն ու հարսները, որոնք էլ առանց վարձատրվելու, կոլեկտիվ կատարում էին հունձը: Աշխատանքն ուղեկցվում էր աշխույժ երգերով

<sup>240</sup> Տե՛ս Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 309:

<sup>241</sup> Ս. Հակոբյան, *Գյուղական համայնքը 15-18-րդ դարերում*, էջ 27:

և ավարտվում առատ հյուրասիրությամբ: Աղձնիքի հարավային շրջաններում՝ Ղուբին և շրջակա այլ գյուղերում, ցորենի հունձը կատարվում էր հարակաշի կարգով, առանց վարձատրության, հերթականությամբ, երբ օգնության էին գալիս ինչպես ազգակիցները, այնպես էլ ոչ ազգակից հարևանները<sup>242</sup>: Համանման միավորում պահանջվում էր կալսման ժամանակ, որը Աղձնիքի գրեթե ողջ տարածքում կատարվում էր եզներով՝ տրորելու եղանակով: Այն Սասունում հայտնի էր կոռի, իսկ նրա հարավային շրջաններում գելա անունով<sup>243</sup>: Այստեղ ազգական-հարևանները միավորում էին իրենց լծկան անասունները և հերթականությամբ կատարում կալսոցը: Գալիոկ և շրջակա մյուս գյուղերում կալսելու և մաղելու աշխատանքները կատարվում էին կոլեկտիվ ջանքերով, համայնքի լայն աջակցությամբ, 1-2 գիշերվա ընթացքում: Կալսվածը երկար դեզ էին անում, և թիերով քամուն տալու՝ էրնելու միջոցով ցորենը առանձնացվում էր հարդից: Այս աշխատանքը արագ՝ մեկ կամ երկու գիշերվա ընթացքում, ավարտելու համար՝ արդեն ոչ միայն ազգի ընտանիքները, այլև որոշ դեպքերում համայնքի տղամարդիկ և կանայք գնում էին օգնության: Աշխատանքը սկսվում էր արևամուտից մեկ ժամ առաջ և տևում մինչև արևածագ, որովհետև փչող քամին սկսվում և ավարտվում էր այդ ընթացքում: Ընդ որում, էրնելու աշխատանքը կատարում էին միայն տղամարդիկ, որոնք մեկի կալի գործն ավարտելուն պես անցնում էին հաջորդի կալը, որից հետո կանայք մաղում էին, իսկ երիտասարդները շալակով ցորենը տեղափոխում տները: Գործն ավարտելիս աշխատավորները հյուրասիրվում էին: Այս աշխատանքը հայտնի էր կալը քամին տալ անունով<sup>244</sup>: Համախմբվածության այս ձևը մասամբ պայմանավորված էր նաև գյուղական բնակավայրերի փոքրությամբ:

Այստեղ վանքերի համար կիրառվող զուբարայի մասին էլ Ս. Միրախորյանը թողել է հետևյալ նկարագրությունը. «Յուրաքանչյուր

<sup>242</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 230, 251, տ. 6, էջ 61, տ. 7, էջ 274:

<sup>243</sup> Այն կատարվում էր 8-10 եզներ կամ գոմեշներ կողք կողքի, միմյանց կապված կալի կենտրոնում պտտեցնելու եղանակով: Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիք* (պատմաաշխարհագրական ակնարկ), «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 169:

<sup>244</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ*, էջ 201:

տուն թե՛ աղքատ լինի և թե՛ հարուստ, տարեկան հնձոց ծամանակը մեկ օր մարդ մը տալ պարտի վանուց արտերն քաղելու համար. ոմանք դրամ կտան, փոխանակ մարդու: Վանուց համար այսօրինակ աշխատությունք կսվի զուպարա, որի ընթացքում խիստ ուրախություն տեղի կունենան. տավուլ և զուտնան իրենց պաշտոն անհանգիստ կվարեն, և նույն օրը վանքն կկերակրե զաշխատավորս: Կանայք ևս կգան վանուց զարհներն քաղել ի պահանջել հարկին»<sup>245</sup>: Այլ էր զուբարան աշխատավոր բնակչության շրջանում. այն կատարյալ փոխօգնություն էր, որի դեպքում իշխում էր կոլեկտիվ համերաշխությունն ու այն գիտակցությունը, որ այդ կոլեկտիվ աշխատանքը այսօր կամ վաղը կազմակերպվելու է յուրաքանչյուր մասնակցի համար:

Իրականում, 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին խախտվում էին համայնքային և ազգակցական կապերը, փոխօգնության սովորույթի մեջ էլ վարագուրվում էր շահագործման միտումը: Վերը նշված կոոպերացված աշխատանքների նախնական ձևերի կողքին գոյատևեցին նաև ավելի ուշ՝ դասակարգային հասարակությանը բնորոշ կոոպերացված ձևեր, որոնք աստիճանաբար դուրս էին մղում թուլացող մինչդասակարգային փոխօգնության ձևերը: Այդպիսի միավորում էր կիսրարությունը, որի սկզբունքը հետևյալն էր. Սասունում, «եթե մեկն արտ ուներ, բայց սերմացու և լծկան չուներ, ապա նա պայմանավորվում էր ունեցողի հետ, նրա լծկանով ու սերմով միասին արտը վարում էին, ինքը՝ արտատերը ջրում էր, խնամում, հնձում, միասին կալսում էին, բերքը հավասար բաժանում և հակառակը»<sup>246</sup>: Եթե Սասունում հողատերը մասնակցում էր հողագործական բոլոր աշխատանքներին, ապա Ազնվացձոր գավառում (Բաղեշ) ոչ, և ստանում էր ամբողջ բերքի կեսը: Այս նույն գավառում բնորոշ էր նաև երկու տնտեսությունների կողմից սերմացուն հավասարապես տրամադրելը<sup>247</sup>: Աղձնիքի հարավային շրջաններում այդ ձևը հայտնի էր *իջարի* անունով, որի սկզբունքը հետևյալն էր. հողը իջար վերցնողը իր լծկանով, գործիքներով, սերմով վարում, ցանում,

<sup>245</sup> Ս. Միրախորյան, *Նկարագրական ուղեորություն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի*, Կ. Պոլիս, 1885, մասն Գ, էջ 213-214:

<sup>246</sup> Ե. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 78-79:

<sup>247</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. № 8, էջ 5, 50:

մշակում և արդյունքը հավաքելուց ու կալսելուց հետո, բացի պետական տուրքից՝ *հասլից*, որը կազմում էր բերքի 1/8 մասը, հողի տիրոջն էր տալիս բերքի 1/16 մասը<sup>248</sup>: Արևմտյան Հայաստանի հարավային հովտային այս շրջաններում աշխատանքի կազմակերպման ձևերից մեկը դարձել էր վարձու բանվորներ ունենալը, որը պայմանավորված էր նախ՝ Մերձավոր Արևելքի երկրներին մոտ լինելով, հետևապես՝ ապրանքադրամական հարաբերությունների ներֆափանցմամբ, համայնական, առավել ևս ազգակցական կապերի թուլացմամբ<sup>249</sup>:

<sup>248</sup> Պատմեց 1893 թ. ծնված, Մասունի Բըրա գյուղացի, 1946 թ. Արտաշատի շրջանի Այնթափ գյուղում հաստատված Աբրահամ Գասպարյանը (ԴԱՆ, տ. № 12, 1972, էջ 103, 112):

<sup>249</sup> Այստեղ վարձու բանվորը կոչվում էր մրիբա, որը ցրտահերկից (դեկտեմբերի կեսերից) մինչև չորրորդ վարի ավարտը (մայիս ամիսը) վար ու ցանքի աշխատանքների համար իր ընտրությամբ ստանում էր այդ տարվա համար 20-30 կոտատեղ հողամաս, սերմացու ցորեն և տիրոջ լծկանով ու գործիքներով կատարում վարուցանքը: Հաճախ սեզոնային բանվոր էր վարձվում նաև բերքահավաքի ու կալսոցի ժամանակ և վարձատրվում էր բնամթերքով: Գալիոկ գյուղում մրիբան պարտավորվում էր մասնակցել շուրջ տարին կատարվող վարուցանքի, բերքահավաքի ու կալսոցի աշխատանքներին, որը սկսվում էր սեպտեմբերից մինչև աշնանացանի վարի ավարտը՝ նոյեմբեր ամիսը: Մրիբան այս աշխատանքները կատարելու համար ստանում էր ամբողջ բերքի 1/3-րդ մասը՝ (նախապես առանձնացվում էր պետական տուրք համարվող հասլը՝ 1/8-ի չափով: Ընդ որում, հողատերը չէր պարտավորվում մասնակցել այդ աշխատանքներին:

Կալսոցից հետո հսկայական կալի վրա մնացած բերքը հավաքվում, մաքրվում և կեսը տրվում էր հողատիրոջը, մնացած կեսը վերցվում էր մրիբայի կողմից: Բոստանային ու հատիկավոր կուլտուրաներից մրիբան ստանում էր բերքի կեսը: Բացի այդ հողատերը մրիբային պարտավորվում էր տալ.

- 1) 2 բրոյա աբա (վերնազգեստ),
- 2) 2 շալ,
- 3) 1 կգ բուրդ՝ գուլպայի համար,
- 4) 1 եզան կաշի՝ տրեխի համար,
- 5) 1 ոչխար՝ տեխի համար,
- 6) 2 կով՝ 1 տարի ժամանակով (աշխատանքի սկզբից մինչև նրա ավարտը) կթելու համար: Եթե մրիբան համայնքից չէր, նրան տրվում էր բնակվելու հնարավորություն (ԴԱՆ, տ. 7, էջ 272-273, տ. 12, տ. 107-109):

Վարձատրությամբ աշխատանքը մեծ ծավալ էր ընդունում հատկապես չանաքի՝ բամբակաքաղի ժամանակ: Աղձնիքի հովտային շրջաններում հիմնական զբաղմունքներից էր բամբակամշակությունը: Այն ամբողջովին կատարում էին տղամարդիկ, բայց բամբակաքաղը կատարվում էր միայն կանանց կողմից, կալեկտիվ, ամբողջ համայնքի օգնությամբ, հերթականության սկզբունքով, թաղ-թաղ: Բամբակաքաղի նախորդ օրը Ղուբին, Գալիոկ և հարևան մյուս գյուղերում զգուշացնում էին, նույնիսկ հարևան գյուղերը ևս յուրաքանչյուր տնտեսությունից չանաքին մասնակցելու էին գալիս 1-2 հոգի, նույնիսկ երեխամայրերը՝ իրենց ծծկեր կամ դեռահաս երեխաներով: Բամբակաքաղը յուրաքանչյուր տնտեսությունում կատարվում էր 1 օրում, բայց, ի տարբերություն վերը նշված օրինակների, այս դեպքում աշխատանքը վարձատրվի էր<sup>250</sup>:

Ազգակցական, երբեմն նաև հարևանական օգնությունն ավելի լայն չափերով դրսևորվել է ընտանեկան այն աշխատանքներում, որոնք կանանց ձեռքին են կենտրոնացված եղել: Դրանք բնութագրվում են թեթև են եղել, բայց ծավալով այնքան մեծ, որ մեծ ընտանիքի կանայք անկարող էին միանգամից կատարել: Առաջ էր գալիս կալեկտիվ աշխատանքի անհրաժեշտություն: Երկկողմանի օգնությունը հայոց մեջ կոչվում է փոխարա, նաև՝ թուրքերեն քյոմազ՝ օգնել իմաստով: «Աշխատանքային փոխօգնությունը առհասարակ առանց հրաւերի կ'ըլլային: Մթերքներու պատրաստութիւնը, ինչպէս գիւղական աշխատանքի բազմաթիւ տեսակներ օգնական ձեռք կը պահանջէին: Փոխօգնութիւնը գիւղին ամենէն գեղեցիկ երեսներէն մէկը կը ներկայացնէր:

<sup>250</sup> Յուրաքանչյուր աշխատավոր իր հավաքած բամբակը առանձին կիտում և աշխատանքի ավարտից հետո տեղափոխում էր կալ և, որպես վարձատրություն, ստանում դրա 1/14 մասը Ղուբին գյուղում, 1/8 մասը՝ Գալիոկում: Հավաքած բամբակը բաժանում էին 2 մասի, որի մեկ մասը չանաքի տիրոջն էր, իսկ մյուս մասը բաժանում էին Ղուբին գյուղում 7 կամ 12 մասերի, որից առաջինի դեպքում աշխատավորը ստանում էր 7-ից մեկը, իսկ երկրորդ դեպքում՝ 12-ից երկու բաժին: Գալիոկ գյուղում երկրորդ մասը բաժանվում էր 4 մասի, որից մեկն էլ վերցնում էր աշխատավորն իր ընտրությամբ: Հաճախ չանաքողի հետ եկած երեխայի շալը (գլխաշորը) լցվում էր բամբակով, որը չէր մտնում վարձատրության մեջ: Աշխատանքին մասնակցում էին մինչև 200 հոգի, և այս դեպքում բացառվում էր հյուրասիրությունը (ԴԱՆ, տ. 7, էջ 272-273, տ. 12, էջ 107-109):

Դուռ-դրացի կիներ ի հարկին ձեռք կ'երկարէին դրացուհին, երբ ան տուեալ պարագային ուրիշ անյետաձգելի գործ ունենար կամ օգնական ձեռքի մը կարօտ զգար: Դրացուհին կը վազեր՝ խնոցին կը վերցնէր, թոնիր կը մտնէր, շաղը կ'ընէր, մաղը կը վերցնէր, կապ մը ծխախոտ կը շարէր...: Բայց կային նաեւ այնպիսի աշխատանքներ, որոնց հաւաքական բնույթը աւանդութեամբ սրբագործուած էր: Այդպիսի աշխատանքներուն ձայն մը տալը բաւական էր, որ կիներ ու մարդիկ փութային և աշխատանքի մէջ բաժին վերցնէին: Այս պարագաները ինքնաբերաբար կը վերածուէին կերուխումի, ուրախութեան, երգի, պարի առիթներու»<sup>251</sup>: Դրանցից մէկը *մեջի* կամ *միջի*, *միչի* անվամբ բուրդ զգելու և մանելու աշխատանքն էր: Երբ ոչխարի բուրդը խուզված պատրաստ էր, տանտիրուհին կանչում էր դրկից ազգի կանանց՝ բուրդը զգելու և մանելու համար: Մանելը սովորաբար հասակավոր կանայք էին անում՝ իբրև ավելի փորձառություն պահանջող աշխատանք, իսկ զգելը՝ աղջիկները: Հրավիրվում էին այնքան կանայք, որ մի օրում հասցնէին ավարտել աշխատանքը:

Այդպիսի խմբակային ջանքեր էին պահանջում նաև երիշտա կտրելու, ցորենը մաղելու, ձավարը ծեծելու, աղալու, այգեթաղին, այգեկութին մասնակցելու, տհալ, քաղցրեղեն պատրաստելու աշխատանքները: Արևմտյան Հայաստանի հովտային շրջաններում տներն իրար կից էին, տանիքները՝ կպած: Այդ պատճառով էլ այդ շրջաններում երիշտան կտրում էին տանիքների վրա, որը մինչև եղեռնն ու բռնագաղթը կատարվում էր ազգակիցների և հարևանների մասնակցությամբ:

Այս նույն սկզբունքով Բաղեշի Ազնվացձոր գավառի Սագ և հարևան գյուղերում ազգի կանայք մասնակցում էին «երիշտա կտրելու» աշխատանքներին: Երիշտա կտրող տանտիրուհին երբեմն խմորի գնդեր էր ուղարկում հարևանությամբ ապրող հարսներին ու աղջիկներին՝ այդ նույն նպատակով: Խմոր հունցողը տանտիրուհին էր, իսկ լավաշը բանալու, կտրելու և թել-թել անելու աշխատանքները կատարվում էին հրավիրված կանանց կողմից: Հավաքվում էին 15-20 հոգի: Աշխատանքի ընթացքում կատարվում էր պարտականությունների բաժանում. 2-4 հոգի գրտնակում էին, 4-8-ը՝ ձեռքում՝ բարակացնում, 2-4 հոգի՝ փռում, 2-4 հոգի էլ կտրում: Աշխատավորների

<sup>251</sup> Յակոբ Չոլաքեան, *Քեսայ*, էջ 157-158:

հյուրասիրում էին աշխատանքը սկսելուց առաջ և հետո: Վերջին գունդը կտրելիս կինը տանտիրուհուն հայտնում էր, թե դանակը այլևս չի կտրում: Դա խորհրդանշում էր աշխատանքի ավարտը և հյուրասիրվելու ժամանակը: Այս աշխատանքը ազգի ներսում կատարվում էր հերթով, իսկ այդ սովորությունը մինչև անցյալ դարի 50-ական թվականները պահպանվում էր նաև Թալինի և Աշտարակի տարածաշրջանի՝ սասունցիներով բնակեցված գյուղերում<sup>252</sup>: Երիշտա պատրաստելու ուշագրավ նկարագրություն է թողել Գր. Վանցյանը: Նա գրում է, թե երեկոյան հավաքվում էին հարևան աղջիկները, որոնք խմորն էին հունցելու: Նախ այլուրը «բաղադ» էին անում, ապա, երբ փոքր-ինչ ջուր առած էր լինում, հանում էին տաշտից և դնում հատկապես դրա համար պատրաստված տավարձուղձերի մեջ, որը սովորաբար այժի մորթուց էր լինում: Այս աղջիկները երկու-երկու բարձրանում էին այդ տիկերի վրա, սկսում էին ոտներով տրորել՝ վարժ, ուրիշիկ հավասարաչափ, մինչև խմորը հունցելը: Մեջին (կոլեկտիվ աշխատանքը) տեղի էր ունենում գիշերը, որպեսզի խմորն առավոտյան կանուխ պատրաստ լիներ: Աղջիկները գործն ու ընթրիքն ավարտելուց հետո գիշերում էին հրավիրողի տանը: Առավոտյան կանուխ նրանք ցրվում էին, և նրանց փոխարեն հավաքվում էին կանայք, որոնք երիշտա կտրել գիտեին: Կանանցից ոմանք գնում էին պատրաստի խմորը, ոմանք բաց էին անում այն, մյուսներն էլ արդեն բացած խմորը, մի քանի ծալ անելով, կտրում էին երիշտան, մի քանիսն էլ տանում էին արևի տակ չորացնելու և ապա բովելու<sup>253</sup>: Նույնպիսի համերաշխությամբ էին աշխատում պատրաստվում նաև ձմեռվա ձավարն ու բլղուրը:

Աշխատանքների ընթացքում օգնության ձեռք մեկնողները օրական մեկ-երկու անգամ հյուրասիրվում էին առատորեն՝ բացառությամբ այն ընտանիքների, որոնք դա կատարելու հնարավորությունը չէին ունենում:

Ուշագրավ է բլղուրը կոլեկտիվ կարգով ծեծելու սովորությունը Դուբին գյուղում (Դաշտային Աղձնիք): Յուրաքանչյուր ընտանիք ծեծում էր 1 քիլա (20 կոտ=16 կգ), իսկ ունևոր ընտանիքները՝ ավելին: Ընդ որում, բլղուր պատրաստելու աշխատանքը համայնքում կա-

<sup>252</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 8, 1972, էջ 29-34, տ. 7, էջ 270-271:

<sup>253</sup> Տե՛ս Գր. Վանցյան, նշվ. հոդվածը:



տարվում էր հերթականությամբ: Պղինձ ունեցող տնտեսություններն իրենց պղինձները դնում էին թաղի հրապարակում, որ մյուսներն էլ օգտագործեն: 10-15 պղինձներում, հերթականությամբ, յուրաքանչյուր օր մեկ ընտանիքի համար համատեղ ուժերով խաշում էին ցորենը և չորացնելուց հետո ծեծում սանդուհում, որը թաղի երիտասարդներն անում էին առանց հրավերի: Մա նան հարսնացու և փեսացու ընտրելու լավ միջոց էր. դիտվում էին կողմերի աշխատասիրությունը, նրանց ֆիզիկական տվյալները, կորովիությունը:

Սասունի Բերմ, Գելիգուզան և մյուս գյուղերում նույնպես սանդուհում և վարսանդով ազգի տղամարդիկ կամ երբեմն էլ կանայք խմբով երկանքով բլղուր քաշելու կամ տղամարդիկ անկով՝ սանդուհով կորկոտ ծեծելու սովորույթն ունեին: Նախապես հրավիրվում էին 4-12 հոգի և չորսական հոգով խաչաձև ծեծում էին կորկոտը, որին ուղեկցում էր աշխատանքային ռիթմիկ երգը: Այս սովորույթը սասունցիների մեջ պահպանվում էր մինչև վերջերս: Համանման սովորույթ պահպանվում էր նաև Հայաստանի այլ շրջաններում: Լեռնային Դերսիմում «պուլղուր քաշելը (աղալ) ևս տան երիտասարդ աղջիկների ու հարսների պարտականությունն էր: Նրանց օգնության էին գալիս դրացի կամ ազգական հարսներն ու աղջիկները և մեկ երբեմն մինչև վեց երկուսքով տարվում էր աշխատանքը... այն տոնական բնույթ էր ստանում, երգում, պարում, կատակներ էին անում...»<sup>254</sup>:

Քեսապում ձավար կամ բլղուր ծեծելը և աղալը խաղի, երգի ու պարի առիթ էր կանանց և աղջիկների համար: Ձավարը սանդուհում ծեծում էին թաղի ջահել տղաները՝ իրար նախապես լուր տալով: Ձավարվում էին նաև կանայք և աղջիկներ:



Նկ. 2. Հացի գնդերն են տանում թոնրատուն (Արցախ)

Քեսապում ձավար կամ բլղուր ծեծելը և աղալը խաղի, երգի ու պարի առիթ էր կանանց և աղջիկների համար: Ձավարը սանդուհում ծեծում էին թաղի ջահել տղաները՝ իրար նախապես լուր տալով: Ձավարվում էին նաև կանայք և աղջիկներ:

Հաճախ «քանի մը տան ձավարը մեկ գիշեր կը ծեծէին: Այդպիսի գիշերները տօնի կը վերածուէին: Յետոյ կը բացուէր սեղան: Յետոյ յանկարծ կը փչէր սրինգը, քանի մը հոգի շուրջպարի կ'անցնէին: Շարքը կ'երկարանար, պարերգներուն և շուրջպարերուն կը մասնակցէին նաև կիներն ու աղջիկները»: Իսկ «ձավար աղալը կանանց ու աղջիկներու հավաքական գործն էր...»<sup>255</sup>: Մեծ ընտանիք ունեցող տների կողմից ազգական և դրացի հարս ու աղջիկներին հրավիրելու և միացալ ուժերով ձավար պատրաստելու համագործակցության այս եղանակը Բաղեշում հայտնի էր ծավարի օր անվամբ<sup>256</sup>: Արցախում «հաց ու խմորին» փոխադարձ օգնության էին հասնում դրկից ազգականները (տե՛ս նկ. 2, 3): Այստեղ սովորություն կար հաց թխել այնքան, որ 20-30 օր բավարարէր ընտանիքին, սովորույթ, որ բնորոշ էր նաև Արարատյան դաշտավայրի բնակչությանը:



Նկ. 3. Թոնրի տար հացը հացթուխ կիներ փռում է արևի տակ (Արցախ)

<sup>254</sup> Գ. Հալաջյան, *Դերսիմի իսպառույթները*, ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 119-120, տե՛ս նաև Վ.Թեմուրճյան, *Գամիրրի իսպառույթները*, ՀԱԲ, հ. 1, 1970, էջ 129: 142

<sup>255</sup> Տե՛ս Յակոբ Զոլաքեան, *Քեսապ*, էջ 158-159:  
<sup>256</sup> ՂԱՆ, տ. 2, 1972-1973, Աշտարակի ենթաշրջան, գ. Նազրվան, էջ 127-128: 143

Կողեկոսի վոյսոգնության սովորություններից էր նաև Ադանիքի լեռնային շրջաններում կիրառվող թավի զուբարան: Այստեղ ինչպես հողը, այնպես էլ անտառամասերի մեծ մասը գյուղական համայնքում դարձել էր մասնավոր սեփականություն: Անտառամասը կոչվում էր սաթառ կամ հաղոն, 3-4 տարին մեկ կտրում էին երիտասարդացնելու նպատակով: Բսկ ոչխարի կերի համար ամեն տարի կտրում էին որոշակի հատվածի տերևակալած դալար ճյուղերը: Դրա կտրման, հավաքման և տեղափոխման աշխատանքները կատարվում էին ազգակցական և համայնքային փոխօգնությամբ: Այդ աշխատանքներին մասնակցում էին 20-ից մինչև 150 և նույնիսկ ավելի մարդ: Գելիեգուգան գյուղում 1892 թ. Պետոյի տան դիվը (տերևը) կտրելու համար 7 գյուղից 240 մարդ էր հավաքվել: Այդ օրը նրանց համար մորթվել է 4 տավար և 10 ոչխար<sup>257</sup>: Զուբարան կազմակերպվում էր շաբաթ օրը: Հրավիրվող երբեք չէր մերժում զուբարայի տիրոջը, որն էլ նախօրոք հրավիրվող աշխատավորների թվին համապատասխան սննդի պատրաստություն էր տեսնում: Աշխատանքն սկսվում էր լուսադեմին: Ամենից շուտ աշխատավայր հասնողը և առաջինը օն (նշան) բացողը կոչվում էր օնվոր, նրանից հետո եկողը, որը պարտավոր էր աշխատանքն սկսել անտառամասի մյուս ծայրից, կոչվում էր պոչվոր: Օնվորի և պոչվորի միջև ընկած հնձվորների հեռավորությունը միմյանցից երկուական քայլ էր կազմում: Աշխատանքի արագությունը պայմանավորված էր օնվորի և պոչվորի հմտությունից, որոնց միջև ծավալվում էր աշխատանքային մրցություն. օնվորը ձգտում էր միշտ առաջինը լինել, իսկ պոչվորը դրոյում էր իրենից առաջ եղողներին հետ չընկնել: Դրա համար աշխատանքի վերջում նրանց կատակով պարզն էին տալիս՝ օնվորին ոչխարի կուրծքը, իսկ պոչվորին՝ պոչիկը:

Կտրված անասնակերի հավաքումն ու դիզումը կատարում էին առանձին խմբեր. յուրաքանչյուր 10 կտրողին հարկավոր էր երկու խուրձ անող, երկու ուռենուց կապիչի ճյուղ կտրող և մեկ հանգուցող: Առանձին խումբ էին կազմում աշխատավորներին ջուր մատակարարողները և կերակուր պատրաստողները, որոնք ղեկավարվում

էին զուբարայի տիրոջ կողմից, իսկ աշխատանքը վերահսկվում էր հատուկ նշանակված լիագորների կողմից: Օրվա ընթացքում կերակրվում էին երեք անգամ՝ ազրադի, ճաշին և հրնթրիքին: Թավ կտրելը համընկնում էր սարվոր անասնապահների սաթառներ իջնելուն, որով նրանք ևս միավորվում էին: Դա հեշտացնում էր աշխատանքի կազմակերպումը և սննդի հայթայթումը: Ընդ որում, չքավոր ազգանդամ կամ հարևան ընտանիքների համար կազմակերպված զուբարաների ժամանակ ազգականները պարտավորվում էին ինքնասպասարկմամբ ապահովել իրենց սնունդը:

Զուբարայով քաղված ու դիզված անասնակերը տեղափոխվում էր ձմռանը, դարձյալ կոլեկտիվ ուժերով, որովհետև լեռնային ճանապարհներին անհնարին էր գրաստի կամ լծկանի օգտագործումը: Ձմռանը ճանապարհի հարթեցման աշխատանքներին հիմնականում մասնակցում էին մերձավոր ազգականները: Հաճախ դաժան ստոնամանիքների և բքի պայմաններում ձյան վրայով տեղափոխումը հեշտացնելու նպատակով անասնակերը, քարշաձողի վրա էին բարձում ու քաշան անում (սահեցնելով) կամ էլ տեղափոխում էին դահուց կոչված հատուկ սահնակներով: Զուբարավորները հազում էին ավանդական լականները՝ ձյան վրա ազատ քայլելու նպատակով: Այդ մասին համառոտ նկարագրություն է թողել Թ. Արծրունին. «Անպերից եկած ձյան փոքր մակերևույթի վրա ման գալու հնարավորություն ունենալու համար՝ նրանք ոտներից կապում են չվաններով առանձին տեսակ փայտյա քոշեր և դյուրությամբ ընթանում են ձյան վրայով, ինչպես ցամաք հողի վրայով»<sup>258</sup>: Հրավիրված աշխատավորները լուսադեմին բարձրանում էին տվյալ սաթառը: Բոլոր զուբարավորները բաժանվում էին առանձին զույգերի՝ թավը բարձելու, դահուցների ընթացքը զսպելու կամ ձգելու և ընթացքում անվտանգությունն ապահովելու նպատակով: Աշխատանքն սկսելով լուսադեմից առաջ՝ մինչև ուշ երեկո, 3-4 երթ ու դարձով ավարտվում էր թավի տեղափոխումը: Այս դեպքում նույնպես աշխատավորները կերակրվում էին գործատիրոջ հաշվին: Քաշան անելով տեղափոխվում էր նաև ձմռանը հանված անասնակեր գազը՝ և խտրը: Տեղափոխումը

<sup>257</sup> Ելուքերը հաղորդեցին Աշտարակի տարածաշրջանի Լեռնարոտ գյուղում Դանիել Գրիգորյանը (Դանո), Արշակ Առաքելյանը (Ըոթո) և Արշակ Ներսիսյանը (տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 237-239):

<sup>258</sup> Թ. Արծրունի, *Պատմության Տան Արծրունեաց*, էջ 204:

Թիթեոնաձողկավորների ընտանիքին պատկանող գետնատարած թուփ, մացառ, մինչև 80 սմ բարձրության, ամբողջովին պատված փշերով, աճում է

կատարվում էր հետևյալ կերպ. մոտ 20 խուրձ դիզում էին ձյան վրա, պարանով ամուր կապում և քաշում: Թեքությունից իջնելիս, երբ ընթացքը արագանում էր, քաշող տղամարդը նստում էր դեզի վրա, մի գործողություն, որը կապված էր մեծ վտանգների հետ, հաճախ գլորվելով անդունդը<sup>259</sup>:

Տերևի կտրման ու տեղափոխման մասին այսպիսի նկարագրություն է թողել Ա. Քալանթարը<sup>260</sup>:

Քուրդ բեկերի, հայ մեծահարուստ տների և վանքերի կողմից չարաշահվում էին այս համայնքային փոխօգնության սովորություն-

չոր լանջերում. ցողունի, ճյուղերի և արմատների վնասվածքներից դուրս է գալիս հատուկ խեժ՝ սոսնձանման նյութ, որն օգտագործվում է մի շարք բնագավառներում, հատկապես արհեստագործության մեջ: Խեժն օգտագործում էին կտավը սպիտակեցնելու համար: Ժողովրդական հնավանդ բժշկության մեջ օգտագործել են զագի խեժը, արմատը, վերգետնյա մասը՝ լնդախտը, լյարդը, մարսողական ուղու լորձաթաղանթը, երիկամների բորբոքումները, սրտանոթային հիվանդությունները, ստամոքսի խոցը բուժելու համար: Գագի արմատը եռացրած ջրի մեջ որոշ ժամանակ պահելու եղանակով (վաննա) օգտագործում են հողացավերը բուժելու համար: Հունիս-հուլիս ամիսներին զագի վրա իջնող զագպեն (մանանա) հավաքելով Հազոյի շրջանում (Մասուն) վաճառվել է շրջիկ մանրավաճառներին: Այն մինչև 1950-ական թվականները գործածվում էր նաև որպես ոչխարի կեր, նախապես թրջելով և խեժից՝ սոսնձանման կյուրից ազատելով: Ժողովուրդն այն օգտագործում է նաև որպես կալյան վառելիք (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1969, էջ 356), Գր. Կարախանյան, *Հայոց ժողովրդական մշակույթը*, էջ 103:

<sup>259</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 241-243:

<sup>260</sup> «Տերևի պատրաստությունը կատարվում է օգոստոսին և սեպտեմբերին, երբ գյուղացիները վերջացնում են ամառային պարապմունքների մեծ մասը: Գյուղացիները այդ ժամանակ խմբերով գնում են անտառ և քշուշով (մանգաղ) կտրատում են ճյուղերը ու գետնին թափում: Հետո այդ ճյուղերը խուրձ-խուրձ կապում են և թողնում գետնի վրա մոտավորապես մի տասն օր, որ ճյուղերը և տերևները չորանան: Այնուհետև դեզ են անում այդ խուրձերը և այդպես պահում մինչև ձմեռ...: Այդ ժամանակ գյուղացիները առնում են իրենց հետ դահուկներ, որ բալիսիների (սահնակ) նմանություն ունեն և անտառից տուն կրում ճյուղի և տերևի խուրձերը: Չյան վրայով դահուկները շատ թեթև են շարժվում և մարդիկ առանց կենդանիների օգնության, իրենք կարողանում էին առանց մեծ դժվարության տուն բերել խուրձերը»: Տե՛ս Ա. Քալանթար, *Մասուն*, Թիֆլիս, 1895, էջ 33:

ները: Տարեկան նրանց համար կիրառվում էր մի քանի զուբարա, որը աշխատավորության կատարյալ շահագործում էր: Այդ էր պատճառը, որ քուրդ բեկերի զուբարաների օրերին կեղծ գործերով, խույս տալով շատերը հեռանում էին լեռները և վերադառնում այդ հարկադրական աշխատանքներն ավարտվելուց հետո: Այդ չարաշահումն իր արտացոլումն է գտել բանահյուսության մեջ, որից բանասաց Խաչատուր Ներսիսյանը հիշեց հետևյալ տողերը.

*Աստված քանդա Գյոզալդարեն,  
Շարթթ օրը չի գա թավի սարեն,  
Կիրակի օր երթա քրդու զուբարեն:*

Նույնանման հարկադրական զուբարաներ կատարվում էին նաև հարևան Վասպուրականում<sup>261</sup>: Այսպիսի շահագործման ենթարկվում էին նաև դասակարգային հողի վրա, բայց այն մեղմացուցիչ տարբերությամբ, որ օրինակ՝ գյուղի ռեսի դաշտային աշխատանքները, անասնակեր թավի կտրումն ու տեղափոխումը և նրա օդա-հյուրանոցի կառուցումը կատարում էր հասարակությունը՝ նրան վարձ չվճարելու պայմանով:

*Անասնապահության բնագավառ:* Անասնապահության մեջ ևս պարտադիր էր համագործակցության տարբեր ձևերի կիրառումը, առանց որի անհնարին կլինեք նաև անասնապահական բարդ տնտեսության կազմակերպումը՝ անասունների խնամքը, արոտավայր բարձրանալը, կաթի մշակումը: Դրանք անասնապահության մեջ կոչվում էին սարի համկալ<sup>262</sup>:

Հեռագնա անասնապահության կազմակերպումը պահանջում էր մեծ թվով մարդկանց հավաքական ջանքեր: Այդ պատճառով էլ անասնապահության այդ ձևի կիրառումը անցյալում հնարավոր էր առավելապես գերդաստանների կողմից: Ոչխարի մեծ հոտ ունեցողները դառնում էին օբաների ղեկավարներ: Հովիվ էին դառնում օբաների ղեկավար ընտանիքների անասնապահությամբ զբաղվող անդամները, երբեմն էլ վարձվում էին հովիվներ: Վերջիններս բնամթ-

<sup>261</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ*, էջ 203:

<sup>262</sup> Տե՛ս Յ. Միքտյան, *Փոմս օտոգովոճտա Վ Վոստոչնոյ Արմենի* (Вторая половина XIX – начало XX вв.) (Историко-этнографическое исследование), ՀԱԲ, հ. 6, Երևան, 1974, էջ 68:

րային կամ մանր եղջերավոր անասունների վարձատրությամբ պահում էին նաև օբայի մյուս անդամների ոչխարները<sup>263</sup>: Հոտերի հավասար գլխաքանակի դեպքում ոչխարատերերը հիշյալ ընկերությունը կազմելիս հովիվ էին դառնում հերթով, ուստի բացառվում էր նրանցից որևէ մեկի գերիշխող դիրքը: Մասունում ազգը մաքիների, գառների և այծերի առանձին ջուլեր [(հոտ) – Ռ.Ն.] էր կազմում՝ առանձին հովիվներով: Գերդաստանների սակավացման պատճառով հատկապես խաշնարած տնտեսությունները փոքրանում էին, ինչն էլ առաջ էր բերում արհեստական տնտեսական, արտադրական ընկերակցությունների ստեղծման անհրաժեշտություն:

Նման պայմաններում ազգատոհմի ընտանիքների անասունները մնում էին ընդհանուր հսկողության ներքո: Որքան անբարենպաստ էր աշխարհագրական և էթնիկական միջավայրը, այնքան անհուսալի էին դառնում սննդի և գոյատևման աղբյուրները, նույնքան անհրաժեշտ էր դառնում համայնքի, առավել ևս ազգատոհմի ընտանիքների փոխօգնության կազմակերպումը: Առանց դրա հնարավոր չէր արդյունավետորեն դիմակայել բնության տարերքներին և ավարառու ցեղերի հարձակումներին: Հայ հովիվները և կաթնամշակ կանաչք հաճախ հարկադրված էին լինում գենքով դիմագրավել ավարառուներին և կանխել թալանը:

XIX դ. վերջերին և XX դարի սկզբներին, օրինակ, Մասունում ավելի տարածված էր հավասար կարողությամբ ազգակից ընտանիքների միավորումը մեկ ընկերակցության մեջ, որի դեպքում նրանք հովիվ չէին վարձում, այլ հոտն արածեցնում էին դորով՝ հերթով: Հերթը կախված էր յուրաքանչյուր ընտանիքի ոչխարների քանակից, իսկ գոմաղբը հավասար բաժանվում էր և ազգի տղամարդկանց ընդհանուր ուժերով տեղափոխվում ընտանիքների արտերը՝ դրանք պարարտացնելու նպատակով: Ազգականներից կազմվող ընկերակցության անդամներն ուներին հավասար իրավունքներ և պարտականություններ, իսկ ղեկավար դերը ստանձնում էր ազգի առավել գործիմաց և հեղինակավոր անդամը:

Անասունների արածեցման համար ընկերակցությունների ձևերի ազգագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս

բացահայտելու հասարակական հնավանդ կազմակերպությունների բազմաթիվ վերապրուկային ձևեր, որոնք XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին դեռևս պահպանվում էին հայկական գյուղում<sup>264</sup>:

Հովիվների և նախրապանների վարձակալումը կատարվում էր ինչպես առանձին ունևոր տնտեսությունների, այնպես էլ տնտեսությունների խմբերի կամ գյուղի հասարակության կողմից: Համեմատական տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հայերը, առավել քան հարևան որևէ ժողովուրդ, վարձակալել են այլազգի անասնապահների: Մյուս առանձնահատկությունն այն է, որ հայերը անասնապահների աշխատանքը վարձատրել են տարբեր կերպ՝ ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասուններով, առավել չափով հացահատիկով, մթերքի այլ տեսակներով, ինչն արտացոլում է երկրագործ հայ ժողովրդի հնագույն ավանդույթները: Հատկանշական է նաև, որ հայոց միջավայրում փորձված ու հմուտ հովիվները հարգանք ու պատիվ են վայելել առավելապես այն շրջաններում, ուր տարածված է եղել հեռագնա անասնապահության ձևը:

Տարբեր կարողությամբ ազգակից ընտանիքներից նույնպես կազմվում էին ընկերակցություններ. ունևոր ընտանիքների հոտերին էին խառնում նաև ազգակից ընտանիքների սակավաթիվ ոչխարները: Այս դեպքում ոչխարի մեծ հոտ ունեցողները դառնում էին օբաների ղեկավարներ: Ազգատոհմի սակավաթիվ անասուններ ունեցող անդամները սար չէին բարձրանում, նրանց անասունները գոզան՝ արոտավայրեր տանելու և կաթնամթերքները պատրաստելու համար վարձ չէր վերցվում: Բայց նման կարողության ընտանիքները, ինչպես բարոյական, այնպես էլ սովորության լեռնակետից պարտավորվում էին նշյալ աշխատանքի դիմաց փոխհատուցել երկրագործական և այլ բնույթի աշխատանքներով՝ երբեմն էլ ընկնելով տնտեսական կախվածության մեջ:

Համադրելով ձեռքի տակ եղած տվյալները՝ Յ. Մկրտումյանը հանգել է ուշագրավ եզրակացության. անասնապահության մեջ է կիրառվել ընկերակցության կազմակերպման երեք հիմնական սկզբունք:

<sup>263</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիք* (պատմաազգագրական ակնարկ), էջ 169-170:

<sup>264</sup> Այս մասին հանգամանակի շարադրված է Յ. Մկրտումյանի աշխատության մեջ (տե՛ս Ю. Мкртумян, *Формы скотоводства в Восточной Армении*, էջ 64-80):

1. Կարողությամբ հավասար ազգակից ընտանիքներից կազմվող ընկերակցություն, որի պարագայում մեծ դեր էին խաղում ազգակցական թաղամասերը: Միավորվում էին 4-8 ընտանիքներ՝ 500-600 գլուխ անասուններով՝ կազմելով մեկ հոտ: Այս միավորման պարագայում շատ թե քիչ պահպանվում էր իրավահավասարության սկզբունքն ինչպես անասունների խնամքի, այնպես էլ սար բարձրանալու աշխատանքները համատեղ կատարելիս: Քանի որ հայերի հիմնական աշխատուժը ներգրավված էր երկրագործական աշխատանքներում, ուստի այս միավորման դեպքում երբեմն վարձվում էր հովիվ:

2. Հավասար կարողությամբ հարևաններից կազմված ընկերակցություն: Այս միավորման մեջ ներգրավվում էին հավասար կարողությամբ թաղակիցները, որոնք կապված էին միմյանց հետ հարևանական կապերով: Ի տարբերություն առաջինի՝ այստեղ միավորումն ստեղծողի համար առավել ձեռնտու պայմաններ էին, որն ի վերջո հանգեցնում էր միավորման մեջ մտնող անդամների տնտեսական շահագործմանը: Այդ իսկ պատճառով համագործակցության այս ձևը կայուն չէր լինում. ամեն տարի փոփոխվում էր մասնակիցների կազմը:

3. Տնտեսական տարբեր կարողություն կամ հզորություն ունեցող ազգականների և հարևանների խառն միավորում: Այս դեպքում որևէ ձեռներեց անձնավորություն, որը կարող էր ունենալ մյուսներից ավելի մեծ տնտեսական ներուժ, իր շուրջն էր համախմբում քիչ անասուններ ունեցող մարդկանց, միավորում նրանց անասունները մեկ հոտի մեջ՝ այս կամ այն չափով բնաթերք վճարելու պայմանով: Ակնհայտ է, որ այս միավորման դեպքում, ի տարբերություն նախորդ երկուսի, շահագործման միտումը ավելի բացահայտ էր, քանի որ ընկերակցության ղեկավարը հաշվարկում էր կաթնամթերքից մինչև բուրդ և այլ մթերք ստանալու իր օգուտները:

Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններում միավորման այս ձևը բավական լայն կիրառություն էր ստացել, քանի որ փոքրաթիվ անասուններ ունեցող ընտանիքները ստիպված էին մտնել նման միավորման մեջ: Գեղարքունիքում միավորման այս ձևը հայտնի էր ջուլ անունով (քրդերեն բառ է և նշանակում է մասնակից), իսկ Լոռիում, Սյունիքում, Տավուշում՝ փորնակ անունով<sup>265</sup>:

Այս ընդհանրացումները միանգամայն բնորոշ է եղել նաև արևմտահայ իրականությանը<sup>266</sup>:

Մեր ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընկերակցությունը, որպես կանոն, ազգակից ընտանիքներից էր կազմվում այն շրջաններում, որտեղ բնակչությունը անասունները տեղափոխում էր սեզոնային արոտավայրերը: Դա հիմնականում վերաբերում է լեռնային և նախալեռնային այն շրջաններին, որտեղ ավելի կայուն էին պահպանվել գերդաստանական, ազգակցական հարաբերությունները: Հեռագնա աշխատատար բազմագործառույթ անասնապահական ձևը օբյեկտիվորեն նպաստում էր գերդաստանների պահպանմանը: Այն բնույթով և սկզբունքներով ավելի վաղ շրջանի ծնունդ էր, քան ընկերակցության մյուս տեսակները: Իհարկե, Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններում շահագործումը երբեմն վարագուրվում էր ավանդական փոխօգնությամբ, բայց ապրանքադրամական հարաբերությունների թույլ զարգացածության պատճառով չէր հասել բացահայտ շահագործման աստիճանի, ինչպես Արևելյան Հայաստանում: Ինչպես երևում է վերը շարադրվածից, հարևանական փոխօգնության՝ բովանդակությամբ ավելի նախնական ձևը ազգակցական էր, որը լիովին համապատասխանում էր ամբողջ տոհմի շահերին: Այս մասին Ս. Եղիազարովը «Գյուղական համայնք» աշխատության մեջ գրում է. «Հնում ընկերակցության մեջ էին ընդգրկվում մեծ մասամբ ազգակից ընտանիքները, որով ընկերակցությունը ձեռք էր բերում ընտանեկան-ազգակցական միավորման բնույթ»<sup>267</sup>:

Կաթնատնտեսության մեջ նույնպես գոյություն ուներ ընկերակցություն՝ խաբուխագ, խաբ, խապ, կաթ փոխ տալ, կաթ-չափ անվանումներով: Դա կաթը փոխ տալու մի ձև էր, երբ հինգ-վեց և երբեմն էլ ավելի որկից ընտանիքներ որոշակի ժամկետում իրենց ունեցած կաթը փոխ էին տալիս միմյանց: Սովորույթի համաձայն՝ քիչ թվով կաթնատու անասուններ՝ կով, ոչխար, այծ, ունեցող ընտանիքները օրվա ընթացքում երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան,

<sup>266</sup> Մանրամասն տե՛ս Ռ. Նահապետյան, *Աղձնիքահայերի անասնապահական ընկերակցությունների կազմակերպման որոշ ձևեր ու սովորույթներ*, ԲԵՀ, 2007, թիվ 2 (122), էջ 115-124:

<sup>267</sup> Ս. Եգիազարով, *Сельская община*, с. 62.

<sup>265</sup> St' u Ю. Мкртумян, *Формы скотоводства в Восточной Армении*, էջ 68-69:

կթված կաթը որոշյալ չափ-ամանով՝ դուլյով, որոշյալ ժամանակին հերթով փոխ էին տալիս միմյանց: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, թուրքերեն՝ կոչվում էր «դաթ»-«խապ»<sup>268</sup>, այստեղից էլ «խապկցիք» տերմինը՝ փոխօգնության ընկերակցության մեջ մտած ընտանիքների համար: Այդ եղանակով գյուղում յուրաքանչյուր տուն կաթի առատ ամիսներին միանվագ ունենում է որոշակի, բավականաչափ կաթ՝ ոչ միայն հանապազօրյա կարիքները հոգալու, այլև մասնավորապես՝ տարվան անհրաժեշտ պանրի, կարագի, հալած յուղի և այլ տեսակի կաթնամթերքներ վերամշակելու համար: Եթե գյուղը մեծ էր, նրանք մի քանի խումբ էին կազմում, եթե փոքր՝ 1-2 խումբ<sup>269</sup>: Ամեն մեկն ուներ կաթը չափելու ծոնթ կամ քենջ կոչվող իր ճիպուղը, որը մտցնում էին կաթով լի դուլի մեջ՝ կաթի չափին համապատասխան վրան խազ անելով: Հասկանալի է, որ փոքրաթիվ ազգակից կամ հարևան ընտանիքները գրկված պետք է լինեին յուր ու պանիր պատրաստելու հնարավորությունից: Սակայն հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր արտադրական կենցաղում մշակել էր այդ դրությունից դուրս գալու՝ կաթ փոխ տալու ուշագրավ եղանակը: Այս սովորույթը մինչև վերջին ժամանակներս պահպանվում էր հայկական գյուղերի մեծ մասում, նաև Ջավախքում:

Ուշագրավ է, որ, օրինակ, Սասնա գյուղերում պատրաստված կաթնամթերքները պահածոյացվում և հորվում էին առուների, աղբյուրների հոսող ջրերի ափերին, խոնավ տեղերում, կավե կճուճներով: Այստեղ ազգի ընտանիքները դրանք հորում էին միատեղ, շարքով և միմյանցից տարբերելու համար կճուճները նույնպես տոհմական նշաններով էին առանձնացվում: Ամառանոցներում, եթե մի ընտանիք ոչխարի կիթը և կաթնամթերքների պատրաստումը շուտ էր ավարտում, օգնության էր հասնում ազգակից ընտանիքին: Երեք-չորս և ավելի ազգանդամ տներ միանում էին և այժի մորթե տիկերով հերթով կատարում մակարդը:

**Շինարարական բնագավառ.** – Հայոց մեջ գրեթե ամենուրեք բնակարանային շինարարությունը՝ հիմք փորելը, շինանյութերն անտառից և դաշտից տեղ հասցնելը, պատերը շարելն ու տները ծածկելը և հողանք կատարելն արվում էր ազգի և համայնքի լայն

աջակցությամբ: Փոխադարձ օգնության այդ ձևը, որ իրագործվում էր երիտասարդների և տղամարդկանց միջոցով, դրամական հատուցում չէր ենթադրում: Այն հայտնի էր զուբարա անունով՝ փոխօգնություն, հարակաշ նշանակությամբ: Շինարարական նյութերի, հատկապես անտառանյութի տեղափոխումը բնակարանաշինության ամենադժվարին աշխատանքն էր համարվում: Այդ տեսակետից ուշագրավ է ծածկի ժամանակ կիրառվող «մարթակի զուբարան» (Ազնվացձոր գավառ) կամ «գերան բերել» կոչված զուբարան (Մասուն): Աղձնիքում, հատկապես լեռնային շրջաններում, տները շատ ամուր էին կառուցվում. տանիքի վրա լցվում էր 80-100 սմ հաստությամբ հող, որպեսզի կտուրները դիմանան հաստ շերտով նստող ձյանը և նրանց վրա կալսոցին՝ կոռիով կալ անելուն: Այդպիսի գերդաստանական տներում ապրում էր 30-80 անձ: Ուստի անհրաժեշտ էին հաստ պատեր և հսկա գերաններ, որոնց տեղափոխումը և շենքի վրա բարձրացնելը պահանջում էր 50-60 տղամարդու ծանր աշխատանք: Գերանները լեռնային տեղանքում տեղափոխում էին զուտ մարդկանց ուժերով, հարթություններում՝ լծկանով: Ամեն մի գերանի տեղափոխման համար պահանջվում էր առնվազն 16 հոգի<sup>270</sup> (նկ. 4):

Վ. Պետոյանը նշում է, որ այդ աշխատանքը ստսկում է առաջացնում գերանների ծանրության և դժվարաշարժության պատճառով: Մեծ հետաքրքրություն էր առաջացնում սարերի թեք կողերով, նեղ ու ծուռ ճամփաներով այդ գերանները 50-60 մարդկանց ուսերին տեղ հասցնելը<sup>271</sup>: Երբեմն գերանատարությանը մասնակցում էին շինա-


<sup>270</sup> Տեղափոխությունը կատարվում էր հետևյալ կերպ. գերանների վրա 2-5 տեղով (նայած գերանի մեծությանը) պարանով խաչաձև կապում էին մոտ 4 մետր երկարություն ունեցող խոսա կոչվող ձողեր, իսկ վերջիններիս վրա գերանից մեկ մետր հեռավորությամբ՝ բուրբա կոչվող ձողեր: Յուրաքանչյուր խոսայի տակ մտնում էին 4 կամ 8 մարդ, իսկ ամբողջ գերանը տեղափոխվում էր 16-40 հոգով: Գերանների ծայրերին կապվում էին ձուպաններ՝ անվտանգությունն ապահովելու, վայրէջքներին զսպելու և վերելքներին ձգելու նպատակով (Ռ. Նախապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ*, էջ 198-206): Գերանատարության այս կլպսիկ օրինակն էլ ազգագրագետ Վ. Բոդյանին հանգեցրել է այն համոզման, թե «միջնադարում հայերը սեփական ռազմական բարաններ են ունեցել» (Վ. Բոդյան, *Տեղափոխման մոտացված ձևեր*, «Լրաբեր հաս. գիտ.», 1972, թիվ 10):

<sup>271</sup> Տե՛ս Վ. Պետոյան, *Սասունի ազգագրությունը*, էջ 190-191;

<sup>268</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. III, էջ 303-304:

<sup>269</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 19, 2005, Արագածոտնի մարզ, էջ 26-29, 47-50 և այլն:

րարության տերերի ազգակից հեղինակավոր կանայք, որոնց ներկայությունը ոգևորելու և ուժ հաղորդելու նպատակն էր հետապնդում: Թալինի շրջանի Իրինդ գյուղում բնակվող 80-ամյա բանասաց Արթին Հարությունյանի հավաստմամբ, Մեմալ գյուղից Քոթանի տունը ծածկելիս գերանատարության համար հավաքվել էին մոտ ազգից ու համայնքից 60 հոգի: Այդ ժամանակ որոշ տղամարդկանց թուլամորթությունը խարազանվում էր Քոթանի եղբոր կնոջ՝ գյուղում հեղինակություն վայելող Ռեհանի ներկայությամբ<sup>272</sup>:



Նկ. 4. Գերանատարությունը Մասունում

Ազնվագձորի Կարբ և Մագ գյուղերում *մարթակի զուբարայի* ժամանակ համայնքից յուրաքանչյուր տուն տրամադրում էր մեկ տղամարդու՝ 1 զույգ եզներով և իր լծասարքով: Լծկանազուրկ տնտեսության օգնությունը պարտադիր էր դառնում հողանքին՝ իրենց քրոջներով: Զուբարային մասնակցողների թիվը հատկապես մեծ էր լինում հողանքի օրը՝ հասնելով 40-50 և ավելի հոգու:

Այսպես օրինակ՝ Գելիեզուզան գյուղացի Արշակ Առաքելյանի հավաստմամբ՝ նախքան եղեռնը իրենց գյուղում Մարտիրոսի Առաքելի (Շոքոյի) գոմի հողանքին հավաքվել էին 70 հոգի, իսկ Ազնվաց-

ձոր գավառի Մագ գյուղացի Խաչատուր Ներսիսյանի հավաստմամբ՝ Մագ գյուղում՝ 50 քրոջավոր: Այդ նույն շրջանի Կարբ գյուղում հողանքին հավաքվում էին շինարարության տիրոջ տանը իրենց կողովներով և թիակներով՝ յուրաքանչյուր տնից մեկ աշխատավոր: Նրանք բաժանվում էին առանձին խմբերի, որոնցից մեկը հող էր փորում և կողովները լցնում, երկրորդը կողովներով հողը կտուրն էր բարձրացնում, երրորդը թիերով ներսից ու դրսից հողը կտուրն էր նետում և չորրորդը հարդարում էր կտուրը տեղափոխած հողը: Հողը սանդուղքներով կտուրը բարձրացնողները երիտասարդներն ու պատանիներն էին, հողը լցնողները՝ տղամարդիկ, և կտուրը հարդարողները՝ հասակավորները: Աշխատանքի ընթացքում հանգստանալու նպատակով աշխատանքային դերերը փոխում էին<sup>273</sup>:

Աշխատանքի այս բաժանումն ավանդական բնույթ ուներ ոչ միայն Աղձնիքում, այլև ողջ Հայաստանում: Համայնքային այս փոխօգնությունը դեռ այսօր էլ շարունակում է կիրառվել Թալինի և Աշտարակի տարածաշրջանների սասունցիներով բնակեցված գյուղերում: Հողանքը, որ կատարվում էր մինչև 1950-ական թվականները, արվում էր հետևյալ կերպ. ծածկելիս թողնվում էին կառույցի մեծությանը համապատասխան թվով բացվածքներ, որտեղից կտուրի վրա էր գցվում հատակում կիտված և կտուրի համար պատրաստված հողը: Աշխատավորների մի խումբ հարդարում էր կտուրին կիտված հողը: Այս գործողությունը սասունցիները անվանում են *հող մանել*: Մեր օրերում բարեկամների և հարևանների կոլեկտիվ ջանքերով, դարձյալ առանց վարձատրության է կատարվում «բետոն թափելը». ներկայումս տները բետոնածածկ են և հիմնականում երկհարկանի: Աշխատանքի ընթացքում տեղ են գտնում կատակներ, զվարճություններ, որտեղ հասակավորները ոգևորում են ջահելների աշխատանքը:

Մեր կողմից Աշտարակի տարածաշրջանի սասունցիներով բնակված Ուջան գյուղում 1972 թ. զգալի նյութեր գրավեցին, և լուսանկարահանումներ կատարվեցին: Ստորև ներկայացվում է բետոն թափելու զուբարան և հյուրասիրությունը, որն այստեղ անվանում են *հացփոր* (տե՛ս 5, 6, 7, 8):

<sup>272</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ*, էջ 199:

<sup>273</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, *Գերդաստանական տունը և կենցաղը Աղձնիքի Ազնվագձոր գավառում*, էջ 237-238:



*Նկ. 5. Ուղան գյուղ*



*Նկ. 6. Ուղան գյուղ*



*Նկ. 7. Բնակարանաշինության զուբարան (հացփորը)  
Ուղան գյուղում*



*Նկ. 8. Հացփորը «Ճաշկերույթը» Ուղան գյուղում*




Ջուրքառ հրավիրողը շինարարության տերն էր. յուրաքանչյուր տուն, ըստ բարոյական նորմերի և սովորության իրավունքի, մի աշխատավոր էր տրամադրում, իսկ ազգականները՝ մեկից ավելի: Ըստ որում, հիմքը փորելու, պատերը շարելու աշխատանքներին մասնակցում էին առանձնապես ազգականները: Ազգակցական փոխօգնությունն առավելապես արտահայտվում էր շինարարության ժամանակ տան հիմքերը փորելիս և պատերը շարելիս, երբ ազգակից երիտասարդները առանց հրավերի հավաքվում, բանվորություն էին անում. տանտիրոջ միակ ծախսը նրանց կերակրելն էր: Հողանքի ժամանակ, բացի ազգական տղամարդկանցից, ձրի օգնության համար հավաքվում էր գյուղի երիտասարդության մեծ մասը:

Համայնքի օգնությունն անխուսափելի էր ջրաղացի և ձիթհանքի քարերի տեղափոխման ժամանակ: Տեղափոխումը կատարվում էր գլորելով, ուսելով, բալխիրներով քաշելով և «ճախարակ» կոչվող սարքի միջոցով: Մասունում պահպանվել էր գլորման եղանակով տեղափոխման ամենանախնական ձևերից մեկը. ջրաղացի քարի կենտրոնում բացված անցքով անցկացնում էին ռոտ (սոնի) այնպիսի երկարությամբ, որ յուրաքանչյուր կողմից հրեին կամ թեքություններում գսպեին 5-6 մարդ: Ռոտի երկու կողմերից կապված պարանից էլ ձգում էին մի քանի տղամարդ<sup>274</sup>: Իսկ Ե. Կարապետյանի վկայությամբ՝ Մասունում «ջրաղացի քարերի փոխադրման գործին փոխօգնության կարգով, մասնակցում էր ամբողջ գյուղը՝ մարդկանցով և քաշող ուժով՝ 40 մարդ և 20 գույզ եզ իրենց լծասարքերով և երկաթե շղթաներով»<sup>275</sup>: Ազնվացձոր գավառում ջրաղացի և ձիթհանքի քարերի տեղափոխմանը մասնակցում էին 40-50 հոգի: Նրանք ջրաղացի քարերի մեծությանը համապատասխան սարքում էին *բալխիր* (սահնակ), որի վրա քարը կապում էին շղթաներով խաչուփաթ ձևով: Գավառի քրդական Շիքրան գյուղից, որտեղ քարի հանք կար, 20 կմ հեռավորության վրա գտնվող Սագ գյուղ տեղափոխելու ժամանակ հարթություններում բալխիրներին լծում էին մեկ գույզ գոմեշ և 5 գույզ եզ, իսկ դժվարամատչելի տեղերում համաձայն բանասաց Խ. Ներսիսյանի, տեղափոխումը գրեթե 50 հոգով էր կատարվում<sup>276</sup> (տե՛ս նկ. 9):

<sup>274</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 248:

<sup>275</sup> Ե. Կարապետյան, *Մասուն* (ազգագրական նյութեր), էջ 51:

<sup>276</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 8, էջ 45:



Նկ. 9 Ջրաղացի քարի տեղափոխությունը Բաղեշում

Նշված բոլոր դեպքերում պահպանվում էր ազգակիցների համախմբումը, եթե այն չէր բավարարում, ստացվում էր համայնքի լայն աջակցությունը: Խմբակային այս աշխատանքն ուղեկցվում էր զվարճությամբ, իսկ վերջում կերակրվում էին ջրաղացի տիրոջ հաշվին: Համանման կոոպերատիվ աշխատանքներ էին պահանջում հասարակական նշանակություն ունեցող բազմաթիվ կառուցումները և կառուցապատումները՝ եկեղեցի, ճանապարհ, հասարակական օդափորանոցներ, կալեր, առուներ և այլն: Յուրաքանչյուր տուն պարտավորվում էր տրամադրել մեկ կամ մեկից ավելի աշխատավոր:

Փոխօգնության նման դրսևորումները՝ կոլեկտիվ աշխատանքները հաճախ ներառում էին նաև ոչ արյունակից հարևաններին. բնության տարերքին ենթարկված տնտեսությունը, փլուզված շինությունները, ամառանոց և կամ ձմեռանոց արտոտավայրային կացարանները, գոմերը և այլն կառուցելիս, հեղեղատները, առուների հունը մաքրելիս, աղորիքի, ջրաղացի, ձիթհանքի քարերը տեղափոխելիս, որոնց անհարմար տեղանքներով տեղափոխելիս պահանջվում էր 30-40 մարդ միաժամանակ: Իսկ դրա փոխարեն կառուցողը ամառանոցային սեզոնում օգնում էր ազգականին կամ հարևանին կաթնամթերքներ պատրաստելիս և այլն: Փոխօգնությունը պարտադիր էր տարերային աղետների՝ խոտի դեզի կամ տան հրդեհման, համաճարակի հետևանքով անասունների կորստի և այլ դեպքերում, որին մասնակցում էր նաև ողջ համայնքը:

Առավել մեծ օգնություն էր ցուցաբերվում տարեց և անգավակ մարդկանց ընտանիքներին: Կանայք և աղջիկներն օգնում էին տնային գործերում, բուրդ մշակելիս, իսկ տղամարդիկ դրսի աշխատանքներում:

**Ինքնապաշտպանական բնագավառ:** Տոհմային համերաշխության այդ վերապրուկները և կոլեկտիվ գործողություններն առավել ուժգնությամբ էին դրսևորվում օտար հարձակումների ժամանակ: Մասունցի կին թե տղամարդ դուրս էին գալիս իրենց կամ հարևան գյուղերը խուժած քրդական ավազակային խմբերի դեմ՝ ինքնապաշտպանության և թալանը ետ բերելու համար՝ հաճախ տալով նաև մարդկային զոհեր: Ուստի և զարմանալի չէ, որ այստեղ այդ նպատակով գոյություն ունեւր կոլեկտիվ կազմակերպվածություն, ռազմական միջոցների՝ զենքի և զինամթերքի պատրաստման համար: Մասունում ընդհանրապես ռազմական նպատակներով նյութը լեռնավայրերից ձեռք բերելը, տեղափոխելը և տեղում մշակելը պահանջում էին կոլեկտիվ աշխատանք: Մասունում «տեղ-տեղ հովիտների մակերևույթը ծածկված էր լինում սպիտակ բորակով, որից սասունցին կարողանում էր ինքնուրույն եղանակով վառող ևս պատրաստել»<sup>277</sup>: Սպիտակ այդ բորակը ծծմբի, իսկ ծծմբի բացակայության դեպքում՝ սպիտակ սոխի և կաղամախու էմուլսի (կեղևի մամուռակալած քերուկ) հետ խառնում էին ուռենու չոր փայտից պատրաստած ածուխին և համայնքային ինքնապաշտպանության նպատակով վառող ստանալու համար 8-12 տղամարդկանց, իսկ պատերազմական տարիներին նաև կանանց կոլեկտիվ ջանքերով սանդղով ու վարսանդով ձեռնում այն<sup>278</sup>:

Երկաթահանքերի հարուստ պաշարների շնորհիվ քաջակորով տալվորիկցիների հիմնական զբաղմունքներից մեկը երկաթամշակությունն էր, աշխատանքային գործիքների, կենցաղային առարկաների և զենքի տարբեր տեսակների պատրաստումը: Նրանք այդ առարկաներն ու գործիքները վաճառում էին Մշո, Բշերի և Տիգրանակերտի դաշտերի բնակչությանը: Քրդական համաշտակություններից ապահով մնալու համար՝ գյուղի երիտասարդները, յուրաքան-

<sup>277</sup> Մասուն (նրա նկարագրությունը, բնակիչները և նոցա բարք ու վարքը) «Արաքս», Պետերբուրգ, 1894-95, Գ. Ա, էջ 70:

<sup>278</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 26:

յուր տնտեսությունից 1-2 հոգի, շուրջ 40 տղամարդով մեկնում էին վաճառելու կամ մթերքների հետ փոխանակելու<sup>279</sup>:

Ոչ միայն Մասունը, այլև ամբողջ Հայաստանը նկատի ունենալով՝ Գր. Վանցյանը գրում էր. «Մի ազգ, որ դարերով գուրկ է եղել ինքնապաշտպանությունից, ճնշվել, հալածվել և կոտորվել է, չէր կարող իր գոյությունը պահպանել, եթե նորա մեջ իսպառ մեռած լինեւր հասարակական, համայնական ոգին, որ... համայնական և ասոցիացական սովորությունները հայ գյուղացու բարոյական տոկունության խնդրում առաջնակարգ դեր են խաղացել և դեռ խաղում են»<sup>280</sup>:

Լեռնային շրջաններում վաղ զարնանը, ահավոր ուժգնությամբ շարժվում էին ձյան հսկա բլուրներ՝ հուսիներ, որոնք հաճախ ծածկում էին անասուններով լեցուն գոմերը և փարախները՝ մարդկանցով հանդերձ: Այդպիսի պատահարների դեպքում, մարդիկ անմիջապես, առանց տարիքի ու սեռի խտրության, թիերով ու փորոզ գործիքներով շտապում էին դեպքի վայրը, ցրում ձյան հսկա շերտերը և փրկում ծածկվածներին<sup>281</sup>:

Եղեռնից մազապուրծ ազգակիցները Հայաստանի առաջին Հանրապետության և ապա Խորհրդային Հայաստանի սկզբնական տարիներին մինչև կոլեկտիվացումը համախմբվում և փոքր խմբերով համատեղ ժամանակավոր տնտեսություններ էին հիմնում: Դրանք երբեմնի խոշոր գերդաստանները հիշեցնող տնտեսություններ էին, որոնց հիմքում ընկած էր մերձավոր ազգանդամների՝ միմյանց միջև տնտեսական, արտադրական և բարոյական կապերն ապահովելու նպատակը: Անհրաժեշտ անասուններով և գործիքներով ապահովված չլինելով՝ ազգակից մի շարք տնտեսություններ միացնում էին իրենց մեկական եզներն ու արտադրամիջոցները և հերթով կատարում վարուցանքը, կալսումը: Թալիսի և Աշտարակի սասունցիները բնակարանաշինության, այգեթաղի, այգեկութի, բերքահավաքի աշխատանքներում պահպանում էին կոլեկտիվ փոխօգնությունը, որն այժմ կատակով *հացվոր* են անվանում: Այդ նշանակում

<sup>279</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 25:

<sup>280</sup> Գր. Վանցյան, Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության, էջ 88-89:

<sup>281</sup> Օրինակ՝ Ազնվացձոր գավառի Խարթ գյուղում, 1897 թ. հուսիսի տակն է անցնում Խարթա Մինասի տունն ու գոմը՝ ընտանիքով և 32 տավարով: Ամբողջ համայնքն ու մոտակա գյուղերն անմիջական օգնության են հասել և փրկել ընտանիքն ու կարողությունը (Տե՛ս ԴԱՆ, տ. 8, էջ 42):

է, թե դրամական հատուցում չպահանջող աշխատավորներին պարտավոր են ըստ պատշաճի հյուրասիրել<sup>282</sup>:

Ազգակից ընտանիքների միասնության տարրերը վերապրուկային ձևով պահպանվեցին մինչև կապիտալիստական տարրերի վերջնական վերացումը՝ մինչև 1930-ական թվականների կեսերը: Գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ և մասնավոր սեփականության ոչնչացմամբ, ձևավորվեցին հասարակական-բարոյական նոր չափանիշներ, ներազգակցական և միջազգակցական միանգամայն նոր հարաբերություններ: Բհարկե, հին հարաբերությունները միանգամից չվերացան: Ազգակցական խմբի տնտեսական շահերի միասնությունը ձգվեց մինչև կոլեկտիվացման ավարտը, շարունակվում էին ազգակցական խմբավորումների հակամարտությունը, թայֆական կռիվները: Վերևից պարտադրվող կոլեկտիվացումը, սոցիալիստական հավակեցության կանոնների պարտադիր կիրառումը վերջ դրին թայֆայական կամ նման բնույթի կապերին ու հարաբերություններին, որոնք դասակարգային հասարակության պայմաններում դարեր շարունակ պահպանվել էին՝ ժամանակի ընթացքում կրելով համապատասխան փոփոխություններ: Իսկ մեր օրերում փոխօգնության վերոհիշյալ ձևերի մասին այլևս խոսք չի կարող լինել, թեև ավանդապահ շրջաններում որոշ աշխատանքների ժամանակ՝ տուն կառուցելիս, այգու կամ բոստանային կուլտուրաների մշակության տեղ բացելիս և հատկապես տնային կենցաղում նկատելի է ազգակցական և հարևանական օգնությունը: Արևմտահայերով բնակեցված գյուղերում 1970-ական թվականներին մեր կողմից կատարված դաշտային ազգագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ ազգակցական և համայնքային փոխօգնության սովորույթները, ի տարբերություն հարևան այլ բնակավայրերի, նրանց կենցաղում երկար պահպանվեցին, ընդհուպ ներկա ժամանակները: Թեև դրանք արդեն կորցրել են գուտ ազգակցական փոխօգնության հին իմաստը:

Համերաշխության և համագործակցության այս սովորույթները արևմտահայոց կյանքում նրա որոշ տարրեր մինչև մեր օրերն են գոյատևել խոր հնադարից, քանզի արտադրողական ուժերի ցածր աստիճանը և տեխնիկայի պարզունակությունը նրանց նան կախման մեջ են պահել բնությունից, շրջապատող աշխարհագրական պայ-

մաններից: Հայտնի է, որ թույլ զարգացած և անբարենպաստ բնակլիմայական պայմաններում գտնվող հասարակության կողմից բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրությունը, բնակարանային ու արտադրական կառույցների շինարարությունը, բռնակալական ռեժիմի, օտար ասպատակությունների և բնության տարերքների դեմ պայքարելը անհնարին կլինեին առանց ազգի և համայնքի անդամների և ընտանիքների կոլեկտիվ, փոխադարձ օգնության կազմակերպման: Առանց դրան հայությունը չէր կարող տոկալ գոյության համար մղվող դաժան պայքարում: Ա. Քալանթարը դիպուկ է նկարագրել հանուն գոյատևման սասունցիների գործադրած ջանքերը. «Մասունը իր մեջ պարունակում է բնության հարստություններ, որոնց ձեռք բերելը, մարդկային ապրուստին ծառայեցնելը՝ ըստ մեծի մասի կատարվում է միայն աշխատանքով և այն էլ՝ մեծ, աննկարագրելի ծանր աշխատանքով: Եվ դա մի այնպիսի աշխատանք չէ, որ մի անգամ գործադրվեց ու վերջացավ, դա մի տաճար, մի կամուրջ, մի բուրգ շինել չէ, որ մի անգամ կատարվեց և երկար տարիների համար ծառայեց: Դա մշտական, տոկուն գործունեություն է, անքուն հսկողություն, անդադար խնամք, որոնց պակասության, որոնց բացակայության միջոցին կորչում է այդ երկրի բազմազան արդյունաբերությունը<sup>283</sup>:

Կ. Մարքսը աշխատանքային այդպիսի կոռպերացիաների կազմակերպմանը մեծ նշանակություն տալով գրում է. «Կոմբինացված աշխատանքի արդյունքը նման բոլոր դեպքերում կա՛մ բոլորովին չի կարող ստացվել մեկ անհատի ջանքերով, կա՛մ էլ կարող է իրագործվել միայն շատ ավելի երկար ժամանակամիջոցում կամ միայն գաճաճային մասշտաբով»<sup>284</sup>:

Իսկապես հսկայական է եղել փոխօգնության դերը հայ գյուղացիության արտադրական կյանքում: Այդ պատճառով էլ ազգակցական կապերը հարևան հարաբերությունների հետ հաճախ հանդես էին գալիս միահյուսված ձևով: Ազգագրագետ Է. Կարապետյանը, քննարկելով համայնական համանման ազգագրական նյութերը, հանգել է այն եզրակացության, որ «տնտեսական փոխօգնության ձևերը՝ ինչպես հողի մշակության, այնպես էլ անասունների արածեցման ընկե-

<sup>282</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 64-65, տ. 12, էջ 106-109:

<sup>283</sup> Ա. Քալանթար, *Մասուն*, էջ 33:

<sup>284</sup> Տե՛ս Կարլ Մարքս, *Կապիտալ*, հ. 1, եր., 1954, էջ 346:

րությունների կազմակերպումը, իրագործվում էին հիմնականում հարևանական-տերիտորիալ սկզբունքով, սակայն ազգակցական հարաբերությունների պահպանման հետևանքով այդ ընկերությունները հաճախ համընկնում էին ազգակցական խմբերի հետ»<sup>285</sup>:

Այսպիսով, պատմական և ազգագրական նյութերի համադրումը ցույց է տալիս, որ XIX դարում և XX դարի սկզբների գյուղական համայնքն իր նախորդից ժառանգել էր այնպիսի գծեր, որոնք դրել էին իրենց կնիքը գյուղական համայնքի անդամների փոխհարաբերությունների վրա: Գյուղական համայնքի ներսում, նրա անդամների փոխհարաբերություններում, չնայած գույքային շերտավորմանն ու սոցիալական անհավասարությանը, պահպանվում էին տոհմային կարգերից ժառանգված փոխօգնությանը և համերաշխությանը վերաբերող մի շարք սովորույթներ: Գյուղական համայնքի արտադրական հարաբերությունների մակարդակն այնպիսին էր, որ հանգում էր նրա անդամների շահերի միահյուսմանը, աշխատանքի ընթացքում սերտ կապին, համերաշխության որոշ կանոնների պահպանմանը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ իրականության մեջ մինչև XX դարի սկզբները, լեռնային, հաղորդակցության ուղիներից հեռու ընկած բնակավայրերում մինչև անգամ XX դարի կեսերը շարունակում էին գոյատևել վաղ դասակարգային հասարակարգերին բնորոշ բազմաթիվ համայնական հասարակական կառույցների մնացուկներ, այդ թվում նաև «ազգ» արենակցական խումբը, որն ազգագրության մեջ հայտնի է պատրոնիմիա անվանումով: Պատրոնիմիայի գոյությունը Կովկասյան ժողովուրդների շրջանում հայտնաբերել է ականավոր կովկասագետ-ազգագրագետ Մ. Կոսվենը՝ բնութագրելով այն որպես նահապետական տոհմային կարգերին հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մասամբ պահպանված հնագույն հասարակական ձև: Այդ ձևը նահապետական մեծ ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական ու գաղափարական միասնությունը տարբեր չափով պահպանած ազգակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է: Սոցիալական այս ինստիտուտի գործելակերպի վերաբերյալ ակնարկներ են պահպանվել հայ մատենագրության մեջ, դաշտային ազգագրական նյութեր են գրառել Ե. Լալայանը, Ս. Սովսիսյանը (Բենսե), Գ. Հալաջյանը, Ե. Կարապետյանը, Վ. Պետոյանը և ուրիշներ: Հիմնախնդրի մասնագիտական ուսումնասիրությամբ զբաղվել են Խ. Մամուլեյանը, Վ. Բոդյանը, Է. Կարապետյանը և այլք, նաև տողերիս հեղինակը:

«Ազգ» արենակցական խմբի վաղ շրջանի պատմությունը Հայաստանում, ինչպես երևում է միջնադարում և XIX- XX դարերում գրառված նյութերից, ցույց է տալիս ազգակից ընտանիքների հասարակական, տարածքային և տնտեսական կապվածությունը, որը պայմանավորված էր գոյության պատմաքաղաքական, աշխարհագրական, բնակչուղղիական և տնտեսավարման պայմաններով:

Գրավոր աղբյուրները և ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ XX դարի սկզբներին հայ գյուղական իրականության մեջ զարգացած դրացիական հարաբերությունների համակարգում դեռևս կենսունակ էր «ազգ» արենակցական խումբը, որն իր կազմում ունեցել է արական գծով 6-7 սերունդ՝ ազգի հիմնադիր նախահորից վարընթաց և հորիզոնական ճյուղավորումների ընդգրկմամբ:

<sup>285</sup> Э. Карапетян, Родственная группа "азг" у армян, с. 95.

XIX դարի վերջին և XX դարի սկզբին «ազգը» հայերի կենցաղում շարունակում էր մնալ միասնության տարրերի պահպանմամբ բնութագրվող առավել լայն հասարակական միավորում: Ազգը՝ որպես սոցիալական կառույց, առաջացել է տոհմային հասարակության վերջին շրջանում, նրա քայքայման փուլում, երբ գերդաստանները տրոհվում էին մեծ, հետագայում առավել փոքր անհատական ընտանիքների:

Սկզբնական շրջանում ազգը կարող էր կազմվել բացառապես գերդաստաններից, ավելի ուշ շրջանում՝ և՛ գերդաստանական, և՛ փոքր ընտանիքներից: Ուրեմն ազգը մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է, որ կազմավորվել է գերդաստանի ընդլայնման, հատվածավորման, տրոհման հետևանքով: Ազգը իր կազմում ունեցել է 3-4-ից մինչև 100, գուցե և ավելի ընտանիք: Արյունակցականից բացի, ազգը ձեռք էր բերում նաև հոգևոր ազգակցություն, ինչպես օրինակ՝ քվորությունը, երդումնախայերությունը, երդումնաքույրությունը, որդեգրությունը և այլն, որոնք բացառում են էնդոգամ՝ ազգի ներսում ամուսնությունը:

Ազգակից ընտանիքները երկար դարեր միմյանց հետ պահպանել են հասարակական, գաղափարական, տարածքային, տնտեսական միասնության տարրեր և կրել են ընդհանուր անվանում՝ հիմնականում հիմնադիր նահապետի անվամբ: Ազգի միասնության տարրերից առավել կայունը գաղափարական ընդհանրությունն է, որը շատ ավելի երկար է հարատևել, քան ազգի բնորոշ մյուս գծերը՝ տարածքային միասնությունը, փոխօգնությունը, արտադրական-տնտեսական ընդհանրությունը և այլն: Գաղափարական ընդհանրությունը առաջին հերթին արտահայտվել է մեկ ընդհանուր նախահոր նկատմամբ հիշողությունը վառ պահելով, իսկ ազգի անվանումը շատ հաճախ կապված է եղել նախահոր մասնագիտության անվան հետ:

Հայերի մեջ «ազգ» բառեզրը գործածվել է բազմազան իմաստներով. իբրև բույսերի և կենդանիների տեսակներ, իբրև սեռեր տարանջատող խմբեր, իբրև նախարարություն, իբրև էթնիկ հանրույթ՝ ժողովուրդ, բայց առավել լայն տարածված ձևով՝ իբրև արյունակից ընտանիքների խումբ: Ազգին հոմանիշ են դաս, ցեղ, տոհմ, ազգ ու տակ, ազգատոհմ, ազգ ու էրամ, արյուն, նաև տուն, գերդաստան, քոք ու բուս (արմատ և ծիլ նշանակությամբ) անվանումները:

Նշենք, որ մեր ուսումնասիրության մեջ «ազգ» բառեզրը գործածել ենք արյունակիցների խումբ իմաստով:

Ազգը՝ որպես առավել լայն արենակցական կապերով կապված խումբ, բաժանվում է ճյուղերի: Ճյուղն ազգից ավելի նեղ ընտանեկան-ազգակցական խումբ է: Այն ազգի հիմնադիր նախնու մի քանի որդիների ճյուղավորությունն է: Յուրաքանչյուր ճյուղ իր հերթին բաժանվում է էլ ավելի նեղ ազգակցական խմբերի՝ եղբայրների և հորեղբայրների և նրանց որդիների ընտանիքների: Այս խումբը բարբառներում նշվում է «բիձոնք», «ապերանք», «ապանք», «ամիանք», «հոխարանք», «հոպարանք», «հապկա ճժեր» և այլն:

Հայոց մեջ ազգանունները առաջացել են երեք սկզբունքով. 1) ազգի հիմնադրի, 2) բնակավայրի, 3) տոհմական արհեստների անվանումներով: Ըստ մասնագիտության՝ ազգանունները հիմնականում առաջացել են Արևմտյան Հայաստանում, մինչդեռ արևելահայ իրականության մեջ, ուր հայերի հիմնական զբաղմունքը եղել է բնատնտեսության պայմաններում հողագործությունը, ազգանունները հիմնականում առաջացել են ազգի հիմնադրի անունից և ավելի ուշ շրջանում:

Գոյություն ունեն նաև մականունով առաջացած ազգանուններ, երբ մոռացության է մատնվել ազգի հիմնադրի անունը և հիշվել են նրա ֆիզիկական տվյալների, շնորհքի, խելացիության, նաև վարքի և այլ հատկանիշների հետ կապված մականունները: Հայ իրականության մեջ գոյություն ունեն նաև կանանց անվանումով ազգանուններ՝ պայմանավորված ազգի մեծի կնոջ խիզախությամբ, գեղանիությամբ, խելացիությամբ, բժշկագիտական հմտությունների, վարք ու քարքով օժտված լինելու հանգամանքների հետ:

Ժամանակակից ազգանունները ուշ երևույթ են և առաջացել են XVII-XVIII դարերում՝ շուկայական հարաբերությունների ձևավորման շրջանում: Ազգի ընտանիքներին մատնանշելու համար ազգանվան հիմքին (հիմնադրի անվանմանը կամ մասնագիտությանը) ավելացրել են *անք, էանք, ենք, ենց, եց, ոնք, ոնց, ունի, ունց*, հետագայում ավելի տարածված՝ *յան, յանց* ձևերը, որոնք ցույց են տալիս պատկանելություն: Ժամանակակից ազգանունը թեև բոլոր ազգակցական խմբերի համար սովորական ձև է, բայց բանավոր խոսքի մեջ մարդիկ երբեմն իրար դիմում կամ անվանում են հին ձևերով՝ Նահապետենք, Մարտիրոսանք, Մուրադենք և այլն: «Յանց»-ով վերջացող ազգանունները բնորոշ են Ռուսաստանի հայերին, «ունց»-ով ազգանունները՝ Զանգեզուրի հայությանը: Ժամանակակից ազգա-

նունները համատարած շրջանառության դրվեցին հիմնականում Հայաստանում XX դարի 20-ական թթ.՝ խորհրդային կարգերի հաստատումից ի վեր:

Ազգի հասարակական գաղափարական ընդհանրության դրսևորման տարրերից են նաև ազգակցական ընդհանուր գերեզմանատուն ունենալը, օտարության մեջ վախճանված հարազատին հայրենի հող տեղափոխելը, ազգովի սուգ պահելը, հոգեհացի և մեռելոցների ծախսերը համատեղ հոգալը, ամուսնության ժամանակ ընտրությունը ազգի մեծի և նրա կնոջ հետ քննարկելը և նրանց համաձայնությամբ իրագործելը, հարսանեկան արարողակարգին համատեղ մասնակցությունն ու պատվով ընթացք տալը, արյան վրիժառության սովորույթը, ազգից աղջիկ փախցնելու դեպքում ազգովի պատասխանատու լինելը, նոր սերնդի ազգին նվիրվածությունը և ազգապահպան ոգով դաստիարակությունը, ազգի նախահոր նկատմամբ պաշտամունքը, ծննդի ու կնունքի, ամուսնության ու թաղման, գերեզմանոցում ազգակցական շարքերի պահպանման սովորությունները, ընդհանուր սրբատեղի ունենալը, գյուղապետի, համայնքապետի և այլ պաշտոնյաների ընտրության ժամանակ ազգովի սատարելը, տունական արարողությունները համատեղ նշելը և այլն: Առանձին ազգեր ունեին իրենց ընդհանուր սրբատեղիները, պաշտամունքի առարկա դարձած ավետարանները, նարեկները, հմայիլները և այլն:

Ազգակցական համակարգի գաղափարական կապերից մեկը բարոյական անաղարտ նորմերի պահպանումն էր, որտեղ իսպառ բացակայում էր ներազգակցական ամուսնությունը: Ամուսնությունը ազգի ներքում թույլատրվել է միայն 6-7-րդ պորտը լրանալու դեպքում: Կանանց և աղջիկների պատիվը պահպանելը ազգի բոլոր անդամների բարոյական պարտքն էր: Ազգի կնոջ պատվի հետ խաղացող տղամարդկանց նկատմամբ խիստ միջոցառումներ էին ձեռնարկում՝ ձեծել, ականջը կտրել, սպանել:

Ազգին հատուկ է եղել նաև ինքնապաշտպանությունը և վրիժառության պարտականությունը: Բոլոր ժամանակներում ազգի պատիվը ոտնահարողներից վրեժ են լուծել: Արյան վրեժի և համերաշխության հասարակական-ազգակցական ընդհանրության մնացուկները գոյատևեցին մինչև XX դարի 50-60-ական թվականները՝ բոլորովին փոփոխված սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում անգամ:

Ազգի տարածքային ընդհանրության, միասնության դրսևորման տարրերից է եղել ազգովի, համատեղ բնակավայր կամ թաղեր կազմած ապրելու սովորույթը: Ազգովի թաղամասերը հիմնականում հնաբնակների թաղերն էին, հետագայում եկած ընտանիքները խցկվել են ազատ մնացած տարածքներում՝ կազմելով խառը՝ ազգակցական և հարևանական ընտանիքներով բնակեցված թաղամասեր: Դեռևս XIX դ. վերջերին կարելի էր հանդիպել ազգակցական թաղերով բնակեցված, իսկ բացառիկ դեպքերում նաև մեկ ազգի ընտանիքներով բնակեցված բնակավայրերի, որոնք հիմնականում կրել են տվյալ ազգի անվանումը: Այս կամ այն ազգի անվանման տարածումը գյուղի անվանման վրա՝ պայմանավորված է եղել ոչ միայն ազգի ընտանիքների քանակով, այլ նաև նրանց բնակեցման վաղ շրջանով:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբին հայ իրականության մեջ, անկախ աշխարհագրական և պատմական պայմաններից, կարելի է առանձնացնել երեք տիպի ազգովի բնակեցմամբ բնակավայրեր. առաջինը և ավելի հինը, որ պահպանվել էր բացառապես լեռնային շրջաններում՝ ազգովի բնակեցմամբ մեկ բնակավայր կազմած համակարգն էր: Սա ավելի բնորոշ էր հնավանդ հասարակություններին: «Ազգի» ավանային բնակեցման վերաբերյալ ուշագրավ հիշատակություն է թողել X դարի պատմագիր Թովմա Արծրունին:

Երկրորդը՝ ազգովի թաղերով բնակեցմամբ համակարգն էր, որ բնորոշ էր համեմատաբար ավելի ուշ հասարակական զարգացման դարաշրջաններին: Համանման թաղերի առկայությունը հավաստել են XIX դ. վերջերի և XX դ. սկզբների ազգագրական նյութերը: Ազգովի թաղերով բնակման համակարգը ավելի կայուն է պահպանվել Արևմտյան Հայաստանում: Դրանք երկար են գոյատևել լեռնային, նախալեռնային և ավելի վաղ քայքայվել հարթավայրային շրջաններում: Հայկական բնակավայրերին մինչև XX դարի սկզբները բնորոշ էր ազգի և հարևան ընտանիքների տների միջև միմյանց կապող պատերից բացվող նեղլիկ դռներով կամ փոքրիկ պատուհաններով հարողակցվելու սովորույթը: «Ակնատ» կամ «դրիճակ», իսկ Մասունում և այլուր նաև «ջբակ» անվամբ կապի այդ հնադարյան համակարգը բացառապես ունեցել է բնակչության ինքնապաշտպանությունը, անվտանգությունը, ազգովի կամ ամբողջ համայնքով համերաշխված ապահովելու և միաժամանակ, առօրյա՝ լուրեր հաղորդել-

լու, իրեր փոխանակելու և այլ նպատակներ: Համատեղ բնակվածու-  
թյունը, անշուշտ, կապված է եղել ինչպես տոհմային կարգերից մնա-  
ցած սովորույթների վերապրուկների, այնպես էլ՝ տնտեսական հա-  
մագործակցության, ինքնապաշտպանության ապահովման գաղա-  
փարի հետ, սովորույթ, որ բացառում էր ոչ արյունակիցների բնակե-  
ցումը իրենց շարքերում: Ազգակցական թաղը ներկայացնում էր  
ճարտարապետական մի կոմպակտ համալիր, որի կոտորները ծա-  
ռայում էին երթևեկի, կոլեկտիվ աշխատանքների կազմակերպման,  
ժողովների անցկացման, խաղերի, հարսանեկան պարերի անցկաց-  
ման և այլ նպատակների:

Երրորդը և XX դարում ամենատարածվածը՝ ազգակիցների մի-  
այն նեղ շրջանակներ ընդգրկած առավել մերձավոր՝ եղբայրական  
ընտանիքներով կից բնակարաններով համատեղ բնակվելու սովոր-  
ույթն էր, երևույթ, որը խորհրդանշում էր ազգի տրոհման, մասնա-  
տումբ: Ազգապետի հեղինակության անկման, տնտեսական և այլ  
հարցերում ազգի ընտանիքների ինքնուրույնություն ձեռք բերելու  
հետևանքով հնարավոր է եղել բարեկամի կամ խնամու անվան տակ  
օտարի՝ որևէ ընտանիքի խցկումը ազգակցական թաղամաս: Հե-  
տաքրքրական է, որ ազգովի թաղերը որոշակի դեր են կատարել նաև  
կոլեկտիվացման շրջանում: Բրիգադները, օղակները կազմակերպ-  
վել են տարածքային սկզբունքով՝ ընդգրկելով առանձին թաղեր:

Ազգի ընտանիքները միմյանց հետ կապված էին նաև տնտեսա-  
կան շահերի ընդհանրությամբ: «Ազգի» տնտեսական երբեմնի միաս-  
նության վերապրուկներն արտահայտվում էին հողօգտագործման և  
հողատիրության ժառանգական սեփականության, արտադրության  
թանկարժեք միջոցներից՝ ջրաղաց, ձիթհան, գուրան, խնոցի, պղնձե  
մեծ կաթսա և այլն, համատեղ օգտվելու և փոխօգնության կարգի մեջ:

Ազգի անշարժ ունեցվածքը՝ հողը, նրա սեփականությունն էր  
կազմում, օտարման ենթակա չէր և փոխանցվում էր հորական գծով  
սերնդեսերունդ: Այն կոչվում էր պապենական հող: Կինը երեք դեպ-  
քում կարող էր ժառանգորդ դառնալ. 1) եթե մահացածի աղջիկը  
հաշմանդամ էր, 2) եթե միակ ժառանգորդն էր, 3) եթե կորցրել էր  
ամուսնուն: Իսկ եթե նա ամուսնանար օտարի հետ կամ փոխեր դա-  
վանանքը, ապա կզրկվեր հողի սեփականության իրավունքից:

Համազգի հողամասերը չէին վաճառվում առանց «ազգի» ընդ-  
հանուր համաձայնության: Ազգի տղամարդ անդամները «պապենա-

կան» հողի ժառանգորդի իրավատերեր էին: Ինչ վերաբերում է որբե-  
րին, ապա նրանց խնամակալությունը վերցնում էր բարեկամներից  
մեկը, և երեխաների չափահաս դառնալուց հետո՝ նրանց հայրական  
ունեցվածքը վերադարձվում էր ինքնուրույն տնտեսություն վարող  
որբերին: Այս բոլորը կատարվում էր սովորութային օրենքի ուժով:

Հավասար «ախպերաբաժին» էին արվում ջրաղացն ու ձիթհան-  
ները, համատեղ ստեղծված այգիներն ու դարավանդային արտերը և  
բանջարանոց-բոստանները, խոտհարքները, արտադրության թանկ  
այլ միջոցները:

Ազգի տնտեսական ընդհանրությունները դրսևորվել են նաև  
արտավայրերը համատեղ օգտագործելու ձևերում: Մանր եղջերա-  
վոր անասունների արածեցման ընկերակցությունները, կաթնա-  
տնտեսությունը հիմնականում կազմակերպվում էին ըստ տարած-  
քային-ունեցվածքային հատկանիշի, բայց ազգակցական թաղերի  
դեպքում ընկերակցությունները կազմվում էին ազգականներից՝ ազ-  
գովի փոխօգնության սկզբունքով:

Հայ իրականության մեջ, մասնավորապես Արևմտյան Հայաս-  
տանում, օտարի անարգ լծի և ռազմավատական կարգերի հաս-  
տատման հետևանքով ազգակցական և համայնքային հարաբերու-  
թյուններում պահպանվում էին տոհմային մի շարք սովորություննե-  
րի մնացուկներ: Աշխատանքային կոլեկտիվիզմը, փոխօգնության  
ավանդական ձևերը, հասարակական գործերի համատեղ որոշման  
սովորությունները, արտադրության որոշ միջոցների և հողային ընդ-  
հանուր սեփականությունն օգտագործելու ձևերը ազգի ու համայնքի  
հարաբերությունների ամենաբնորոշ կողմերն էին:

Ազգովի համատեղ էին կազմակերպվում երկրագործական,  
անասնապահական, կոլեկտիվ ջանքեր պահանջող վարուցանքի,  
բերքահավաքի, կալսման և բերքը տուն հասցնելու, սննդանյութերը  
վերամշակելու, անասունների համատեղ արածեցման, ամառանոց-  
արտավայրերում անասնապահությունը և կաթնամշակությունը  
կազմակերպելու, ինչպես նաև բնակարանաշինության և ինքնա-  
պաշտպանության ապահովման այլ աշխատանքները:

Երկրագործության մեջ կիրառվել են կոոպերացիայի նախնա-  
կան ձևեր, համագործակցության եղանակներ, որոնք կազմվել են եր-  
կու սկզբունքով՝ տարածքային-հարևանական և ազգակցական: Այդ  
միավորումներում, յուրաքանչյուր ընտանիք մասնակցում էր իր բա-

նող անսուններով (լծկանով), աշխատանքի գործիքներով և աշխատուժով: Հակառակ պարագայում մի ընտանիքի ուժերից վեր էր 6-10 և ավելի զույգ քաշող ուժ ունենալը՝ իրենց սարքավորումներով և աշխատուժով: Ըստ այդ ընկերության մեջ ներդրած ջանքերի է՝ որոշվում էին ընկերության անդամների իրավունքներն ու պարտականությունները:

6. Հայտնի է, որ ազգի ճյուղավորումը կատարվում է ազգի հիմնադրի որդիներից սկսած (եթե մի որդի ունի, ապա ճյուղավորումը երրորդ սերնդից է սկսում), այդ դեպքում ճյուղավորումները տեղական ի՞նչ անվանումներ էին կրում (թաբուն, թիրա, թայֆա, թախում, սերունդ, դաս, ճյուղ, ևն):
7. Այդ ճյուղերը իրենց հերթին ավելի նեղ ազգակցական խմբերի են բաժանվում, այդ դեպքում ի՞նչ անվանում ունեն (այլ վայրերում՝ ամիանք, հոպարանք, բիծոնք):
8. Կազմել մի մեծ ազգատոհմի տոհմաժառ և նշել, թե քանի ճյուղավորումներ ունի (այդ ճյուղավորումների տեղական անվանումը) և ի՞նչ անուն է կրում (ճյուղը, բացի ընդհանուր ազգանունից, ունի նաև իր հիմնադրի անվանումը): Այդ սերունդները իրենց հերթին բաժանվում էին ավելի մեծավոր արյունակիցների խմբերի, դրանց անվանումները:
9. Քանի՞ ընտանիքներից էր (մեծ կամ փոքր) բաղկացած լինում ազգը: Մեկ ազգատոհմի ամենամեծ և ամենափոքր թվերը՝ ըստ ընտանիքների:

10. Եղե՞լ է այնպես, որ հին ժամանակներում ազգը կազմված լինի մեծ ընտանիքներից, իսկ հետագայում՝ փոքր:
11. Գոյություն ունե՞ր ազգակցական երկու խմբավորում. ավելի մոտ ազգակիցներ (հոպարանք, ամիանք, բիծոնք, մերոնք և այլն) և ավելի հեռու ազգակիցներ: Դրանց դերակատարումները միմյանց հանդեպ:
12. Ազգի մեջ մտնող մեծ ընտանիքների բաժանման հետևանքով մեծանում էր ազգը, արդյոք ազգակցությունը չէ՞ր բաժանվում ազգակցական ավելի նեղ խմբերի: Այդ բաժանումը ի՞նչ հիմունքներով էր կատարվում, ինչպե՞ս էր տեղավորվում և տեղաբաժանվում հողամասերի վրա նորաստեղծ ազգակցությունը: Կազմո՞ւ էին ավաններ:
13. Ինչպե՞ս էին տարբերվում և անվանվում ազգակցության առանձին մասերը, ինչպե՞ս էր անվանումն առաջանում: Արդյոք նախնիների մասն՝ հիմնադրի անունի՞ց: Ինչպե՞ս էր տարբերվում բաժանված ազգակցական խումբը մայր ազգատոհմից, ի՞նչ անվանումներ էին ստանում նորերը:
14. Ազգակցական ազգի միասնությունը ներկայացնող ազգանունն իր տարբեր ձևերով. նախնիներից ծագող ազգանուններ և զբաղմունքներից ծագող մականուններ, կրկնակի ազգանուններ (Դեմիրճյան-Պողոսյան ևն): Ազգանվան ընդհատումը երրորդ սերնդի կողմից. պատճառները:

### **§ 2. Ազգատոհմի գաղափարական կապերը. վերարտադրողական-դաստիարակչական, ամուսնաընտանեկան, բարոյավարքագծային, հյուրասիրության, ժամանցի կազմավորման և այլ գործառույթները**

1. Արյունակից ազգականների և ընտանիքների փոխադարձ վերաբերմունքը և դրա մշակումը: Ընդհանուր ազգի նկատմամբ սերն ու նվիրվածությունն ինչի՞ց էր(է) ծագում: Դրական վարմունքի ամրացման միջոցները. դրանք անցյալում և այժմ:
2. Լինո՞ւ էին ազգի կենտրոնախույս անդամներ, ընտանիքներ: Ի՞նչ պատճառներով (կրոնափոխություն, աղանդավորություն, տնտեսական կապերի թուլացում ևն): Ազգը ի՞նչ միջոցների էր դիմում կենտրոնախույս ձգտումները վերացնելու համար:
  - Տեղի ունենո՞ւ էին տոհմական ժողովներ՝ ազգակցական ընդհանուր հարցեր լուծելու համար:

- Ովքե՞ր էին հրավիրվում: Թույլատրվո՞ւմ էր կանանց մասնակցությունը, և ինչպիսի՞ դեր էին խաղում նրանք:
  - Որո՞նք էին ընդհանուր ժողովի իրավունքները: Ունե՞ին ժողովատեղի, ո՞րն էր:
  - Կա՞ր ազգի ընդհանուր ղեկավար: Եղե՞լ է արդյոք ընդհանուր ժողով ազգի ներսում:
  - Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ուներ ավագ ընտանիքը: Նրա տունը ծառայո՞ւմ էր ամբողջ ազգի հավաքատեղի: Այդ տունը ունե՞ր իր հատուկ անվանումը:
  - Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեին ազգի նահապետը և նրա կինը:
3. Ազգի բարոյական կապերը.
- Ամուսնության թույլատրելիության սերնդային հաշվառման կարգը:
  - Եղե՞լ է պարտադիր կամ հատուկ ամուսնություն ազգի ընտանիքների միջև. հանգամանքները:
  - Ազգակցական ի՞նչ սովորություններ էին պահպանվում՝ հարսանիքի, ծննդի, մկրտության, քառասունքի, տոնական օրերի, հուղարկավորման, նախնիների հիշատակի օրերի և այլնի հետ կապված:
  - Կայի՞ն ազգի ներսում ազգի պատմությունը լրիվ իմացողներ, տոհմական ավանդույթները գրանցող կամ միասնությունը ավետող մարդիկ, կատարվո՞ւմ էր ազգի նախնիների հաշվառում, ո՞վ էր այդ հարցերով զբաղվողը և այլն:
  - Աղջիկների ու կանանց պատվի հարցերը և ազգը:
  - Ազգի հարատևության՝ պահպանությանն ուղղված պայմանների ամրացումը: Չգտում կա՞ր և այժմ կա՞, որ ամենահեռավոր ազգականների միջև անզամ ամուսնություն տեղի չունենար, չնոռանալու համար ազգանունը, պահվեր, հարգվեր նախնիների հիշատակը, ծագման պատմությունը և այլն:
  - Առևանգման դեպքում պատվի պահպանման համար մղվող պայքարի ձևերի հարգումը:
4. «Ազգանուն» տերմինի սկզբնական ձևերը տեղերում (միայն ժողովրդական):
5. «Մականուն» տերմինը որպես ներկայիս «ազգանուն» տերմինի գույակիցը Արևմտյան Հայաստանում: Նրա ծագումը և տարածումը:

6. Ազգանունը ծագում է հեռավոր նախնուց, որին միայն ավանդույթյամբ էին հիշում: Գրի առնել ավանդությունը:
7. Սովորություն կա՞ր ազգանունը փոխել: Ինչո՞ւ: Ո՞ր պորտից սկսած էր փոխվում ազգանունը և ո՞ւմ անունն է դառնում նոր ազգանվան հիմքը: Եթե յուրաքանչյուր տղամարդու ազգանուն նրա պապից էր ծագում, այդ պարագայում դեռ ողջ պապի օրո՞ք էր փոխում ազգանունը, թե՞ միայն մահից հետո:
8. Եթե ազգանունն ավանդական չէր, և ամեն մի նոր սերունդ իր նոր ազգանունն էր ունենում, այդ դեպքում ազգը ներկայացնող մի ընդհանուր անուն կամ մականուն չէ՞ր լինում, որով իրարից արյունակցությամբ հեռացած սերունդներն իրար պիտի ճանաչեին (օրինակ՝ Փահլևանենց ազգ և այլն):
9. Կա՞ն ազգանուններ (մականուններ), որոնք ծագել են զբաղմունքներից: Արդյոք այդպիսի ազգանունները ավանդական դառնո՞ւմ էին: Ավանդություն ազգանվան ծագման մասին:
10. Ազգը կարո՞ղ էր ունենալ կրկնակի անուն, որոնցից մեկը օգտագործեր ազգի ընտանիքը, իսկ մյուսը՝ համայնքը. օրինակ՝ Սանասարենք կոչվեին նաև Գրիգորենք: Պատճառները: Այս դեպքում պատահել են երկպառակության դեպքեր, երբ ազգի կեսը Սանասարենք է կոչվել, մյուս կեսը՝ Գրիգորենք: Երբեմն ազգը համայնքի կողմից անվանվում էր կանանցից մեկի անունով (օրինակ՝ Սոնենք), նրա գեղեցկության, հեղինակության համար:
11. Լինո՞ւմ էին կենդանիների անուններից ծագող ազգանուններ (Եգյան): Այդպիսի ազգերը տվյալ կենդանուն համարել են իրենց ազգականը կամ բարերարը: Ավանդություններ: Արդյոք ազգը ուտո՞ւմ էր իր համար այդ սրբազան կենդանու միսը: Համարձակվո՞ւմ էին սպանել նրան: Կայի՞ն դեպքեր, երբ այնինչ ընտանիքը կրթել կամ դաստիարակել կամ որդեգրել է որևէ կենդանու՝ գայլին, աղվեսին, արջին ևն, ի՞նչ նպատակով:
12. Ազգանուններ, որ ծագել են ծառերի, փփերի և առհասարակ բույսերի ու ծաղիկների անունից: Ազգը ինչպե՞ս էր վարվում դրանց հետ:
13. Ազգանուններ, որոնցով կոչվում էին ազգերը այլոց կողմից, պատճառները:
14. Կայի՞ն գյուղեր, որոնք կրում էին որևէ ազգի անունը: Արդյո՞ք դրա պատճառը այն էր, որ գյուղը ժամանակին կազմված է եղել մի ազգից, թե՞ այդ գյուղում մի քանի ազգանուններից մեկի ազդեցիկ անունն է անցել համայնքին: Ավանդություններ:

15. Ազգակցական ավելի նեղ խմբերը՝ եղբայրների, հորեղբայրների և այլն, համապատասխանաբար ինչպե՞ս էին անվանվում (ամիանք, բիծոնք, հոպարենք, մերոնք և այլն):
16. Ներկայացնել տոհմածառեր և ցույց տալ, թե քանի՞ սերունդ է ընդգրկում ազգը և նրա անվանումը ո՞ւմից է առաջացել: Ազգի ճյուղավորման դեպքում ո՞ր սերնդից էր փոխվում ազգանունը: Կա՞ն ազգանուններ (մականուններ, որոնք ծագել են զբաղմունքներից (օրինակ՝ Դարբինյան ևն): Արդյո՞ք այսպիսի ազգանունները ավանդական էին: Ավանդություններ ծագման մասին:
17. Տալ, թե ո՞ր սերնդի փոխման դեպքում են նոր ազգանուններ առաջացել, միաժամանակ հաշվել, թե քանի՞ ընտանիք է ընդգրկել (և ընդգրկում) ազգը մինչև 1914թ. և դրանից հետո: Գրի առնել ազգերի ծագման պատմություններ, ավանդություններ և այլն:
18. Արդյոք նոր ազգի գոյացումը պայմանավորված չէ՞ր այլ բնակավայրերում նոր բնակություն հաստատելու հետ, և ինչպիսի՞ն կլինեին կապերը մայր ազգի հետ, որի ներկայացուցիչն էր նոր ազգի հիմնադրողը:
19. Կա՞ր եղբայրակցության սովորություն (օրինակ, Սուրբ Ջատկին՝ Ավետարանի առաջ հանդիսավոր երդում տալը կամ ճկույթները ծակելով՝ փոխադարձաբար արյուն ծծելը):
  - «Ազգանուն» տերմինի սկզբնական ձևերը տեղերում (միայն ժողովրդականը):
  - «Մականուն» տերմինը որպես ներկայիս «ազգանուն» տերմինի գուգակիցը Արևմտյան Հայաստանում: Նրա ծագումը և տարածումը:
20. Թաղման հետ կապված ազգակցական սովորություններ, օտարության մեջ գտնվող հանգուցյալին տեղափոխում էին ազգակցական գերեզմանոց: Արդյոք կա՞ր ազգակցական գերեզմանոց կամ համայնքի գերեզմանոցում ազգակիցներին հատկացված տեղ: Ազգակցական ինչպիսի՞ ավանդություններ էին պահպանվում թաղման ժամանակ: Ինչպե՞ս էին հարգում նախնիների հիշատակը:
21. Եթե ազգն ուներ իր սուրբը և սրբատեղին, ապա դրանից ստացվող եկամուտը ինչպե՞ս էր բաժանվում:
22. Տոհմական պաշտամունք, տոհմիկ սրբեր, ուխտատեղիներ, պուրակներ, մատուռներ, եկեղեցիներ: Ազգակցական խմբային գոհաբերություններ: Կայի՞ն ազգատոհմային տոներ:

23. Ազգն ուներ սրբատուն կամ սրբին հատկացված անկյուն և Սուրբ Գիրք (Նարեկ, Աստվածաշունչ): Ազգը այստեղ կատարում էր հատուկ ծես՝ նվիրված իր նախնու հիշատակին:
24. Ազգն ունե՞ր սեփական ուխտատեղիներ, մատուռներ և այլն: Ազգակցական խմբական գոհաբերություններ կատարվո՞ւմ էին:
25. Ազգերն ունե՞ին սեփական տոներ:
26. Ազգի ճյուղավորման դեպքում ո՞ր սերնդից էր փոխվում ազգանունը:

**§ 2.1. Ազգի ղեկավարությունը և ներազգակցական ու միջազգակցական հարաբերությունները**

1. Ազգի պատվազգացումը և այն վառ պահելու պայմանները:
  - Ազգի մեծը, նրա ղեկավար լինելու, պատիվ պահելու հանգամանքները: Ո՞վ էր դառնում ազգի մեծ. տարիքային հանգամանքը ո՞ր դեպքում էր խախտվում, պատճառները:
  - Ազգի կանանց և երեխաների հսկողությունն ո՞ւմ կողմից էր կատարվում: Նրա հեղինակությունը:
  - Ազգի մեծի կնոջ դերը: Նրա հեղինակությունը:
  - Ազգանդամ ընտանիքները և ազգապետի դերը ներքին գործերը դրսևորելու տեսակետից: Ազգապետը միջամտո՞ւմ էր ազգի ընտանիքների ներքին գործերին, ինչպե՞ս, ո՞ւմ միջնորդությամբ կամ լրատարությամբ: Ընտանիքները հնազանդվո՞ւմ էին նրա կարգադրություններին: Լինո՞ւմ էին ընդդիմացողներ: Ինչո՞ւ:
  - Ազգի պատիվը շոշափող օտարների նկատմամբ կիրառելիք պատժամիջոցները ազգապետի և ազգի տղամարդկանց խորհրդի հիման վրա:
  - Վրիժառությունը և ազգապետի դերը: Վրիժառությունը որչա՞փ է տարածված եղել: Ո՞ւմ վրա էր ընկնում վրիժառության պարտականությունը: Այն ընդհանուր ազգի տղամարդկանց կողմից կատարելու հա՞րց էր, թե՞ հանձնարարվում էր կոնկրետ մեկին:
  - Վրիժառությունը վերացնելու պայմանները. հաշտեցում ամուսնությամբ, արյան գինը վճարելով և այլն:
  - Միջազգակցական կռիվները և դրանց ծագման հանգամանքները (հողային հարաբերություններ, թաղային հարաբերություններ, բարոյական պատճառներ և այլն): Կռիվները վարելու միջոցները (մահակներ և այլն) և գործածելու իրավասության սահմանները՝ կարելին և անթույլատրելին:

- Սպանությունները և հետևանքները: Հաշտություն խնդրելու տեղական ձևերը: Ազգապետի դերը: Կռիվների մեջ կանանց դրական և բացասական դերերը:
  - Թշնամացած ազգերն իրար հետ հաշտեցնելու սովորությունները համայնքներում: Հաշտություն կայացնելու միջոցները՝ աղջիկ տալը, նյութական վնասի հատուցումը:
  - Լինո՞ւմ էին թույլ ազգերի խմբավորման դեպքեր՝ ընդդեմ ճնշող մեծ ազգերի: Ի՞նչ սկզբունքներով: Եղե՞լ են խմբավորված ազգերի և մեծ ազգերի կռիվներ:
  - Մահակակոչվները և հետևանքները, կռիվների մեջ կանանց խաղացած դերը:
2. Ամբողջ ազգը պատասխանատու՞ էր իր ազգակցի վարմունքի համար: Բերել արյան վրեժի հետ կապված սովորության օրինակներ՝ մանրամասն նկարագրություններով:
  3. Ազգակցական կռիվների աննշան մնացուկները և վրիժառության վերացումը:
  4. Նշել ազգի համերաշխությունը ի ցույց դնող սովորությունները թաղման, հարսանիքի, ծննդի, տոների, նշանդրեքի և այլնի ժամանակ, հաշվի առնվո՞ւմ էին ազգի սպիտակամորուսների, ինչպես նաև նրա կնոջ կարծիքն ու խորհուրդները:
    - Ազգի մեծի և նրա կնոջ հեղինակության պահպանումը:
    - Առևանգման դեպքում պատվի պահպանման համար մղվող պայքարի ձևերի հարգումը:
  5. Ավանդություններ տոհմային հերոսների կամ ազգը հիմնող նշանավոր անձանց մասին:
  6. Ազգատոհմը արդի փուլում, խորթացման պատճառները, տների կառուցումը տարբեր տեղերում և ի հետևանս դրա՝ ազգակցական թաղերի վերացումը: Ազգի մեծի կամ խորհրդատուի աննշան դերը մեր օրերում և պատճառները: Ազգակցական որոշ սովորությունների պահպանումը ազգակցին պաշտոնի նշանակելու և տնամերձ հողամասերն ընդլայնելու միտումով, կեղծ բաժանքներով տնամերձ ստանալու գործում ազգակից պաշտոնյայի դիրքն օգտագործելը և այլն: Ազգակցական որոշ սովորությունների պահպանումը գյուղական բնակավայրերում՝ կապված հողային հարցերի, ազգակցական պաշտոնում նշանակելու հետ:

### § 3. Ազգի տարածքային միասնության դրսևորումները

1. Ազգակցական թաղերը և դրանց առաջացումը:
2. Գյուղեր, որոնք կրում էին որևէ ազգի անունը: Արդյո՞ք գյուղը երբեմն միայն մի ազգից էր կազմվել, թե՞ ազդեցիկ ազգի անունն էր անցել գյուղին:
3. Նախնու կառուցած կամ գնած միակ տան տեղը՝ որպես սպազա ազգի տեղի հիմք: Ներկայացնել, թե գյուղում քանի ազգակցական թաղեր կային իրենց անուններով:
4. Այդպիսի տան շուրջը հետագա տասնամյակների կամ դարերի ընթացքում սխեմաներով ներկայացնել նոր տների առաջացումը, հետևապես՝ ազգի թաղերի ընդլայնման պատմությունը: Որևէ դարավոր ազգակցական կցաթաղի վերականգնման փորձ: Հաշվել մի թաղում քանի ազգակցի տուն էր ընդգրկված:
5. Նմանապես՝ ազգի դրված տների տեղադրման փորձ՝ հողամասերով հանդերձ: Կայի՞ն արդյոք ազգակիցների համար ընդհանուր հողամասեր, անտառամասեր, ջրաղացներ, ձիթհաններ, դարբնոցներ, թոնիքներ և այլն:
6. Հանդուրժելի՞ էր ոչ ազգակից ընտանիքների խցկումը ազգակցական կցաթաղերը կամ ցրված տների միջավայրը: Կցաթաղերի տներում ալկնատների համակարգի գոյությունը, ալկնատների մեծությունը և խաղացած դերերի անվանումները:
7. Պարզել՝ հետազոտվող շրջանը կցաթաղերո՞վ, թե՞ կցահողերով էր ազգակցական համակարգ ստեղծում: Կարո՞ղ էր արդյոք նրանց հողերի արանքում տեղավորվել ոչ ազգակիցը, ազգակցական թաղերի նկարագրություններ և թաղերի վերականգնման փորձեր՝ գծագրման միջոցով:
8. Ազգի միասնության հատկանիշներից մեկը տեղային բնակության միասնությունն է: Ներկայացնել, թե հետազոտվող գյուղում քանի՞ ազգակցական թաղեր կային (այժմ կա՞ն) և ո՞ր ժամանակից են կորցրել միասնությունը:
9. Արդյոք ամառանոցներում ստեղծվո՞ւմ էին ազգակցական կցատներ:
10. Յայլաղային տների կամ վրանների դասավորությունը՝ ըստ ազգակցական խմբերի: Արդյո՞ք այստեղ շարքեր կազմելը նույն սկզբունքներով էր կատարվում, ինչ գյուղում, թե՞ կային տարբերություններ: Գծագրել ազգերի վրանների կամ տների շարքերի դասավորությունը:

11. Արդյոք ձմեռանոցները վերածվո՞ւմ էին բնակավայրերի, ազգակցական կցաթաղեր ստեղծվո՞ւմ էին:
12. Ազգանդամ ընտանիքը վերանալուց հետո նրա տան և հողամասերի անցումը նրա մերձավորներին, կոնկրետ ո՞ւմ՝ մեկի՞ն թե՞ շատերին:
13. Արդյոք Խորհրդային Հայաստան տեղափոխվելուց հետո պահպանվե՞ց ազգակցական քաղամասեր ստեղծելու անհրաժեշտությունը:





**§ 4. Ազգի տնտեսական միասնության դրսևորումները**

1. Ազգն ունե՞ր ընդհանուր վարելահողեր, որոնք իր ներսում պարբերաբար վերաբաժանվում էին ընտանիքների վրա՝ ըստ անձերի կամ ամուսնական զույգերի:
2. Ազգն ունե՞ր ընդհանուր արոտավայրեր կամ մի ընդհանուր հողամաս, որը ձեռք էր բերվել ընդհանուր կոլեկտիվ ջանքերով:
3. Ազգերն ունեի՞ն անտառամասեր, որտեղ անասնակերը (նաև տերևը) հավաքվում և բաժանվում էր ընտանիքների վրա:
4. Ազգի ընդհանուր ջրաղացը և ձիթհանը, դրանք աշխատեցնողները հերթով էին նշանակվում, թե՞ առանձին մարդիկ մշտապես աշխատում էին և վաստակից քույր ընտանիքներին բաժին հանում: Ինչպե՞ս:
5. Կայի՞ն ազգապատկան ընդհանուր թոնիրներ հաց թխելու համար, որոնք թաղվում կամ կանգնեցվում էին հարմար հրապարակներում, թե՞ դրանք պատկանում էին առանձին ընտանիքների, բայց թույլատրվում էր օգտվել ազգականներին և հարևաններին:
6. Կայի՞ն ազգապատկան սանդեղ կամ քարաղ մանրացնելու (սղկելու) և ձավար ծեծելու լայներես սալաքարեր՝ սղկող մեծ գնդաքարերով, սրանցից աներկաքարեն օգտվո՞ւմ էին ազգի անդամները և ուրիշները:
7. Ազգն ունե՞ր ընդհանուրի կողմից ձեռք բերված մծույգ, ցուլ, խայր, որոնք անասունների բեղմնավորման ժամանակ օգտագործվում էին հավասար իրավունքով:
8. Ունեի՞ն ազգակցական գերեզմանոցներ, որտեղ կարելի էր թաղել միայն ազգակիցներին: Իսկ եթե գերեզմանոցն ընդհանուր էր, այդ դեպքում ազգն ունե՞ր իր հատուկ տեղը, որտեղ միայն ազգանդամներին էին թաղում, թե՞ գերեզմանաշարքեր ունեին միայն ընտանիքները:
9. Թաղման հետ կապված ազգակցական ինչպիսի՞ սովորություններ էին պահպանվում. յուրաքանչյուր ընտանիքի պարտականությունները, անելիքները գերեզմանոցներում:

10. Կայի՞ն ազգատոհմը խորհրդանշող, նրա ընդհանուր սեփականությունը հաստատող խորհրդանշան-դադմաներ, նշաններ, որ դաջվում էին կենդանիների վրա, դռներին, շիրմաքարերին, ծառերին: Դրանց ձևերը, ծագման պատճառները:
11. Կա՞ր ազգի համար ընդհանուր դադմա՝ պատրաստված մետաղից, որով դրոշմվում էին ազգի ընդհանուր անասունները՝ մծույգը, ցուլը, խայր ևն: Ձևը կամ գլխազիբը: Այդ նշանները հաստատվում էին գյուղապետի՞, գյուղական ավագանո՞ւ, թե՞ ազգի մեծի կողմից:
12. Ի՞նչ վկայություններ կան ազգանդամ ընտանիքների սեփական անասունների ականջները կամ ազդրերը դրոշմելու դադմաների կամ այլ ձևով արվող նշանների մասին, որոնք ծագել են մայր ընտանիքի դադմաների նշաններից: Ասենք թե մայր ընտանիքի նշանն էր.

- ◁ որից քույր ընտանիքները հետևյալ դադման նշաններն են առաջացրել.
- ↙ առաջին ընտանիքի նշանը,
- ↘ երկրորդ ընտանիքի նշանը,
- ↗ երրորդ ընտանիքի նշանը,
- \* չորրորդ ընտանիքի նշանը:

Կամ ականջի վրա դանակով կամ մկրատով արվող նշաններ՝ այսպես օրինակ.

-  հիմնադիր ընտանիքի նշանը,
-  առաջին ընտանիքի նշանը,
-  երկրորդ ընտանիքի նշանը,
-  երրորդ ընտանիքի նշանը:

13. Ազգերն ունեի՞ն որևէ նշան, որը քանդակվելիս լինե՞ր միայն այդ ազգատոհմի դռների, քարավորների, շիրմաքարերի և այլնի վրա:
14. Ո՞ր պայմաններում տնփեսան կարող էր ժառանգել աներոջ շարժական գույքը և հողերն ու տները: Ազգի պահանջները:
15. Ընտանիքների հողերը համարվո՞ւմ էին ազգի ընդհանուր սեփականությունը: Ներելի՞ էր, երբ որևէ ընտանիք օտարում էր իր հողերը ազգից դուրս գնողներին: Ազգը կանխման ի՞նչ միջոցներ ունե՞ր:

16. Ազգանդամ ընտանիքն իր հողերը վանքին կամ եկեղեցուն նվիրելու իրավունք ունե՞ր: Հակազդելու միջոցներ կայի՞ն:
17. Ազգակցական հարաբերությունների մեջ փոխադարձ օգնության դերը տուն կառուցելիս, դաշտային աշխատանքներում, անասնապահության, տնային աշխատանքների մեջ, ինչպես նաև տարերային պատճառների (հրդեհ, հեղեղ, երկրաշարժ, անասունների համաճարակ) միջոցին:
18. Հարակաշությունն ազգի ներսում. բուլ՞րն էին միավորվում: Անտառահատական հողագործություն, գութանավարի կամ արորավարի ժամանակներում, քլունգներով ու բահերով փորելիս, քաղիսանելիս, հնձելիս, կալսելիս, անասնակերը տուն կամ ձմեռանոց տեղափոխելիս հարակաշի ի՞նչ ձևեր էին կիրառվում: Ամբողջ ա՞զգը, թե՞ առանձին անդամներն առանձին խումբ էին կազմում: Այլ ազգերից հարակաշի մեջ մտնո՞ւմ էին: Կերակրվելը:
19. Ազգն ունե՞ր ընդհանուր գութան, արոր և այլ գործիքներ, թե՞ միայն առանձին ընտանիքներն էին ունենում: Ընդհանուր գործիքները ինչպե՞ս էին օգտագործում՝ միասի՞ն, թե՞ անջատ-անջատ:
20. Կայի՞ն ազգեր, որոնք ունեցած վարելահողերը պարբերաբար վերաբաժանում էին ընտանիքների վրա: Քանի՞ տարին մեկ անգամ:
21. Եթե ազգերի ընտանիքները տուն էին կառուցում կամ իրենց ուժերից վեր այլ աշխատանքներ նախաձեռնում, ազգի ընտանիքներն ինչո՞վ և ի՞նչ չափով էին օգնության հասնում նրան, ինչպե՞ս էր կոչվում փոխօգնության այդ ձևը: Կերակրելը:
22. Ազգը փոխօգնության կամ օգնության կարգով սովորություն ունե՞ր տարերքի ժամանակ ազգակցի կորուստները հնարավորինս վերականգնելու (օրինակ՝ անասունների, վարող ու փորող գործիքների, հացի պաշարների ձևով): Իսկ ավերված տունը ձրի վերակառուցվո՞ւմ էր ազգի միջոցներով, թե՞ դրան մասնակցում էր նաև համայնքը: Կերակրելը:
23. Փոխօգնությունը ազգի ներսում՝ դաշտային աշխատանքներում, անասնապահության մեջ, տնային ծանր գործերում, տարերային աղետների՝ ձնհոսքի, հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժից առաջացած փլուզումների ժամանակ ևն: Կերակրելը:
24. Անասունների արածեցման և հողի մշակման արտադրական ընկերությունները ըստ թաղամասերի՞ էին կազմակերպվում: Բերել օրի-

- նակներ, թե գյուղը քանի՞ թաղամաս ուներ, յուրաքանչյուր արտադրական բրիգադ ի՞նչ թաղամասից էր կազմված:
25. Ազգը մասնակցո՞ւմ էր յայլաների տների կառուցմանը, իսկ եթե կային սար չբարձրացողներ, նույնպես օգնո՞ւմ էին: Կերակրելը:
26. Ազգի ընտանիքները «ոչխարի հովվական ընկերություն» ստեղծո՞ւմ էին, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպե՞ս:
27. Հովիվների ընտրությունը, նրանց պաշտոնների բաժանումը, սննդի և հագուստի, զենքերի և այլ պարագաների հայթայթումը:
28. Ի՞նչ էր գուտ ազգի հովիվների միավորման անվանումը. և ի՞նչ՝ եթե խառն էր լինում այլ ազգերի ներկայացուցիչների հետ, ընտրության մանրամասնությունները: Վարձը:
29. Արդյո՞ք ազգի ոչխարի հոտի հովիվները հերթական կարգով էին նշանակվում: Այդ պարագայում հագուստ-կապուստը, զենքերը, մախաղը ևն ընդհանո՞ւր էին:
30. Արդյո՞ք հովիվը վարձու էր, վարձատրման կարգը, նրա նկատմամբ համայնքի կամ ազգի պարտականությունները: Հովվի ազգությունը, տարիքը, տվյալ վայրի՞ց, թե՞ այլ տեղերից էր վարձվում:
31. Ազգը «տավարի ընկերություն» ունե՞ր իր ներսում և այն ինչպե՞ս էր կոչվում: Քանի՞ հոգի էին ընտրվում և ի՞նչ պայմաններով, թե՞ ամեն մի ընտանիք իր տավարածն էր ունենում: Այդ դեպքում տավարած ազգականները միավորվո՞ւմ էին: Ի՞նչ էին կոչվում նրանք և իրենց միավորումը:
32. Ազգակիցներից կազմված անասնապահական միավորումները արդյոք լեռներում իրենց արտատեղերն ունեի՞ն, թե՞ դրանք ընդհանուր էին:
33. Ազգակիցները միավորվո՞ւմ էին յայլաղ գնալիս, նրանք կաթնամթերք պատրաստելիս փոխադարձ ի՞նչ պայմանավորվածություն էին ունենում: Մի ընտանիքն իր կովերն ու ոչխարները հանձնո՞ւմ էր մյուսին՝ կաթնամթերք ստանալու պայմանով: Փոխարենը ինչո՞վ էր հատուցում:
34. Չմեռանոցում առանձի՞ն ընտանիքներ կամ հովիվներ էին ապրում, թե՞ ոչխարը միավորում էին, կերը համատեղ կուտակում և ազգից հերթով հերթապահ էին նշանակում:
35. Պատահո՞ւմ էին դեպքեր, երբ քիչ ոչխար ունեցողը չէր գնում ձմեռանոց, այլ դրանք հանձնում էր ոչխարատեր ազգականին և իր ոչխարն ապահովում կերով: Ինչո՞վ էր հատուցում ձմեռողին:



36. Ովքե՞ր էին մեկնում յայլաղ՝ հեռագնա ամառանոց, տեղական ի՞նչ անվանում ունեք, ե՞րբ էին մեկնում.
- ա. միայն ազգականներո՞վ, հարևաններո՞վ, խա՞ռը: Ընկերակցության կազմակերպման հիմքում ընկած սկզբունքները,
- բ. ընկերակցության ղեկավարը, գործառույթները, նրա սոցիալական և տնտեսական վիճակը, բարեկամական աստիճանը,
- գ. ընկերակցության անդամների իրավունքները և պարտականությունները,
- դ. ինքնապաշտպանության կազմակերպման եղանակները,
- ե. ընկերակցության տեղական անվանումը (համկա՞լ թե՞...):
37. Արդյո՞ք ամառանոցային սեզոնային այդ բնակավայրերը դառնում էին ազգակից ընտանիքների հիմնական բնակատեղի, եթե այո, ապա ի՞նչ անվանումով: Արդյո՞ք այստեղ թաղերը ազգակցական սկզբունքներով էին հիմնվում, թե՞ խառը՝ հարևաններից և ազգական ընտանիքների բնակեցմամբ:
38. Արտավայրերը ազգի սեփականությունն էին, թե՞ համայնքի ընդհանուր օգտագործման տակ էին գտնվում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՑԱՆԿ

- Աբիպարա – արխագական ազգ-արենակցական խումբ՝ միևնույն նախահորից սերվածներ, «հոր որդիներ»:
- Աբլա, ապլա – մեծ մայր, մեծ քույր (Ջավախք):
- Աբլա խանում – մեծ մայր, տիկին՝ որպես պատվանուն, մեծարանքի արտահայտություն:
- Ագրաղ – նախաճաշ:
- Ադե – մայր (Մասուն, Մեքաստիա):
- Ազաբ, ազապ – չամուսնացած չափահաս տղա կամ աղջիկ
- Ազամա – ավագ հորեղբոր կին:
- Ազգ – ազգը մեծ կամ փոքր արյունակից ընտանիքների խումբ է, որ կազմավորվել է գերդաստանի ճյուղավորման հետևանքով և այս կամ այն չափով ու ձևով պահպանել է տնտեսական, տարածքային, հասարակական և գաղափարական միասնություն, կրում է ընդհանուր ազգակցական անվանում: Ազգ տերմինը նշանակում է նաև՝ տարածքի, տնտեսական կապերի, լեզվի, մշակույթի, բնավորության և էթնիկ ինքնագիտակցության զարգացման որոշ հատկանիշներով մարդկանց պատմական ընդհանրության բարձրագույն տիպ: Նաև՝ կենդանական և բուսական աշխարհի առանձին տեսակներ, հասարակական խավեր, միևնույն զբաղմունքի տեր մարդկանց խմբեր, ըստ սեռի մարդկային խմբեր, առանձին լեզվախմբեր, առանձին դավանանքներ կրող ժողովուրդներ, առանձին ժողովուրդներ, երկրներ ու պետություններ:
- Ազգ ու էրամ – ազգուտակ, ազգականների ամբողջություն:
- Ազգաբանական ծառ – տոհմաճառ: Ծառի ճյուղերի նմանությամբ տոհմի, գերդաստանի սերումը, ճյուղագրությունը ներկայացնող ցանկ:
- Ազգախառն – ազգակցական կապերով կապված:
- Ազգական – միևնույն սերնդից, գերդաստանից սերված արյունակից, ազգակից, հարազատ, մերձավոր արյունակցական կապ ունեցող:

**Ազգակից** – ազգական, միևնույն ազգից սերված, համազգի, ընդհանուր ծագում ունեցող:

**Ազգակցություն** – մարդկանց արենակցական կապ. հոր և որդու, պապի և թոռան, եղբոր և քրոջ: Ազգակցություն՝ վարընթաց գծով. պապ, որդի, թոռ, թոռի տղա, ծոռ, ազգակցություն՝ եղբայր, եղբոր սերունդներ, հորեղբայր, հորեղբոր որդիներ և նրանց սերունդներ:

**Ազգանդան** – ազգականների ամբողջություն (Արցախ):

**Ազգանուն** – անձի տոհմական անվանումը: Գոյություն ունեն ազգի ավանդական անվանման երեք սկզբունք՝ ազգի հիմնադիր անձի անվամբ (Նահապետ – Նահապետյան), բնակավայրի անվամբ (Անանիա Շիրակացի – Շիրակ ավանից) և ազգի տոհմական զբաղումների անվանումից՝ դարբին – Դարբինյան և այլն: Ժամանակակից յան, յանց, ունի, ունց վերջավորությամբ ազգանունները սկսեցին առաջանալ XVII-XVIII դդ., երբ տեղի էին ունենում բնակչության տեղաշարժեր, աշխուժանում էր առևտուրը, արհեստագործությունը, մարդու ինքնությունը հաստատող փաստաթղթերը դառնում էին անհրաժեշտություն: Սովորույթի համաձայն ազգանունը փոխանցվում է ժառանգաբար՝ սերնդե-սերունդ:

**Ազգատոհմ** – մի տոհմապետից սերված, մի ազգի ճյուղավորություն: Ցեղ, տոհմ, ազգուտակ:

**Ազգուտակ** – ազգականություն, բոլոր ազգականների ամբողջություն:

**Ազն** – ազգ, սերունդ նաև՝ ժողովուրդ:

**Ազնակից** – ազգակից:

**Ախպերաբաժին** – գերդաստանի բաժանման ժամանակ եղբայրական ընտանիքների միջև սովորությամբ կարգի համաձայն գույքի (շարժական և անշարժ) հավասար վիճակահանությամբ կատարվող բաժանում:

**Ախարնկեր** – աշխատանքային համագործակցության եղանակ, համկալ, երկրագործական գործիքներով (արոք, գութան), լծկանով և աշխատավոր ձեռքերով ու սերմացուով փոխադարձաբար հերթազայությամբ կատարվող կուլեկտիվ աշխատանք:

**Ակրեջկլե, ականջաբռնուկ** – աչքալուսանք, ուրախ լուր, հատկապես տղա երեխա ծնվելու առիթով հաղորդողին տրվող նվեր, դրամ:

**Ակնակ** – որմնապահարան (Տիգրանակերտ):

**Ակնատ** – հարևանի, ազգականի տանը կից պատի մեջ դեպի վեր բացվող բոլորշի ձվաձև կամ քառանկյունի փոքր պատուհան, որը ծառայում էր հաղորդակցվելու, սպառնացող վտանգի մասին միմյանց տեղեկացնելու, իրեր, առարկաներ, մթերք և այլն տալու, ստանալու համար:

**Աղա** – տանտեր, մեծավոր, հարուստ դիրք ունեցող մեծավոր, հողատեր մարդ, հարգական տիտղոս գերդաստանում, համայնքում՝ առանց անունը տալու մեծարելու, ավագությունն ընդգծելու, դիմելու հարգական ձև:

**Աղբրգիր** – եղբայրություն, հարազատ բարեկամության ուխտ, որ կատարվում էր եկեղեցում ձեռագիր Ավետարանի վրա երդում տալով (Հարք, Խնուս):

**Աղբրկին** – եղբոր կին:

**Աղբրտիք** – եղբայրներ:

**Ամի** – հորեղբայր, հարգական կոչում, որ տրվում էր ծերունիներին անունից հետո:

**Ամիանք** – հորեղբոր սերունդը:

**Ամիճ** – որսի էրեի ձագի մսից, ուղեղից պատրաստված ուտեստ:

**Ամուրի** – երբևէ չամուսնացած կին և տղամարդ, ամուսնացած տղամարդ, որի կինը վախճանվել է, նաև՝ այրի:

**Այա** – մայրիկ, տատ (Արցախ): Նան՝ մեծամեծներ, ավագներ:

**Այգալաց, այգլաց** – ննջեցյալի գերեզմանի վրա թաղման հաջորդ օրը կատարվող կրոնական արարողություն, նույն օրը, նույն տեղում կատարված սուգը, լացը: Հացկերույթ, որ ննջեցյալի տերը տալիս էր թաղման, նրան հաջորդող արարողությունների ժամանակ:

**Այգեթաղ** – ձմռանը ցրտահարվելուց պաշտպանելու համար խաղողի վագերը պառկեցնելով հողաշերտով ծածկելը:

**Այգեկութ** – խաղողի բերքահավաք, խաղողաբաղ:

**Այգը տալ** – թաղման հաջորդ օրը ննջեցյալի հիշատակին տրվող հոգեհացը:

**Այգողք** – թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանի վրա կատարվող սուգը և դրա հետ կապված արարողությունները:

**Աներ** – կնոջ հայրը փեսայի համար:

**Անկիսուր մահիլա** – գերդաստանական տների բաժանքից առանձնացող և տնամերձ հողամասերում առաջացած անհատական ընտանիքների նոր թաղամաս: Այդպես էին անվանարկում հայրական տներից առանձնացած տարբեր, ոչ ազգակից ընտանիքների հարևանությամբ ապրող թաղամասը:

**Անկ-հավանդ** – փայտե մեծ սանդ՝ կորկոտ ծեծելու համար:

**Անհասուկ** – չհաս, մերձավոր ազգակցության պատճառով ամուսնության համար անթույլատրելի տարիք:

**Աշխարել** – սուգ ու կոծ անել հանգուցյալին հուղարկավորելիս:

**Աուճ** – ծանրության չափի միավոր էր համարվում, հավասար է 800 գրամի:

**Աչքունք** – պատի մեջ արված բացվածք, որմնախորշ:

**Ապեկ թոռն** – ազգակցության աստիճան՝ թոռան թոռը:

**Ապերանք** – հորեղբոր սերունդ:

**Ապո** – հորեղբայր:

**Ապոմամ** – ազգակցություն, տատի տատը:

**Ապոպաս** – ազգակցություն, պապի պապը:

**Առգել** – գոմի մեջ երկու կամ չորս սյուների մեջտեղում շինված բարձր թախտ՝ քնելու համար (Մասուն): Նան՝ փայտե մահձակալ խաչաձև ոտքերով հյուսածո անկողնակալով:

**Առն** – ազգակցություն, թոռան թոռ՝ ծոռնորդի:

**Առնը** – թոռնորդի:

**Առուս** – հարս, նորահարս:

**Ավագանի** – առաջնակարգ, հզոր գերդաստանական տների նահապետները, համայնքային ծերակույտը:

**Ավելանուն** – մականուն, որ տրվում է առանձին անհատի կամ ամբողջական ազգակցական խմբին:

**Ավետարանի եղբայր**, **Ավետարանի ախպեր** – եղբայրություն, հարազատ բարեկամության ուխտը, որ կատարվում էր եկեղեցում ձեռագիր Ավետարանի վրա երդում տալով: Կոչվում էր նաև ախպրգիր:

**Արյուն** – արյունակցական կապ, ազգ, ազգականություն, ժառանգ:

**Արյունակից** – մի ընդհանուր նախահորից սերվածներ:

**Արյունառու** – արյան մերձավորություն, ազգակցական աստիճան, որի որոշակի սահմաններում կանոնադրվում-սահմանվում էր արյան ազգակցությամբ ամուսնական պսակադրությունը:

**Արտամուսնություն** – էքսոգամիա, նախնադարյան հասարակությանը բնորոշ սովորույթ, որով արգելվում էր ազգի ներսում ամուսնությունը: Հայաստանում, սովորույթի իրավունքի ուժով ամուսնությունը արգելվում էր մինչև ազգակցության 7-րդ աստիճանը (սորսը): Այս սովորույթը օրենքի ուժ է ստացել միջնադարյան հայ կանոնագրքերում և դատաստանագրքերում:

**Աքեր** – քույր:

**Բաք** – հայր (Մասուն):

**Բաբաշվիլոբա** – իմերեթական ազգ-արենակցական խումբ՝ «մի պապից սերվածներ»:

**Բագորդ** – ժառանգորդ, հաջորդ (Բուզանդ):

**Բալխիր** – սահնակ:

**Բար** – քրդական ազգ-արենակցական խումբ՝ միևնույն նախահորից սերված արյունակիցներ:

**Բարնբաբ** – սկեսրայր (Մասուն):

**Բարնդադ**, **բարնմամ** – սկեսուր:

**Բարնմամ** – սկեսուր (Մասուն):

**Բերովի** – առաջին ամուսնությունից ծնված զավակ, որին երկրորդ ամուսնության ժամանակ մայրը բերում է իր հետ և որդեգրվում նոր ամուսնու կողմից: Խորթ զավակ երկրորդ ամուսնու համար:

**Բընքներ** – արծաթե և վարջաղե կրծքազարդ:

**Բիձոնք** – հորեղբոր սերունդը:

**Բլդուր** – խաշած, չորացրած, ծեծած, թեփահան արած, երկանքով աղացած ձավար, որից պատրաստում են բազմատեսակ կերակուրներ:

**Բոխչա** – ուտեստներով, քաղցրավենիքով, խմիչքով, նվերներով լեցուն կապոցով կամ մատուցարանով. հարսի հայրական տուն, փեսայի կամ նրա հարազատների կողմից նորահարսին տեսության համար տոնական օրերին տարվող ծանրոց: Նույնը ծննդկանին շնորհավորանքի այցելելուց:

**Բռնչի** (բռնչենի, փռնչի) – ծառ, վայրի ծառ, որ տալիս է սիսեռի մեծությամբ քաղցրավուն՝ պտուղ մեծ ուտելի կորիզով: Կ. Պոլսի և այլ տեղերի հայոց գերեզմանոցներում սովորական ծառ է: Ձեյթունի հայերը այն անվանում էին ցոպտուկ:

**Բրավի** – քրդ. մերձավոր ազգականների շրջանակ:

**Գագ** – գետնատարած թուփ, մացառ, որի արմատների և ցողունների խեժն օգտագործում էին կտավը սպիտակեցնելու համար: Չորացրած գագը գործածում էին որպես վառելանյութ՝ կաշան: Ժողովրդական բժշկության մեջ որպես բուժամիջոց, նաև որպես անասնակեր՝ թրջելուց, ցողունի սոսնձանման նյութը հեռացնելուց հետո:

**Գազպե** – մանանա. քաղցրահամ ցող, որ նստում է որոշ ծառերի, թփերի տերևների վրա: Մեղրանման թանձր այդ նյութը՝ գազպեն, պահում էին կարասներում և գործածում մինչև նոր բերքավառիկա:

**Գավազան** – մական, իշխանության խորհրդանիշ:

**Գելա** – Սասունում կալսումը եզների խմբի տրոբման եղանակով կոչվում էր գոռի կամ կոռի, իսկ Աղձնիքի հարավային շրջաններում՝ գելա:

**Գեղջավազ** – գյուղի ավազ, տանուտեր. գյուղական համայնքը տնօրինող ավազ, պետ՝ Հին և Միջնադարյան Հայաստանում: Ընտրվում էր գյուղական համայնքի ընդհանուր հավաքում: Պարտականությունն էր՝ կարգավորել համայնքի ներքին գործերը, հսկել հողերի հատկացմանը, ջրերից, անտառներից, արտավայրերից օգտվելու համար սահմանված կարգ ու կանոնի, կարգավորել համայնականների միջև ծագած վեճերը: Գեղջավազը ճանաչվել է նաև պետության, իշխանության ներկայացուցիչ: Նա էր տնօրինելու պետական հարկերի գանձումը, զինվորական ծառայության, գանազան պարհակների պարտավորությունների կատարումը: Հայաստանի մի շարք գավառներում գեղջավազը հայտնի է եղել նաև ավազ, ավազ շենին, գյուղերեց, գյուղապետ, գլխավոր գեղջն, դասապետը շինականաց, տանուտեր, ըռայիս, ռայիս, ռես, անվանումներով (ՀԱՀ):

**Գերդաստան** – մեծ ընտանիք. ընդհանուր սեփականության վրա հիմնված ընտանեկան համայնք, որն ընդգրկում է վերընթաց և վարընթաց գծերով մի քանի սերունդ: Մեծ ընտանիքին հատուկ է համատեղ արտադրությունն ու սպառումը: Հայաստանում մեծ ընտանիքները տակավին XIX դ. վերջին – XX դ. սկզբին տարբեր շրջաններում կազմված էին 25-70 հոգուց:

**Գյարդանի** – արծաթյա կրծքագարդ:

**Գոռի (կոռի)** – կալսման ամենահինավանդ եղանակը, որ գործում էր Սասունում: 8-10 եզների կամ գոմեշների խումբն էր, կողք-կողքի, միմյանցից կապված, որոնք շարքով պտտվում էին կալի վրա՝ կենտրոնում կանգնած կամ տեղում պտտվող եզան շուրջը: այդ եզը կոչվում էր **բընդոր** (Սասուն) կամ գում (այլ շրջաններ): Ծայրերին լծվածները կոչվում էին սարդորի եզ, որոնք ամենից ավելի արագ էին պտտվում:

**Դադե** – տատ, մայր:

**Դահուզ, դախուկ** – Սասունում ձմռանը գործածվող մի մեծ սահնակ էր, մոտ 2-2.5 մետր երկարությամբ, 1-1.5 մ լայնությամբ և 0.5-0.75 մ. բարձրությամբ, որը երկու ձեռքով բռնելու հարմար բարձրության կլորավուն բռնակներով մարդը մեջքը դահուզին տված և դեմքը ճանապարհի ընթացքի ուղղության, քաշում էր ձյան վրայով բեռը բարձած սահնակը:

**Դայակ** – ստնտու, դաստիարակ, խնամակալ, նրա ձեռքի տակ մեծացած անձ:

**Դայեկատոհմ, դայեկություն** – նույն դայակից սնված, դաստիարակված, կաթնեղբայր ազգակցություն: Միջնադարյան Հայաստանում թագավորներն ու իշխանները դայակ-դաստիարակի խնամքին էին հանձնում իրենց արու զավակներին:

**Դայո** – մայր, մայրիկ:

**Դանակրեբի** – վրացական ազգ-արեակցական խումբ՝ «բաժանված եղբայրների ընտանիքների խումբ»:

**Դաս** – ազգական նաև կազմավորված հասարակական խումբ:

**Դարձվածք** – ծախսերի պատասխան հատուցում (որը սովորաբար ավելին էր լինում) հարսանիքի քավորին:

**Դըրզի** – արծաթե և վարձադե օղաշղթա, կրծքագարդ:

**Դինգ** – սանդի մեջ ձեծելու փայտե մեծ կռան, որ ոտքով կամ ջրի հոսքի զորությամբ բարձրանալով ընկնում է փոսիկի մեջ և մանրում այնտեղ լցված ցորենի կեղևը:

**Դոլ** – ցեղ, սերունդ:

**Դոխ** – ցեղ, սերունդ:

**Եզ ուտող** – շատ միս ուտող, գայլի ախորժակ ունեցող:

**Եղբայրագիր** – ոչ արյունակցական կապով մեծի եղբայր. հոր կամ մոր կողմից որդեգրվելով եղբայր դարձած տղա:

**Եղբայրակցություն, եղբայրություն** – եղբայրակցությունը կատարվում է թե՛ միևնույն և թե՛ տարբեր սեռերին պատկանող անձանց միջև: Եղբայրանալու ծեսը կայանում էր Չատկի օրը, պատարագից հետո. եղբայրացող անձերը միմյանց ձեռքերը բռնած համբուրում են Ավետարանը և փոխադարձ խոստում տալիս՝ իրենց վրա վերցնել եղբոր կամ քրոջ պարտավորությունները և մինչև մահ դրանք կատարել: Կամ էլ՝ ծակում են իրենց ճկույթների ծայրերը և փոխադարձաբար ծծում միմյանց արյունը: Այս եղանակով եղբայրացումները կոչվում են Ավետարանի եղբայր կամ ողջույն եղբայր:

**Երեստեսնուկ** – 1. Դրամական նվեր, որ տրվում է հարսին՝ նրան տեսնելու առիթով: 2. Առագաստի առավոտյան նորահարսին նվերներ տալու հանդիսավոր արարողությունը:

**Զիզի** – մեծ մայր, տատ, մեծ կին (Գորիս):

**Ջոզան** – լեռնային զովասուն վայր, արոտատեղի, որտեղ ամռանը հաստատվում են խաշնարածներն իրենց հոտերով (Մասուն):

**Ջուրբա** – փոխօգնության, կոլեկտիվ աշխատանքի դրամական հատուցում չենթադրող ձև (Մասուն):

**Էնդոզամ** – մերձամուսնություն, ամուսնություն ազգի ներսում:

**Էրիշտա կտրել** – էրիշտա պատրաստելը իրականացվում էր հարևանական, ազգակցական կանանց և հասուն աղջիկների խմբակային աշխատանքով:

**Էրնել** – կալված ցորենը կամ գարու հարդախառն դեզը, հացահատիկը հարդից առանձնացնելու համար, թիերով քամուն տալ:

**Էքսոզամ** – ամուսնություն ազգատոհմից դուրս՝ արտամուսնություն:

**Ընո ճժեր** – հորեղբոր զավակներ, թոռներ, ծոռներ:

**Ընտանիք** – մերձավոր ազգակցական կապերի վրա հիմնված ծնողների, որդիների, թոռների, ծոռների ոչ մեծ խումբ, որոնք միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ:

**Թաբուն** – մերձավոր ազգական, ճյուղ (Տավուշ):

**Թախում** – ազգակցական խումբ:

**Թայֆա** – արյունակիցներ, կողմնակիցներ:

**Թառ անել** – տուրքը բաշխել ըստ տնտեսությունների: Այս պետական տուրքին համայնքը ավելացնում էր պարենամթերք կամ դամ՝ նաև որբախնամքի կարիքները հոգալու համար:

**Թավի գուբարա** – ոչխարի կերի համար՝ ծառի մատղաշ ճյուղերի և տերևի կտրման, հավաքման, խուրձ-խուրձ անելու և տեղափոխելու կոլեկտիվ աշխատանք:

**Թափու** – հողի ձեռքբերման պայմանագիր, որի մեջ նշվում էին հողամասը ստացողի անունն ու ազգանունը, հողամասի սահմաններն ու չափերը, արժեքը, ձեռքբերման եղանակը՝ (ժառանգված է, գնված կամ նվիրված, գրավդրած, վաղեմության իրավունքով տրված): Նշվում էր նաև այն գումարը, որն ստացողը մուծում էր պետական դրամարկո: Թափուն հանձնվում էր ակտով, որը պահվում էր մեջլիսի գործերում համապատասխան համարի տակ:

**Թեմուրչի** – երկաթագործ:

**Թիրա** – մերձավոր ազգական (Տավուշ):

**Թոռնյա** – թոռան որդի, թոռան թոռ, ծոռ:

**Թուրունչի** – ծխախոտագործ:

**Թուլուշ** – հարսանիքին ազգականների և դրացիների կողմից տրվող նվերներ:

**Թվանքչի** – հրացանագործ:

**Իջարի** – վարձու՝ վճարովի սկզբունքով կատարվող խմբակային աշխատանք:

**Լական** – ութաձև շրջանագիծ մի տախտակ (ոտնաման), 3-4 սմ լայնությամբ. վրան բթամասում ու կողքերը հյուսված է կաշու կամ կանեփի ամուր թելերով. հագնում են տրեխի տակից և ազատ քայլում թարմ ձյան վրա՝ առանց խրվելու:

**Լամբուր** – սվանական ազգակցական անվանում՝ «եղբայրություն», «եղբայրական ընտանիքների խումբ»:

**Լերդակից եղբայր** – արյունակից հարազատ:

**Խաբ (խապ), խաբուխազ** – կաթ փոխ տալու-առնելու փոխօգնության ձև: Հարևանները դուրյով միմյանց փոխ տրվող կաթի չափը նշում էին ծառի ծոնթ կամ քենջ կոչվող ճյուղի (ճիպոտի) վրա խազելու, նշան անելու՝ ծոնթելու եղանակով (Ջավախք):

**Խաբկից** – կաթնատնտեսության ընկերակցության մասնակից ընտանիք:

**Խաթուն** – տիկին, հորեղբոր կին, հարգանքի, մեծարման խորհրդանիշ:

**Խալմամ** – տատիկ մոր կողմից (Մասուն):

**Խալո** – քեռի:

**Խանում ապլա** – պատվանուն, որ տրվում էր տարեց կանանց (Ջավախք):

**Խզուկ** – ազգական, արյունակից բարեկամ:

**Խըլղաթ կամ խալաթ** – նորահարսի հարսանեկան զգեստը ձևելու սովորույթը: Հարսանեկան նվեր:

**Խնդրություն** – վրիժառություն:

**Խոնդի** – փեսայի կողմից նշանդրեքին և հարսանիքին մասնակից:

**Խոռ** – պատի մեջ բացած անցուղարձի փոքր պատուհան կամ նեղիկ դռակ (Մուշ):

**Խորվու** – մեծ թոնրի մեջ, վերջինիս բերանը փակելով կամ փոխ մեջ ամբողջական խորոված ոշխարը, գառը կամ ուլը, որ մատուցվում էր հարսանեկան, Խաչվերաց տոնի և այլ հանդեսների առթիվ:

**Խոնչա, խոնչա հանել** – 1. փեսացուի տնից հարսնացուի տոնական արարողությունների օրերին թարմ ու չոր մրգերով, քաղցրավենիքներով, խմիչքներով ու տարբեր նվերներով ու զարդերով ուղարկվող կապոց: 2. Պտուղներով, խմիչքներով, թխվածքով սեղան, որը որպես հարգանքի դրսևտրում, հարսի, փեսայի ազգականների, ինչպես նաև մտերիմ հարևանների կողմից տրվում էր տվյալ տան առջևով ընթացող հարսանքավորներին, ամուսնացողներին հյուրասիրելու, պատիվ տալու նպատակով:

**Խսում** – ազգական (Ջավախք):

**Մավարի օր** – Բաղեշ քաղաքում և շրջակա գյուղերում ձավար ծեծելու կուլեկտիվ աշխատանքի օր:

**Մենդաբանություն** – ծագումնաբանություն, ցեղի, տոհմի, ինչպես նաև գերդաստանի անհատի պատմությունը:

**Մենդավաթ** – ազգականների այլ մերձավորների ու հարևանների կողմից տարվող ծննդյան կնոջ առողջությունը արագ վերականգնող սենդարար ուտեստը, նվերները:

**Մոնթ** – փոխարինարար տրվող կաթը չափելու, վրան խազ անելու ճիպոտ:

**Մուխ** – ընտանիք, տուն՝ իբրև հարկատու միավոր:

**Մուանգ** – թոռան թոռ, կոռն, ծոռնորդի:

**Կաթ մայր** – դայակ, ստնտու կին:

**Կաթնախայեր, կաթնեղբայր** – մի մոր կաթից սնվող այլածին տարբեր մանուկներ:

**Կաթնաքուր** – մի մոր կաթից սնվող այլածին տարբեր աղջիկ երեխաներ:

**Կակո, կակե** – հորեղբայր:

**Կակոլ** – հայր, նաև՝ աներ (Շատախ):

**Կաղամախու Էմուխ** – կաղամախի ծառի մամռակալած կեղևի քերուկ:

**Կանաղոբ** – հորեղբայր, մորեղբայր, հորաքրոջ, մորաքրոջ որդի, թոռ, ծոռ, հեռավոր ազգական (Ջավախք):

**Կանանքի տղամարդ** – ամուսնացած, կին ունեցող:

**Կանաչ կիրակի** – Ջատկի երկրորդ կիրակին: Կրկնազատիկ:

**Կանչ** – հարսանեկան հանդեսի ավարտին հարսանիքի մասնակիցների կողմից նորահարսին և նորափեսային տրվող նվիրատվությունների մալին բարձրաձայն, հանդիսավորությամբ՝ ազդարարելու արարողություն (հաճախ նվագածուների կողմից կարճատև երաժշտական ողջույնով):

**Կարկտան** – որբ երեխա:

**Կենաց ծառ** – տոհմածառ: Խորհրդանշում էր ամուսնացող զույգի, ընտանիքի, տոհմի հավերժության իմաստը:

**Կթխա** – հարսի հարազատներին տրվող նվեր:

**Կիսաքույր** – խորթ քույր:

**Կոճ** – ազգ, ցեղ, հեռավոր ազգականների շրջանակ:

**Կոն** – վրան, անասնապահների ամառանոցային, այծի մազից հյուսածո կացարան:

**Կոչան, կոչանագիր** – հողի ձեռքբերման համար հողահարկի մուծման իրավունքը վավերացնող փաստաթուղթ, որ հաստատվում էր բարձրագույն իշխանությունների կողմից:

**Կորկոն** – պատանք:

**Կրկին մայր** – խորթ մայր:

**Կրկնորդ** – խորթ հայր:

**Կրկնոց** – երկրորդ ամուսնություն:

**Հաղաթ, հաղաթենք** – դարբին, դարբինյաններ:

**Համփա** – ունևոր ընտանիք, նաև՝ կուլեկտիվ աշխատանքի մասնակից, ընկեր, հավասար բաժնեկից:

**Հասըլ** – պետական հողահարկ՝ տուրք, ստացված բերքի 1/8 մասը:

**Հարկ, հարկ տալ** – հարսանեկան հացկերույթ և հացկերույթի պատ-  
րաստություն: **Հոգեհաց տալը:** Հարկն ու կարգը կատարել նշա-  
նակում է նաև ննջեցյալի հիշատակման արարողությունները  
պատշաճ կատարել: **Տուրք, պետության կողմից սահմանված՝**  
**քաղաքացիներից գանձվող պարտադիր վճար:**

**Հացվոր** – կոլեկտիվ աշխատանքի առանց վարձի մասնակիցների  
համար կազմակերպվող ճաշկերույթ:

**Հընթրիք** – ընթրիք:

**Հըվարի** – ննջեցյալի հիշատակման օրերին ու արարողություններին  
ազգականների ու համայնքի կողմից օգնության կազմակերպու-  
մը:

**Հոխարտանք, հոպկա ճժեր** – հորեղբոր սերունդները:

**Հողանք, հող մանել** – նոր կառուցվող բնակարան տանիքը ծածկելու  
ժամանակ հողի հարդարման աշխատանք:

**Հողվերք** – 1. Հուղարկավորելուց մեկ օր անց կանանց կողմից ննջեց-  
յալի գերեզմանին այցելելու արարողություն: 2. Այն հողը, որ  
երեք անգամ մեռելատերը վերցնում է բոլով և քահանայի օրհնե-  
լուց հետո՝ թափում է գերեզմանի մեջ՝ ննջեցյալի վրա, որից հե-  
տո հողով լցնում են գերեզմանը:

**Հոպարանք** – հորեղբոր ընտանիքը, հորեղբոր սերունդները:

**Հուսին** – ձյան հսկա շերտ, որ սահելով-հոսելով կարող էր ծածկել  
սար ու ձոր, բնակավայր:

**Ղաֆախ, Ղաֆախենք** – կավագործ, կավագործների ազգատոհմ:

**Ճըկ** – հարսի քեռուն կամ եղբորը տրվող նվեր:

**Ճյուղ** – մի տոհմից առաջացած կողմնային կամ հորիզոնական ճյու-  
ղավորմամբ սերունդ:

**Ճոբո (ջոբո), ճոճ բաբ** – պապ, մեծ հայր:

**Մալադունդի** – այսպես էին անվանում տնփեսային, որ նշանակում է  
ձրիակեր:

**Մատաղի վար** – վարելու աշխատանք, որ հարակաշ՝ ընկերությունը  
վար ու ցանք կատարելուց հետո որոշ գումարով վարում էր նաև  
հարակաշի մեջ չմտնող ընտանիքների հողերը, որով գնում էին  
մատաղացու անասուն և աշխատանքի ավարտը նշում մատա-  
ղացուի զոհաբերմամբ՝ համայնքի ընտանիքներին բաժանելու  
համար:

**Մարթակի գուբարա** – գերանածածկի ժամանակ կազմակերպվող  
ազգական-հարևանների մասնակցությամբ անհատույց կոլեկ-  
տիվ աշխատանք:

**Մեջի, միջի** – բուրդ գգելու և մանելու կոլեկտիվ աշխատանք:

**Միրեսար** – լեզգիական ազգակցական խումբ՝ «մերձավոր ազգա-  
կաններ», եղբայրների և հորեղբայրների զավակներ:

**Մոզի** – Երկրորդ, երրորդ կնոջ հետ եկող երեխան վերջին ամուսնու  
համար ոչ թե որդի, այլ մոզի էր կոչվում: Խորթ զավակ:

**Մուղսի** – Երուսաղեմ Տիրոջ գերեզմանին այցելած անձ:

**Մուֆտա զավան** – Մասունում այդ անունով էին անվանում տնփե-  
սային: Բառացի նշանակում է ձրի նախորդ, տավարած, հովիվ:

**Մրիբա** – հողագուրկ, կիսաճորտ օրավարձու աշխատավոր:

**Մոքալաքեներ** – Թիֆլիսում այդպես էին անվանվում խոշոր վաճա-  
ռականական ընտանիքները:

**Նշանավորներ** – նշանդրենքին փեսայի կողմի մասնակիցներ, նշան  
դնողներ:

**Շաբթագզի** – գյուղի կատարածուին ժամանակավոր փոխարինող  
անձը:

**Շալ** – բրդե գործվածք: Նաև՝ գլխաշոր:

**Շբակ** – ակնատ կամ դրիճակ (Մասուն):

**Շըմսի** – արծաթե կրծքագարդ, մանյակ:

**Չանաք** – բամբակաքաղ:

**Պապենական հող** – ժառանգաբար, սերնդե-սերունդ փոխանցվող  
հող, որ ենթակա չէր օտարման:

**Պատրոնիմիա** – հնագույն հասարակական ձև՝ նահապետական մեծ  
ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև  
տնտեսական, հասարակական, գաղափարական ու տարածքա-  
յին միասնությունը տարբեր չափերով պահպանած ազգակից-  
արյունակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ:

**Պորտ** – սերունդ:

**Պսմամ** – քրդ. ազգ, ազգուտակ, ցեղ, զարմ:

**Ջոլ** – ոչխարի, այծի, ուլի հոտ: Անասնապահական ընկերություն՝  
սարի համկալության մասնակից:

**Ռես** – գյուղապետ, տանուտեր:

**Ռոտ** – ջրաղացքարի տեղափոխման ժամանակ կենտրոնի անցքով  
անցկացված սոնի, որի յուրաքանչյուր կողմից 5-6 մարդ պետք է  
հրեին կամ թեքություններում զսպեին-պահեին:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբովյան Խաչատուր – 24  
Աբրահամյան Ա. – 71  
Աբրահամյան Լևոն – 15  
Աբրահամյան Հարություն – 20  
Ագաթանգեղոս – 16, 18  
Ագուլեցի Զաքարիա – 19  
Ադոնց Նիկողայոս – 8, 12  
Ազիզյան – 103  
Ազոբնի (ազգանուն) – 30, 41, 45  
Ալահվերդյան Հ. – 64, 65  
Ալավկայի որդի Դավիթ – 44  
Ալեքսանի տուն – 103  
Ակոբի տուն – 103  
Աճառյան Հ. – 16, 21, 50, 51, 152  
Ամատունի Ս. – 36, 44  
Ամատունեաց – 17, 44  
Այվազ, Այվազյան – 46  
Անանիա Շիրակացի – 43  
Անանյաններ – 99  
Անդրանիկ – 31  
Աշխադար – 23  
Աշխեն՝ դուստր Աշխադարի – 23  
Ապրե – 65  
Առաքելի տուն – 103, 154  
Առաքելյան Արշակ (Ըոբո) – 30, 144, 154  
Առաքելյան Վարազ – 110  
Ասլան – 93  
Ասլիբեկյան – 96  
Ասմանգույան Ա. – 15  
Ավագի տուն – 103  
Ավե-Ավետիք – 42, 92

Ավետ – 96  
Ավետիս, Ավետիսների – 85  
Ավետներանց Մարգարի Մկոյի Ենոք – 41  
Ատոմեանք – 43  
Արշանց – 102  
Արթին – 48  
Արծրունեաց ազգն – 17  
Արծրունյաց ազգ (տուն) – 17, 43, 99, 131, 145  
Արծրունի Թովմա – 22, 98, 99, 131, 145, 169  
Արծրունի, Արծրունիներ – 23, 42, 44  
Արշակ թագավոր, Արշակունի, Արշակունիներ – 23, 43, 44  
Արշակունյաց թագավորություն – 17, 18  
Արշամ՝ երբայր Տիգրանա – 42  
Արտաշես Աշոտեան Սմբատեանց – 44  
Արտավազդ՝ որդի Տիգրանայ – 42

Բ

Բաբենց – 43  
Բագրատունիներ – 18  
Բալլքնի (ազգանուն) – 41  
Բաղասար – 85  
Բաղասարյաններ – 85  
Բարձրբերդցի Կոստանդին – 130  
Բարսեղենց տներ, Բարսեղյան – 46, 103  
Բոդյան Վ. – 13, 14, 42, 44, 68, 103, 110, 129, 131, 134, 135, 153, 165  
Բեհբութենք – 90  
Բենսէ – 12, 65, 72, 89, 165  
Բզնունի – 43  
Բոզիկյան Առաքել – 93  
Բոզունց – 102  
Բուզանդ Փավստոս – 16, 18, 23, 58, 59, 70, 73  
Բուլունի (մականուն) – 42  
Բրդանունց (ազգատոհմ Խնձորեսկում) – 102



Գ

- Գաբրիելի տուն – 90, 103
- Գաբրիելյան Մխիթար – 128, 184
- Գախտրնի (ազգանուն մականունից) – 42
- Գասպար – 85
- Գասպարյան Աբրահամ – 138
- Գասպարյաններ – 85
- Գենջոյի տուն – 93
- Գերաքենց – 43
- Գըմա՛է դըվընի (տներ) – 45
- Գիբո (Կիրակոս) – 92
- Գիբորքեր (Գրիգորյաններ) – 45
- Գյորոզի տուն – 93
- Գնեւ – 75
- Գոշ Մխիթար – 68, 109
- Գորքե – 92, 93, 120
- Գուլաղեն (Մուրադի դուստր) – 44
- Գուլուլենք – 90
- Գուրջո – 92
- Գրիգորի տուն – 92, 93
- Գրիգորյան Դանիել (Դանո) – 30, 31, 144
- Գրիգորյաններ – 46, 85, 102

Դ

- Դադալունց – 101
- Դաշտենց Խաչիկ – 68
- Դավիթ երեց – 111
- Դավիթենց – 20, 44, 194
- Դավրիժեցի Առաքել – 19, 20, 43, 44, 73, 110
- Դարբինյան – 40
- Դեմուրճյան – 40
- Դոլունց – 101

Ե

- Եգորի տուն – 103
- Եզնիկ Կողբացի – 71

- Ենիթունյաններ – 102
- Եղիազարյաններ – 101
- Եղիազարով Ս. – 13, 134, 151
- Եղո (Եղիազար) – 65
- Երևանցի Սեմեոն – 110
- Երիցյան Կոլյա, Միքայել – 40

Զ

- Զադոյենց – 93
- Զարգարյան – 40
- Զաքարյան Բ. – 15
- Զաքարյան Թ. – 15, 57, 127
- Զելինսկի Ս. – 26, 35
